ՎԱՐԺԱՐԱՆ

ՔԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՌԱՍՏԱԳԻՐ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

№№ 7, 8, 9 և 10 1884 ՅՈՒՆԻՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ
ՕԴԵՍՍՈՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

„Վարժարանի“ վերջնական դատարան. — ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՈՂՄԻՑ: — Մեր դպրոցական դեկավարների գործունէութեան աւանդ. — ԽՄԲՈՂՐՈՒԹԻՒՆ ԿՈՂՄԻՑ: — Քաղաքական Եւրոպան. Ֆիզիքական աշխարհագրութեան գործադրութիւնը պատմութեան եւ քաղաքագիտութեան ուսումնասիրութեան մէջ. — Հնագոյնութիւն ԼԻԵՐՕՎԻԿ ԳԻՐԱՊԷՐՕՆԻ. — Ս. ՊԱԼԱՍԱՆԵԱՆ: — Սօլիէր իրրեւ երդիչ եւ մարդ. — Պարոն. — Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ: — Մանկական պարապմունքը Միացեալ-Նահանգներում. — Ս. ՊԱԼԱՍԱՆԵԱՆ: — Կնոջ դերը եւ դաստիարակութիւնը. — ԼԻՊՈՎՈՒ ԲԻՒՆԵՆԻՒ, — Պարոն Դ. ՇԱՀԲՈՒԽԱՂԵԱՆ — Ոսկի մինիկ. — Քանանեղծութիւն. — Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ: — Պարոն. ԴԱՄԱՌ — ՖԱԹԻՊԱ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Հարեանութեան նշանակութիւնը կրթութեան գործում. — Մ. ՄԻՎԼԻՍ ռեֆլեքսակ գաղափար. — Պարոն. Դ. ՇԱՀԲՈՒԽԱՂԵԱՆ: — Տէրտերումի գործածութիւնը ֆիզիքական աշխարհագրութեան ժամանակ. — ԼՕՐԴ: — Ակ եւ այլն. — Յայտարարութիւններ: —

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մոխիթի Վարդանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏ

Ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական եւ բարոյական. հրատարակվում է Վաղարշապատում: Բաժանորդագինն է Ռուսաստանում 4 ռ. Ցանկաստանում, Պարսկաստանում եւ Եւրոպայում 5 ռ. Հնդկաստան 6 ռ. Հասցէն՝ Эчміадзинъ, въ Типографическій Комитетъ.

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Քաղաքական-գրականական լրագիրը հրատարակվում է Թիֆլիզում. Տարեկան գինն է 10 ռ. կէս տարուանը 6 ռ. հասցէն՝ Тифлисъ, въ редакцію газеты „Мегу Айастани“:

Խմբագիր ՊԵՏՐՈՍ ՍԻՄԷՕՆԵԱՆ:

ՆՈՐ-ԴԱՐ

Ամենաբեայ թերթը հրատարակվում է Թիֆլիզում. Տարեկան բաժանորդագինն է 10 ռ. վեց ամիսը 6 ռ. երեք ամիսը 3 ռ. 50 կ. հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“

Խմբ. Հր. ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ:

ԱՐՁԱԳԱՆՔ

Գրականական եւ քաղաքական շաբաթաթերթը հրատարակվում է Թիֆլիզում. Տարեկան բաժանորդագինն է 5 ռ. հասցէն՝ Тифлисъ. въ редакцію еженедѣльной газеты „Ардзаганкъ“:

Խմբ. Հր. ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ:

ԱՂԲԻՒՐ

Պատկերազարդ միամսեայ-հանդէս երեխաների համար: Հրատարակվում է Թիֆլիզում. Տարեկան բաժանորդագինն է 3 ռ. հասցէն՝ Тифлисъ. въ редакцію дѣтскаго журнала „Агбюръ“

Խմբ. Հր. ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ:

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ

Պատկերազարդ հաւաքածու բարոյական, քրիստոնէական, պատմական, ուսումնական, աշխարհագրական եւ այլ պիտանի գիտելեաց, մանկական վէպերի, մանրավէպերի եւ զուարճալի խաղերի:

Հրատարակվում է Կ. Պոլսում տետրառ տեսար 15 օրը մի անգամ 16 երեսից բաղկացած: Տարեկան գինն է Ռուսաստանի համար 4 ռ.

Բաժանորդագրութիւնը Կովկասում ընդունվում է „Վարժարան“ ամսագրի խմբագրատանը:

Հասցէն՝ Պօլիս, Սուլթան համամ, Հօճա խան փողոց 14.

Խմբ. Հրատարակիչ՝ ՆՇԱՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ
Ս. ՏԷՕՎԼԷԹԵԱՆ:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹ

Միամսեայ հրատարակութիւն, տարեկան գինն է 3 ռ. հրատարակվում է Երեւանում: Հասցէն՝ Эривань, въ Редакцію журнала „Гигіеническій Листокъ“

Խմբ. Հր. ԲԺ. ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ:

ՎԱՐԺԱՐԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

№№ 7, 8, 9, 10, 1884 Թ. ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍ—ՅՈՒԼԻՍ ՕԳՈՍՏՈՍ-ՍԵՊՏԵՄ.

ՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

Գնա՛ մեռի՛ր,—արի՛ սիրեմ։

Ներկայ № ով բոլորվում է «Վարժարանի» գոյութեան երկամեայ տարեշրջանը և ընդ նմին իսպառ դադարում նորա հրատարակութիւնը։ Ցընթացս այս երկու տարուայ Խմբագրութիւնս ամենայն ճիգ և աշխատանք գործ դրեց արդեամբ ծառայեցնելու «Վարժարանը» հայ դպրոցական գործին, բայց նորան էլ իւր նախորդների պէս, վիճակուած չէր յարատև գոյութիւն ունենալ։

Շատ ժամանակ չի անցել այն օրից, երբ «Մեղուն» առաջինը ցաւոք սրտի յայտնեց ընթերցող հասարակութեանը «Վարժարանի» դադարման լուրը և այնուհետև թէ և շատ ուշ լաւ իմանալով «Վարժարանի» և առ հասարակ դոյնպիսի մասնագիտական մանկավարժական ամսագիրների խորհուրդը հայ դպրոցների համար, մի շարք առաջնորդողներով այն միտքն էր արծարծում թէ «չը նայելով որ «Վարժարանը» կարող էր անթիւ սխալներ ունենալ, բայց և այնպէս քանի որ առայժմս դորանից լաւը չը կայ, և քանի որ դորանում մասնակցում են մեր դպրոցական գործում յայտնի մանկավարժներն ու գործիչները, ապա ուրեմն և շատ կարևոր կը լինէր միջոցներ ձեռնարկել դորա խափանման առաջն առնելու համար»։ Այս մտքով երևացին նաև «Արձագանքում», «Նոր-Դարում» «Արարատում» և «Աղբիւրում» նամակներ և առաջնորդողներ, որոնք իւրեանց ցաւակցութիւնը յայտնելուն հետ ի միասին, ցանկանում էին դորա յարատևութիւնը և սորանով մի անգամ էլ արդարացնում հայկական առածի միտքը. «Գնա՛ մեռի՛ր,—արի՛ սիրեմ»։ Այսպիսով գոնէ վերջ ի վերջոյ «Վարժարանի» վերջնական դադարման լուրը խանգարեց հայ մամուլի այն զաքարիական լռութիւնը, որով պաշարել էր նո-

բան հայկական անտարբերութիւնը և այնուհետև տեղացին Խմբագրութեանս վրայ այն երեմիական ողբերն ու պահանջները, որոնց չենք կարող անուշադիր թողնել։

Զարմանալի բան՝ ամբողջ երկու տարի գոյութիւն ունեցաւ «Վարժարանը», նա առաջինը ցուցակցութիւն յայտնեց, որ մամուլը զաքարիական լռութիւն է պահպանում իւր վերաբերութեամբ, թէ «Վարժարանի» համար ցանկալի էին մամուլի լուրջ խորհրդածութիւնները և ցուցելով խոստովանում էր, որ իւր ցանկութիւնը մնում է «ձայն բարբառոյ յանապատի» (*)։ Իսկ այժմ նորա իսպառ դադարման լուրն առնելուն պէս, ի միջի այլոց, նա և «Նոր-Դարում» երկու քննադատներ ի՞նչ պահանջներ ասես, որ չեն բարդում Խմբագրութեանս վրայ։ Ո՛չ մի օրինաւոր բժիշկ ի հարկէ, երբէ՛ք չի թոյլ տալ իրան կարծելու, որ մի որ և է բժշկական մինչև անգամ ամենանշանաւոր ամսագիրը բժշկութիւն սովորեցնէր նորան. ո՛չ մի քաղաքատնտես կամ իրաւաբան չի՛ ներիլ իրան մտածելու, որ իրենց մասնագիտութեան վերաբերեալ ամսագիրները պէտք է նոցա քաղաքատնտեսներ կամ իրաւաբաններ դարձնէին։ Բայց տեսէք թէ ի՞նչ մոլար գաղափարներ են կազմուել մեր ընդդիմախօսների մէջ. նոքա ցանկանում են որ «Վարժարանը» ո՛չ թէ միայն ամսագիր լինի և պարունակէ մանկավարժութեան հիմնական գիտութիւնների վերաբերեալ հոգեբանական—փիլիսոփայական յօդուածներ, այլ նա պէտք է յանձն առնի նա և ուսուցչական դպրոցների դերը և ուսուցիչներ պատրաստէ։ Ինչո՞ւ։ Որովհետև, նոցա ասելով, հայ ուսուցիչը ամենևին ժամանակ չունի մի փոքր նեղութիւն տալու իւր ուղեղին ուսումնասիրելու իւր մասնագիտութեան վերաբերեալ գրականութիւնը, բայց մի՞թէ սորանով մեր ընդդիմախօսները չե՞ն ապացուցանում, որ թէ իրանք և թէ իրանց պաշտպանած ուսուցիչները դեռ ևս պատրաստուած չեն լրջօրէն որ և է գործի ուսումնասիրութեան ձեռնարկելուն։

Մենք աւելորդ ենք համարում և ցանկութիւն էլ չունինք «Նոր-Դարի» պ. յօդուածագրին պատասխանելու, բայց ապացուցանելու համար թէ որքան պ. յօդուածագիրը ծանօթ է նոյն իսկ իւր գոված „Учитель“ ամսագրին, պէտք է ասենք, որ այդ պատուական հանդէսը լի է գերմանական մանկավարժութեան ընտիր արդիւնքների թարգմանութեամբ և հէնց դորա համար էլ էր, որ Ռուսաց ականաւոր մանկավարժները մեղադրում էին նորա խմբագիր պ. Պաուլսոնին, որ նա աշխատում է «գերմանական մանկավարժութիւնը ամբողջապէս թարգմանելով, պատուաստել ռուսաց դպրոցական կեանքին»։ **)

*) Տես „Վարժարան“ № 10 188²/₃ թ.

**) Տես „Систематическій обзоръ русской народно-учебной литературы“: Спб. 1878.

Ի հարկ է, մենք համոզուած ենք, որ խոհեմ և բանիմաց ուսուցիչները համամիտ չեն յիշեալ յօդուածագիրների կարծիքներին, և նոցանից շատերն արդէն իւրեանց ցանկութիւնը յայտնել են Խմբագրութեանս միջոցներ հայթհայթելու «Վարժարանի» խափանման առաջն առնելու համար. բայց աւաղ, որ շատ ուշ է դոցա մասնակցութիւնը, և տխուր իրականութիւնը ակներև ապացուցանում է, որ մենք դառն անտարբերութեանն էինք դատապարտուած առ հասարակ թէ մեր ուսուցչաց և նա մանաւանդ մեր Թեմական Վերատեսուչների կողմից։

Առ հասարակ «Վարժարանի» վերաբերութեամբ յայտնած կարծիքները երկու խմբերի են բաժանվում. նախ՝ որ „Վարժարանը" իւր գոյութեան օրից մինչև ցայսօր շատ քիչ կամ բոլորովին չէ համապատասխանել հայ ուսուցիչների պահանջին. օր՝ նա միշտ պտոյտ է եկել օտար մթնոլորտի տակ, որ նա տալով սոսկ փիլիսոփայական—մանկավարժական յօդուածներ, չէ արտայայտել մեր դպրոցական կեանքի լաւ և վատ կողմերը, մեր օրուան չարն ու բարին"։ Երկրորդ՝ որ մեր դպրոցական ղեկավարները թէ գործով և թէ դրչով ամենևին նեղութիւն չեն քաշել իւրեանց մասնակցութեամբ հետաքրքիր և մատչելի անել „Վարժարանը" ուսուցչաց դասակարգին։ Այս վերջին, ծանրակշիռ հարցի լուծումը և պատասխանը ընթերցողը կը գտնէ „Մեր դպրոցական ղեկավարների գործունէութեան առթիւ" գրուած մեր երկրորդ առաջնորդողում, իսկ այժմ դառնանք առաջին հարցին։

ՈՀ փոքր ի շատէ հետևել է լուսաւորեալ ազգերի մտաւոր յառաջխաղացութեան գործին, ով ի մօտոյ ծանօթ է մի որ և է ազգի մտաւոր և բարոյական յառաջադիմութեան պայմաններին, նա անշուշտ մեզ հետ կը համաձայնի, որ ազգերի յառաջադիմութիւնը ցայտուններով չէ կատարվում. նա կը համոզուի, որ այդ յառաջադիմութիւնը տարիների գործ է, այլ դարերի։ Այս ընդհանուր օրէնքից անշուշտ չէր կարող բացառութիւն կազմել հայ ազգը, որի պատմական պայմանները այնքան ձախողակ են եղել, որ նա, հազար էլ ջանար, անկարող էր ընդհանուր մտաւոր յառաջխաղացութեան ասպարիզում յառաջադէմ քայլեր անել։ Ապա ուրեմն հասկանալի է, որ վերոյիշեալ ձախողակ հանգամանքների շնորհիւ հայը անկարող էր իւր մտքի լուսաւորութեամբ ու կըրթութեամբ պանծալ իւր ինքնուրոյն մտաւոր արդիւնքներն արտադրել, ուստի XIX-դ դարու լուսաւորութիւնից յետ չը մնալու համար նա ստիպուած ակամայ պէտք է օգտուէր օտար ազգերի քաղաքակրթութեան աղբիւրներից, ուսումնասիրէր իւր մայրենի լեզուի հետ ի միասին նա և լուսաւորեալ ազգերի լեզուները և դոցա միջոցով իւրացնել այն մտաւոր սնունդը, ինչ որ դարերով մատա-

կարարել էր քաղաքակրթութիւնը եւրոպական մտքին։ Ուրեմն հային վիճակվում է նորից փոխարինաբար իւրացնել Եւրոպայից լուսաւորութեան արդասիքներն այնպէս, ինչպէս նոյնը իւրացրեց դարձեալ Եւրոպայից Հինգերորդ Ոսկեղէնիկ դարում, երբ Խորենացիք, Եղնիկներն ու Եղիշէները յունաց իմաստասէրներին աշակերտելով, օտար գրականութիւնը հայ հողի վրայ ծաղկեցրին և դորանով հայ մտքի զարգանալուն ու լուսաւորուելուն նպաստեցին։ Այս կարգը բնական էր և իրաւ չէր կարող այլապէս լինել։ Եւ ահա այս միևնոյն երևոյթին հանդիպում է հայը նոյնպէս XIX-դ դարում։ Բաւական է մի ակնարկ ձգել հայոց ինտելլիգենցիայի, հայ մտքի յառաջադիմութեան կարապետների վրայ, որ համոզուինք, թէ դոքա իւրեանց բարձր կրթութիւնն ստացել են ոչ թէ մայրենի գրկում, այլ Եւրոպայի ականաւոր համալսարաններում և ուր գեռ ևս շատ և շատ երկար ժամանակ պիտի դեգերեն հայ մտքի զարգացման ապագայ առաջնորդները։ Այս ամենը ի նկատի առնելով, միթէ կարելի է պահանջել որ և է մասնագիտական ամսագրից, լինի նա իրաւաբանական, գիւղատնտեսական, գիտնական կամ մանկավարժական, որ նա առանց օտար մթնոլորտի տակ պտտուելու, ուղղակի դարերով յետ մնացած հայ ազգի մտաւոր սնունդից իւրեանն իւրաթ առնէր։ Ի՞նչ կուզէ ասեն մեր հակառակորդները, բայց թո՛ղ ներուի մեզ վերջին եզրակացութեան հետ չը հաշտուելու, և մեր ասածի վրայ պնդելու։

Սոյն պայմանները ի նկատի առնելով, միթէ կարելի է պահանջել, որ ժամանակակից մանկավարժական-մասնագիտական ամսագիրը առանց օտար մթնոլորտի տակ պտտուելու, անպայման ուղղակի հայ կեանքից նիւթ առնէր։—Քա՜ լեցի։ Եւ իրաւ, ի՞նչ կարող է ժամանակակից մանկավարժ—փիլիսոփան գտնել մեր հին ու նոր գրականութեան մէջ, բացի հռչակաւոր Դաւիթ անյաղթի փիլիսոփայական գրուածները։ Եւ եթէ ուսանողութիւնը Եւրոպայ է վազում իւր մտքի պաշարը ճոխացնելու համար, միթէ մասնագիտական թերթին արգելուած է առաւել լուսաւորեալ ազգերի գրականութիւնից օգուտ քաղել։

Մեզ լուրեր են հասնում և շատերից անձամբ լսել ենք, որ Խմբագրութեանս իբրև թէ հայ-ուսումնարանների ներքին կեանքին վերաբերեալ շատ յօդուածներ են ուղարկուած մեր փորձուած ուսուցիչներից, իսկ մենք զանց ենք առել իբրև թէ այդ հետաքրքիր յօդուածները տպելու և առաւել թարգմանութեանց ենք տեղ տուել։ Խմբագրութիւնս իւր սեպուհ պարտականութիւնն է համարում հրապարակաւ յայտնելու, որ նորան այդպիսի յօդուածներ ամենևին չեն ուղարկուած. այո՛, թէ և անձնական կրքերից և ինտրիգներից թելադրուած յօդուածներ ստա-

ցել ենք՝ բայց դոքա այնքան ստոր են եղել լուրջ քննադատութիւնից՝ այնքան հեռու հայ ուսումնարաններին օգնելու ցանկութիւնից՝ որ դոցա մասին աւելորդ ենք համարում մինչև անգամ մի խօսք ասել՝ մանաւանդ որ մեր խորին համոզմունքն է եղել «Վարժարանը» արդեամբ ծառայեցնելու հայ դպրոցներին և ոչ թէ սովորական կռվի հանդէսը բանալու՝ ուր առանց պատկառանքի՝ ամէն անհատ իւր մաղձն է թափում հակառակորդի վրայ՝ իսկ խմբագիրը բացականչում է. «մենք պարտաւոր ենք երկու կողմին էլ լսելու», կարծես մամուլը դատարանների պաշտօնն էլ պէտք է ստանձնէր՝ Կրկնում ենք՝ որ եթէ տեղ տայինք անձնական հաշիւներին՝ ստոր կրքերին՝ ոչ միայն չէինք օգնիլ հայ դպրոցական կեանքի ուսումնասիրութեան՝ այլ կարող էինք նա և թերթը անուանարկել՝ Ի՞նչ ասել կուզէ՝ որ սոյն տեսակ ապարդիւն յօդուածներից առաւել գերադասել ենք ընտիր թարգմանութիւնները՝ որոնց հասկանալու համար դեռ շատ պէտք է սովորեն „Նոր-Դարի“ Ժողովականներն ու Գրիգոր Ցովհաննիսեանցները՝

Պակաս զարմանալի չէ և «Աղբիւրի» № 2 ծնողաց բաժնում հրատարակուած „գրական անկոչ փաստաբան“ վերնագրով յօդուածը՝ որով „Աղբիւրի“ յարգելի Խմբագրութիւնը կարծում է իբր թէ „Վարժարանի“ Խմբագրութիւնը յանձնել է իւր ամսագրի պաշտպանութիւնը պ. Գեղամեանի հովանաւորութեանը՝ Այս ենթադրութիւնը հիմնովին սխալ է և կարող ենք ապահովացնել „Աղբիւրի“ խմբագրութեանը՝ որ „Վարժարանը“ կարիք չունէր և երբէք իրան չէր թոյլ տալ դիմելու ում և ինչ պաշտպանութեան՝ և ամսագրի ճանապարհը հարթելու համար զանազան կողմնակի միջոցներ ձեռնարկելուն՝ կամ անձնագովութեամբ զբաղուելու՝ Այն հրաւէրը և նամակները՝ որ շարունակ տպագրվուեցան „Մեղուի“ մէջ թէ և հայ ուսուցիչների պատրաստակամութիւնն են ցոյց տալիս «Վարժարանի» խափանման առաջն առնելու համար՝ բայց արդէն շատ ուշ են և մեզ համար այլևս գրական չեն կարող լինել թերթի հրատարակութիւնը շարունակելու: Գալով պ. Գեղամեանի „Վարժարանի“ վերաբերութեամբ գրուածներին՝ պէտք է ասենք՝ որ յիրաւի՝ թէ և այժմ դոցանով ոչ մի յաջող ելքի չենք սպասում՝ բայց ընդ նմին չենք կարող չը խոստովանել՝ որ դոքա մի ուրախալի երևոյթ են ներկայացնում մեր ընթացիկ գրականութեան մէջ՝ որով մի հրապարակախոս կամաւ՝ առանց որ և է շահախնդրական դիտումների՝ ցանկանում է ամսագրի խափանման առաջն առնել՝

Ողջամիտ քննադատութեան մի ուրախալի երևոյթ էլ ներկայացնում է «Արարատի» Օգոստոսի № ը՝ ուր յարգելի Խմբա-

դրութիւնը իւր արդարացի հայեացքն է յայտնում «Վարժարանի» մասին *)։ Լիայոյս ենք, որ գոնէ այս անգամ „Աղբիւրը“ ապահով կը լինի, որ մենք „Վարժարանի“ պաշտպանութիւնը չենք յանձնել նա և „Արարատին“։

„Վարժարանը“ իւր գոյութեան ընթացքում կարողացաւ այն անել, ինչ ներում էին նորա ոյժերը, հիւրընկալել այն մանկավարժների զրուածները, որոնք ներկայումս գոնէ մեր մէջ առաջինն են։ Մենք էինք սխալ ուղղութեան հետևում և տուժեցինք, թէ ուսուցչաց սառն անտարբերութիւնն էր «Վարժարանի» խափանման պատճառ, այդ թողնում ենք պատմութեանը, բայց այն փաստ է, որ „Վարժարանը“ ունէր ընդ ամենը 165 վճարող բաժանորդ որոնցից 50 միայն ուսուցիչներ էին։ Մեր գործունէութիւնը այժմ արդէն անցեալն է պատկանում, ապա ուրեմն ներկայի հետ ամեն հաշիւներ վերջացրած ենք համարում։ Եթէ մեզ չը յաջողուեցաւ մի մանկավարժական ամսագրի հրատարակութիւնը շարունակել, տար Աստուած, որ գոնէ մեր յաջորդները այնքան պատրաստուած գտնէին հայ դպրոցական գործի անձնուէր մշակներին, որ գոնէ նոցա հրատարակութիւնները „Վարժարանի“ նման սառն անտարբերութեան կը դատապարտուէին. իսկ հայ մամուլը աւելի աչալրջութեամբ իւր ժամանակին ջանար նոցա յարատևութեանը նպաստել։

---

*) Տես „Արարատ“ № 8 1884 թ.

ՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

I

Մենք բազմիցս լսել ենք պահանջներ, թէ առ հասարակ «Վարժարանը» չի զբաղվում դպրոցական առօրեայ խնդիրներով. թէ նա իւր ընթերցողներին տալիս է միայն պատրաստի մանկավարժական յօդուածներ դիդակտիքայի, մեթոդիքայի, հոգեբանութեան, բարոյախօսութեան վերաբերութեամբ, և շատ քիչ ուշք է դարձնում հայոց դպրոցներում կատարուող իրողութեանց և դպրոցական ղեկավարների միմեանց հետ ունեցած յարաբերութեանց վրայ՝—միով բանիւ չի նպաստում հայ դպրոցի ներքին կեանքի ուսումնասիրութեան։ Յիրաւի, յիշեալ, միանգամայն արդարացի պահանջների պատասխանատուն մենք միայն մեզ կը համարէինք, եթէ դոցա բաւականութիւն տալը մեր կամքից, մեր ջանքերից կախուած լինէր։—Բայց իրօք այդպէս չէ։

Եթէ մի ակնարկ ձգենք երկու տարի հրատարակուող «Վարժարան»-ի վրայ, եթէ հետազննին կերպով դիտենք նորա ընթացքը, մենք պարզ կը տեսնենք հայ դպրոցական ղեկավարների մասնակցութեան փայլուն բացակայութիւնը։ Հայ դպրոցի ղեկավարները, ցաւելով պէտք է կրկնենք, ոչ թէ ցանկացան «Վարժարանի» միջոցաւ հայ դպրոցի կենսական խնդիրներն արծարծել և մշակել, այլ մինչև անդամ նոցա ստուար մեծամասնութիւնը զլացաւ բաժանորդ գրուիլ և մի չնչին հինգ ռուբլի վճարել ամսագիրն ստանալու համար։ Եւ մթթէ զարմանալի չէ, ընթերցող, որ Ռուսահայերը ունենան մօտ 300 դպրոց արական և իգական, մօտ 850 ուսուցիչ և վարժուհի և այդքան բազմութիւնը դոնէ մի 400 օրինակ մանկավարժական ամսագիր չը ստանայ։ Այս չոր ու ցամաք թուանշանների մասին թող խորհեն մեր դպրոցի ղեկավարները, իսկ մենք մի կողմը թողնելով խմբագրութեանս անանխանձելի նիւթականը, որի շնորհիւ լսկամայիցս ստիպուած ենք իսպառ դադարեցնել «Վարժարանի» հրատարակութիւնը, դառնանք բուն խնդրին։—

Մենք մեզ թոյլ կը տանք մի համեստ հարց առաջարկելու, թէ արդեօք ինչ մասնակցութիւն ունեցան հայ դպրոցների վարչութիւնք, մեր թեմական վերատեսուչներն ու տեսուչները «Վարժարանին» առօրեայ խնդիրներով զբաղեցնելում։—Ինչ։—Ոչինչ։—Ո՞ր թեմական վերատեսուչը բարեհաճեցաւ մի ակնարկ ձգել իւր խնամոց յանձնուած դպրոցների նիւթական, ուսումնական ու բարոյական կողմերի վրայ։ Այս դիպուածում դոցա անտարբերութիւնն առ հասարակ այնքան մեծ է, որ եթէ վաղը մինը կամենար խորաղննին կերպով հետևել մեր դպրոցական գործերի ընթացքին, նա այդ չէր կարող գտնել մանկավարժական գրականութեան մէջ, վասն զի մեր դպրոցների ղեկավարները իւրեանց գործունէութեան մի նսեմ հետք անգամ չեն թողնում այդտեղ։ Ցիրաւի, եթէ նա ցանկանար հայոց դպրոցների աստիճանաբար յառաջ դիմելու մասին մի գաղափար կազմել, նա զուր կը ջանար ի տիպ արձանացուցած տեսնել այդ գործունէութեան պատկերը։ Եթէ նա հարցնելու լինէր, թէ ինչով էր տարբերվում նախկին թեմական վերատեսուչը այժմեանից, ինչ խոչընդոտների նա ստիպուած էր յաղթել և չը կարողանալով արիութեամբ մարտնչել դպրոցական պայքարում՝—ընկաւ. նորան յաջորդող նորը ինչ միջոցներ ձեռնարկեց նախորդի թերութիւններն ուղղելու, ինչ հնարներ գործ դրեց զանազան ուղղութեամբ կրթուած ու սովորած գիւղական և քաղաքական ծխական հոգևոր դպրոցների ուսուցիչներին ժամանակակից մանկավարժութեան պահանջներին համապատասխան նախապատրաստութիւն տալուն։ Սոյն և սոցա նման հարցերի լուծումը նորան շատ տխուր հետևանքների պէտք է հասցնէին։—Բայց մթթէ, յիրաւի, մեր թեմական վերատեսուչները դպրոցական ներկայ դրութեան ժամանակ կարող էին աւելի գործել, քան թէ գործել են և գործում են, կը հարցնէ հետաքրքիր ընթերցողը։—Կը պատասխաննենք, որ ոչ միայն կարող են, այլ և ներկայ տարտամ դրութեան ժամանակ աւելի աչալրջութեամբ վայել էր նոցա գործել։—Անուրանալի է, որ հայ մամուլը միշտ իւր էջերը բացել է հայ դպրոցների մասին տեղեկութիւնները հիւրընկալելու, մթթէ նա կը զլանար որ և է թեմական վերատեսչի բարե-

խղճութեամբ և անաչառութեամբ կազմուած դպրոցական տեղեկագիրը հրատարակելու։ Քա՛ւ լիցի։ Գուցէ մեծ. պ. պ. թեմական վերատեսուչները մեզ պատասխանեն, որ նոքա իրանց պարտաւորութիւնները սրբութեամբ կատարում են և դպրոցների վիճակագրական տեղեկութիւններ են հաղորդում թեմական Առաջնորդի միջոցաւ Էջմիածնի Ս. Սինոդին, տեղեկութիւնները, որոնք պաշտօնական օրագրութեանց համար գուցէ բաւարար կարող են համարուիլ, բայց երբէք այն աստիճան չը պիտի նպաստեն դպրոցների բարւոք կազմակերպութեան, որքան ցանկալի էր։ Եւ յիրաւի, ի՞նչ մեծ նշանակութիւն ունի և արդեօք գոհացուցիչ է այն հաշիւը, թէ այս ինչ թեմում անցեալ տարի 100 դպրոց կար, իսկ այս տարի դոցա թիւը աճել է կամ նուազել։—Բայց մի՞թէ հարկաւոր չէ գիտենալ նա և այն շարժառիթները, որոնք նպաստել են դոցա աճման, կամ խոչընդոտն եղել դոցա նուազելուն։—Մի՞թէ դպրոցների քանակութիւնը միայն մեզ պիտի զմայլեցնէ, և ոչ թէ նոցա յատկութիւնը։

Ընթերցողներից ոմանք գուցէ հարցնեն մեզ, թէ ի՞նչ մեծ նշանակութիւն և արժէք ունին թեմական վերատեսուչների տեղեկագրերը, որ այդպէս շեշտելով պահանջում ենք։ Այո՛, դոքա շատ և շատ կարևոր են։ Ո՞վ կարող է կասկածել, որ նոր պաշտօն ստանձնող թեմական վերատեսուչը անշուշտ բարի իղձերով և ձգտումներով տոգորուած, հանդէս է գալիս իւր պարտաւորութիւնները սրբութեամբ կատարելու, իւր չնչին լուման էլ ձգելու ազգային լուսաւորութեան դեռ ևս անշուք գանձարանը։ Ուրեմն նա սկսում է գործել, խորհել, մտատանջուել, և այս բոլորի արդիւնքը ի՞նչ է լինում։ Այո՛, ցաւալի է ասել, որ նորա անքուն գիշերների արդիւնքը սահմանափակվում է լոկ միայն Ս. Սինոդի պահանջած չոր ու ցամաք թուանշաններով։ Այո՛, այդպիսի վիճակագրական տեղեկութիւնները լուսաւորեալ ազգերի թէ դպրոցական և թէ հասարակական կեանքում հրաշքներ են գործում, իսկ մեզ մօտ, ո՞վ է նոցա վրայ ուշք դարձնում։—Ս. Սինոդը, այս ինչ պաշտօնական կարգը պահպանելու համար, հաղորդագրում է թեմական վերատեսչին որ սա դպրոցներին վերաբերեալ վիճակագրական տեղեկու-

թիւններ հաղորդէ իրան. թեմական վերատեսուչը պատասխանում է պաշտօնապէս Ս. Սինոդի առաջադրած հարցերին և նոյնը ծրարելով ու կնքելով ուղարկում է ըստ պատկանելոյն։ Իսկ ուր մնացին նորա թեմում շրջագայելու հետևանքները, նորա դպրոցների, ուսուցչաց և հոգաբարձուաց վերաբերեալ այս և այն կարգադրութիւնները, նորա խորհրդածութիւնները դպրոցներն առաւել լաւ վիճակի հասցնելու և դորա համար ձեռնարկած միջոցները. ուսուցիչների նիւթականն ապահովելու և նոցա ձգտումներին ժամանակակից ցանկալի ուղղութիւնը տալու։ Ո՞ւր է կարճ ասենք, թեմական վերատեսչի յիշատակարանը։ Չը գիտենք թէ ուր է. Ս. Սինոդի օրագրութեանց մէջ չը կայ, մամուլի մէջ չը կայ։ Ապա ուր է։ Հրաժարուեց թեմական վերատեսուչը պաշտօնից, թողեց այդ ասպարէզը և նորա հետ միասին մոռացութեան մատնուեցան նորա հետազօտութեանց արդիւնքները, նորա իղձերն ու ձգտումները։ —Նշանակւում է նոր թեմական վերատեսուչ. սա ևս նախորդի անցեալի վրայ ոչինչ գաղափար չունենալով, կամ անճիշտ տեղեկութիւններ ստանալով, սկսում է իւր նոր պաշտօնը և հաւանական է, որ դորա գործունէութիւնն էլ նոյնքան ասպարդիւն պիտի մնայ, որքան նախորդինը։ Այս ամենը ի նկատի առնելով, ակնարկ է, թէ ինչու մենք սկզբում պահանջում էինք հայ դպրոցների ուսումնական մանրամասն տեղեկագիր, որպէս զի ապագայում դոցանից ցանկալի արդիւնքներ ստանայինք։ Բաւական է յիշել, որ Զուիցերիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի և Ամերիկայի սոյն տեսակ տեղեկագրերը քանի փայլուն արդիւնքներ են յառաջ բերում և մեր պահանջի արդարացի լինելը հասկանալի կը լինի։

II

Այսպէս ուրեմն, եթէ մեր թեմական վերատեսուչների գործունէութիւնը տակաւին մշուշով է ծածկուած, եթէ դոցա գործունէութեան արդիւնքից մինչև անդամ դոցա յաջորդները չեն կարողանում ըստ արժանաւոյն օգուտ քաղել, այն ժամանակ քանի ասենք մեր դպրոցների տեսուչների գոր-

ծունէութեան մասին։ Եթէ մի որ և է ժողովի ճիշտ Հայելին նորա արձանագրութիւնն է, ժողովի, ուր լուսի պէս փայլում է թէ տեսչի և թէ ուսուցչաց գործունէութիւնը, ուր անձնուիրաբար իւրաքանչիւրը նոցանից խորհրդածում է, հոգում և աշխատում իրեն խնամոց յանձնուած Հայ սաների և սանուհիների կրթութեան և դաստիարակութեան համար, ժողովի, ուր պայծառ գոյներով երևում է դպրոցի ներքին կեանքը իւր լաւ և վատ, գեղեցիկ և տգեղ, յառաջադէմ ու յետադէմ կողմերով,— այնուհետև, ցաւելով պէտք է նկատենք, որ այդ ժողովի Հայելին դիտելուց, դորա արձանագրութիւնք կարդալուց, մի խօսքով, մեր դպրոցների ներքին կեանքի մասին ճիշտ և անթերի գաղափար կազմելուց շատ և շատ զուրկ են մեր ուսուցիչները, մեր վարժուհիները, մեր ծնողները, մեր ընթերցողները։

Այո՛, մենք գիտենք, որ ամեն դպրոց կամ դպրանոց իւր տեսչի նախագահութեամբ ժողովներ է կազմում, մանկավարժական հարցեր է լուծում, և այլն։ Բայց դոցանից ինչ օգուտ է ստացվում։ Ոչինչ է յայտնի լինում, թէ այս ինչ դպրանոցի մանկավարժական ժողովը այս ինչ միջոցներն է ձեռնարկել աշակերտների մէջ. նկատուած անբարոյական խտերն ու մոլութիւններն արմատախիլ անելու։ Կամ մի ուրիշ դպրանոցում ուսման ծրագիրը է կրճատվում և թերին լրացնվում, ի նկատի առնելով մանուկների հասակն ու զարգացումը, տեղական ուրիշ պայմանները և այլն։—Մի այլ տեղ հարցաքննութիւնների վնասակարութիւնն ի նկատի առնելով, իսպառ վերացնում են, կամ նոցա ձևը փոխում։ Այս և սոցա նման հարցերի լուծելու մասին ով կարող է գաղափար կազմել, հազար էլ որ մեր մանկավարժական ժողովներում յարուցուած խնդիրները դպրոցների համար կենսական խնդիրներ լինէին, ով միջոց ունի դոցանով հետաքրքրուելու, նա մանաւանդ մանկավարժական ամսագիրը ինչպէս կարող է իւր գոնէ միջնորդական մասնակցութիւնն ունենալ յիշեալ և դոցա նման հազարաւոր խնդիրներ վճռելու, լուծելու ժամանակ, երբ

ոչ մի միջոց չը կայ տեղեկանալու թէ այդպիսի խնդիրներ յարուցանելը տեղի է ունեցել, երբ, ցաւելով պէտք է նկատենք, դոյն խնդիրների որոշումները և մանկավարժական ժողովի տնօրինութիւնները անմատչելի են մնում հայ մանկուոյ կրթութեամբ ու դաստիարակութեամբ հետաքրքրող անձանց համար և ժամանակ անցնելուց յետոյ, յաւիտեանս դպրանոցի փոշիների տակ դատապարտուած մնում։ Բայց իրօք ի՞նչեր չեն կատարվում մեր դպրոցների դեկավարների գործունէութեան միջոցին. ի՞նչ տեսակ երևոյթներ տեղի չեն ունենում, որոնց մասին երբեմնապէս լրագիրների մանր լուրերիցն ենք միայն տեղեկանում։ Եւ քանի՞, քանի՞ անգամ այդ անյայտութեան մէջ ճշմարտութիւնը ոտնակոխ է լինում և սովորաբար հզօրը յաղթող հանդիսանում։ Զօր. օրինակ. պատահում է, որ այս ինչ պարոնը մի քանի տարի շարունակ վարում էր որ և է դպրոցի տեսչական պաշտօնը. մինչև այդ ժամանակամիջոցը դպրանոցի հոգաբարձութիւնը չէր գրաւուել դորա մանկավարժական գործունէութեամբ, միանգամայն վստահ լինելով, որ իրանց ընտրած տեսուչը շատ լաւ է տանում գործը։—Բայց ահա՛ մի սև կատու է անցնում տեսչի և հոգաբարձուաց մէջ և տեսարանը փոխվում է։ Այժմ, հոգաբարձուաց մեծամասնութեան ասելով, իրանց գոված տեսուչը անընդունակ է։—Ի՞նչ է պատահել։—Մթթէ մի քանի տարի շարունակ դպրոցում ծառայելուց յետոյ, յանկարծ տեսչի մանկավարժական հայեացքները հակամանկավարժական դարձան։ Դուցէ հոգաբարձութիւնը, դպրոցի շահերը և նորա բարելաւութիւնը ի նկատի առնելով, կամենում է նոր տեսուչ հրաւիրել. շատ լաւ, այդ նորա անկասելի իրաւունքն է. բայց ինչ գրաւական ունի հոգաբարձութիւնը, որ իւր նորընտիր տեսուչը առաւել մեծ, առաւել արդիւնաւոր գործունէութիւն պէտք է ցոյց տայ, քան թէ իւր նախորդը։ Եթէ մինչև անգամ ենթադրենք, որ հոգաբարձութիւնը նախորդ տեսչի հակամանկավարժական ուղղութեան հետ ծանօթացաւ մի քանի տարուց յետոյ, այնուհետև նա ի՞նչ տեսակ պարտաւորութիւններ պէտք է դնէ նոր տեսչի վրայ, որ գոնէ վերջինս իւր նախորդի սխալները չը կրկնէր։

գրէթէ ոչինչ։—Վասն զի նոյն իսկ իրեն հոգաբարձութեան համար պարզ չէ, թի ինչ էր պահանջում նախորդ տեսչից և ինչ ակնկալութիւն ունի նորից։ Վասն զի ինչպէս մեր համարեա բոլոր հասարակական գործերը, նոյնպէս և դպրոցականը ըստ մեծի մասին անձնական կրքերով են առաջնորդվում և գործի յառաջադիմութեանն առաւել ևս խանգարում։ Եւ ահա, շնորհիւ այդ անձնական զանազան իմանալի և անիմանալի, երևելի և աներևոյթ շահերի, մեր դպրոցական գործերը և գործողները միշտ այսպէս խառն դրութեան մէջ պէտք է լինին։

III

Այսպիսով մենք չենք կամենում մեր գործունէութեան գոնէ համառօտ տեղեկագիրը յանձնել մամուլին ի գիտութիւն ընթերցող հասարակութեան, մենք չենք կամենում մեր գործերը խաւարից և փոշիից ազատել և լոյս աշխարհ բերել. գուցէ մենք կարծում ենք որ առ այժմ այդ դժուար կը լինի, որովհետև մեր գործունէութիւնը կարող է նա և միշտ օրինակելի չը լինել. զարմանալի բան։ Մթթէ մէկը, որ գոնէ փոքր ի շատէ ծանօթ է հայ դպրոցների կեանքին, ներկայումս կը պահանջէ, որ մեր գործերը օրինակելի լինին, քանի որ ընդամենը 10-15 տարի է, ինչ որ սկսել ենք դպրոցների բարգաւաճման ձեռնարկել։ Ի՞նչ պատրաստի ուսուցչական դպրոցներ ունէինք և երբ պատրաստեցինք այդտեղ մանկավարժ-ուսուցիչներ, որ այժմ խիստ քննադատութեան ենթարկենք ուսուցչաց դասակարգի գործունէութիւնը։ Բայց եթէ պահանջում ենք, որ այդ գործունէութեան պատկերը լոյս աշխարհ գայ, այդ միայն նորա համար, որ մամուլը և դպրոցը ձեռքի տուած, միացեալ ոյժերով խորհրդածեն, մշակեն, լուսաբանեն մանկավարժական այն ընդհանուր ու մասնաւոր սկզբունքները, որոնք պէտք է նպաստեն հայ-դպրոցական գործի բարւոքման և բուն հայկական մանկավարժութեան վերածնելութեան։—

Ապա ուրեմն, գործի յաջողութիւնը և յառաջադիմութիւնը 'ի նկատի առնելով, որքան օգտակար և նպատակա-

յարմար կը լինէր, եթէ մեր թեմական վերատեսուչների տեղեկագրերը և մեր դպրոցների մանկավարժական ժողովների օրագրութիւնները քաղուածօրէն լոյս տեսնէին պարբերաբար. առանց անձնական հաճոյից ծառայելու, այլ լուրջ խորհրդածութեանց ենթարկուելու, և դպրոցական խնդիրները բազմակողմանի կերպով մշակելու նպատակաւ։ Մենք համոզուած ենք, որ սորանով սաստիկ պիտի օգտուէր դպրոցական գործը. այնուհետև դպրոցի տեսուչներն, ուսուցիչներն ու վարժուհիները, ոչ թէ ինչպէս բազմիցս պատահում է, ձեռնթափ կը վերաբերուէին դէպի մանկավարժական ժողովները, այլ իւրաքանչիւրը նոցանից լաւ կը նախապատրաստուէր նստից առաջ, աւելի աչալրջութեամբ կը վերաբերուէր դէպի իւր պաշտօնը, կրկնում ենք, որ իւրաքանչիւր դպրոցի շահերին անձնուիրաբար ծառայողը խորին կերպով կը համոզուէր, որ իւր աշխատանքը լոկ միայն մեքենական չէ, ազգից կոպէկներ ստանալու համար, այլ որ ինքը պարտաւոր է աշխատել և իւր քրտնաջան աշխատանաց շնորհիւ հայ մատաղ սերնդի դաստիարակութեան վսեմ գործի յառաջադիմութեանը նպաստել։

Այսպէս ուրեմն, եթէ ընթերցողը լուրջ ուշադրութեամբ աչքի անցնի մեր ասածները, կը համոզուի, որ մեր պահանջը անիրագործելի չէ, և եթէ մեր առաջարկութիւնը համակրութիւն գտնէ մեր դպրոցական դեկավարների կողմից, այնուհետև վստահ կարող ենք ասել, որ մենք ունենք դպրոցի սրտացաւ բարեկամներ, և հաւատի կարող ենք լինել, որ հայ դպրոցների ներքին կեանքը ուսումնասիրելով, մեր դպրոցները զգալի յառաջադիմութիւն պէտք է անեն, և արդեամբ ծառայեն իրենց բուն կոչմանը։ Իսկ նոցա դեկավարները, տայ Աստուած որ գոնէ այնուհետև այն անտարբերութեամբ չը վերաբերուէին դէպի մի մասնագիտական, մանկավարժական ամսագիր, որը կոչուած էր նոյն իսկ իրենց գործունէութեան և իրենց շահերին ծառայելու, բայց որը դժբաղդաբար, նոցանից դնահատուելու բաղդին չարժանացաւ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒՐՈՊԱՆ

Ֆիզիքական աշխարհագրութեան գործադրութիւնը պատմութեան եւ քաղաքագիտութեան ուսումնասիրութեան մէջ։ *)

(Հէրաղդոտ-Ելիէն Էլիզէէ Դրաղերոնի)

Եթէ կայ մի պատմական խնդիր, որ որքան գիտուններին նայնքան և հասարակութեան ուշադրութիւնը գրաւելու արժանի լինի, այդ անշուշտ զանազան մեծ ու փոքր պետութիւնների կազմութիւնն է, որոնք ներկայումս բռնում են Եւրոպական աշխարհը։ Ինչից է որ համարեա անանցանելի սահմաններ աշխարհակալութիւնների առաջ արգելք են դնում։ Ի՞նչ է պատճառը որ այս ինչ նահանգը, միւսներից աւելի երջանիկ լինելով, ուրիշ շատ նահանգներ է տանում իւր հետ, որոնք նորանից կախում ունին։ Վերջապէս ինչի՞ համար մի հզոր պետութեան միջավայրում, իշխող քաղաքը կամ մայրաքաղաքը այս ինչ և ոչ այն ինչ տեղումն է կազմուել։ Մարդ չկայ որ պատեհ ժամանակին այս տեսակ մի խընդիր արծարծած չլինի, և այս նորանիցն է որ ամենքը կը ցանկային գտնել մի օրէնք, որով կարելի լինէր երկրների խմբուելու պատճառն իմանալ։ Ոչ նուազ հետաքրքրութեամբ զբաղուած են մի խնդրով որ, եթէ ներուի մեզ, կ'անուանենք իշխանութեան ամփոփումը իրաքանչիւր պետութեան մէջ։ Այս խնդիրները ան-

---

*) Աղբիւրներ։ Karl Ritter: Die Erdkunde im Yerhältnisse zur Natur und zur Geschichte des Menschen;—Peschel: Yergleichende Yölkerkund;—Kohl: Lage der Haupstädte Europats;—Elie de Beaumont et Dufrénoy: te Introduction à la carte géologique de France;—Elisée Reclus: La Terre; nouvelle géographie universelle;—Oné ime Reclus: Jéographie.

տարակոյս շատ անգամ առաջարկուել ու լուծուել են, բայց զարմանալին այն է որ այս բուն աշխարհագրական նիւթի մէջ շատ սակաւ են դիմել աշխարհագրութեանը. այլ սովորաբար գոհ են եղել պետական անձանց քաղաքական մտադրութիւնները հետազօտելով, կարծելով ընդհանրապէս թէ մի քաղաք, մի նահանգ, մի ազգ իւր հզօր ազդեցութեամբ այս ինչ նախարարի կամ այն ինչ վեհապետի հանճարին է պարտական։ Եթէ օրինակի համար Ռուսաստանի այժմեան մայրաքաղաքը Պետերբուրգն է և ոչ Մոսկվան, այդ նորա համար է որ Պետրոս մեծը այնպէս կամեցաւ։ Եթէ Իլ-դը-Ֆրանսը մի մեծ պետութեան կենտրոնն է, այդ նորանից է որ նա ունեցել է մի թագաւորական հարստութիւն, որի տևողութիւնը և յաջողութիւնները իրանց նմանը չունին։ Եթէ վերջապէս Անգլիան ծովերի վրայ իշխում է, այդ այն պատճառով է որ Հենրիկոս Է, Եղիսաբեթը, Կրոմվէլը, երկու Պիտերը առաջնորդել են նորա բաղդին։

Հասկանալի է որ մեր դիտաւորութիւնը չէ հերքել, այլ միայն լրացնել այն հայեացքները, որոնք թէև սխալ չեն՝ բայց շատ միակողմանի են, և որոնց թերութիւնն այն է, որ պատահական պատճառներին ուրիշ հաստատուն և անհերքելի պատճառներից աւելի կարևորութիւն են տալիս։ Մենք ընդունում ենք բոլոր պատճառները, ինչ կարգի էլ որ լինին,—նիւթական, մտաւոր կամ բարոյական, բայց և այնպէս աւելի աշխարհագրութեան կը դիմենք, և յոյս ունինք թէ զանազան երկրների դիրքին, կաղմութեանը, մակերևութին և ուրիշ յատկութիւնների վերաբերեալ դիտողութիւններով կը յաջողենք վերոյիշեալ խնդիրներին գոհացուցիչ լուծում տալ։ Եւրոպայի վրայ հարևանցի ակնարկ ձգելուց յետոյ, մի առ մի կը քննենք զանազան տերութիւնները, որոնք աւելի կամ պակաս ընդարձակ, աւելի կամ պակաս նեղ տարածութիւն գրաւած ունին աշխարհի այս մասում։ Մենք կը պահենք այն կարգը որ նոյն իսկ նիւթը պահանջում է մեզանից։

Բաւական է Եւրոպայի քարտէզի վրայ մի թեթև ակնարկ ձգել աշխարհի այս մասի արևելեան և արևմտեան երկու կէսերի մէջ եղած մեծ անմանութիւնը նկատելու համար, որոնցից իւրաքանչիւրը գրեթէ հաւասար տարածութիւն ունի *)։ Որքան արևելեան Եւրոպան երկայն, լայն, հարթ ու հաւասար է, այնքան արևմտեան Եւրոպան սեղմուած, անկանոն և մանր մանր կտորների բաժնուած է։ Այս տարբերութիւնը իւր երկրաբանական պատճառն ունի։ Գիտութիւնը ուսուցանում է մեզ թէ՝ մինչ առաջինը

*) 5,500,000 և 5,000,000 քառակուսի հաղարամէտր։

հին ծովի յատակ է, որի մի քանի պատկառելի հետքերը մնացել են—Արալեան ծովը, Կասպից ծովը, Ազովի ծովը, Սև ծովը։ Միւսը կազմուած է ահագին լեռնաշղթաներից, որպիսի են Կարպաթեան, Բալկանեան, Ապենեան, Պիրենեան, Ժուրայեան, Վոսգեսեան շղթաները, բոլորն էլ Ալպեան լեռների՝ Եւրոպայի այս բարձր պարսպի շուրջը խմբուած։ Այսպէսով Արևելքը մի ընդարձակ դաշտավայր է, բաց Ասիայի կողմից, և միայն Եւրոպայի կողմից սահմանաւորուած Բալկանեան և Կարպաթեան լեռների վերջին ճիւղերով։ Իսկ արևմուտքը մի շարք թերակղզիներ է ներկայացնում՝ զանազան ձևով ու մեծութեամբ, որոնցից ոմանք աւելի և ոմանք նուազ պինդ կապուած են ցամաքի հետ։

Այս ընդհանուր կազմութիւնից չէ՞ հետևում որ Եւրոպայի մեծագոյն մասը նշանակուած է մի միայն պետութիւն ձևացնելու։ այն է Ռուսաստանը։ Չէ՞ հետևում նոյնպէս որ փոքրագոյն մասը մանր կտորների պիտի բաժանուի և նոյնքան տերութիւններ ձևացնի, որքան մեծ ցամաքակղզիներ, մեծ կղզիներ է պարունակում։ Ցիշենք նախ Մեծ—Բրիտանիան։ ապա Սպանիական ցամաքակղզին Ովկիանոսի և Միջերկրականի մէջ։ Իտալական ցամաքակղզին Տիրենեան ծովի և Ադրիական ու Յոնիական ծովերի մէջ։ Յունական ցամաքակղզին Ադրիական ու Յոնիական ծովերի և Սև ծովի ու Արշիպեղագոսի մէջ։ Սկանդինաւեան և Դանիական ցամաքակղզիները։ Պալտիկ ծովի և Հիւսիսային ծովի մէջ։ Այս բոլոր երկիրները իրանց որոշ սահմաններն ունին։ Եթէ Պիրենեան պարանոցը չլիներ։ նոյն իսկ Ֆրանսիան ցամաքակղզի կը լիներ։ Նոյնպէս և Գերմանիան։ եթէ իրանից և Աւստրիայից կախեալ երկրների հետ նկատուի։ սեղմուած է նախ Հիւսիսային ծովի և Ադրիականի մէջ։ յետոյ Սև և Պալտիկ ծովերի մէջ։ Եթէ աւելացնենք որ մի քանի երկրներ։ իրանց բարձր կամ ցած գիրքով։ մեծամեծ ցամաքակղզիների մէջ մի տեսակ կղզիներ են ձևացնում առանց սերտ առընչութիւն ունենալու նոցա հետ։ այն ժամանակ Նորվեգիայի։ Դանիայի։ Ստորին-Նահանգների։ Պորտուգալիայի։ Ջուեցերիայի։ Բավարիայի։ Սերբիայի։ Ռումանիայի և Մոնտէնեգրոի քիչ թէ շատ կատարեալ։ քիչ թէ շատ հաստատուն անկախութեան հիմնական պատճառը կը դտնենք։ Բայց մենք ուրիշ կ'ունենանք դարձեալ խօսելու այս գլխաւոր կէտի վրայ։

Ամենից առաջ պիտի ներկայանան մեզ Յունաստանը։ Իտալիան և Թուրքիան՝ Աթէնքի։ հռոմէական կայսրութեան և բիւզանդական կայսրութեան փառաւոր անուններով։ որոնց քաղաքական մեծ բաղդը պիտի աշխատենք ապացուցանել աշխարհագրական փաստերով։ Յետոյ կը դայ Ռուսաց ընդարձակագոյն տերութիւնը։ որ այնքան պարտական է իւր դրացի Բիւզանդիային։ Ապա կ'անցնինք

Աւստրօ—Հունգարական և Գերմանական կայսրութիւնները շրջակայ մանր տերութիւնների՝ Շվեդիայի, Նորվեգիայի, Դանիայի, Սաորին—Նահանգների, Բելգիայի և Զուիցերիայի հետ։ Մեծ-Բրիտանիայի և Իրլանդիայի միացեալ—թագաւորութիւնը շատ կողմից Սպանիայի և Պորտուգալիայի հակառակ պատկերը կը ներկայացնէ։ Ամէնից վերջը կը թողնենք խօսելու Ֆրանսիայի վրայ՝ որ այնպէս լաւ ուսումնասիրած են այս տեսակէտից Ֆրանսիայի երկրաբանական քարտէզի ներածութեան հեղինակները։

Ա.

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ԵՐԿՐՆԵՐ

Ցունական և Իտալական ցամաքակղզիներից իւրաքանչիւրը իւր լուսաւոր և խաւար կողմերն ունի. Աթէնքն ու Հռոմը, Նպիրոսն ու Ապուլիան։ Հին ժամանակներում Ագրիականի երկու եղերքը բարբարոս էին համարուած. նոքա համարեա թէ նոյն պայմանների մէջ էին գտնվում՝—Հռոմը Տիրենեան ծովի զառիվայրին է վերաբերվում՝ իսկ Աթէնքը Արշիպեղագոսի զառիվայրին՝ և յունական քաղաքակրթութիւնը երկար պտոյտներով եկաւ ներգործելու խստաբարոյ Լատինների վրայ։ Տրէնտը՝ Սիրակուսան՝ Ագրիգէնտը՝ Պալերմոն՝ Մեսինան՝ Պէստումը՝ Նապոլին՝—սոքա են այն դանդաղ ու խաղաղ յառաջընթացութեան կայարանները՝ որին՝ ինչպէս յայտնի է՝ մի շարք պատերազմներ հետևեցան՝ որոնք Հռոմայեցոց տարան հասցրին մինչև Աթէնք։

Ինչի՞ց է առաջ գալիս այս հակառակութիւնը՝ որ առաջի բերան այնքան զարմանալի է թվում։ Ինչի՞ համար Ցունաստանի արևելեան մասում այնքան լոյս՝ իսկ արևմտեան մասում այնքան խաւար է երևում։ Ինչի՞ Իտալիայում հակառակ երևոյթն է նշմարվում։ Ցունաստանի վերաբերմամբ կարելի էր դուցէ բաւականանալ ասելով թէ նա այդքան կենսատու ճառագայթներ ստանում էր փոքր Ասիայից Միլետի և Զմիւռնիայի միջնորդութեամբ։ Այս բացատրութիւնը որքան և հաւանական թուի՝ չէ կարող բոլորովին գոհացուցիչ լինել՝ մանաւանդ որ Իտալիայի նկատմամբ նոր մեկնութեան կարօտ կը լինէր։ Անշուշտ կ'ասեն նաև թէ Ցունաստանի խաւար կողմը չէր կարող Իտալիայի հանդիպակաց կողմը լուսաւորել։ Այս բաների բուն և իսկական պատճառը պէտք է ուրիշ տեղ որոնել։ Աշխարհագրութիւնը հաստատում է որ Պինդոս և մանաւանդ Ապենեան լեառը՝ մէկը արևելեան և միւս արևմտեան կողմը՝ մեղմ զառիվայրեր ունին՝ այնպէս որ

առաջնի գագաթնագիծը շարունակ Ադրիական և Յոնիական ծովերի մօտ է կանգնած, իսկ երկրորդինը հասնում է մինչև նոյն ծովերի եզերքը։ Ուստի եթէ Պօի և Դանուբի մեծ աւազանները հաշուելու չլինինք, որոնք իսկապէս ցամաքային են, կը տեսնենք որ Ադրիական և Յոնիական ծովերի մէջ շատ աննշան ջրեր են թափվում։ Բայց ոչ միայն գետերի, այլ և ցամաքի պակասութիւն կայ այստեղ։ Այս նկատմամբ Տիրենեան ծովը և Արշիպեղագոսը շատ աւելի յաջող դիրք ունին։ Նոցա եզերքների վրայ գտնվում են, օրինակի համար, Թեսալիան և Կամպանիան։

Յունաստանը, որ ամբողջապէս կղզիներից, ցամաքակղզիներից և սահմանափակ հովիտներից է բաղկացած, երբէք մի տերութիւն չէ կազմել։ Գոնեա այն ժամանակ երբ առաջնակարգ դեր էր խաղում։ Զուր կը լինէր ուրեմն մի նահանգ կամ մի քաղաք գտնել այնտեղ, որ ամբողջ երկրի վրայ գերիշխանութիւն ունեցած լինէր։ Սակայն Ատտիկէն և Աթէնքը, իրանց աշխարհագրական դիրքի շնորհիւ, սովորական տերութիւնից կամ մայրաքաղաքից աւելի բարձր նշանակութիւն են ունեցել։ Նոցա նախատեսմանուած էր իշխելու Ատտիկէի վրայ։ Ատտիկէն զետեղուած է Եւբէա կղզու և Արգոլիդէի ցամաքակղզու մէջ։ Երեք երկայն ու նեղ ցամաքի կտորներ առաջ են գնում Եգէական ծովի մէջ եւրոպական և ասիական Յիկլադեան կղզիների հանդէպ։ այդ երեք ցամաքներից մէկը, կենդրոնականը, Ատտիկէն է, որ փոխադարձ յարաբերութիւն ունի ասիական Յունաստանի մայրաքաղաքի, այն է Զմիւռնիայի հետ։ Այն ժամանակները երբ նաւագնացութեան համար կոմնացոյց չկար, այս դիրքը այնպիսի մեծ դիւրութիւն էր հաղորդակցութեան համար, որ այսօր հազիւ թէ կարողանանք արժանապէս գնահատել։ Արգոլիդէի և Ատտիկէի եզերքների մէջ կայ մի փոքրիկ ներքին ծով, որ հսկումէ Եգինէ կղզու վրայ, և որ Աթէնքը ձեռք էր ձգել յունական մեծ ծովը՝ Արշիպեղագոսը և նորանից կախուած երկները գրաւելուց առաջ։ Կրետէից մինչ Վոսփորը։ Մեծ եղաւ Աթէնքի սխալը, երբ Կորընթոսի պարանոցն ու խորշը դեռ չ'գրաւած՝ ձեռք զարկեց իւր իշխանութեանը ենթարկելու Սիկիլիան և մեծ Յունաստանը։ Նա դուրս եկաւ այն ժամանակ գործունէութեան այն շրջանից, որ գծումէր նորան ոչ միայն աշխարհագրութիւնը, այլ և Յունաց ընկերական ու քաղաքական կազմակերպութիւնը։ Այսօրուան Յունաստանը մի թագաւորութիւն է ձևացնում իւր խորհրդարանով, որ թէև իւր արժէքն ունի, բայց և այնպէս չէ կարող համեմատուիլ հին Յունաստանի հետ, չնայելով որ վերջինս միմանց հակառակ քաղաքների էր բաժանուած։ Աթէնքն էլ վերստին ծաղկելու վրայ է, բայց նա Արշիպեղագոսի տէրը չէ։ Կիկլադեան կղզիների այն կողմը գտնվում են

Յոնիացիք, որոնք թէև Փուրքերի լծի տակն են, բայց և այնպէս հարուստ ու յառաջադէմ են. նոցա գլխաւոր քաղաքը Զմիւռնիան աւելի վաճառաշահ ու բազմամարդ է քան Ամէնքը, և ներկայումս յոյն քաղաքների մէջ առաջինն է։

Հռոմը, որ աւելի փառատէր միանգամայն և աւելի լաւ ներշնչուած էր քան թէ Ամէնքը, հնութեան ամենարնդարձակ ու երկարատև իշխանութիւնը ստեղծեց. և այս բացատրվում է նորանով, որ ուրիշ շատ առաւելութիւնների հետ նա յաջող աշխարհագրական դիրք ունէր, որից ինչպէս և Ամէնքը, ներկայումս չէ կարող այնպէս շահաւիր ինչպէս անցեալում։ Հռոմայեցոց բնակելի երկրի սահմանները հասնում էին մինչև Միջերկրականի եւրոպական, ասիական և ափրիկական ափերը, և այս մեծ առաւելութիւն էր Իտալիայի, Լատինների ու Հռոմի համար։ Հռոմը Իտալական ցամաքակղզու ծովեղերեայ կողմի ճիշտ մէջ տեղն է գտնվում։ Հաւասար հեռաւորութեամբ Պալերմոյից և Միլանից, Կարթագինէից և Մարսիլիայից, Դանուբից և Ատլասից, Հերքիւլէսի արձանից և Վոսփորից, բայց ընդհանրապէս աւելի մօտ էր արևմտեան պատերազմասէր ու բարբարոս ժողովրդներին քան արևելեան քաղաքակիրթ ու մեղկ ազգերին, որով և միջոց ունէր մօտիկից հսկելու վերոյիշեալ ժողովրդների վրայ, որոնք միջոց էին տալիս նորան իւր քաջութիւնը գործ դնելու ու պահպանելու։ Այսօր որ Միջերկրականի աշխարհի վրայ աւելացան Ատլանտեան և Խաղաղական Ովկիանոսների աշխարհները, Հռոմը քաղաքականապէս խօսելով, ոչ այլ ինչ է եթէ ոչ Եւրոպայի ամենամատաղ տերութեան—Իտալական թագաւորութեան մայրաքաղաքը։ Նապոլիից նուազ բազմամարդ լինելով և Վենետիկն, Միլանին, Ջենովային, Փլորենցիային ու Պալերմոին հաւասարուելով, Հռոմը իւր նշանակութիւնը իրև մայրաքաղաք արդարացնելու համար հետամուտ է լինում մերձակայ ճահիճները ցամաքեցնելու, որոնք թէ բնակիչների առողջանն արգելք են լինում և թէ կղզիացնում են նորան Իտալիայի միս մասերից։

Եւրոպացիք արդէն Հռոմը լքել թողել էին, որ բարբարոս Գերմանացիք մօտենում էին նորան։ Սոքա պատրաստվում էին բոլոր Արևմուտքը միմեանց մէջ բաժանելու։ Երբ Արևելքում ծնուեց առաջ Կոստանդնուպոլիսը, հելլենական Հռոմը։ Մի զարմանալի զուգադիպութեամբ այս երկու քաղաքները միևնոյն լայնութեան աստիճանի տակ են գտնվում։ Երկու իրարու յաջորդող ցամաքակղզիների վրայ, որով երկուսն էլ նոյն կլիման և նոյն բերքերն ունին։ Թրակիան Ռումանիա (Ռումելիա) կոչուելով, Լատինների դերը սկսեց կատարել երկու թերակղզիների միջնորդութեամբ նա միացնում էր արևելեան վարչութեան եւրոպական և

ասիական մասերը։ Այս թերակղզիներից մէկը, որի ծայրին գտնվում էր Կոստանդիանոսի քաղաքը, մի կարևոր ճանապարհ էր կազմում, որ Դանուբից՝ Սինգիդունումի (Բելգրադ), Սարդիկէի (Սոֆիա), Փիլիպպոպոլիսի և Ադրիանապոլսի վրայով տանում հասցնում էր Եփրատի ու Տիգրիսի դժուար մատչելի կողմերը։ Կոստանդնուպոլիսը ընութիւնից այնպէս լաւ ամրացած էր, որ իւր երկրները հետզհետէ կորցնելուց յետոյ էլ (395—1204) դեռ երկար ժամանակ պահպանեց իւր անկախութիւնը։ Թէև Թուրքերը արդէն Դանուբի և Մարիցայի մէջ եղած երկրներին տէր էին դարձել։

Այսօր Օսմանեան կայսրութիւնը կարծես նոյն կերպով է վերջացնում իւր գոյութիւնը ինչպէս և բիւզանդական կայսրութիւնը։ բայց ցոյց տանք նախ որ նա նոյն կեանքով էլ տպրել է։ Կէս դարի ընթացքում՝ (1453—1520) Մէհէմմէտ Բ, Բայազետ Բ, Սէլիմ Կատաղին և Սիւլէյման փառաւորը Արևելեան կայսրութեանը յետ դարձրին այն բոլոր նահանգները, որոնց վրայ իշխել էին Արկադիոսը և նորա յաջորդները։ Մեր օրերում այդ տէրութիւնը քայքայուելու վրայ է։ Թէև ըստ երևութին նա շատ ընդարձակ է, բայց իրօք ամփոփուած է Վոստորի երկու ափերի վրայ, ուր նստում են Օսմանի հարստութեան պայազատները և բնակում են Թուրքերը՝ այն վիճակի մէջ որին հասցրել է նոցա աշխարհակալութիւնը։ Ամբողջ Զար–Դաղը, կայսրութեան այս բարձր դիտանոցը, բռնել են Բոսնիացիք, Մոնտէնէգրօցիք և Սերբիացիք, բոլորը էլ հարաւային Սլաւներ, որոնք կամաց կամաց մղում են Թուրքերին դէպի Ասիա, որտեղից չորս դար առաջ եկան բոլորովին տարբեր ընութեամբ ու բարքով։

Յայտնի է որ ներկայումս Օսմանեան կայսրութիւնը թէև աճուրդի հանուած չէ, բայց շատերը աչք ունին նորա վրայ։ Ո՞վ պիտի վերահաստատէ մի անգամ ևս, Հռոմայեցիներից և Թուրքերից յետոյ, Արևելեան կայսրութիւնը։ Բացի Օսմանցիներից, որոնք պէտք է ասել, դեռ ասպարէզից քաշուելու միտք չունին, մեր առաջ ներկայանում են Յոյները, Սլաւոնացիք, Ռումանացիք և Ռուսները։ Հուտով կը տեսնենք թէ Ռուսները, որոնք այնքան պարտական են Բիւզանդական կայսրութեանը, կը կամենային նոյն կայսրութիւնը աւելի մեծ ձևով վերականգնել։ իսկ Յոյները ի՞նչ կարողեն ցանկալ։ Արևելքի ազգագրութիւնը, որ Թէոդոսից, Յուստինիանոսից և Հերակլից յետոյ շատ փոփոխութիւնների է ենթարկուել, հարկաւորում է նոցա բաւականանալ Արշիպեղագոսի աւաղանով։ այս, հարկաւ տիւծի մասը չէ, բայց արհամարհելի կտոր էլ չէ։ Սլաւոնացիք Յոյներից աւելի բաղմաթիւ և պատերազմի աւելի ընտելա-

ցած են. բայց այստեղ խօսք կարող է լինել միայն հարաւային Սլաւոնացոց վրայ, որոնք իրանց ցեղակիցների բազմութիւնից անջատուած են ռումանական, հունգարական և գերմանական ազգութիւններով։ Այդտեղ գտնուած Սլաւոնացիք իսկապէս թուով շատ չեն և յիշեալ ազգութիւնների ու Ցոյների մէջ փակուած են. բայց և այնպէս նոցա ձեռքին են ուղղափառական կէտերը և ոչինչ չէ կարող պլուկ գալ առանց նոցա մասնակցութեան։ Ի՞նչ ասենք Տրանսիլվանիայում, Վալաքիայում, Մոլդավիայում և Բեսարաբիայում բնակող Ռումանացոց ակնկալութիւնների մասին. նոցա պահանջումները Ցունաց և Սլաւոնացոց պահանջումների չափ էլ ընդունելի չեն։ Օսմանեան տիրապետութեան յայտնի թշնամիները բոլորն էլ յունադաւան քրիստոնեաներ են, և ահա այս հանգամանքը կարող է ժամանակաւորապէս միացնել նոցա. բայց յաղթութիւնից անմիջապէս յետոյ, ցեղական իրաւունքներն ու պահանջումները երևան կը գան։ Խնդիրը պարզ կերպով լուծելու ամենայարմար եղանակը կը լինէր մի դաշնակցութիւն կազմել յունական, սլաւոնական և ռումանական ցեղերից, Կոստանդնուպոլիսը ընդհանուր մայրաքաղաք շինելով ամէնի համար. առաջնութիւնը կը մնար Ցունաց ձեռքը, որոնք թէև թուով սակաւ են, բայց աւելի կրթուած և աւելի հարուստ են քան Ռումանացիք և Սլաւոնները։

Բ.

ՌՈՒՍԱՍՏԱՆ.

Շարունակելով մեր ընթացքը, մենք մտնում ենք Ռուսաստան, բիւզանդական կայսրութեան ստեղծած այս երկիրը։ Ռուսաստանը, ճշմարիտ է, իւր ծագումը վերագրում է այն բախտախնդիր Նորվեգիացիների խմբին, որոնց առաջնորդում էր Ռուրիկ Թագաւոր Ռիւրիկը. բայց բանն այն է որ այս հզօր պետութեան բաղդը ոչ թէ Նովգորոդում, այլ Կիևում պատրաստուեցաւ։ Այս քաղաքը այնքան հեռու էր գտնվում Կոստանդնապոլսից, որ յարձակման երկիւղ չունէր նորանից. բայց միևնոյն ժամանակ այնքան էլ մօտիկ էր՝ որ շարունակ հաղորդակցութեան մէջ էր նորա հետ. որով Կիևը ականատես եղաւ թէ ինչպէս Ռուսները Դնեպրով եկող քարոզիչների, վաճառականների և արուեստագէտների ձեռքով կրթուելով ընդունեցին յոյն քրիստոնէութիւնը և բիւզանդական քաղաքականութիւնը, բարքն ու արուեստները։ Երբ Մոդոլները արշաւեցին Եւրոպայի վրայ, Ռուսաստանը

կարելի է ասել, կտրուեցաւ Բիւզանդիայից այն բարբարոս հրոսակների շնորհիւ, որքան գրաւել էին Սև ծովի շրջակայ գաւառները։ Այսպէսով Ռուսները քաշուեցան և կենտրոնացան Մոսկվայում և թէ և այնքան նուաստացան որ ստիպուեցան հարկ վճարել, բայց յետոյ այժ առին ու զօրացան։ Մոսկվան Պետրոս Մեծի ցանկութիւնն հակառակ Ռուսաստանի բուն մայրաքաղաքն եղաւ։ Նորա պակասորդը լրացրեց Կիեվը։ Եթէ Կիեվը, որ Սև—Հողի— Черноземъ—մէջ է գտնվում, վաղուց արդէն երկրագործական ձեռնարկութիւնների կենտրոնն է, և իւր բերքերը ուղարկում է դէպի հիւսիս Բիգայի վրայով և դէպի հարաւ Օդէսայի վրայով։— Մոսկվան այս դարում ռուս արհեստների կենտրոնը դարձաւ։ Պետերբուրգը նոյնպէս մի մեծ, բայց բոլորովին տարբեր գեր ունի կատարելու։ Նա շինուած է Նեվայ գետի վրայ, որ իւր ակիզբն առնում է Իլմէն, Օնէգա, Սայմա և Լադոգա լճերից, և գտնվում է մի մեծ ճանապարհի ծայրին, որ մի քանի արհեստական ջրանցքների միջնորդութեամբ մինչև կայսրութեան ծայրերն է հասցնում։ Պէտք է աւելացնել որ այս ճանապարհը գնում է մինչև Բալտիկ ծովը, որ տանում է արևմտեան Եւրոպայի երկրները, թէև դանդաղ և ծանր կերպով։

Մենք հարևանցի կերպով ցոյց տուինք Ռուսաստանի կազմութեան մեծ արժանաւորութիւնը միանգամայն և մեծ պակասութիւնը։ Այս անսահման դաշտավայրը, Միսիսիպիի և Ամազոնի աւազաններից յետոյ, ամենափառաւոր և ամենայարմար գետային ճանապարհն է ներկայացնում որ կարելի լինի գտնել։ Վոլգան է որ իւր 4000 հաղարամէտր ընթացքի շնորհիւ այնքան մեծ ու փոքր գետեր է միացնում։ Սակայն գիտելու արժանի է որ Վոլգան, թէև եւրոպական գետերի մէջ ամենից հզօրն է, թափվում է մի ծով որ բոլորովին առանձնացած է, հետևապէս և մեծ օգտակարութիւն չունի։ Վոլգան հանգստութեամբ և արագութեամբ բերում հասցնում է մի անելանելի տեղ, և այս բանում նա շատ չէ զանազանվում Դօնից, որ մի սակաւաջուր ու նեխեալ ծովի մէջ է թափվում—Ազովու ծովը—և Դնեպրից, որ Սև ծովն է հոսում։ Սև ծովը, ինչպէս և Բալտիկ ծովը իրան յանձնուող ճանապարհորդներին ուղղակի չէ տանում արևմուտքի աւելի քաղաքակիրթ երկրները, այլ բազմաթիւ նեղուցների միջնորդութեամբ (Վոսֆորը, Դարդանելը, Կրետէի ջրանցքը,—ուրիշ տեղ Զուէնդը, Բէլտը, Կատեգատը, Սկագեր—Բակը), որոնց տերերը ուղած ժամանակները փակում կամ բաց են պահում։ Վերջապէս Սպիտակ ծովը, որ Ռուսաստանի բնական ճանապարհն է հիւսիսային բևեռի կողմը, տարուան մեծ մասը սառուցներով լցնուած է, և այս կողմից նա Բալտիկ ծովից էլ աւելի անյարմար է նաւարկութեան։

Եթէ կայ մի երկիր որի միջնորդութեամբ Ռուսաստանը աւելի պինդ կապվում է մնացած Եւրոպայի հետ, այդ Լեհաստանն է. բայց այստեղ էլ ճահիճներ կան, որ հաղորդակցութիւնը դժուարացնում են։

Անցածներից հետևում է որ այս երկիրը, չնայելով իւր ընդարձակութեանը, որոշ սահմաններով շրջապատած է. Եւրոպայում ճահիճներով և ներքին ծովերով։ Ասիայում՝ յաւիտենական սառնամանիքներով և բարձր լեռնաշղթաներով։ Այն քաղաքագէտները՝ որոնք պատմական խնդիրների վրայ խօսում են առանց աշխարհագրութեան վրայ ուշադրութիւն դարձնելու, այնպէս են ներկայացնում իբրև թէ Ռուսաստանը պիտի կուլ տայ Եւրոպայի կամ Ասիայի մնացած մասը։ Սա մի թիւր հայեացք է, որ կարծեմ բաւական հերքուեցաւ վերևի տողերով։ Այս միտքը մինչև անգամ ծիծաղելի է դառնում, եթէ մտածենք որ Ռուսաստանը իւր 80 միլիոն բնակիչներով պիտի նուաճէ կամ կուլ տայ 200 միլիոն Եւրոպացիք, կամ 750 միլիոն Ասիացիք։ Այսպիսի մի ցնորական գաղափար փարատելու համար՝ բաւական է յիշել Չինաց կայսրութիւնը, որի զինուորական զօրութիւնը թէև թոյլ է, բայց 500 միլիոն բնակիչ ունի։

Ռուսաստանի նկատմամբ մի ուշադրութեան արժանի կէտ կայ, որ չպէտք է մոռացութեան տալ։ Բարձրացէք Վալդայի սարահարթի վրայ և տեսէք թէ ինչպէս ձեր շուրջը զանազան ուղղութեամբ հոսում են նորանից բղխող ջրերը։ Հետևեցէք այդ ջրի հոսանքներին մինչև Պետրոգրադ, Վաղան, Վորոնէժ, Խարկով, Մոհիլեվ, Սմոլէնսկ և Վիտեպսկ։ Ահա այնքան տեղ է տարածվում Ռուսաց բուն երկիրը, այն ուղղափառ Սլաւների երկիրը, որոնք կամաւորապէս ընդունեցին Կիևվի և Մոսկվայի սահմանած կարգերը։ Սոցա շուրջը բնակում են կաթոլիկ լեհացիք, որոնք Ռուսաց բարեացակամ եղբայրներ չեն։ Ֆիններ, որոնք աւելի կամ պակաս խառնուած են գերմանացոց հետ և լուտերական են արևմտեան կողմում, կռապաշտ հիւսիսում։ Վերջապէս թաթարական թաթարներ, որոնք մահմէտական կրօնին են հետևում։ Ուղղափառ Սլաւների թիւը 52 միլիոն է. մնացած 28 միլիոնը զանազան կրօնների ու ցեղերի պատկանող ժողովրդներ են, որոնց միջնորդութեամբ «սուրբ Ռուսաստանը»—святая Русь—դրսցի է դառնում Շուեդիային, Պրուսիային, Աւստրո—Հունգարիային, Եւրոպական և Ասիական Տաճկաստանին, Պարսկաստանին, Աֆղանիստանին, Չինաստանին և Ճապոնիային։ Այս անչափ տարածութիւնը քիչ այժ և քիչ օգուտ է տալիս նորան։ Մանաւանդ Ասիայի կողմից Ռուսաստանը կարծես, դպաց այս բանը։ Երբ սրանից մի քանի տարի առաջ քաշուեցաւ Խերինդի նեղուցի այն կողմը գտնուած

ընդարձակ անապատներից։ Բայց եթէ նա չափազանց մեծ ձգտում է ցոյց տուել ամայի երկրներ գրաւելու, չէ կարելի ասել թէ այս հանգամանքը ծանր վտանգներ կարողէն առաջացնել նորա համար. նախ՝ որովհետև օտար ցեղերն ու կրօնները մեծամասնութիւն չեն կազմում երկրորդ՝ որովհետև նա յայտնի թշնամիներ չունի իւր օտար հպատակների մէջ՝ բացի դուցէ Լեհացիներից, որոնք ոչինչ վնաս չեն կարող հասցնել նորան։ Դարձեալ բալտեան նահանգների գերմանացիք չեն դիմիլ Պրուսաց թագաւորին, որ չէ կարող մտածել իւր իշխանութեան տակ առնել նոցա. իսկ Ֆիններին իրանց հեզ բնաւորութեան համար քաղցրութեամբ են կառավարվում։ Գալով Թաթարներին, որոնք այնքան դարեր շարունակ տակնուվրայ արին Եւրոպան, այսօր հազիւ մի քանի միլիոն են կազմում. Ռուսաստանի փառքն այն եղաւ, որ ասիական բարբարոսութիւնը տկարացրեց ու սպառեց։ Այսպէսով Ռուսաստանը իւր ոյժերը ցրուելով աւելի սպառնացող վտանգների առաջն առաւ՝ քան թէ նորանոր վտանգներ առաջացրեց։

Ռուսաստանը ոչորի չէ սպառնում և ոչոր էլ Ռուսաստանին չէ սպառնում—այս կը լիներ մեր վերջին խօսքը, եթէ աչքի առաջ չունենայինք Արևելեան խնդիրը։ Այստեղ դարձեալ մեզ թվում է թէ աշխարհագրութիւնը ղանցառութեան է տուած ի մեծ վնաս քաղաքագիտութեան։ Այսուհետև Ռուսաց համար Կոստանդնուպոլիս գնալը շատ հեշտ բան է, բայց հազիւ թէ ցանկալի լինի։ Անտարակոյս նոցա համար օգտակար կը լիներ 52 միլիոն համակրելի Սլաւոնացոց վրայ 7 միլիոն հարաւային Սլաւոնացի աւելացնել, որոնք Օսմանեան կայսրութիւնից կախում ունին, բայց վրանգաւոր կը լիներ 28 միլիոն օտարազգիների վրայ համարեա նոյնքան Ռումանացիք, Յոյնք, Հայք և բազմացեղ Մահմեդականներ աւելացնել։ Արևելեան խնդիրը վերջնականապէս վճռել Ռուսաստանի համար իւր բնութիւնը փոխելու չափ հաճոյարարար կը լիներ, և եթէ Կոստանդնուպոլիսը նորա ձեռքն ընկնէր, ոչ թէ սլաւոնական մայրաքաղաք կը դառնար՝ այլ մի տեսակ Բարեղոնեան աշտարակ։ Իսկ առևտրական տեսակէտից խօսելով՝ այս տերութիւնը բաւական պատրաստուած չէ այն երկրները կերպարանափոխուելու։ որ Թուրքիան թողնում է առանց ճանապարհների, առանց երկաթուղիների և առանց ճարտարութեան։ Ներկայումս Անգլիան միայն կը կարողանար այսպիսի մի հրաշք գործել։

Բայց առևտրական տեսակէտի տեղ կայ մի ուրիշ կէտ որ Ռուսաստանի սրտին մոտ է—ազգային տեսակէտը։ Ատիսլուած չինելով աշխարհավարական նախանձութեամբ հրաժարուելու Կոստանդնուպոլսից՝ նա կարող է համակրութեան կողմն անցնիլ։ Այստեղ դարձեալ ցեղերի աշխարհագրութիւնը մի խոչընդոտ է հա-

նում թէ ռուս պետական մարդկանց և այն անձանց առաջ, որոնք շատ բան հաւանական ու կարելի են համարում։ Աշխարհագրական և տոհմագրական բոլոր իրողութիւնները ցոյց են տալիս, որ Ռուսաստանը կը բռնականանայ և այն երկար ժամանակ սլաւոնական պետութիւնը լինելու և կ'աշխատի դրսի Սլաւոնացոց ձեռքով մեծ ճնշում գործել Աւստրօ—Հունգարիայի և Թուրքիայի վրայ, որոնք դատապարտուած են իւր վերաբերմամբ վասալի դեր կատարելու։

Գ.

ԳԵՐՄԱՆԻԱ—ԱՒՍՏՐԻԱ և ՊՐՈՒՍԻԱ

Այս պատմական և աշխարհագրական դիտողութիւնների մէջ անյարմար կը լիներ Գերմանիայի և Աւստրիայի կայսրութիւնները միմեանցից բաժանել։ Եթէ Աւստրիայի կայսերական տունը այնքան երկար ժամանակ իւր գոյութեան տակ պահեց գերմանական երկիրը, այդ ոչ իրրև մի պատահմունք, այլ իբրև աշխարհագրական պայմանների արդիւնք պիտի համարուի։ Բնենք այս երկու երկրների դիրքը և նոցա արտաքին կազմութիւնը, և մենք միջոց կ'ունենանք շատ քաղաքական խնդիրներ լուծելու։ Այստեղ հակառակ այն բաների որ տեսանք կամ պիտի տեսնենք ուրիշ երկրներում, ամէն ինչ բարդ և ըստ երևութին նաև խառն է. չեն երևում ոչ Ռուսաստանի հոյակապ՝ բայց պարզ ձևերը, և ոչ Ցունական ցամաքակղզու ներդաշնակ՝ բայց անդադար փոփոխուող ձևերը։ Աւստրօ-գերմանական երկիրը երեք որոշ մասեր է ներկայացնում։ Ալպերի վերին մասը, դանուբեան սարահարթը և հիւսիսային դաշտավայրը, որոնք միմեանց հետևում են «ինչպէս տաղը, հովուերգութիւնը և արձակ խօսքը»։ Անսահման դաշտավայրը, որ ձգվում է Բելգիայի և Ռուսաստանի մէջ, կազմում է դարերի և մասամբ նաև մարդու յաղթանակը Ովկիանոսի վրայ։ Գերմանական Ալպերը, որոնց երկրաբանական որպիսութիւնները իտալական և զուիցերական Ալպերի որպիսութիւններից բոլորովին տարբեր վում են, ամէն կողմը տարածում են իրանց կրային ճիւղերը և անսովոր ստուարութեան են հասնում։ սոքա են որ հոմէական կայսրութեան ժամանակ իբրև մի ամուր պատուար բարձրանում էին քաղաքակրթութեան և բարբարոսութեան մէջ։ Այս համարեա տղմուտ դաշտավայրի և սառնամանիքով ծածկուած լեռնաշղթաների հակառակութիւնը երկար չէ կարող զրա

ղեցնել մեզ։ Աշխարհագրերը՝ որ գիտութեան մի նշանաւոր ամենագրաւիչ բանաստեղծութիւնից բարձր է դասում՝ սիրով բարձրանում է Մետաղական լեռների կամ հնական լեռների համեստ՝ բայց բազմանկար կատարների վրայ։ Այստեղից նորա աչքերի առաջ պարզվում է նախ Բոհեմիայի Կադրիլատերը՝ իբրև մի սեպ Գերմանիայի մեջ խրուած—Der Keil im Deutschlands Fleische։ Բոհեմիայի այս Կադրիլատերի վրայ գալիս յենվում են Հերսինեան՝ Փրանկոնեան և Կարպաթեան սիստեմները։ Մի բաւական մեծ՝ բայց ոչ շատ լայն խորութիւն բաժանում է նորան ալպեան սիստեմից՝ որպէս թէ Դանուբի հոսանքին ճանապարհ տալու համար։ Նա ինքը ճանապարհ է տալիս երկու պատերի միջով Էլբա գետին՝ մինչև հարաւային կողմում՝ Մորաւիայի լեռնադաշտակը հեշտութեամբ կապում է նորան հունգարական դաշտավայրի հետ։

Բաւարական սարահարթը Գերմանիայի յատկանիշ գծերից մէկն է կազմում։ Նորա միջնորդութեամբ հարաւը հիւսիսի հետ սերտ կապով կապվում են։ Դանուբի մէջ թափուող գետերը՝ Լեխը՝ Իզարը՝ Ինը՝ որոնք Ալպերից են բղխում՝ երկայն ու մութ անցքերով հեղեղաբար վազելուց յետոյ՝ դուրս են գալիս և հանդարտ հոսում են այն սարահարթի վրայ՝ որ զուիցերական և կաստիլիանեան սարահարթերից յետոյ Եւրոպայի ամենամեծ սարահարթն է։ Փիխտելբգեբիրգէնից՝ այնտեղ ուր միանում են Մետաղական և Բոհեմական լեռները՝ բղխում է Մայն գետը իւր օձապտոյտ ընթացքով՝ որի ուղղութիւնը Դանուբի ուղղութեանը զուգահեռական է։

Մայնը միանում է Հռենոսի հետ։ Հեշտ է եղել ուրեմն՝ մանաւանդ այսպիսի քիչ խոչընդոտներ ունեցող երկրի մէջ՝ մի ջրանցք կազմել՝ որ միջոց է տալիս Հռենոսի գետաբերանից մինչև Դանուբի բերանը անարգել նաւելու։ Բուալոն՝ որ զարմանում էր Ատլանտեան Ովկիանոսի և Միջերկրականի ջրերը «Պիրենեան լեռների ստորոտում միացած՝ տեսնելով՝ շատ աւելի կը զարմանար եթէ տեսած լինէր Սև ծովի և Հիւսիսային ծովի միաւորութիւնը՝ որ գրեթէ ամբողջապէս բնութեան գործ է։ Հիւսիսային գետերը՝ Հռենոսը՝ Վեզերը՝ Էլբան՝ Օդերը և Վիստուլան անցնում են սարից դաշտ՝ որոնք շատ անհաւասար կերպով բաժանում են իրանց մէջ նոցա աւազանները։ Հռենոսը՝ որ Դանուբի պէս միջազգային գետ է,—Գերմանացիք յաճախ ժխտում են այս իրողութիւնը (Der Vater Phein und die Muttar Doneu)՝—իւր սկիզբն առնում է Եւրոպայի վերին կողմերում՝ կենտրոնական Ալպերից։ Այս գետը ազատաբար սկսում է հոսել մի միայն Ստորին-Նահանգների մօտ, Կոլոնիայից յետոյ։ Ընդհակառակն՝ Վեզերը Վեստֆալեան

դոնից յետոյ Էլբան Հանդաւի կրճից յետոյ Օդերը Վիստուլան համարեա իրանց ակունքներից սկսած՝ Հիւսիսային դաշտավայրը ողողում են։ Դիտելու է որ այս գետերից Գերմանական ծովը թափուողները դեպի արևմուտք են թեքվում։ Իսկ Բալտիկ ծովը թափուողները միայն վերջերը արևելեան կողմն են ծովմտորով և ներքին հաղորդակցութիւնների բաւական հեշտութեամբ են կատարվում։ Հշմարիտ է որ նոքա արագութեամբ նաւատակի չեն հասցնում։ Հշմարիտ է նոյնպէս որ ինչպէս Ռուսաստանում նոքա երկրորդական ծովերի են տանում այնպիսի ապրանքների վրայ որոնք աւազի կոյտերով ծածկուած են։ Միեն կողմից Դանուբի տարածութիւնը այնքան է որ այս գետը մինչև Անծովն է հասնում։ Շատ հեռու Աւստրո-Հունգարիայից աւելի աւելի հեռու Գերմանիայից։ Գերմանիան նոյնպէս հրաժարվում է։ Հոնոսից այնտեղ ուր այս գետը բազմաթիւ ճիւղեր է կազմում որոնք գրեթէ հասնում են մինչև Զուիդերզէյ և Հիւսիսային ծովը։ Մի ուրիշ ուշադրութեան արժանի կէտ էլ այն է որ Հիւսիսային ծովից Բալտիկ ծովը երթալու համար պէտք է Իւտլանդի երկարացամաքակղզի շուրջը պտտել և Սկագեր Բակի, Կատէգատի և Զունդի նեղուցների կոր գիծը բռնել։ միայն նորերումս Էյդերի ջրանցքի շնորհիւ այս ծանր ճանապարհը կրճատուեցաւ։ Ադրիական ծովը որ Բալտիկ ծովի հետ մի կէտում այնպէս սաստիկ սեղմում է Գերմանական մարմինը, աւելի մեծ դժուարութիւններ է ներկայացնում նաւագնացում է կրային Ալպերի միջ կողմը և ոչ մի գերմանական ծով չէ թափվում նորա մէջ։

Մեր քննութիւնից դուրս բերուած ընդհանուր աշխարհագրական տպաւորութիւնն այն է որ Գերմանիայում մասների ներդաշնակ համեմատութեան հետ մի տեսակ թերի բան էլ է նկատվում։ այնպէս որ նա ընդարձակ միանգամայն և նեղ երկիր է թվում նա մի ինքնուրոյն և հզօր ուրուագիծ է։ բայց և այնպէս ուրուագիծ է և ոչ կատարեալ պատկեր։ Ամենայն ինչ այստեղ տալիս է ձեզ մի այնպիսի երկրի գաղափար որ ոչ սահմաններ, ոչ էլ բաւական հաղորդակցութեան միջոցներ ունենալով աշխարհի մնացած մասերի հետ դատապարտուած է արիւնաշաղախ ճանապարհ բանալու իւր համար դեպի դրացի երկրները։

Ակամայն իւր այժմեան վիճակին նայելով Գերմանիան կարող է հետևեալ սկզբնական տարրերին վերածուիլ 1) Բոհեմիան, 2) Ավստրիան (Բոհեմիայի և Ալպերի մէջ) 3) Բաւարիան (Դանուբեան տարահարթը) 4) Շվաբիան 5) Ֆրանկոնիան (Մայնի աւազանը) 6) Տիրէնդիան իւր շրջականներով (Ռեյնի և Սաալի վերին հոսանքը) 7) Հին Սաքսոնիան։ ուր գտնում ենք Վեստֆալիայի, Հանովերի և Բրանդենբուրգի այժմեան բաժա-

նուՄՆերը (հիւսիսային գետերի ներքին հոսանքները)։

Տեսնենք թէ աշխարհագրութիւնը իսկապէս ինչ դեր է նշանակել այս երկրներից իւրաքանչիւրին։

Քաղաքակրթեալ և քրիստոնեայ Գերմանիայի սկզբնական ժամանակներում Ֆրանկոնեան առաջին տեղն է բռնում։ Սորա պատճառն այն է որ Ֆրանկոնեան բուն Գերմանիայի կենդրոնում է գտնվում։ այն նեղ, նախնական Գերմանիայի կենտրոնում, որի սահմաններն էին Հռենոսը, Էլբան, Գերմանական ծովը և Ալպեան լեռների հիւսիսային զառիվայրը։ Գերմանիայի քրիստոնէութիւնն ու քաղաքակրթութիւնը պատրաստուել էին Աւստրիազիայում, այսինքն Մոզէլի աւազանում։ Շօշափման կէտն եղաւ Մայնց քաղաքը։ այնտեղ ուր Մայնը թափվում է Հռենոսի մէջ։ այս քաղաքում հաստատուեցաւ Գերմանիայի եպիսկոպոսապետական աթոռը։ Ֆրանկոնիայում Ֆրանկֆորտը (Ֆրանկների անցք) քաղաքական տեսակէտից նոյն կարևորութիւնը ստացաւ, ինչ որ ունէր Մայնցը կրօնի վերաբերմամբ։ Քիչ այն կողմը Վուցբուրգը և Նուրէմբերգը կապում էին Ֆրանկոնիան ու Բաւարիան, իսկ Աշաֆէնբուրգը և Շվէյնֆուրտը միացնում էին Ֆրանկոնեան և Տուրէնգիան։ Մայնցի հիւսիսային և հարաւային կողմերում, Հռենոսի ափերի վրայ զարգացան Շպէյեր, Վորմս և Կոլոնիա քաղաքները, որոնք Տրիրի և Ախէնի հետ Գերմանական կայսրութեան սրբազան քաղաքներն եղան։ Շվաբիան և Սաքսոնիան, մէկը միջին դարերում, իսկ միւսը նոր դարերի սկզբում, բողոքեցին Հռենոսի երկրների եկեղեցական ձգտումներիդէմ. առաջինից դուրս եկան Հոհէնշտաուֆէնները, և Հոհենցոլլէրները, իսկ երկրորդից Լուտերը։ Ընդհակառակն Բաւարիան, Գվելֆների հալածանքից յետոյ, ենթարկուեցաւ Մայնցի կրօնական ազդեցութեանը։

Արդ Սաքսոնիան և Բաւարիան իւրաքանչիւրը իւր հզօր ազդեցութիւնը իւր սահմաններից դուրս տարածելու բաղդն ունեցաւ։ Բաւարիան և Սաքսոնիան իրանց նմանութեամբ ստեղծեցին Աւստրիայի և Բրանդէբուրգի իշխանութիւնները, որոնք պիտի ժառանգէին նորա ազդեցիկ դերը։ Աւստրիան և Բրանդէբուրգը սկզբում մի մի մարգրաֆութիւն էին կազմում, որոնք կախում ունէին վերոյիշեալ երկու մեծ դքսութիւններից։ սակայն ժամանակ անցնելուց յետոյ Վենան և աւելի յետոյ Բէրլինը նսեմացրին Միւնխէնն ու Մագդեբուրգը։ Դիտելու արժանի է և այս, որ Աւստրիան ունեցաւ Բաւարիայի առաքինութիւններն ու թերութիւնները, իսկ Բրանդէբուրգը ժառանգեց Սաքսոնիայի առաքինութիւնները ու թերութիւնները։

Բրանդէբուրգի և Աւստրիայի շնորհիւ Գերմանական ցեղը տարածուեցաւ Հիսիսում մինչև Ֆինլանդիայի ծոցը, իսկ հարա-

ւում՝ մինչև Հունգարիայի խորերը. այդ կողմերում բնակող Սլաւոնները յետ մղուեցան կամ գերմանական տարրերի ազդեցութեանը ենթարկուեցան։ Բոհեմիան երկու մարգրաֆութիւնների մէջ ընկած լինելով՝ մինչև մի աստիճան գերմանացաւ։ չնայելով որ սլաւոնական տարրը ստուար մեծամասնութիւն էր կազմում երկրի մէջ. նա ենթարկուեցաւ առաւելապէս Սաքսոնիայի մտաւոր ազդեցութեանը։ բայց քաղաքականապէս Աւստրիայից կախում ունեցաւ։ որովհետև նորա հարաւային սահմանները աւելի մատչելի էին։—Սահմանափակուելով արևմտեան կողմից Ֆրանսիական կալուածներով՝ Գերմանիան՝ քիչ շատ բաղդի բերմունքներին նայելով՝ ուրիշ ամէն կողմերը հզօր ոստեր էր արձակում։ Նեմէնի և Էլբայի այս կողմը Գերմանական տարածումը զանազան քաղաքների ու երկրագործական գաղթականութիւնների ծնունդ տուաւ։ բայց չյաջողեցաւ գերմանական նահանգներ ու տէրութիւններ կազմել։

Դ.

ԱՒՍԾՐԻԱ և ՊՐՈՒՍԻԱ

(շարունակութիւն)։

Բէրլինն ու Վիեննան իսկապէս ներկայացնում էին յառաջխաղացութեան գաղափարը դէպի արևելք՝ Drang nach Osten՝ որ Հոհէնշտաուֆէնների անկումից յետոյ Գերմանիայի գլխաւոր հոգն եղաւ։ Լուքսէմբուրգեան տոհմը և նորան յաջորդող Հաբսբուրգեան տոհմը ամէնից աւելի միջոց ունէին այս ցանկութիւնը կատարելու։ Բոհեմական և Հունգարական երկրները՝ չնայելով ցեղական ատելութեանը՝ ենթարկուեցան հետզհետէ Աւստրիայի մեծ դքսութեան իշխանութեանը՝ որ արդէն ընդարձակ կալուածներ էր ձեռք բերել Ալպեան լեռների կողմը։ Հաւանական է որ եթէ Թուրքերի արշաւանքները արգելք եղած չլինէին՝ աւստրօ գերմանական զօրքերը իրանց իշխանութիւնը կը տարածէին նաև բոլոր ռումանական երկրների վրայ. ստոյգ է գոնէ որ սոքա քաջութեամբ կռուեցան Թուրքերի դէմ՝ որոնք Վիեննան երկու անգամ պաշարելուց յետոյ՝ 1529-ին և 1683 ին՝ յետ մղուեցան մինչև Բէլգրադ։ Գերմանիայի յոյսերն ու երկիւղները՝ արևելքի կողմից՝ բաւական եղան կայսերական թագը Աւստրիայի թագաւորող տան ձեռքը թողնելու՝ որ այնքան ատելի էր դարձել կրօնական վերանորոգութիւնից յետոյ։

Ուրիշ յոյսեր և ուրիշ երկիւղներ՝ այն որ յարուցել էր

Լուտերի հերձուածը՝ մի առաջնակարգ դեր պատրաստեցին Բրանդէրուրգի իշխանութեան համար՝ որ Բոհեմիայի ու Սաքսոնիայի այն կողմը գտնուելով՝ բուն բողոքական երկրների մէջ՝ Աւստրիայից կասկածելու տեղիք չունէր։ Նա սկսաւ նախ իւր սահմանները ընդարձակել ի վնաս Սլաւոնացոց՝ իսկ ներկայ դարում նա մտածեց Գերմանիայի միութիւնը գլուխ բերել։ Սադովայի պատերազմից յետոյ՝ 1866-ին՝ Բէրլինը Գերմանիայի մայրաքաղաք դարձաւ և Վիեննայի տեղը բռնեց՝ որ Աւստէրլիցից յետոյ իւր նշանակութիւնը կորցրել էր։

Այս առթիւ կարելի է այնպիսի խնդիրներ արծարծել՝ որ աշխարհագրութիւնը ուրիշ ամէն գիտութիւնից աւելի հնար ունի լուծելու։ Արդեօք Աւստրիան՝ եթէ իւր գոյութիւնը պահպանէ՝ կը շարունակէ՞ իւր ընթացքը դէպի Արևելք՝ որ չորս դար առաջ ընդհատուեցաւ Թուրքերի յաղթութիւններով։ Արդեօք Պրուսիան կը յաջողի՞ կատարելապէս միացնել Գերմանիան՝ որ այսօր տակաւին այնքան մասերի բաժանուած է։

Այնքան անգամ կրկնել են այն խօսքը թէ Աւստրիան «մի աշխարհագրական բառ է»՝ որ հեշտ է եղել համոզելու տգէտներին թէ այդ տերութիւնը դատապարտուած է շուտով քայքայուելու։ Այժմ որ հետզհետէ աւելի համոզվում են թէ աշխարհագրութիւնը գուցէ քաղաքական շէնքերի ամենահաստատուն հիմն է կազմում՝ այս օտարոտի նախապաշարումը անհետանում է։ Կասկած չկայ որ Աւստրիան այնպիսի ազգագրական պայմանների մէջ է գտնվում՝ որ շատ դժուարութիւններ և մեծ վտանգներ են առաջանում այս կայսրութեան համար։ Սակայն եթէ լաւ մտածելու լինինք՝ Պրուսիան էլ չէ կարող ցանկալ այդ դժուարութիւնները և այդ վտանգները իւր վրայ առնել։ Գուցէ ոմանք կարծում են թէ նա դիտաւորութիւն ունի մի օր խլելու Աւստրիայի մեծ դքսութիւնը և նորանից կախուած ուրիշ գերմանական հողերը՝ սլաւոնական, հունգարական և ռումանական ժողովրդներին իրանց բազդին և այժմեան իշխանական հարստութիւններին թողնելով։ Բայց այն ժամանակ պէտք է ենթադրել որ Գերմանիան՝ Պրուսիայի նախագահութեան ներքոյ՝ պիտի հրաժարուի Արևելք տարածուելու գաղափարից՝ որի վրայ վերևը խօսեցանք։—Ոչ։ Աւստրիայի մեծ և մերձաւոր վտանգը Գերմանիայի կողմից չէ՝ այլ Սլաւոնացիներից՝ որոնք աւստրիական և հունգարական տերութիւնների մէջ բաժանուելով՝ դեռ ոչ մի բաւականութիւն չեն ստացել։ Պէտք է ասել՝ որ եթէ Սլաւոնացոց ցրուած վիճակը դժուարութիւններ է ներկայացնում նոցա համար առանձին տերութիւն կազմելու՝ կարելի էր հեշտութեամբ վերականգնել Չեխերի և Խրուսթների ինքնավարութիւնը՝ երկու առանձին խորհրդարան հաստատելով՝ որոնցից

մէկը կը գումարուէր Պրագայում, իսկ միւսը Զագրէբում։ Բոհեմիան կը պահպանէր իւր խառն՝ մասամբ սլաւոնական և մասամբ գերմանական բնաւորութիւնը, բայց սլաւոնական քաղաքակրթութեան գլուխը կը կանգնէր, որի ամենաբարձր արտայայտութիւնը նոյն իսկ Պրագան կը լինէր. ընդհակառակն, Խրուաթիան զուտ սլաւոնական տէրութիւն կը ձևացնէր, և իւր կազմակերպութեամբ ժամանակով օրինակ կը դառնար Սերբիայի, Բոսնիայի և Բուլղարիայի համար։

Ոչ ոք չէ կարող իրաւացի կերպով պահանջել որ ինչ որ աշխարհագրութիւնը կամ որ նոյն է, բնութիւնը արել է՝ քանդուի։ Առէք քարտէզը և լաւ դիտեցէք. կը տեսնէք որ Դանուբի աւազանը, որ 750,000 քառակուսի հազարամէտր մակերևոյթ ունի, չորս որոշ մասերի է բաժանվում. 1) Բրոգէնի ակունքից մինչև Պասաւ (50,000 քառակուսի հազարամէտր). 2) Պասաւից մինչև Գրան 100,000 քառակուսի հազարամէտր). 3) Գրանից մինչև Օրշովա (400,000 քառակուսի հազարամէտր). Օրշովայից մինչև ծովը (200,000 քառակուսի հազարամէտր)։ Մեր նշանակած կէտերում գետը սեղմուած է բարձր ժայռերով։ Այս մասերից առաջինը Բաւարական լեռնադաշտի մասն է կազմում, չորրորդը Օսմանեան կայսրութեան հարկատու կամ հարկատուութիւնից նոր աղատուած երկրներին են վերաբերում, իսկ երկրորդն ու երրորդը աւստրօ-Հունգարական կայսրութեան սեպհականութիւն են, բայց ֆիզիկապէս բոլորն էլ անբաժան են միմեանցից։ Արդարև, աւստրիական Ալպերից են իջնում արևմտեան այն մեծ հոսանքները, որոնք գալիս միանում են Դանուբի հետ Հունգարիայում. այս գետը փոփոխակի անցնում է Դրավայի, Տիսսայի և Սավայի հովիտներով։ Բացի սորանից, Հունգարիան Աւստրիայից ստանում է գիտութիւններն ու արուեստները։ Այս այսպէս լինելով, հասկանալի է որ այս երկրի մայրաքաղաքը՝ Պէստը Դանուբի հիւսիսային արևմտեան կողմն գտնուի, և անմիջական հաղորդակցութիւն ունենայ Վենայի հետ, որ ճիշտ խօսելով՝ Դանուբի բուն տէրն է։

Արդեօք Աւստրիան զլուխ պիտի տանէ՞ իւր սկսած գործը. արդեօք նա պիտի առաջնորդէ բոլոր հարաւային Սլաւոնների և բոլոր Ռումանացոց կազմակերպութեանը։ Այս բանը մենք հնարաւոր, մինչև իսկ հաւանական ենք համարում եթէ նա իւր դաշնակցական կայսրութեան շրջանակը ամրողջացնէ։ Ակներև է գոնէ որ միայն Աւստրիան, Դանուբի վրայ ունեցած դիրքի շնորհիւ, կարող է գերմանական քաղաքակրթութիւնը և ազդեցութիւնը տարածել մինչև Սև ծովի ափերը։

Մինչդեռ աւստրիական կայսրութիւնը կարծես աւելի ու աւելի հետամուտ է լինում վարչութեան դաշնակցական ձևը իրակա-

նացնելու, գերմանական կայսրութիւնը, ընդհակառակն, մի անզուսպ ձգտում է ցոյց տալիս քաղաքական միութիւնը գլուխ տանելու. այս ձգտումը ոչ այնքան երկրի աշխարհագրական դիրքով է բացատրվում, որքան համացեղ ժողովուրդների բնակցութեամբ. Հռենոսի ափերից մինչև Նեմէնի ափերը ձգուող գաշտավայրի նկատմամբ, Բերլինը, որ Շպրէեայի ափումն է գտնվում (Էլբայի հոսանքներից մէկը), ամենայարմար մայրաքաղաք է. իսկ ընդհանրապէս գերմանական երկրի նկատմամբ, Բերլինը կենտրոնից հեռու է ընկած. Նորա առաւելութիւնն այն է որ իշխում է Հիւսիսային և Բալտիկ ծովերը թափուող գետերի վրայ, ինչպէս որ Վիեննան իշխում է Դանուբի վրայ. Իսկապէս Պրուսիան և Աւստրիան միմեանց լրացնում են. առաջինը բռնում է համարեա Գերմանիայի բոլոր հիւսիսային մասը, իսկ երկրորդը գրեթէ բոլոր հարաւային մասը.

Գերմանական կայսրութեան այն երկրները՝ որոնք դեռ Պրուսիայի հետ միացած չեն, երեք խումբ են կազմում. Հարաւային ծայրում գտնվում են այն տէրութիւնները, որոնց վիճակուած է երկար ժամանակ իրանց գոյութիւնը պահպանել, որովհետև Պրուսիայի անմիջական գործունէութեան շրջանից դուրս են. Այստեղ է Բաւարիան, որ մեծ նշանակութիւն չունի մտաւորական կեանքի նկատմամբ, բայց այս կաթոլիկ տէրութիւնը պինդ հաստատուած է Դանուբեան բարձրավանդակի վրայ. յենուելով Ալպեան լեռների վրայ նա իշխում է Մայնի աւազանի վրայ, ուր գտնվում է պատկառելի, սկեպտիկական և հանճարեղ Ֆրանկոնիան. Փֆալցի միջնորդութեամբ նա մօտենում է Ալզասին և Լոտարինգիային. այստեղ միմեանց հանդիպում են նոյնպէս Վիւրտէմբերգը և Բադէնի մեծ դքսութիւնը, որոնք բանաստեղծական և արդաւանդ Շվաբիայի նշանաւոր մասերն են կազմում*).

Մեկլէմբուրգի և Օլդէնբուրգի դքսութիւնները և այս դքսութիւնների մէջ Բրէմ, Համբուրգ և Լիւբէկ ազատ քաղաքները, կարող են նոյնպէս յուսալ իրանց ինքնավարութիւնը երկար ժամանակ պահպանելու, որովհետև այստեղ աչքի առաջ կան զանազան իշխանական տոհմերի օգուտներ և վաճառականական շահեր, որ չէ կարելի զանցառութեան տալ. Նոյնը չէ կարելի, կարծեմ, ասել Սաքսոնիայի մասին, որի երկրների մի մասը արդէն միացել են Պրուսիայի հետ և որի կառավարութիւնը կաթոլիկ հարստութեան ձեռքին է, թէև ինքը բողոքական երկիր է. Ի՞նչ ասենք այն անանշմարելի կղզիների մասին, որոնք Գերմանիայի ամենահզօր տէրութեան միջավայրումն են գտնվում. Նորա այլ և այլ չեն կարող պահ-

*) Ֆրանկոնիան Գէօթէի հայրենիքն է, Շվաբիան-Շիլլէրինը.

պանել իրանց գոյութիւնը և շուտով ընդհանուր հոսանքի մէջ պիտի ընկղմին։

Մենք կարծում ենք թէ բաւական ապացուցուեցաւ որ Գերմանիայի և Աւստրիայի կայսրութիւնները համերաշխութեամբ են ընթանում։ Աւստրիան, որ դաշնակցութիւնների է տրոհվում, հետզհետէ աւելի և աւելի կ'ենթարկուի Գերմանիայի ազդեցութեանը, որ միութեան էր ձգտում, բայց նա ոչ կուլ կը գնայ, ոչ էլ կը քայքայուի։ Իւր հարևանի քաղաքական և գիտական ներգործութեամբ կերպարանափոխուելով, նա կը սփռէ քաղաքակրթութեան բարիքները մինչև հեռաւոր տեղեր։ Աշխարհագրական տեսակէտից խօսելով, նախաձեռնութեան դերը չէ կարող ընկնել Ռուսաց կայսրութեանը, որովհետև այս տերութիւնը արևելեան Եւրոպայի ժողովրդներին մօտենում է այնպիսի նահանգների միջնորդութեամբ, որոնք մտաւորական մշակութիւնից զուրկ են։ Դանուբ գետը կարելի էր Հորս-Կայսրների փողոց անուանել։ բայց Գերմանիայի կայսրը այս գետի վրայ միայն իւր տոհմի որորոցն ունի։ այն է Հոհէնցոլլերնը։ Թուրքիայի կայսրը այսօր մի անշան մասի տէրն է։ իսկ Ռուսաց կայսրը Բեսարաբիայի ճահիճներից է նշմարում նորան։ Մի միայն Աւստրիացոց կայսրը, որ ելնում է Դանուբի վրայ Բասելից մինչև Բելգրադ, պինդ կերպով հաստատուած է նորա ափերի վրայ։ Դժուար կը լինէր դուրս անել նորան այդտեղից, աւելի ևս դժուար նորա տեղը բռնել։

Ե.

ՀԻՍՊԱՆԱՑԻՆ ՓՈՔՐ ՏԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հիսպանական փոքրիկ տերութիւնները, որ մենք այստեղ միասին կ'առնենք հարևանցի նկատուելով, կարծես թէ Գերմանիայի շարունակութիւնը լինին։ Այսպէս, Զուիցերիան և Սաորին Նահանգները Հռենոսի աւազանի մէջ են պարունակվում։ Առաջինին պատկանում են «գերմանական Հռենոսի» ակունքը, երկրորդներին նորա գետաբերանը։ Դանիան մեզ երևում է իբրև հին Սաքսոնիայի յաւելուած, և ապացուցուած է որ նախապատմական ժամանակներում նա միացած էր Սկանդինաւիայի հետ։ Այս բոլոր երկրներում գերմանական բարբառներն են տիրապետում (գերմանական, ֆլամանդական, հոլանդական, դանիական, նորվեգիական, շուեդական լեզուները)։ Եւ սակայն այստեղ հինգ կամ վեց որոշ գործառաններ, կամ աւելի լաւ ասենք, հինգ վեց ուժեղ հոգիներ կան մի կարուած բայց առողջ մարմնի մէջ հաստատուած։ Այս ինքնուրոյն

քաղաքական գոյութիւն ունեցող երկրներից ոմանք միջազգային դաշինքների պաշտպանութեան տակ են գտնվում, որոնք պարտաւորեցնում են նոցա չէզոք դիրք պահել և սորա փոխարէն՝ երաշխաւորում են նոցա անկախութիւնը։ Յայտնի ապացոյց որ ոչ մի այն ապրելու ընդունակ են համարել նոցա՝ այլ և անհրաժեշտ եւրոպական քաղաքակրթութեան ազատ զարգացման համար։

Թէ արդարև նոքա ապրելու ընդունակ են՝ այդ շուտով կ'ապացուցանենք։ Ոչ ոք այնքան կենսական զօրութիւն չունի որքան Զուիցերիան՝ այս զանազան համայնքներից ու կանտոններից կազմուած եռալեզու դաշնակցութիւնը՝ որոնք այնքան անհաւասար են տարածութեան՝ բազմամարդութեան և հարստութեան վերաբերմամբ։ Զուիցերիան էլ աշխարհագրական բառ լինելու երջանիկ բաղդն ունի՝ բայց այս նկատմամբ Աւստրօ-Հունգարիայից աւելի լաւ պայմանների մէջ է գտնվում։ Այս երկրի արտաքին կազմութեան վրայ ճիշտ գաղափար կազմելու համար՝ պէտք է բարձրանալ կենտրոնական Ալպերի վրայ և դիտենք ամէն կողմից Սէնտ-Գոտարդ լեռը։ Սէնտ-Գոտարդից կամ նորա շրջականերից (Ֆինստէր-Ար հօրն՝ Մալոյա՝ Տէօդի) սկիզբն են առնում այն հովիտները՝ որոնք միասին առած կազմում են Հելվետեան։ Հռենոսի հովիտը՝ որ ընկած է Կրիսպալտի և Ալգաբի մէջ՝ Ռէյսի հովիտը՝ Կրիսպալտի և Տիտլիսի մէջ։ Ար հովիտը՝ Տիտլիսի և Բէրնեան Ալպերի մէջ։ Ռոնայի և Տեսինի հովիտները՝ Բէրնեան և կենդրոնական Ալպերի մէջ։ Ինի հովիտը՝ կենտրոնական և ռետեան Ալպերի մէջ։ Ցայտնի է որ Ալպերի այն շղթան՝ որ մեղմ զառիվայրով իջնում է դէպի Բադէնի մեծ գքսութիւնը՝ համարեա անմատչելի է Իտալիայի կողմից։ սորանից հետևում է որ Զուիցերիան միջոց ունի հիւսիսային կողմում աւելի ազատօրէն ընդարձակուելու։ Երկրի այս մասի վրայ ճիշտ գաղափար կազմելու համար՝ պէտք է տեսնել թէ ապառաժ Ալպերի Ար սարահարթի այն կողմը կրային Ժիւրան ինչպէս է ձևակերպում իւր կոմբերն ու էլիւղները։ այսպէս են կոչվում այն երկարաձիգ միմեանց վրայ զետեղուած ձորերը և խոր ու խորտուբորդ կրճերը՝ որոնց միջով վազում են օձապտոյտ գետերը։ Զուիցերիայում ինչպէս և Գերմանիայում բնութեան նոյն տեսարանները հետևում են միմեանց՝ բայց տարբեր դասաւորութեամբ։ Ժուրայեան ինչպէս և ալպեան գոտում ի՞նչպէս չապշի՝ չհիանայ մարդ լճերի ընդհանուր տեղադրութիւնը տեսնելով՝ որոնք փորուած են բարձր լեռնաշղթաների ստորոտում՝ սարահարթի շրջակայքում՝ և սառցակոյտերից հոսող ջրերով լցուած են։ համարեա բոլորն էլ Ալպերի առանցքում են գտնվում։ Այս լճերի ծայրերում գտնվում են մեծ քաղաքներից շատերը։ Կոնստանցան՝ Ցուրիխը՝ Լուցէրնը՝ Ժենեվան։ Մենք արդէն յիշեցինք

Ռար գետը և Ժուրայի ու Ալպերի մէջ եղած լեռնադաշտակը, որի միջով նա անցնում է։ Այս գեղեցիկ գետը, այս բարձր դաշտավայրը, հելվետեան դաշնակցութեան կենտրոնն են կազմում և եթէ կարելի է ասել, նորա գոյութիւնը բացատրում են։ Նկատելու է որ այնտեղ ուր Հռենոսը քիչ շատ մեծանում է, հազիւ թէ դիպչում է Զուրիցերիային։ Իսկ Ռարը բուն զուրիցերական գետ է։ Օբերլանդի բարձր սառցակոյտերից բղխելով և ապա անուանդ առնելով Բրիենզի և Տունի խոր լճերից, Սոլոտուրն քաղաքի մօտ նա գալիս քերում է Նուարմոնտի ստորոտը։ Նա թափվում է Հռենոսի մէջ Վալդսհուտի մօտ համարեա հաւասար հեռաւորութեամբ Բազելից և Շաֆհուզից։ Այս տարրերը ծանօթ լինելուց յետոյ՝ միթէ դիւրաւո՞ր է զուրիցերական դաշնակցութեան տեղը դուշակել։ Հետևեալ օրինակը բաւական է ցոյց տալու թէ ինչ զօրութիւն ունի, կարող ենք ասել, ինչ բռնութիւն է գործ դնում աշխարհագրութիւնը։

Ամեն մարդ գիտէ որ նախնական Զուրիցերիան, Հվաբիայի այս պատկառելի բեկորը, Զորս—Կանտոնների լճի շուրջն է կազմուել, մի տարօրինակ բարձրութեան վրայ, որ ծուռ խաչի նման է։ Սակայն քաղաքական կենտրոնը ժամանակի ընթացքում մի քանի անգամ փոփոխուել է։ Հվիցից հետզհետէ անցաւ Լուցերն, Ցուրիխ և իվերջոյ Բէրն, ուր կարծես վերջնականապէս հաստատուեցաւ։ Տեսնենք ուրեմն թէ ինչ առաւելութիւններ ունի Բէրնի դիրքը։ Այս քաղաքը համարեա Ռարի հոսանքի մէջ տեղն է գտնվում, այն տեղի մօտ ուր այս գետը թեքվում է դէպի Ժուրան, մի արգաւանդ դաշտում, որտեղից նա հելվետեան ջրերի երկու երրորդ մասը առնում, Հռենոսի մէջ թափելու համար տանում Բէրնի կանտոնը, որ Զուրիցերիայի մանրանկար պատկերը կարող է համարուիլ։ Իր սահմանների մէջ ունի Ալպերի, սարահարթի և Ժուրայի մի մասը։ Երկրի ամենաընդարձակ, արգաւանդ և բազմամարդ կանտոնի կենտրոնում գտնուելով, Բէրնը Ժուրային վերաբերող ֆրանսիական և բողոքական կանտոններին աւելի մօտ է քան ալպեան լեռան շրջանակում գտնուող գերմանական և կաթոլիկ կանտոններին։ և սորա բնական պատճառն այն է, որ այս վերջին կանտոնները համարեա ամայի են։

Ստորին նահանգները երկու որոշ մասեր են կազմում, Բելգիան և Հոլլանդիան։ Բելգիան անկդալի կերպով բարձրանում է Հիւսիսային ծովի ափերից մինչև իր անունը կրող բլուրները։ քիչ հեռու երևում է Արդէնեան սարահարթի հիւսիսային մասը։ Դիտելու արժանի է Շելդայի և Մասի աւազանների պտղաբերութեան անհաւասարութիւնը։ եթէ Մասը նշանաւոր է իր ընդարձակ ածխահանքերով, Շելդան ոչ պակաս նշանաւոր է իր գեղեցիկ մշակութեամբ։ Եւրոպական երկրների մէջ Փլանդրիան և Բրաբանտը

երկրագործ գասի խիստ ազգաբնակութեան կողմից առաջին տեղն են բռնում Բրանբանտը, իրրև կենդրոնական նահանգ, միւս բոլոր նահանգները միմեանց հետ կապում է. այստեղ է թագաւորութեան մայրաքաղաքը Բրիւսելը, այն բազմաթիւ բնական ջրանցքներից մէկի վրայ, որոնք զուգահեռական ուղղութեամբ անցնում են կազմելով մի գեղեցիկ գետային ճանապարհ, որ Շիլդայի, Ռուպէլի, Դիլի և Դմէրի միջնորդութեամբ միանում է Մասի հետ. Վերջապէս Բրիւսելը ճիշտ այնտեղ է գտնվում, ուր Վալլոնեան և Փլամանդական բարբառները միմեանց հանդիպում են. Բելգիացոց մեծ մասը Փլամանդերէն են խօսում, որ գերմանական բարբառ է. բայց ֆրանսերէնը քաղաքների, կրթութեան, արդարութեան և քաղաքականութեան լեզուն է.

Հոլլանդիան, որ իրանից կախում ունեցող երկրների հետ բուն Սառորին նահանգներն է կազմում, քիչ նմանութիւն ունի Բելգիայի հետ. երկուսի տարբերութիւնը ոչ միայն լեզուի ու կրօնի մէջ է երևում, այլ աւելի աշխարհագրական պայմանների մէջ. Բելգիայի ծովեզերքը իւր միակերպութեամբ նաւական զօրութիւն հաստատելու յարմարութիւններ չունի. ընդհակառակն, Հոլլանդիան շատ կղզիներ ու ծոցեր ունի, հետևաբար շատ էլ նաւեր ունի. Շելդա, Մաս և Հռենոս գետերը անթիւ ճիւղերի բաժանուելով, հեշտացնում են հաղորդակցութիւնը երկրի բոլոր մասերի մէջ. Բելգիայում մեծ քաղաքները մեծամեծ հոսանքներ խառնուելու տեղն են գտնվում (գետ, նամիւր, լիէժ). իսկ Հոլլանդիայում նոքա ծովեզերքի շրջակայքումն են (Ռոտերդամ, Հաագա, Ամստերդամ, Անտվերպէնը, որ Շելդայի վրայ է գտնվում մի ընդարձակ արշիպեղագոսի շրջակայքում. երկու թագաւորութիւնները միմեանց հետ կապում է, որոնցից առաջինը Պրուսիայից բաժանվում է մեծամեծ անտառներով, իսկ երկրորդը անվերջ ճահիճներով.

Պրուսիան շատ աւելի է տպառնում Դանիային քան Բելգիային և Հոլլանդիային—երբ Դանիայի բաղդը կապուած էր Շլեսվիգի, Հոլշտէյնի և Լաւենբուրգի հետ. Զունդի և Էյդերի շնորհիւ նա Բալտիկ ծովի պահապանն ու տէրն էր. բացի նորանից նա իշխում էր ցամաքակղզու վրայ. իսկ այսօր նորա վիճակը իւր դրացիների կամքից է կախուած. Հէնց այս պատճառով այս տերութեան զօրութիւնը վաղուց արդէն կենտրոնացել էր երկու մեծ կղզիների, այն է Ֆիոնիայի և Զելանդիայի մէջ. Կոպէնհագէնը, վաճառականների նաւահանգիստը, Հելսինգերի պաշտպանութեան ներքոյ, բարձրացաւ Զունդի ամենալայն տեղի վրայ. Սակայն վանական քաղաքակրթութեան սկզբում երկրի մայրաքաղաքը Կոպէնհագէնը չէր, այլ Ասրհուուզը. Պէտք է նկատել որ այս քաղաքը

ինչպէս Իւտլանդիայի, Շլեզվիգի, Հոլշտէյնի և նոյն իսկ Գիոնայի և Զելանդիայի բազմամարդ քաղաքները, Բալտիկ ծովի վրայ է գտնվում և ոչ Հիւսիսային ծովի վրայ. սորա պատճառն այն է որ երկրի արևելեան մասը աւելի քիչ է ենթարկուած հեղեղների և աւելի մատ է գտնվում Նորվեգիային, Շվեդիային և Գերմանիայի մեծ տերութիւններին։

Սկանդինաւիան մեծ ցամաքակղզու քննութիւնը կը բացատրէ Նորվեգիայի և Զվեդիայի թագաւորութիւնների բաժանման պատճառը միջին դարերում։

Գոթֆելդեան լեռների արևմտեան զառիվայրը, այսինքն Նորվեգիան, մի բարձրագիր ու առապար երկիր է, հազարաւոր ժայռերով ծածկուած, որոնց կողքին բարձրանում են ընդարձակ ագարակներ կամ գարտէններ, այն հիւսիսային ովասիսները, ուր Ստրիմ ծոցի բարերար ազդեցութեամբ պտղատու ծառերի մշակութիւնը յաջողում է։ Արևելեան զառիվայրը, որ է Շվեդիան, շարունակ իջնում է դէպի Բալտիկ ծովը։ Գետերը վազում են ընդհանրապէս հիւսիսային արևելքից դէպի հարաւային արևելք. համարեա թէ բոլորը դուրս են գալիս երկար նեղ ու բարձրագիր լճերից, որոնց ջրերը դժուարութեամբ հանում տանում են։—Նորվեգեան նորմանդական ծովային աւազակների հայրենիքը, իւր մայրաքաղաքը հաստատեց նախ ամենաբարձր ժայռերի խորքում, արգաւանդ գարտէնների մէջ, այն է Տրոնդհիէմում և Բերգէնում, որոնք հետզհետէ և քանի որ քաղաքակրթութիւնը տարածվում էր՝ մտեցնում էին նորան հարաւին, այսինքն Դանիային. այնպէս որ վերջապէս նա իւր բաղդը միացրեց սկանդինաւեան առաջին ազգի հետ (Դանիացիք)։ Այն ժամանակ երկրի կառավարութիւնը կենդրոնացաւ Քրիստիանիայում, որ կոչուեցաւ այսպէս իւր հիմնադիր դանիացի Քրիստիան Դ-ից։ Երբ սրբազան-դաշնակցութիւնը այս դարու սկզբին Դանիայի վերաբերմամբ առաջին անիրաւութիւնը գործեց, որին հետևեցան ուրիշ անիրաւութիւններ,—Նորվեգիան միացաւ Շվեդիայի հետ, և միայն հիւսիսային գաղթական երկիրները հին դաշնակցի ձեռքը մնացին։—Շվեդիայի քաղաքական կենտրոնը գտնվում է Ստոքհոլմ քաղաքում, որ Ուպսալ սրբազան ու գրական քաղաքի իրաւունքները ժառանգեց։ Ստոքհոլմը այս հիւսիսային Վենետիկը, գրեթէ այն ծովեզերքի մէջտեղն է գտնվում, որ Փալտէրբօի հրուան դանից ձգվում է մինչև Տորնէյայի գետաբերանը։ Նա նայում է Բալտիկ ծովին և Բոթնիայի, Ֆինլանդիայի ու Ռիգայի ծոցերին, որ յիշեալ ծովին են վերաբերում. նորա դէմուդէմը գտնվում է Պետերբուրգը։ Ստոքհոլմի մի ուրիշ առաւելութիւնն այն է, որ նա մեծամեծ լճերի ծայրումն է գտնվում, որոնք Գո-

թիայի ջրանցքի օգնութեամբ Շվեդիան ծայրէ ի ծայր ճեղքում են։ Այս ջրանցքի ու լճերի շնորհիւ Շվեդացիք ուղղակի հաղորդակցութիւն ունին Նորվեգիայի հետ, որով և հեշտութեամբ ազատվում են Զունդի և Բելտի դանիական խորշերից, և ազատ ճանապարհ ունին դէպի Սկագէր-Ռակ։

Սկանդինաւիան մի շարք լեռնադաշտակներից է կազմուած, որոնց վրայ հարաւային կողմը բարձր լեռներ են երևում և որոնք զգալի կերպով ցածանում են հիւսիսային կողմից. այս հանգամանքի շնորհիւ է որ հիւսիսային երկրներում բնակում են Լապլանդացիք։

Զ.

ԱՆԳԼԻԱ.—ՍՊԱՆԻԱ.

Մեծ Բրիտանիայի և Իրլանդիայի միացեալ թագաւորութիւնը հրաշալի դիրք ունի Եւրոպայի արևմտեան եզերքի միջավայրում, այնտեղ ուր աշխարհի այս մասը ամէնից աւելի Ամերիկային մօտ է կանգնած։ Անգլիան ու Սկովդիան, Նորվեգիայի նման, կարծես մերատով ձևած ու կտրատած. ամէն կողմից, բայց մանաւանդ արևմտքում և հարաւում նոքա խոր պատառուածքներ են ներկայացնում։ Անգլիան, համեմատաբար շատ նեղ տարածութեան վրայ, համարեա այնքան ընտիր նաւահանգիստներ ունի, որքան մնացած բոլոր Եւրոպան։ Համեմատեցէք Լամանշի անգլիական եզերքը նոյն ծովի ֆրանսիական եզերքի հետ, և կը տեսնէք Անգլիայի առաւելութիւնը։ Բուլոնը, Հավր, Շերբուր, Սէն-Մալո և Բրեստ ֆրանսիական ծովեզերեայ քաղաքները չեն կարող հաւասարուիլ անգլիական Դուվր, Պորտսմուտ, Սաուտամտոն, Վէյմուտ և Պլիմուտ ծովեզերեայ քաղաքներին։ Արդեօք այստեղ եղած հաղարաւոր մեծ ու փոքր նաւահանգիստները ծովի տակի տաք ջրի լուծիչ ազդեցութեան արդիւնք են։ Այս բացատրութիւնը մեզ միշտ փոքր ինչ յանդուգն է երևացել. կայ մի ուրիշ աւելի հաւանական բացատրութիւն, որով կարծում ենք թէ ծովեզերքի անհարթութիւնները նոյն իսկ երկրի արտաքին կազմութիւնից են առաջ գալիս։ Մեծ Բրիտանիայում, ինչպէս և Սկանդինաւիայում, գագաթնագիծը միշտ դէպի արևմուտք է թեքվում և անթիւ ճիւղեր է արձակում նոյն ուղղութեամբ. մի բան որ չէ երևում ոչ Սկանդինաւիայում և ոչ ուրիշ տեղ, այդ այն բազմաթիւ, լայն ու խոր

ճեղքուածներն են, որոնք մէկ ծովից միւսն են հասնում. այնպէս որ նաւարկութեան ժամանակ շատ հեշտ է խոյս տալ պտոյտներից։ Տեսէք Տամիզի խորշի և Բրիստոլի ջրանցքի, Վաշի և Մերսէյի գետաբերանի, Կլայդի և Ֆորդի խորշերի, ինչպէս նաև Մուրրէյի և Լիւնի խորշերի մէջ եղած պարանոցները. նոյն իսկ այդ պարանոցների մէջ կան խոր ընկած տեղեր, ուր հոսում են գետերը և արհեստական ջրանցքները և ահա այս գետերի ու ջրանցքների երկարութեամբ շարուած են ամենանշանաւոր քաղաքները՝ Լոնդոնն ու Բրիստոլը, Լիդս, Մանչեստէր և Լիվերպուլ, Էդինբուրգ և Գլասկով։

Եթէ Գոլֆ-Ստրիմը չէ կազմել Մեծ Բրիտանիայի աննման նաւահանգիստները, Անգլիան անշուշտ նորան է պարտական իւր յորդառատ ու կանոնաւոր գետերը։ Այն մէջը, որով նա ծածկում է երկիրը, խտութեան երևոյթի շնորհիւ ամէն առաւօտ անձրևի է փոխարկվում. ահա այս պատճառով Անգլիայում երբէք երաշտութիւն չէ լինում։ Ինչ որ մարգագետինների գեղեցիկ թարմութիւնը պահպանում է, նոյնը ամենագործունեայ և ամենաարագ նաւագնացութեան միջոց է տալիս երկրի մէջ։ Այս բոլոր առաւելութիւնների վրայ աւելացրէք և հողի յատկութիւնը. եթէ նորա մեծ պտղաբերութիւնը գլխաւորապէս բնակիչների գործն է, երկաթահանքերի և ածխահանքերի այն մեծ առատութիւնը, որից անգլիական ճարտարութիւնը գիտէ տեղի վրայ օգտուիլ։ Նախախնամութեան ձրի շնորհած մի բարիք է։—Այդքան բնական կամ ուշխատութեամբ ձեռք բերուած պարգևները չեն գնահատուել երկար դարերի ընթացքում։ Հենրիկոս Է. Տուդորին և նորա թոռան՝ Եդիսաբեթ թագուհուն է վերաբերում այդ պարգևները գնահատելու և մասամբ նաև գործ դնելու առաջին պատիւը. նոցանից առաջ պետական մարդիկը կարծես չէին հասկանում թէ Անգլիան ծովային երկիր է։ բնութիւնից գեղեցիկ նաւահանգիստներով զարդարուած և իբրև մի նախակայանք Ամերիկայի առաջ դետեղուած։ Պորտուգալիան, Սպանիան և Հոլլանդիան, որոնց բնութիւնը նոյն չափով չէր վարձատրել Անգլիայից առաջ էին անցել։ Տասնեւեթերորդ դարու սկզբից անգլիական վաճառականութիւնը և գաղթականութիւնը այնքան աճեցան, որ Տիւրոսը, Կարթագինէն, Ամէնքը և Վենետիկը չէին կարողանայ համեմատուիլ նորա հետ։ Սակայն այս զարմանալի տարածման բոլոր արժանիքը չպէտք է վերագրել մի միայն պետական մարդկանց. սոցա գործն այն եղաւ, որ խելացի ու գործունեայ ժողովրդին նպաստեցին օգտակար կերպով գործ դնելու բնութեան պարգևները և ոյժերը։

Վարչութեան հաստատման տեղը մի երկրում, որից նիւթապէս կախում ունին մնացած բոլոր նահանգներն ու գաւառները,

ուսումնասիրութեան արժանի մի խնդիր է։ Լոնդոնը, Միացեալ-թագաւորութեան մայրաքաղաքը և երկրագնտի արևտրական մայրաքաղաքը, շինուած է մի գետի վրայ որ ամենամեծ նաւեր է տանում։ Այս յաջող պայմանի վրայ, որ ուրիշ տեղեր էլ է գտնվում, պէտք է աւելացնել նաև որ Լոնդոնը Միդդլէսքսի այսինքն հին սաքսոնական թագաւորութիւնների կենտրոնում գտնուելով, մայր ցամաքի մօտ, փոխադարձ յարաբերութեան մէջ Փարիզի հետ, որ Եւրոպայի երկրորդ քաղաքն է, և Ամստերդամի հետ, որ երկար ժամանակ երկրագնդի վաճառականոցն եղաւ։ Հաւասար հեռաւորութեամբ Դանիայի և Ֆրանսիայի Բրըտայն նահանգի վերջին ծայրերից, Լոնդոնը, ասում ենք, ամենևին արհեստական գործ չէ։ Անգլիան և Լոնդոնը իրանց իշխանութեան տակ պահում են Սկովդիան և Իրլանդիան։ Լոնդոնումն է նստում Խորհրդարանը, որ երեք-թագաւորութիւնների միութեան կենդանի արտայայտութիւնն է, և այդ Խորհրդարանի անդամների երեք քառորդը Անգլիայից են ուղարկուած դարձեալ, միմիայն Անգլիան ունի ժառանգական պէրեր։ Մեր նկարագրած քաղաքական դրութեան մէջ այս քաղաքական երրորդութեան մէջ երկրորդ տեղը պատկանում է Սկովդիային, իսկ երրորդը Իրլանդիային։—Սկովդիան, որ Անգլիայից բարձր դիրք ունի, բաժանվում է Հայլանդսի և Օվլանդսի. այս վերջին նահանգի միջնորդութեամբ Սկովդիան կապվում է Անգլիայի հետ։ Նորա մայրաքաղաքը, Էդիմբուրգ, ողողվում է Պէֆտի խորշի ջրերով, սահմանագծից մի քանի մղոն հեռաւորութեամբ։—Իրլանդիան իւր կենտրոնական մասում շատ ճահիճներ ունի, այդ ճահիճներից գոյանում են բազմաթիւ գետակներ, որոնք բոլորակ և առանձնացած բարձրութիւնների շուրջը պտտելով՝ անօգուտ կերպով կորչում են։ Դուբլինը բարձրանում է Իրլանդական ծովի վրայ, աչքերը Անգլիայի վրայ յառելով կանաչագեղ Էրինի այն մասում ուր իշխում են անգլիական ցեղը և անգլիական եկեղեցին։ Նկատելու է որ անգլիական լեզուն գործածական է Սկովդիայի և Վէլսի ամենամեծ մասում։ Իրլանդիան էլ համարեա մոռացել է իւր ազգային բարբառը. այս բաւական ապացոյց է Անգլիայի գործած մեծ ազդեցութեանը իւր երկու օտարացեղ և օտարալեզու (կելտեան) դրացիների վրայ։

Եթէ Անգլիայից անցնենք Սպանիային, զարմացած կը մնանք երկու երկրների մէջ եղած հակառակութիւնները տեսնելով։ Փոխանակ մի արձակ, ամէն կողմից մատչելի և խոնաւութեամբ յագեցած կղզու, գտնում ենք մի լայն, միապաղաղ, երաշտութեան մատնուած ցամաքակղզի։ Այստեղ գետերի ընթացքը երկայն է, բայց երբ հեղեղների ժամանակն անցնում է, ջուրը բոլորովին պակասում է։ Երկրի արտաքին կազմութիւնը շատ պարզ է. մի

սարահարթ։ Եւրոպայի ամենամեծ սարահարթը։ որ 200։000 քառակուսի հազարամէթր մակերեւոյթ ունի և որի միջին բարձրութիւնն է 700 մէտր։ ընդհանրապէս թեքուելով գնում է հիւսիսից հարաւ և արևելքից արևմուտք։ Այս սարահարթը բաժանվում է հին և նոր Կաստիլիայի։ հին Կաստիլիան ամբողջապէս Դուէրոյի աւազանին է վերաբերում։ իսկ նորը՝ Տագայի և Գուադիանայի աւազաններին։ Այս գետերից Դուէրօն աւելի տեղ է բռնում։ իսկ Տագայի հոսանքը աւելի երկար է։ Կաստիլիան եղաւ։ որ ստեղծեց Սպանիական թագաւորութիւնը։ այն ժամանակ երբ Մահմէդականների դէմ յարուցուած խաչակրութիւնը իւր վախճանին էր հասել։ Նա եղաւ նոյնպէս որ մեծամեծ դժուարութիւններով և անասելի զոհողութիւններով մինչև այսօր պահպանեց այդ թագաւորութիւնը։ Սակայն երկրի զանազան կողմերը աւելի կամ նուազ յաջողութեամբ մաքառեցին Կաստիլիայի գերիշխանութեան և կենտրոնացման դէմ։ Երկու բարձր լեռնաշղթայ հեռուից իշխում են սարահարթի վրայ։ Պիրենեան լեռները և Սիերրա Նեվադան։ Գիբրնադայի Մաւրները։ Աֆրիկայից շարունակ օգնութիւն ստանալով։ մինչև ԺԵ դարու վերջերը ընդդիմացան քրիստոնեայ թագաւորութիւններին Սիերրա Նեվադայում։ Մեր օրերում համարեա ամբողջ Պիրենեան մասը և մասնաւորապէս այն նահանգները՝ ուր իրերեան տարրը անխառն պահպանուել է։ երկու անգամ թօթափեցին կաստիլեան իշխողների լուծը։ Արագոնի հին թագաւորութիւնը։ որ այնքան նմանութիւն ունի Նաւարրայի և Բասկեան նահանգների հետ։ մանաւանդ հիւսիսային մասում միշտ հլու հլպատակութիւն չէ ցոյց տուել։ Ոչ որ չէ մոռացել անշուշտ Բարցելոնայի և Վալենսիայի պարբերական ապստամբութիւններն ու ճնշումները։ յայտնի է նոյնպէս Մայեզտրասգոի դերը Դոն Կարլոսի պատերազմների ժամանակ։—Պորտուգալիան երկու հարիւր տարի է որ իւր ազատութիւնը ձեռք է բերել և այսօր ոչինչ չէ սպառնում նորա անկախութեանը։ Պորտուգալացիք այս անկախութեամբ պարտական են իրանց երկրի կազմութեանը և աշխարհագրական դիրքին։ Կաստիլիայի գետերը սարահարթից հեռանալով։ երկար ու նեղ անցքեր։ մի տեսակ կրճեր են ձևացնում։ որոնք իրրև սահման են ծառայում Սպանիայի և Պորտուգալիայի թագաւորութիւնների մէջ։ Բացի սրանից։ Պորտուգալիան ծովեզերքի վրայ մեծ տարածութիւն է բռնում։ և նա ողողվում է Ատլանտեան ովկիանոսի ջրերով և ոչ Միջերկրականի ջրերով։ ինչպէս Արագոնը։ Արդ։ նաւագնացութեան և վաճառականութեան այժմեան պայմանների մէջ՝ Միջերկրականի հետ գործ ունեցողը ուրիշներից կախում ունի։ իսկ Ատլանտեան Ովկիանոսի վրայ նաւողը ազատութիւն է վայելում։ Սակայն շատ չ՚շտապենք ազատութիւն բառը արտասա-

նել Պարտուգալիայի վերաբերմամբ. այս թագաւորութիւնը Կաստիլիայի քաղաքական իշխանութիւնից ազատուեցաւ. Անգլիայի վաճառականական իշխանութեան տակ ընկնելու համար, որովհետև այս վերջին երկիրը Ատլանտեան ովկիանոսի տերը կարող է համարուիլ։

Կաստիլիայի գործը բոլորովին արուեստական է, որովհետև ոչ քաղաքական տնտեսութեան եւ ոչ մտաւոր գործունէութեան վրայ է հիմնվում, այլ հիդալգոների և մատամօրոսների դարի շարունակութիւնն է, միով բանիւ Կաստիլիան կամեցաւ հրպատակ նահանգներին բռնի ընդունել տալ իւր քաղաքական և կրոնական իդէալը։—Այս անբնական իշխանութիւնը անբնական կենտրոն էլ ունեցաւ։ Պամպելունան, Սարագոսան, Բուրգոսը և Տոլեդոն իրանց պատուաւոր տեղն ունէին իբրև նաւարքարի, Արագոնի և երկու Կաստիլիաների մասնաւոր մայրաքաղաքներ. իսկ երբ Կաստիլիայի թագաւորը իւր իշխանութիւնը տարածեց ամբողջ ցամաքակղզու վրայ, առանց մի նիւթական կամ բարոյական հատուցումն անելու երկրին, նա ստեղծեց մի նոր մայրաքաղաք, ուր կարողանար իւր նախանամութեան դերը խաղալ՝ անտես լինելով, և ահաւոր երևելով ժողովրդին։ Այդ ժամանակից վեհապետի տրտմութիւնը փոքր ինչ փարատուեցաւ և խստութիւնը մեղմացաւ։ բայց միևնոյն ժամանակ նա իւր անձնական հաճոյքը ամեն օրէնքից բարձր դասելու յաւակնութիւնն ունեցաւ։—Պորտուգալիան իւր ազգային հարստութիւնից աւելի լաւ ուղղութիւն ստացաւ։ Իւր մայրաքաղաքը Լիսաբոնան, որ մի լայն ու գեղեցիկ ծոցի վրայ է գտնվում՝ Տագի գետաբերանում, Սպանիական ցամաքակղզու ամենարտիր նահանգն է։

Մի ընդհանուր օրէնք դարձած է, որ ուրիշ երկրների հետ սերտ յարաբերութիւնների մէջ մտնող տերութիւնները իրանց մայրաքաղաքները ծովի շրջակայքում հաստատեն. Պետերբուրգը, Սանքտ-Հոլմը, Կոպենհագէնը, Հագան, Լոնդոնը, Լիսաբոնան, Հռոմը, Աթէնքը, Կոստանդնուպոլիսը, այս կանոնը հաստատում են. և այս դէպքում հաղիւ է պատահում մի նահանգ միւսների վրայ մրշտական ներգործութիւն ունենայ։ Ուրիշ յատկութիւն ունին երկրի ներսերում հաստատուած մայրաքաղաքները, որպիսի են Մադրիդը, Վեննան, Բէրլինը, Փարիզը, որոնք երբեմն ներկայացրել էն կամ այսօր իսկ ներկայացնում երկրի մի մասի գերիշխանութիւնը դրացի նուազ յաջող դիրք ունեցող մասերի վրայ։ Փարիզը նուաճեց երբեմն ամբողջ Ֆրանսիան, բայց Ֆրանսիան այդ մասին ոչինչ չգիտէ. պատճառն այն է որ այս երկիրը վաղուց միացած է։ Աւստրիան, Պրուսիան և Սպանիան ներկայումս տարբեր պայմանների մէջ են գտնվում։ Վաղուց չէ որ Միւնխէնը, Դրէզդէնը և

ընդհանրապէս գերմանական բոլոր փոքր մայրաքաղաքները նոյն նշանակութիւնն ունէին իրանց երկրների նկատմամբ. ինչ նշանակութիւն որ ունի Փարիզը Ֆրանսիայի նկատմամբ. բայց գերմանական գոռոզութիւնը տժգոհ մնաց նոցանից որ չկարողացան «փայլել»։ Չմոռանանք յիշել նաև Ռուսաստանի և Իտալիայի մայրաքաղաքների ընտրութեան մասնաւոր դէպքը։ Ռուսաստանի կառավարութեան Մոսկուայից Պետերբուրգ տեղափոխուիլը ամենամեծ անհրաժեշտութեան արդիւնք էր։ ըստ որում քաղաքակրթութիւնը միայն այս գնով կարող էր ձեռք բերուիլ Գալով Իտալիային։ տեսանք որ այս տերութիւնը, որի հիմնադիրն եղաւ Պիեմոնդը։ տասը տարուան ընթացքում Տուրինից հետոյ անցաւ Ֆլորենցիա և Հռոմ՝ իւր այժմեան մայրաքաղաքը. և այս հանգամանքը բացատրվում է նորանով, որ Հռոմի անցեալ յիշատակները Պիեմոնդից աւելի էին պատրաստել Իտալիայի միութիւնը։ Բելգիայի վերաբերմամբ էլ պէտք է ասել, որ սպանիական և աւստրիական վարչութիւններն արդէն պետական մարդկանց ուշադրութիւնը դարձրել էին Բրիւսէլի վրայ։ Նոյնպէս և Զուիցերիայում Բէրնը ոչ թէ հարկից ստիպուած դաշնակցութեան մայրաքաղաք եղաւ, այլ պետական անձանց ընտրութեամբ։

Է.

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիայի դիրքը շատ որոշ է շրջակայ երկրների մէջ. մէկ կողմից Սպանիան է, որ երբեմն պատերազմում էր իւր արուեստական միութեան պահպանութեան համար. միւս կողմից Իտալիան։ որ դեռ նոր գլուխ բերեց իւր միութիւնը. երրորդից Գերմանիան։ որ պատերազմական, քաղաքական և մտաւորական տեսակէտից կենտրոնանում է. վերջապէս չորրորդ կողմից Անգլիան։ որ բաւականանում է վաճառականական կենդրոնացմամբ։—այս սահմանը լրացնում են Բելգիան և Զուիցերիայի Ֆրանսիական մասը, ուր թագաւորում են Ֆրանսիացոց բարքն ու լեզուն։ Ֆրանսիան մտնում է երկու մեծ ծովերի, Միջերկրականին և Ատլանտեան ովկիանոսին։ որոնք հեշտացնում են նորա յարաբերութիւնները հին և նոր աշխարհների հետ։ Որ կողմից էլ նայելու լինինք այս երկրի վրայ։ կը տեսնենք որ նա կենդրոնական դիրք ունի արևմտեան Եւրոպայի մէջ։ Նա ահաւոր բնական պաշտպանութիւններ ունի։— Ժուրայի լեռները։ Ալպեան լեռները։ Պիրենեան լեռները։—որոնք այսօր շոայլութիւն են համարվում մինչդեռ Գերմանիայի կողմից

մի լայն դուռ է բացուած։ Այս հանգամանքը՝ որ նոր չէ՝ բայց այս վերջին տարիներում աւելի ծանրացել է, Փարիզի ունեցած նշանակութեան պատճառներից մէկն է։ Փարիզից հեշտութեամբ կարելի էր հասնել Ռուան՝ Նորմանդիայի գլխաւոր քաղաքը՝ և Մեց՝ Աւստրազիայի մեծ քաղաքը։

Ֆրանսիայի երկրաբանական քարտէզի հեղինակները ամենաճիշտ դիտողութիւններ նրկայացրին նոյն երկրի արտաքին կազմութեան վրայ։ Նոցա կարծիքով՝ Ֆրանսիայում երկու բեւեռ կայ՝ մէկը խոր ընկած և ձգողական զօրութիւն ունեցող՝ իսկ միւսը դուրս ցցուած և վանիչ զօրութիւն ունեցող։ Իլ դը-Ֆրանսը, որի կենտրոնը Փարիզն է՝ և կենտրոնական բարձրութիւնը՝ որին պսակում է Կանտալի Պլոմբը։ Արվերնեան բարձրութիւնից, որ պ.պ. Էլի դը Բոմոն և Դիւֆրէնուա, իրանց յառաջաբանի մէջ սխալմամբ սարահարթ են անուանում, դիմում են գետեր և մարդիկ աւելի պտղաբեր տեղեր գնալու համար։ Իլ դը-Ֆրանսի կողմը շրջանակների ձևով դիմում են Սէնայի մէջ թափուող գլխաւոր գետերը. Իոնան՝ Մարնը և Ուազը։ Մի մեղմ զառիվայր ամէն կողմից տանում է դէպի Փարիզ, որ այսպիսով բնականապէս պաշտպանվում է առանց իւր շրջականներից անջատուելու։ Այս էլ ասենք՝ որ այս քաղաքը շինուած է Ֆրանսիայի միակ գետի վրայ՝ որ իւր կանոնաւորութեամբ յիշեցնում է Անգլիայի գեղեցիկ գետերը։ Կասկած չկայ ուրեմն որ երկրաբանութիւնը՝ ինչպէս և աշխարհագրութիւնը, Փարիզին իւր բացառիկ տեղն է նշանակում։

Ֆրանսիայի միութիւնը՝ որի պատիւը պատմագիրները միմիայն նոյն երկրի հռչակաւոր թագաւորներին ու նախարարներին են վերագրում՝ գլխաւորապէս կլիմայի գործն է։ Զուր ջանք կը լիներ, օրինակի համար, Անգլիայի կողմից ձգտել Սկովդիայի հետ միաւորուելու։ այս երկու երկրների լայնութիւնն ու բարձրութիւնը այնքան տարբերվում են միմեանցից, որ մի խոր սահմանագիծ են դնում նոցա մէջ։ Ընդհակառակն, Հիւսիսային Ֆրանսիան այնքան քիչ է բարձրանում ծոցի մակերևութից՝ որ նորա և երկրի միւս մասերի կլիմայի մէջ շատ մեծ տարբերութիւն չկայ։ Գասկոնեան և Միջերկրականի ծովեղերքը՝ ասում են Ֆրանսիայի երկրաբանները՝ միակ նշանաւոր բացառութիւններն են՝ որ կարելի է առաջ բերել վերոյիշեալ ընդհանուր դիտողութիւնների դէմ։ Հէնց այս պատճառով պէտք է նկատել որ Գասկոնացի և Հարաւարնակ անունները ամենաորոշիչ մակդիրներն են՝ որ կարելի է ցոյց տալ Ֆրանսիացոց մէջ։

Ֆրագրութեան վերաբերութեամբ մենք առաջ կը բերենք երեք մեծ գետերի միակերպ ուղղութիւնը՝ որոնց ջրերը միանում են Համանշի՝ Ատլանտեան ովկիանոսի և Գասկոնիայի խորշի հետ։ Սոքա

իրանց ընթացքի առաջին մասում դէպի հիւսիս են հոսում, իսկ երկրորդ մասում դէպի արևմուտք։ Նոցա մէջ թափուող գետերն էլ երկար կոր գծեր են ձևացնում։ ընդհակառակն, Միջերկրականի մէջ թափուող մեծ գետը ուղիղ գծով է հոսում և միանում է Սօնայի հետ, որի շարունակութիւնը կարող էր համարուիլ, եթէ նորա պէս խաղաղ ու հանդարտ կերպով հոսէր։ Մաս գետը, որի մի մասը միայն Ֆրանսիային է պատկանում և որ իւր սկիզբն առնում է Սօնայի շրջականներից հակառակ ուղղութիւն բռնելու համար, նոյնպէս ուղիղ գծով է հոսում։ Ֆրանսիայի այս մասը երբեմն գերմանական կայսրութեան սեպհականութիւն էր կազմում; այնպէս որ Ֆրանսիացոց գործունէութեան շրջանը սահմանափակվում էր Ատլանդեան ովկիանոսով։ Սկզբում թագաւորութեան յատուկ սեպհականութիւնն էր Փարիզի և Օրլէանի մէջ եղած տարածութիւնը, ուր Լուար և Սէնա գետերը կարծես միմեանց դիմաւորելու են գնում։ Ֆրանսիայի դքսութիւնը, Օրլէանի կոմսութեամբ մեծանալով, իւր կազմակերպութեան սկզբից առաջին Կապետեանների օրով, Բուրգունդիան ձեռք ձգելու բաղդ ունեցաւ իւր հարստութեան մի ճիւղի շնորհիւ։ Համպանիայի հետ կազմած դաշնակցութիւնը միջոց տուաւ նորան կռուելու Պլանտագենետների դէմ, և երբ Նորմանդիան Յովհաննէս Անհողինի ձեռքից խլուեցաւ, Սէնայի ամբողջ աւազանը նոյն օրէնքների ենթարկուեցաւ։ Փարիզում նստող իշխանը, որ գնում էր պատերազմական դրօշը Սէն գետից առնելու, կարողացաւ անարգել թագադրուիլ Ռէմսում, և Ռուանը նորա թագաւորութեան բանալին դարձաւ։

Ալբիգեանց պատերազմից յետոյ, Տուլուզը մի ուրիշ կենդրոն դարձաւ առաջինին զուգահաւասար, որի բանալին Բօրդօն (որ կանչուած էր Ռուանի դերը կատարելու), նոյնպէս խլուեցաւ Անգլիացիներից։ Փարիզի և Տուլուզի խորհրդարանները երկու առանձին թագաւորութիւնների նման բան եղան, որ նորանոր երկրներով ընդարձակուելով, կամաց կամաց ամրացան ու հաստատուեցան։

—Ֆրանսիական երկրի կազմակերպութեան գեղեցիկ և մեծ խնդիրը, որ պատմաբանօրէն հետազօտեց Մինիէն, կարող էր նորից քննութեան ենթարկուիլ աշխարհագրական տեսակէտից, և այն ժամանակ պարզ կ'երևէր իրերի բնութեան և մարդկային գործողութիւնների մէջ եղած համաձայնութիւնը։

Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ եղած իրաւունքի խնդիրը նոյնպէս պէտք է աշխարհագրութեան պահանջումների համեմատ քննուէր, և այն ժամանակ այնպիսի հետևանքների կը հասնէինք, որ գուցէ թէ՛ Գերմանացիք և թէ Ֆրանսիացիք զարմացած մնացին։ Մենք թողնում ենք այս մասին

ուրիշ անգամ խօսելու։ Իսկ այսօր բաւականանանք ասելով թէ աշխարհագրական (մենք կարող էինք աւելացնել նաև պատմական) պայմանները աչքի առաջ ունենալով՝ Գերմանիան իրաւունք չունէր Ալզասը Ֆրանսիայից խլելու՝ ինչպէս որ Ֆրանսիան էլ իրաւունք չէր ունենալ Բելգիան խլելու։ Եթէ Վոգեզեան լեռները՝ Հունդսրիւքը և Արդէնի սարահարթը համաչափութեամբ դասաւորուած են Սև Անտառի՝ Տաունուսի և Վեստէրվալդի հետ՝ եթէ միով բանիւ՝ գերմանական Հռենոսը աշխարհագրական պէտք է Ֆրանսիական ազդեցութիւնից աղատ մնայ՝ ինչպէս կարելի է դարձեալ աշխարհագրական պէտք է ժխտել Ֆրանսիայի իրաւունքը Շելդայի՝ Մասի և Նիդերլանդական Հռենոսի դաշտավայրի վրայ։ Բայց չպէտք է մինչև ծիծաղելին հասցնել այս աշխարհագրական եզրակացութիւնները։ Քանի որ բնական սահմանների պակասութիւնը ակներև էր՝ Ֆրանսիան խոհեմութիւն արած կը լինէր բաւականանալով այն անկարմար սահմանով՝ որ տուել էին նորան Վեստֆալայի և Վիեննայի դաշնագրութիւնները (1648—1815)՝ մէկը այնքան փառաւոր Ֆրանսիայի համար՝ միւսը Պրուսիայի համար։ Վեստֆալեան դաշնագրութիւնը Ֆրանսիային տուել էլ Ալզասը՝ իսկ Վիեննայի դաշնագրութիւնը Գերմանիային տուել էր Հռենոսի նահանգը՝ և աշխարհագրութիւնը՝ որ երբեմն գիտէ ներող լինել՝ ոչինչ բողոք չյայտնեց։

Սակայն ժամանակակից Գերմանիան իւր առաջ բերած պատմական իրաւունքին հաւատարիմ լինելու համար Ալզասը պէտք է վերադարձնէր Աւստրիային։

Մենք այս գրութեամբ մի նոր գիտութեան հիմունքը ձգելու յաւակնութիւնը չունինք. բայց գոհ կը լինէինք եթէ յաջողեցաւ մեզ ցոյց տալ թէ կայ մի նոր՝ մի նշանաւոր գիտութիւն՝ որ մենք կանուանէինք Գործադրական աշխարհագրութիւն՝ գիտութիւն որի համար առանձին ամբիոններ պիտի հաստատուէին Ուսուցչական դպրոցում՝ Կոլլէժ դը Ֆրանսիում՝ բարձրագոյն ուսում նարանների մասնագիտական բաժիններում և առաջնակարգ լիցէոններում՝ և որ միանգամայն քաղաքագիտութեան հիմնաքարը լինէր։ Գործադրական աշխարհագրութիւնը յանձն կ՝առնէր ցոյց տալու թէ կան խնդիրներ քաղաքականութեան մէջ որոնց մեծ նշանակութիւն են տալիս՝ թէև նոքա իսկապէս գոյութիւն չունին՝ մինչդեռ ուրիշ խնդիրներ՝ որոնց գոյութեան մասին չեն էլ կասկածում անգամ՝ ամենամեծ կարևորութիւն ունին»[1]։

---

[1]) Տես հեղինակի՝ Nouvelle méthode d'enseignement géographique, d'après les resolutions du Congres de Paris. 1876:

Պատմական և քաղաքական խնդիրներ լուծելուց առաջ հաշտեցնել՝ ահա այս կը լիներ գործադրական աշխարհագրութեան առաջին բարիքը։

Այսպիսի խնդիրներ լուծելու համար՝ վերոյիշեալ գիտութիւնը պէտք է սիստէմով վարուի և ամէն ինչ մանրամասնօրէն հետազօտէ։ Մենք այսօր շատ քաղաքական խնդիրներ արծարծեցինք և դասաւորեցինք՝ բայց նոցանից ոչ մէկը չը լուծեցինք։ Ասիան՝ Աֆրիկան՝ Ովկիանիան՝ Ամերիկան սորա նման մի նախապատրաստական աշխատութիւն են պահանջում։ Ներկայումս մեր պատրաստած յիշատակարանը (Transformation de la mèthode historique par les ètudes gèographiques)՝ որ պիտի հաղորդենք Սօրբօնում ժողովուած գիտնական ընկերութիւններին՝ որոշ ցոյց կը տայ թէ մենք ինչ նպատակի ենք ձգտում։ Այս յիշատակարանի մէջ մենք պիտի առաջարկենք որ բարոյական և քաղաքական գիտութիւնների Ակադեմիայում մի բաժանում հիմնուի գործադրական աշխարհագրութեան պատմութեան ուսումնասիրութեան մէջ՝ և մի բաժանում աշխարհագրութեան պատմական աշխատութիւնների և գիտնական ընկերութիւնների մասնաժողովում։ Բացի սորանից՝ մենք ցանկութիւն պիտի յայտնենք որ աշխարհագրական ընկերութիւնը չբաւականանայ միայն հեռաւոր երկրների հետազօտութիւնները խրախուսելով՝ այլ հոգ տանի աշխարհագրութեան գիտութիւնը մեր ցոյց տուած հիմունքների վրայ հաստատել։

Ս. ՊԱՅԱՍԱՆԵԱՆ

ՄՕԼԻԷՐ

ԻԲՐԵՒ ԵՐԳԻՄԱԲԱՆԵՒ ՄԱՐԴ.

Մատենագրական պատկեր*):

C'est un homme . . . ah' . . . un homme . . . un homme . . enfin

Tartuffe, I. 6.

I.

Փարիզի մարդաշատ թաղերից մէկում, ուր նեղ ու հին փողոցների մէջ անընդհատ բզզալով դէն ու դէս է վազվզում խայտաբղէտ ամբոխը, ծէ. դարու քսաներորդ թուականներին Ս. Օնորէ փողոցի անկեան վրայ կանգնած էր մի անշուք եւ շատ հասարակ տուն, որն որ սակայն անշուշտ կը գրաւէր անցորդի ուշադրութիւնը, եթէ նա բարեհաճէր դէպի վեր նայել եւ տչքէ անցնել տան ճակատը զարդարող ծիծաղաշարժ ասպարը։ Ասպարի վրայ նկարուած էր մի ծառ. վրան փոքրիկ կապիկներով եւ ստորեւում մի պառաւ կապիկ. փոքրիկները թոթովում էին ծառի ճիւղերն, իսկ փութոչան պառաւը զբաղուած էր ընկած պտուղները հաւաքելով։ Ամբողջ շրջակայքում այդ տունը կոչվում էր «կապիկների տուն»։

---

*) А. Веселовскій: Мольеръ сатирикъ и человѣкъ. «Вѣстникъ Европы» 1878 г. № 5.—*Մոլիէրի վրայ առաւել ընդարձակ տեղեկութիւն ստանալ կամեցողներին առաջարկում ենք հետեւեալ ընտիր գրուածքները.*—Taschereau: Histoire de la vie et des écrits de Molière; Sainte-Beuve: Portraits littéraires; Lotheissen: Moliere; sein Leben und seine Werke; Lindau: Molière. Փ. Վ.

Տան ներքին սարքը, թանգագին գորգերը, աղնիւ պատատառները, պատեր զարդարելու եւ սենեակներ յարդարելու արհեստին ծառայող բազմաթիւ նիւթերն եւ ամեն տեսակ գործիներն ակներեւ ցոյց էին տալիս, որ դորա մէջ մի ժիր ձեռագործութիւն էր կատարւում։ Եւ իրաւ դա մի արհեստանոց էր, որ իւր սեփական աշխատութեամբ հիմնել էր «տանն արքայի օթոցարար սպասաւոր» Ժան Պոկլէնը — tapissier valet de chambre du roi։ Այս պատուանունը փոքր ինչ բարձրացնում էր Պոկլէնին իւր արհեստակիցների շրջանից, յատկացնելով նորան գրէթէ մի պալատական ոստիճան եւ պարտաւորելով նորան հետեւելու թագաւորին, երբ որ սա Ֆրանսիայի մէջ պտտելու ելէր։ Սակայն նա ինքն մի շատ պարզ, աղնուամիտ, խելօք եւ իւր արհեստի արժէքը յարգող գործաւոր էր։ Նա հասկանում էր կրթութեան օգուտն, եւ թէպէտ ըստ մեծի մասին իւր արհեստակիցների շրջանումն էր ապրում, բայց չէր մնում դորա մէջ գոցուած։ Իւր նման էլ կին ունէր. սա էլ մի օթոցարարի աղջիկ էր, բայց յայտնի չէ, թէ որտեղից ընթերցասիրութեան եւ մտային աշխատութեան ճաշակ ստացած լինելով, սիրում էր, տնային հոգսերից եւ յոգնութիւնից յետոյ, Պլուտարքոսի մէջ սփոփանք որոնել։ Ամուսինների խնամքով եւ ջանքով նոցա արհեստը բարգաւաճ դրութեան էր հասել եւ նոքա բաւական հարստացել էին։ Նոքա առեւտուր էին անում թէ իրենց յատուկ տան մէջ եւ թէ Սէն Ժերմէնի բազարը գտանուած խանութներում. այդ բազարը միշտ լիքն էր ժողովրդով, որ գունդ ագանդ գալիս էր թէ ապրանք գնելու եւ թէ թամաշա անելու խանութների կշտին բացուած անթիւ վրանների վրայ, ուր աճպարարներն եւ օյինբազները ցոյց էին տալիս սովորած շներ, պար եկող մկներ, հրաշալի ատամնահանութիւններ եւ այլն։ Այդ հռչակաւոր տօնավաճառը Սէն-Ժերմէնում, Փարիզի մօտ, մինչեւ այս օրս էլ տեւում է իւր նախկին տարքով։

Ընտանեկան տղատ կեանքի բարիքը վայելելով խաղաղ աճում էր մեր սիրելին — նորա չորս որդիներից անդրանիկ

Ժան-Բատիստը, որ ծնած էր 1622 թ։ Զարաճճի եւ դիւրագրգիռ, ընկերների մէջ էլ իբրեւ սրամիտ ծաղրածու յայտնի Ժան-Բատիստը մի աղատ կեանք էր վարում. նորան չէին տանջում ուսմամբ. կարդալ նա սովորում էր կամ մոր մօտ կամ թէ գրագէտ հարեւաններից մէկի մօտ։ Նարուեակ հօր արհեստը տեսնելով, նա ընտելացաւ դորան եւ յետոյ հօր առաջնորդութեամբ ինքն էլ նոյն պարզ արհեստը սովորեց։ Բայց այս զբաղմունքին էլ ոչ ոք չէր բռնադատում նորան, եւ նորա պատանեկան տարիները հանդարտ սահում էին մին միւսի ետեւից, շնորհելով նորան նոր նոր վայելք եւ զբօսանք։ Նաբաթական աշխատանքից յետոյ տղաները դուրս էին գալիս մոգկուտ քաղաքից, գնում էին իրենց պապի ամարանոցը՝ Սէնտ-Ուան, եւ անց էին կացնում այն տեղ ամբողջ կիւրակէն կայտառ խաղերի եւ թռչկոտանքի մէջ։ Սակայն Ժան-Բատիստ ասես թէ առաւել սիրում է Սէն-Ժերմէնի այն հէքաթային եւ գրեթէ դիւթական արկածները, որ նա տեսնում էր իւր հօր հետ այն տեղ հանդիպելիս։ Պատանին իսկական կեանքից զէպի մի առասպելական աշխարհ էր տեղափոխվում այն ժամանակ։ Ինչեր ասես չկային այն տեսչ։ Մէկ անկիւնում ժողովրդին զուարճացնում էին մարիոնէտները, չարաչար հեգնելով մարդկային թերութիւններն եւ դեռ այն ժամանակ ոպառնալով դառնալ այնպիսի մի յանդիմանիչ ոյժ, որի դէմ յետոյ թէ կառավարութիւնը պիտի մարտնչէր եւ թէ արտօնաւոր թատրոնը. միւս անկիւնում կատաղէն հովանու ներքեւ զուարթ եւ աղմկալի կերպիւ ներկայացվում էր անանուն հեղինակի մի ֆարս. մէջիչ հեռու՝ թմբուկների եւ շեփորաների հընչմամբ ցաթկոտում էին ջամբազները, դարձեալ մի քայլ—եւ ահա ծիծաղելի ու շինծու հպարտութեամբ յառաջ էր գալիս կառքով ամեն ցաւերի դարման տուող ձեռնածու բժիշկը, որ իւր գերահանճար հնարներով սիամիտ բաղմութեան ուշքն ու միտքը յափշտակում էր։

Սակայն Փարիզի ի բնէ զուարճասէր ամբոխը չէր շատանում միայն այդ փողոցային զբօսանքներով։ Փարիզի

բազմամարդ թաղերում արդէն յերեւան էին եկել փոքրիկ ժողովրդական բեմեր, որոնք թէեւ դեռ հազիւ էին զանազանվում շուկայի տաղաւարներից, բայց գուշակել էին տալիս, թէ փոքր ինչ յետոյ մի բուն ազգային կատագերգութիւն պիտի ծագէր նոցանից։ Porte St Jacques ի մօտ վազուց արդէն կար այդպիսի մի ինքնահնար ազգային թատրոն, ուր բազմութիւնը սիրով հաւաքվում էր տեսնելու եւ լսելու երեք սրամիտ ծաղրածուների երգն ու խաղը։ Դոքա նորմանդացի էին, երեքն էլ հացթուխի աշակերտ, եւ եկած էին Փարիզ բախտ որոնելու, բերելով իրենց հետ նորմանդական թարմ ազգային երգի եւ խաղի այն համարձակ, աշխոյժ ու կայտառ ձեւերը, որոնք յետոյ վոդեվիլ ասուած գաւեշտը պիտի տային Ֆրանսիային։ Ամբողջ քաղաքը ճանաչում եւ սիրում էր այդ երեքին, եւ դոցա շինծու անուններն՝ Գոթիյէ Գարգիլ, Թիրլուպէն եւ Գրոս-Գիլիոմ երկար ժամանակ յիշատակելի մնացին Ֆրանսիական կատակի պատմութեան մէջ։ Այդ մարդիկը որոնք մի կանոնաւոր թատրոնի մէջ էլ կարող էին փառաւոր ասպարէզ բանալ, գիտեցան նա եւ մի անպաճոյճ բեմի վրայ հռչակ վաստկել։ Ֆրանսիական հին կատակը, որ այնքան սնունդ էր տալիս ժողովրդի ինքնահեգնութեան եւ ծիծաղելու փափագին, նորից կենդանութիւն էր ստանում այդ երեք դերասանների շնորհիւ եւ գալլիական նախկին սուր երբեմն չափից դուրս կծու երգիծանութիւնը սկսում էր վերստին թագաւորել բեմի վրայ։ Գոթիյէ-Գարգիլի տաղաւարում անցկացրած երեկոներն եւս առաւել հրապուրիչ պարձան Փան-Բատիստի համար մանաւանդ այն ժամանակից, երբ նա մանկական հասակից դուրս գալով, արդէն մտնում էր երիտասարդականի մէջ։ Գոթիյէ-Գարգիլի թատրոնն էր այն առաջին վարժարանը—բուն ազգային ճշմարիտ վարժարանը, որ տա միշտ տպաւորութիւն գործեց երիտասարդի վրայ։ Թէպէտ եւ շինծու է անշուշտ թշնամիներից հնարուած այն առասպելը, երբ թէ նա դեռ մանուկ հասակում բեմ էր ելել մի ռամկական վրանի մէջ, ուր խառն ի խուռն

դուրս էին գալիս կապիկներ եւ հացկատակներ,—այնու ամենայնիւ հեշտ է երեւակայել, որ դիւրաբնբռնք պատանին հենց այն ժամանակից, երբ վառվում էր դերասանների ծաղրական խաղից եւ քրքջում էր հոմերական ծիծաղով,—հենց այն ժամանակից մի ջերմ փափագ զգացած պիտի լինէր մի օր անձամբ հրապուրելու բազմութեան սիրտն միանալու նորա հետ համաշունչ եւ համանձարակ ծիծաղի մէջ։ Իւր պատանեկան հասակի այդ առաջին զմայլանքների յիշատակը նա առ միշտ պահպանեց դոցա հետքերը ցրուած են նորա պիէսաների շատ կտորներում, օրինակ «Bourgeois-Gentilhomme»ի մէջ եւ «Տարտիւֆի» երկրորդ գործողութեան 3. տեսարանի մէջ, ուր Դորինան նկարագրում է գիւղական կարնավալը, հարկաւ հեղինակի մանկութեան յիշատակների համեմատ։

Սակայն ժողովրդական ֆարսն էլ, զայրեշտն էլ այն ժամանակի կատակերգութեան միակ եւ բացառիկ ձեւը չէր։ Ֆարսից սկիզբն առնելով յերեւան էր գալիս մի առաւել կանոնաւոր եւ գեղարուեստական բան։ Հին կրօնական թատրոնն արդէն շունչը փչելու վրայ էր. դորան պաշտպան հոգեւորականները թէեւ շարունակ գանգատ էին անում կառավարութեան իրենց ոսոխի, այն է՝ աշխարհական բեմի դէմ, բայց եւ այնպէս օր ըստ օրէ համոզվում էին, որ յաղթանակը վերջ ի վերջոյ աշխարհային ունայն ներկայացումների կողմը պիտի անցնէր։ Ֆրանսիական դերասանների կանոնաւոր խմբերն արդէն ԺԷ. դարու գլխից սկսել էին նոր լոյս տեսնող գրական կոմէդիաներ ներկայացնել «Hôtel de Bourgogne» եւ «Théâtre du Marais» կոչուած կանոնաւոր թատրոնների մէջ։ Այդ խմբերից շատ կային Փարիզում եւ մի քանի մեծանուն իտալական ընկերութիւններ, որոնք բերելով Ֆրանսիա թէ գրաւոր կոմէդիայի նորութիւնն եւ թէ իրենց հրապուրիչ յանկարծասութիւնը (improvisation), առաւել ընտիր պիէսաներ էին ներկայացնում եւ իրենց օրինակելի խաղով մի առանձին շնորհ գտնում արքունի

պալատիս *)։ Այս բոլոր թատրոններն անխտիր մատչելի էին ժողովրդին, իսկ Պոկլէն, իբրեւ պալատական ոպասաւոր, կարող էր ներկայ լինել նա եւ դռնփակ ներկայացումներին։ Նորա որդին, որ արդէն յափշտակուած էր բեմից, ազատ պտտուում էր նոցա մէջ, անթիւ տպաւորութիւններ ստանալով. բայց վաղանցուկ զուարճութիւնից յետոյ միշտ կրկնվում էր նորա համար կեանքի տաղտուկ միակերպութիւնը. դարձեալ գալիս էին ճանձրալի գորգերը, շպալերները, պատատուներն, եւ տպագայում նա ոչինչ չէր տեսնում բայց թէ հօրից ժառանգելու մեծ պատիւը, որ էր անկողին պատրաստել թագաւորի համար. . . ։ Աւանդութիւնը պարզ ասում է, թէ Ժան-Բատիստը թատրոնից յետոյ միշտ տխրած էր տուն գալիս։

Իսկ տան մէջ արդէն ամեն բան փոխուած էր. Ժան-Բատիստի առաջին տարիների զուարթ տրամադրութիւնն անհետացել էր, տեղի տալով յուսահատութեան եւ վշտերի։ Նորա մայրը մեռնում է եւ նորան յաջորդում է մի նոր անձն, որ հէնց առաջին օրից սկսում է ատել պատանուն եւ իւր քէֆի համեմատ յեղաշրջել տան բոլոր կարգերը. իսկ հայրը, դարձեալ նոյն բարի, բայց թոյլ հայրը, կուրօրէն ենթարկվում է նոր կնոջ ազդու եւ հատու կամքին։ Պատանին երկար ժամանակ կը յիշէ իւր կեանքի այդ մռայլ օրերն եւ երբ յետոյ պէտք կունենայ մի ինքնահաճ եւ չարասիրտ կնոջ տիպար դուրս բերելու, ինչպէս օրինակի համար «Առողջ հիւանդում», նա իւր մօրուի դաժան յատկութիւնները կը մտաբերէ։ Ընտանեկան կապերի նախկին քնքշութիւնը այժմ կորչում է պատանու համար եւ տուն հասարակ ամբողջ ընտանեկան կեանքն էլ մի սեւաթոյր գոյն է ստանում նորա աչքում։ Այս է պատճառը, մի քանի կրիտիկոսների կարծիքով, թէ ինչու նա մի կատարեալ որդիական սէր չէ դուրս բերում իւր գրուածքների մէջ, այլ նախադասում է (ինչպէս «Ադահի» մէջ)

*) Իտալական դերասաններին առաջին անգամ Փարիզ բերողն էր Եկատերինէ Մէդիչի թագուհին։

ընտանեկան գժտութեան եւ հին ու նոր սերունդների թշնամութեան պատկերներ ներկայացնել։

Ընտանեկան սառնութիւնը նշմարվում է գլխաւորապէս այն բանի մէջ, որ պատանուն բոլորովին անխնամ են թողնում. նորան մինչեւ անգամ վարժարան տալ չեն ուզում, ասելով թէ շատ է եւ այն կրթութիւնը, որ նա վեր ի վերոյ ստացել էր տան մէջ։ Պէտք եղաւ պապի միջամտութիւնը, որպէս զի նորա հանգուցեալ դստեր անդրանիկ որդին ուսման տրուէր Փարիզի այն ժամանակուայ ամենալաւ կոլէժներից մինի մէջ (collège de Clermont), որ մինչեւ այս օրս էլ գոյութիւն ունի Լիւդովիկոս Մեծի լիկէյոն անուամբ։ Պատրանի աշակերտն ագահութեամբ սեփականեց իրեն աւանդուած գիտութեան սովորական պաշարը։ Դպրոցի տնօրէն ճարպիկ ջիզուիթներն շատ արագ էին յառաջ տանում կրթութեան գործը. ընդունելով ամենափոքր հասակի աշակերտներ, մանաւանդ ազնուական դասակարգից, նոքա երեք չորս տարուայ ընթացքում լքցնում էին մանուկների գլուխը հնչուն անուններ կրող գիտութեանց բեկորներով եւ գուրս էին թողնում պատրաստի փիլիսոփաներ, հռետորներ եւ աստուածաբաններ, չընայելով որ դոքա գեռ հազիւ էին կարող մարդավարի խօսել եւ կանոնաւոր մի բան գրել։ Ջիզուիթների մօտ կարելի էր գոնէ լատիներէն ուսանել եւ փոքր ի շատէ ընտելանալ այն արուեստներին եւ ձեւերին, որոնք անհրաժեշտ էին համարուած մի որ եւ է բարեկիրթ աշխարհական երիտասարդի համար։ Կլերմոնեան կոլէժը հրաչակուած էր իւր մարզմունքներով, խաղերով եւ ամեն տեսակ հանդէսներով. այդ մասին ջիզուիթական վարժարանները միշտ գերադաս են եղած ամեն միւս վարժարաններից։ Սուրբ հայրերը, հրահանգելով աշակերտներին աշխարհական ձեւերի, սուսերամարտի, պարի եւ այլն մէջ, տալիս էին երբեմնակի եւ հոյակապ թատրոնական ներկայացումներ, մեծաշուք հանդէսներ, որոնք յատոյ խօսակցութեան նիւթ էին դառնում ամբողջ Փարիզի մէջ։ Եւ այդ հանդէսներն անշուշտ շատ զուարճալի էին աշակերտների

համար, որովհետեւ փարատում էին սքոլաստիքական չոր ու ցամաք ուսման տաղտուկն եւ առիթ էին տալիս համբակներին յափշտակուելու բեմական աշխարհի հրապոյրներով։ Իսկ մեր նորամուտ աշակերտի համար առաւել եւս մեծ նշանակութիւն ունէին այդ ասոները. գոնա միջոցին նա առաջին անգամ, ոչ թէ երեւակայութեամբ, այլ իրօք, հաղորդակցութիւն էր ստանում այն հմայական աշխարհի հետ, որ արդէն վաղուց գերել էր նորան անվանելի զորութեամբ։ Դպրոցն էլ այդ բոպէներին կորցնում էր նորա աչքում իւր անախորժ մռայլութիւնը։ Բարեպաշտութեան եւ աշխարհային տարրի, քրիստոնէութեան եւ հեթանոսական առասպելի, համեստութեան եւ ատոմիքական սրամտութեան գոյնզգոյն խառնուրդը, որ միշտ եւ ամենուրեք թագաւորում էր ջիզուիթական թատրոնի մէջ, ասես թէ հաշտեցնում էր իրար հետ ամեն հակադրութիւններն ու խափրները, ստեղծելով երիտասարդների համար այնպիսի մի գեղարուեստական չեզոք մթնոլորտ, ուր նոքա կարանում էին անհամեմատ աւելի թեթեւ շունչ քաշել, քան թէ դրսի աշխարհում։ Եւ այդ ոչ թէ միայն Գոկլէնն էր զգում իւր վրայ, այլ եւ նորա ընկերների բոլոր շրջանը, որոնք իւր նման զուարթ ու ժիր համբակներ էին եւ իւր պէս թատրոնի սիրահար։ Այդ փոքրիկ շրջանի մէջ ծագման եւ վիճակի տարբերութիւնը մոռացվում էր. մեծանուն Կոնդէի եղբայրը՝ իշխան Կոնտին, Ֆրոնդի*) ապստամբութեան հռչակաւոր հերոսներից մին, որ ծերութեան ժամանակ ժամասէր դարձաւ եւ թատրոնի ոխերիմ հալածիչ,—կոլլէժի մէջ մտերմաբար ձեռք էր տալիս Գոկլէնին, պալատական սպասաւորի որդուն։ Այդ երիտասարդութիւնը բուռն տենչ ունէր ապրելու, միշտ առիթ էր պտրում իւր սիրտն ու հոգին ազատ բաց անելու վե-

*) Ֆրոնդ կոչվում է այն կուսակցութիւնը, որ Լիւդովիկոս ԺԴ. մանկութեան ժամանակ Մազարինի միապետական քաղաքականութեան դէմ ոտքի ելաւ (1648—54) և երկար կոտորածներից յետոյ պարտուեցաւ։ Փ. Վ.

բանիկոդ մանկավարժներին խաբելու։ Մանկավարժների փիլիսոփայական ձեւերը, հպարտութիւնն ու փքնութիւնը, որով սիրում էին գերագոյն ճշմարտութեան քուրմեր երեւնալ, եւ միեւնոյն ժամանակ նոյն գիտութեան թշուառ նուազութիւնը կարող չէին վրիպել աշակերտների սուր աչքերից։ Այդ աղքատութեան մերկացումն անկարելի է որ մի խոր ազդեցութիւն չը գործէր երիտասարդների վրայ. նոքա կեանք մտնելիս չէին կարող այլ եւս շատանալ գիտութեան սուտ պաշտօնեաների հպարտագոծ իբր թէ անվրէպ սկզբունքներով։ Այն ժամանակ օդի մէջ սաւառնող ժխտողական ոգին, որ ձգտում էր տապալել մտային ստրկութեան հիմքերն եւ պաշտպան կանգնել ազատ խուզարկութեան, արդէն շօշափել էր երիտասարդների միտքը,—եւ ջիզուիթների երկբայած աշակերտներն շատ յառաջ կերթան այդ շաւղով. փքուած եւ դատարկագլուխ իմաստակի տիպարը միշտ կծու երգիծաբանութեան նիւթ կրգառնայ նոցա համար եւ կեանքի փորձը առաւել եւս կամրացնէ նոցա այդ հեգնական ուղղութեան մէջ։ Նոքա կանգ չեն առնիլ Հերքման ճանապարհի վրայ եւ կը հասնեն այն կէտին, թէ միայն հին կանոններից ազատուելով կարելի էր փրկութիւն գտնելու, թէ հին ընդանդութիւնն եւ հին էմթէոիկան անպէտք բաներ էին եւ թէ «օրինաւոր էր ամեն մի ոճ, 'ի բաց առեալ տաղտկալին»։

Որ եւ է կերպիւ աւանդական արհեստից դուրս գալու ձգտումը, որ առ հասարակ տիրել էր երիտասարդ մտքերին, շուտով նեցուկ գտաւ մի գիտնական մարդու հեղինակութեան մէջ, որ իբրեւ այն ժամանակուայ փիլիսոփայութեան նորոգիչ, համարձակ պատերազմ էր քարոզում սքոլաստիկների հին կաճառի դէմ։ Պօկլէն պատահմամբ ծանօթանում է այդ մարդու հետ։ Դա էր մի համեստ գիւղական քահանայ, որ իւր Պրովանսալեան լռիկ անկիւնից յանդգնել էր բողոք բառնալ Արիստոտելի ուսման հակառակ եւ արդէն հռչակուել էր թէ այդ ուսման քննական հետազօտութեամբ եւ թէ մի քանի նշանաւոր մաթեմատիքական գրուածքներով,—դա էր Գասսէնդին,

որի միակ անունն արդէն մի անլսուր ուսումնական հեթանոսութեան համանիշ էր համարուած այն ժամանակի պաշտօնական գիտնականների շրջանում։ Գասսէնդին անպատկառ գլորում էր պատուանդանից հին փիլիսոփայութիւնը, փորձում էր բնական գիտութիւնների միջոցով վերստին կենդանութիւն տալ կաշկանդուած մտքին եւ ջերմաջերմ փոյթ էր տանում մոռնելու կեանքի մէջ իւր սիրած Էպիկուր իմաստասիրի վարդապետութեան էական սկզբունքը։ *) Էպիկուր գրաւում էր նորան թէ իւր մտքի այն առանձին յատկութեամբ, որն որ յենուելով գլխաւորապէս զգայական ճանաչողութեան վրայ, արդի նիւթապաշտութեան բուն կարապետ էր շինում նորան,—եւ թէ իւր ուսման բարոյական կողմով, որին լծորդ էր պարզուկ եւ չափաւոր կեանքի մի կենդանի օրինակ։ Զնայելով քաղաքական կրքերի փոթորիկներին, նա իմացել էր մեկուսանալ եւ լիովին խորասուզուիլ մտային զբաղմունքների մէջ, որով եւ կարացել էր պահպանել մի անբիծ եւ ազնիւ մարդու բարի համբաւ։ Էպիկուրի իդէալն իսկ եւ իսկ համապատասխանում էր Գասսէնդիի ճաշակին. սա էլ մի պատերազմող գործիչ հանդիսանալով իւր քննական երկերի մէջ, պաշտպանելով ինդուկցիայի իրաւունքները, հետազօտելով աստղաբաշխութեան եւ մաթէմատիկայի օրէնքները, բնաւ երբէք չէր թեկնածում փառքի ու պատուի, այլ շատանում էր իւր պարզուկ ազնիւ կատարմամբ, ստակապետութեամբ եւ այն համեստ բախտով, որ վիճակվում է միայն իւր անձնական կրքերը չափաւորելու ընդունակ մարդուն։ Այդ իդէալի վրայ նա մատնացոյց էր լինում եւ Փարիզի մէջ իւր շուրջը հաւաքուող երիտասարդներին։ Գասսէնդիի վարդապետութեան շնորհիւն էր, որ նորա թօթափեցին ջիղուիթական վարժարանից հանած այլանդակ ցնդաբանութիւններն եւ ուսան լրջօրէն նայել կեանքի վրայ։

*) Գասսէնդիի նշանակութիւնը մտքերի մշակութեան նկատմամբ լաւ բացատրուած է Լանգէի „Geschichte des Materialismus„ գրքի մէջ։

Կարծիք կայ, թէ Պոկլէն արդէն կօլլէժի միջից մի քանի ընկերների հետ այդելում էր Գասսէնդիի դասերին— հարկաւ ծածուկ։ Իսկ կօլլէժը թողնելուց յետոյ նա բոլորովին անձնատուր եղաւ նոցա։ Այդ ամենաերջանիկ ժամանակն էր նրա կեանքի նախապատրաստական շրջանում։ Գասսէնդիի դասերն ի դէպ ժամու զգուշացրին միակողմանի ուղղութիւնից Պոկլէնի գեռափթիթ քանքարը՝ որ կայանում էր ծաղրի եւ հեգնութեան մէջ, եւ հաղորդեցին նորան այն բարոյական եւ վերին աստիճանի խորիմաստ լրջութիւնը, որ յետոյ միշտ պիտի յերեւան գար իւր ընտիր գրուածքների մէջ։ Գասսէնդիի լսարանն մի ուրիշ կողմից էլ օգուտ տուաւ երիտասարդին. այն տեղ նա իւր հին դպրոցական ընկերներից զատ հանդիպում էր գեռ իրեն անծանօթ մի շնորհալի խմբակի հետ, որի մէջ գտանում էր, օրինակի համար, ձիրքերով իրեն համատիպ Սիրանօ դը-Բերժերակը՝ «Լուսնի եւ արեւի ծաղրական պատմութեան» հեղինակը, որ Ռաբլէից յետոյ Ֆրանսիական սրամտութեան ամենալաւ ներկայացուցիչը պիտի հանդիսանար։ Դոքա ամենքն էլ իրարուց գոհ էին. միասին եւ պարապում էին, եւ խաղում եւ սրամիտ ոտանաւորներ շարադրում, ծաղրելով չէ թէ միայն իմաստակ պրոֆեսսորներին, հապա եւ նոյն ինքն Գասսէնդիին, որի հանդիսաւոր ծանրութեան եւ անսպառ վիճաբանութեան ծիծաղելի կողմն անտես չէր մնացել չարաճճի երիտասարդներից։ Այս թեթեւ կատակը մինչեւ անգամ սիրելի վարժապետի վրայ կենդանի կերպիւ փայլեցնում էր իւր մէջ մի երիտասարդական զուարթ հեգնութիւն, որ երբեմն թէեւ չափից անցնում էր, բայց հէնց այդ զուարթութեան պատճառով էլ կարանում էր զուգանալ վարժապետի բարոյական վարկին ընծայուելու համակրութեան եւ պատուի հետ։ Գասսէնդին իւր գիտնական հակառակորդների վրայ յարձակուելիս հարուածում էր երբեմն եւ նոցա նախապաշարուած ու անոտիապաշտ հետեւողներին, այսինքն բժիշկներին. գուցէ այս հանգամանքի մէջ պէտք

կլինի որոնել պատճառը նաեւ Մոլիէրի սուր երգիծաբանութեան բժշկութեան եւ բժիշկների դէմ։

Պոկլէն կոլլէժից դուրս գալիս, երբ հարկը ստիպում է նորան մի որոշ դերձ ընտրել, մի անմեղ նենգութեան է դիմում իրեն սպառնացող արհեստաւորի վիճակից փախչելու համար։ Նա փաստաբան դառնալու թոյլտուութիւն է խնդրում հօրից։ Կենսագիրներից շատերը հաւանական են համարում, որ Ժան Բատիստը հօրից այդ իրաւունքը խնդրելիս ոչ թէ յիրաւի փաստաբան դառնալու միտք ունէր, այլ թէ կամենում էր միայն խոյս տալ բրթացուցիչ ֆիզիքական աշխատանքից եւ ժամանակ շահել իւր մանկութեան նուիրական նպատակին մնտենալու, այսինքն դերասան դառնալու համար։ Ինչ եւ իցէ, նա ստանում է հօր յօժարութիւնը, թէ եւ մեծ դժուարութեամբ։ Պոկլէն սկսում է իրաւաբանութիւն ուսանել, շուտով հմտանում է դորա նրբութիւններին եւ ստանում է լիսանսիէի դիպլոմ։ Այժմ նա պտոյտ էր գալիս դատաւորների շրջանում, հետազօտում էր այդ իրեն համար դեռ նոր հասարակային դասակարգը, որի ծանօթութիւնը չպիտի ապարդիւն անցնէր իւր համար. բայց մրքով եւ սրտով նա բոլորովին դուրս էր կանգնած այդ շրջանից։ Նա թերթում էր Իւստինիանոսի մեծահատոր օրէնսգիրքը. բայց երեւակայութեամբ հեռու էր թռչում գրքի էջերից, պատկերացնելով իւր առջեւ շքեղ լուսաւորուած մի բեմ, մի հրապուրիչ տեսարան, փոթորկալի եւ հոգեառանգն բազմութիւն, կենդանի ներկայացումն եւ ի վերջոյ սիրալիր զոյգ աչքեր, որոնք բեմի վրայից ժպտելով, շեշտակի յառուած էին երիտասարդի վրայ...

Իրաւաբանութեան երիտասարդ ուսանողը շատ շուտ ընկաւ թատրոնական մթնոլորտի մէջ եւ շատ շուտ գերուեցաւ առաջին սիրոյ հրապոյրից, որի շնորհիւ բեմի թշուառ տախտակամածն անգամ մի դիւթական փայլ պիտի ստանար իւր աչքում։ Պատերով Փարիզի յանկարծ բացուող, յանկարծ էլ փակուող փոքրիկ թատրոնների մէջ, նա սիրում էր թատերասէր երիտասարդների հետ

միասին երկրպագութիւն ընծայել այս կամ այն գեղեցիկ դերասանուհուն, փայլիլ եւ աղմկիլ տմենքի առջեւ, ինչպէս որ սովոր են անել գրեթէ իւրաքանչիւր բեմի մօտ։ Ահա այդ միջոցին էր, որ նա ծանօթանում է այն կոկէթներից մինի հետ, որոնք բեմական խաքուսիկ պատրանքի շնորհիւ վերին աստիճանի կատարելութեան են հասցնում հաճոյանալու արուեստը,— մի արուեստ, որ այնպէս անխանելի ազդեցութիւն է գործում ամեն մի մատաղ սրտի եւ կեանքի մէջ դեռ նոր ոտք դնող անփորձ աշակերտի վրայ։ Բացի այս, Մադրլէն Բէժարը ոչ թէ մի առօրեայ եւ հասարակ, այլ մի խելացի եւ մինչեւ անգամ կրթուած դերասանուհի էր, որ առ ժամանակ շատանում էր թատրական խմբի համեստ պայմաններով եւ կիսազգուական երիտասարդների մէջ վաստակած էժան յաղթանակներով։ Նորա կեանքի հանգամանքները մասամբ նման էին Պօլլէնի վիճակին. նա էլ թատրոնի անդիմադրելի սիրուց մղուելով էր նետուել բեմի վրայ, նա էլ փախել էր մի չքաւոր հօր ընտանիքից. նա էլ բերել էր իւր նոր կոչման համար մի նուրբ ճաշակ եւ մի այնպիսի կրթութիւն, որ հաղորդուում էր այն ժամանակուայ դերասանական դասի մէջ։ Մադրլէնը մի համարձակ եւ փառասէր աղջիկ էր. նա երազում էր ձեռք բերել մի օր եւ պանծալի բեմական համբաւ, եւ հարուստ ամուսնութիւն, եւ լիութիւն եւ պատուաւոր դիրք։ Մասամբ հիմք էլ ունէր այդպիսի յոյսեր տածելու։ Մադրլէնի երկրպագուների թուում կար նորա մէջ առաջին սէր յարուցանող մի ընտրեալ ոմն. դա էր մի ազնուական եւ արտաքոյ կարգի բախտախնդիր երիտասարդ, որ միշտ խառնվում էր ամեն տեսակ քաղաքական արկածների մէջ, ուստի եւ շուտ շուտ անհետանում էր Փարիզից, սակայն առանց ընդհատելու իւր հաղորդակցութիւնը Մադէլէնի հետ։ «Վերջապէս մի օր դա կրկին հարկաւ իւր երդումներն եւ կամուսնանոյ ինձ հետ», մտածում էր Մադրլէն... Սակայն դիւրահաւատ Պօլլէնը, որ ոչ իւր տիրուհու փառասիրութիւնն էր նշմարում, ոչ էլ նորա կապերն ուրիշի հետ, նայում

էր նորա վրայ զմայլած աչքերով, առանց գուշակելու, որ գեղեցիկ սիրտը մի ուրիշ մարդու պատկերովն էր յուզուած ու զբաղուած։ Գուցէ հէնց այս միամիտ ոգեւորութիւնն եւ երիտասարդական զգացմունքի թարմութիւնն էր պատճառ, որ երես առած օրիորդը վերջի վերջոյ ուշադրութիւն ընծայեց երկչոտ երկրպագուին եւ չընայելով հասակների խտրութեանը մի ջերմ ու քնքոյշ մտերմութիւն զգաց դէպի նա։ Սկսեալ այդ օրից Թատրոնն եւս առաւել հաճոյական երեւեցաւ երիտասարդ իրաւաբանին, որ համոզուած էր, թէ այն տեղ միայն պիտի կարանար մի ճշմարիտ եւ իւր բերմունքներին համապատասխան կեանք գտնել իւր համար։ Հօր նախապաշարմունքների դէմ վարելու առաջիկայ պատերազմը չընկրկեց նորան. նա չը գայթակղուեցաւ ոչ արքունի ծառայութեան օգուտներից, որ ժառանգելու էր հօրից յետոյ, ոչ էլ վախեցաւ ապագայում իրեն սպառնացող աղքատին կեանքից, ոչ էլ վերջապէս տեղի տուաւ հօր յորդորանքին։ Նա մի անսովոր կամքի հաստատութիւն եւ վճռականութիւն յերեւան հանեց այս դիպուածում։ Զրոյց կայ, թէ նորան անիսոհեմ քայլից յետ կասեցնելու համար մի յարգելի անձն է ուղարկվում նորա մօտ,— ոմանց ասելով՝ իւր նախկին վարժապետներից մին, միւսների ասելով—մի բարեպաշտ եւ սրբակրօն աբեղայ։ Սակայն դորա համազակեր խրատներն ի չիք են դառնում երիտասարդի խորտակիչ փաստաբանութեան առջեւ. Թատրոնի ջատագովն եռանդով ապացուցանում է, որ բեմի վրայից էլ կարելի է նոյն փրկարար քարոզութիւնը տարածել, ինչ որ եկեղեցու ամբիոնից,—եւ յաղթահարուած միջնորդը զինաթափ լինելով, հաւատում է նորա աղանդին, դէն է ձգում ֆարաջան եւ մտնում է սատանայի բանակը ազատամիտ երիտասարդի ետեւից։

Թատրոնը, որին որ իսկոյն հարուեցաւ Պօկլէն, մի շատ ինքնուրոյն եւ տարօրինակ հաստատութիւն էր։ Ժամանակակիցների վկայութեամբ, այն ժամանակ Փարիզի մէջ հաւաքուած էին մի քանի «լաւ տան» զաւակներ,

ընդհանուր ուժերով ներկայացումներ տալու եւ իրենց տաղանդը մարզելու համար։ Այդ ինքնակոչ դերասաններն երեւի թէ Ժան Բատիստի եւ Մադրլէնի նման հայրենի տնից հեռացած եւ նոյնպէս փառքի եռեւից ընկած փախըստականներ էին։ Նոցա փոքրիկ եւ անշուք թատրոնը, որ նոքա թափառելով Փարիզի մէջ մերթ ատտ, մերթ անգ էին բաց անում, նման էր այժմ էլ Սէնայի ձախ ափի վրայ գտանուող մանրիկ մասնաւոր թատրոններին, ուր ոչ օրինաւոր նստել կարելի է, ոչ էլ կանգնել, եւ որոնք սակայն խաղացող երիտասարդների աչքում նոյն իսկ Théâtre Français ից էլ ստոր չեն եւ մի պատուական նախակրթարան են դերասանների համար։ Պոկլէնի խումբը շատ հարուստ էր անկոչ հանճարներով եւ աղքատ—դրամով։ Բոլոր անդամներից ամենահարուստը գրեթէ նա ինքն էր, եւ նա ստեպ փրկում էր նոցա իւր վեհանձն երաշխաւորութեամբ։ Խմբի համար շատ կարեւոր էր ուրեմն սուրը պահել եղբայրութեան կամ ընկերութեան ձեւը, որ շատ սովորական էր դերասանների կեանքի մէջ. բոլոր ոյժերի միաւորումն եւ ամենքի համերաշխութիւնը մի տեսակ հակակշիռ էր իւրաքանչիւր անդամի անպաշտպան դրութեան դէմ։ Ընկերութեան գաշնագիրը ստորագրուեցաւ տասներկու անդամներից 30 Յունիսի 1643 թ. Խումբը կնքեց իրեն պերճ անուամբս l' Illustre théâtre, (երեւելի թատրոն) որ թէպէտ շատ ծիծաղելի կերպիւ հակասում էր թատրոնի չքաւոր սարքին եւ դերասանների սակաւ թուին, բայց յարմար էր գալիս այն ժամանակուայ ինքնապարծուկ հաշակին, որն որ սիրում էր դրոշմել երեւելի, հռչակաւոր մակդիրամբ ամեն մի վքուած դրամայի, ռօմանի եւ կոմէդիայի ճակատ։

Պոկլէն բեմի վրայ ոտք դնելուն պէս փութաց դերասանների սովորութեան համեմատ փոխել իւր անունը։ Փարիզի եւ գաւառական խմբերը մի խայտաճամուկ առատութիւն էին ներկայացնում կեղծ անունների դիպ. իւրաքանչիւր դերասան ընդունում էր իբրեւ անուն մի

որ եւ է պատճառով իւր համար նշանակութիւն ունեցող մի բառ, օրինակ Raisin, Longchamp, եւ կամ նորից էր հնարում մի հնչուն մականուն, ինչպէս են—Floridor, Filandre, Montfleury եւայլն։ Այս սովորութեան շնորհիւն է, որ երիտասարդ օթոցարար Պոկլէնի անձնաւորութիւնը բոլորովին անհետանում է Մոլիէր անուան տիեզերահռչակ համբաւի տակ։ Մոլիէր անմիջապէս որոշվում է ընկերների շրջանից. դաշնագիրը միայն նորան եւ ուրիշ երկու դերասանների է իրաւունք տալիս հերոսների դեր խաղալու. իսկ Մադելէն, որ ամբողջ խմբի միակ փորձառու դերասանուհին էր, արտօնութիւն է ստանում «ընտրել ինչ դեր եւ կամենար»։ Մի տարի անցնելուց յետոյ Մոլիէր դառնում է խմբի առաջնորդ եւ շարունակում է անվկանգ ոգորել դորա վրայ տեղացող ամեն տեսակ տառապանքների դէմ։ Հասարակութիւնը սառն է մնում, սակաւ է թատրոն գալիս, պարտքերն աճումեն։ Մոլիէր, այդ պարտքերն վճարել չկարանալով, բանտարկվում է։ Մադելէնի միջնորդութեամբ Օրլէանեան դքսից սահմանուած դրամական նպաստն էլ շուտով դադարում է եւ հռչակաւոր թատրոնի անդամները միանգամայն ուժաթափ են լինում։

Փարիզն ակներեւ մերժում էր նոցա. ոչ մի ուրիշ ելք չէր մնում նոցա առջեւ, բայց թէ աչքերը կողպած ճանապարհ ընկնել եւ գաւառներում բախտ որոնել։ Նոքա ունէին ի նկատի մի քանի խմբերի քաջալերիչ օրինակը, որոնք գաւառների մէջ ամէն խոչընդոտներ տապալելով կարացել էին մի հաստատուն վիճակ ձեռք բերել։ Եւ վերջապէս ի՞նչ կը նշանակէին ցիսկ, նեղութիւն, սովածութիւն ասուած բաներն Մոլիէրի պէս սիրահարուած եւ փառքի թեկնածու երիտասարդի համար, որի մանկութեան ոսկի յոյսերն արդէն սկսել էին իրագործուիլ։

2.

«Արդէն երեկոյեան վեցերորդ ժամն էր, երբ մի փոքրիկ սայլ մտաւ Լը Մանսի փայտաշէն կամարի տակ։ Սայլը լծուած էր չորս նիհար եզներով, որոնց առջեւից կապուած էր մի

մատակ ձի. մորուկն էլ գիժի պէս թռչկոտում էր դէն ու դէս։ Սայլը լիք բեռնաւորուած էր սունդուկներով, պայուսակներով, եւ ներկուած քաթանի ահագին կապերտներով. այս բոլորը կազմում էր բուրգի նման մի բան, որի գագաթին բազմած էր ոչ քաղաքային, ոչ էլ գեղջկային շորեր հագած մի օրիորդ։ Սայլի կողքից գալիս էր աղքատին հագուստով, բայց աղդու դէմքով մի երիտասարդ. նորա երեսի վրայ երեւում էր մի մեծ կարմիր ոպեղանի, ծածկելով մի աչքն եւ այտի կէսը *). ուսի վրայ նա կրում էր մի վիթխարի հրացան, որով սպանել էր մի քանի անծեղ եւ ագռաւ. սոքա կախուած էին ուսընգանուած գօտու պէս եւ տակից էլ տատանվում էր մի հաւ եւ մի ուրիշ թռչուն, որոնք անշուշտ մի փոքրիկ պատերազմի սւաար եղած պիտի լինէին։ Գտակի փոխարէն երիտասարդը հագին ունէր գոյնզգոյն լաթերով քանիցս անգամ փաթաթուած մի գլխանոց—կիրուաւարտ ապարօշի նման մի բան։ Մէջքից կախ էր ընկած մի երկայն սուսեր։ Ոտքերին հագած էր ծակոտ գուլպաներ, ծնգակապներով հանդերձ, որով սովոր էին զարդարուիլ դերասանները հին դիւցազներ ներկայացնելիս. դիւցնազական էին դարձեալ եւ նորա ցեխոտ սանդալները, որոնք այժմ հասարակ տրեխի պաշտօն էին կատարում։ Նորան ուղեկցում էր փոքր ինչ աւելի կանոնաւոր, բայց նոյնպէս վատ հագնուած մի ծերուկ. քայլելիս սա միշտ կռանում էր, յիշեցնելով հեռուից յետին ոտքերի վրայ քայլող մի կրիայ»։

Փոքրիկ քաղաքի մի գինետան առջեւ գումարուած աւագներն ապշութեամբ նայում էին այդ տարօրինակ կարաւանի ետեւից, որի շուրջն արդէն ամբոխուել էր մի ահագին բազմութիւն։ Տեղական պաշտօնեաներից մէկը վեր ու հպարտ կերպիւ մօտեցաւ եկաւորներին եւ հարցրեց, թէ ինչ մարդիկ էին նոքա։ Երիտասարդը պատասխանեց. «Աղգով ֆրանսիացի ենք, պաշտօնով՝ դերասան.

*) Ծպտուելու մի պարզ միջոց, որ այն ժամանակ սովորական էր բեմի վրայ։

իմ թատրոնական անունն է le Destin (ճակատագիր), ալեւոր ընկերիս անունն է la Rancune (ոխ), իսկ սայլի վրայ թուխսի նման նստած օրիորդինը—la Caverne (քարայր)»:

Այդ ծաղրական տեսարանով է սկսվում Սկարրոնի հռչակաւոր «Roman comigue»-ը, որ կենդանի բէալիստիքական վէպի արժէքներից զատ մի շատ թանդագին նիւթ է ներկայացնում հին ֆրանսիական գաւառային թատրոնի ուսումնասիրութեան համար: Աւելորդ է խուզարկել, թէ արդեօք մի անմիջական առընչութիւն ունէր այդ վէպը Մոլիէրի նժդեհութեան տարիների հետ եւ արդեօք յատուկ Մոլիէրն էր դուրս բերուած «le Destin» անուն թափառական դերասանի պատկերի մէջ, ինչպէս որ պընդում են նորա կենսագիրներից ոմանք: Մի նոր գիտնական հատատեց, որ Սկարրոն Մոլիէրի գաւառական թափառումներից առաջ էր յօրինել յիշեալ պատկերը: Բայց Սկարրոն հէնց այն կեանքն է նկարել կենդանի գոյներով, ինչ կեանք որ վարած պիտի լինէր եւ Մոլիէր իւր բազմաթիւ պնդաշնակիցների նման,—եւ այս տեսակէտից Սկարրոնի վէպը մի կարեւոր յիշատակարան է:

Արդ ինչպիսի էր այդ կեանքը: Դերասան ասածդ, որին եկեղեցին յոռի եւ պիղծ էակ էր համարում, զըրկելով քրիստոնէական թաղումից, — դերասանը որ տաժանելի չարչարանքով էր ձեռք բերում արուեստագիտի, արտիստի վարկը մի ժողովրդի մէջ, ուր դարերէ ի վեր սովորած էին մի լարախաղաց եւ հացկատակ համարել նորան,—դերասանը մէնակ էր կանգնած իրեն շրջապատող վայրենի եւ խաւար գաւառական հասարակութեան մէջ: Ոչ ոք չկար, որ մի իմաստուն խորհուրդ, մի օգնութիւն, մի բարեկամութիւն ընծայէր նորան. մեծամասնութեան աչքում նա մի խեղկատակ էր,—ինչ ուզենաս կարելի էր անել տալ նորան եւ նա պարտական էր գոհ մնալ, եթէ իւր հետ ողորմալար վարուէին:

Քաղաքային պաշտօնակալները ստեպ մերժում էին դերասանների խնդիրը ներկայացումներ թոյլ տալու մա-

սին. Ժողովուրդը հեռաւոր գիւղերի մէջ, ուր երբեմն ապաստան էր որոնում մի որ եւ է սնանկացած խումբ, հալածում էր դերասաններին հայհոյանքով եւ շներով. շատ անգամ էլ նոքա ստիպվում էին ամբողջ օրեր սոված մնալ, բացօթեայ քնել, հետիոտս շրջել եւ կամ մուրացկանի պէս շնորհ հայցել մի որ եւ է նաւավարից, որ նա բարեհաճի հակերի մէջ տեղը նստեցնել, իբրեւ մի բեռ, վշտահար Անգրոմաքէներին եւ Դիդոնաներին։ Այն ժամանակ բովանդակ Ֆրանսիայի մէջ տիրապետող անբարոյականութեան եւ անապահովութեան շնորհիւ վերին աստիճանի վտանգաւոր եւ դժուար էր դերասանների թափառումները։ Ռաստ եկած ոստիկանը, յետին ախմախ գատաւորը կամ գոռոզ աղան ազատ էր ընդհատել, խափանել ներկայացումն եւ կալանաւորել դերասաններին։ Տեղէ տեղ շրջելիս նոքա ենթարկվում էին անթիւ պատահարների, որոնց նկարագրութիւնով լիքն է Սկարրոնի ռոմանը։ Մերթ մի յանդուգն յարձակման զոհ էր դառնում խմբի ամենալաւ դերասանուհին, որ կնքուած էր բանաստեղծական «Անտղիկ» մականուամբ. մերթ առեւանգում էին միւս դերասանուհուն. մերթ արիւնահեղ կռիւ էր ծագում սայլապանների եւ զինուորների մէջ եւ դերասանուհիք փախչում էին ուր որ կարանային. շատ անգամ էլ յանկարծ վէճ էր բրդում խաժամուժով լիքը պանդոկների մէջ, մենամարտութիւնը, գողութիւնը, սպանութիւնը ամենահասարակ դէպքեր էին։ Միթէ հնարին էր այդպիսի հանգամանքների մէջ մտածել գեղարուեստի վրայ եւ լրջորէն վերաբերուիլ գործին։ Միայն մաշուած ու տրորուած դերասանները էր փառքի հասցնում Սկարրոնի դերասանները, ինչպէս եւ Համլէթի կոմէդիանտները, միշտ ունէին առաձեռն պատրաստ մի շինծու եւ ճարճատուն խանդ. հէնց որ քաղաքացիք հաճոյք էին յայտնում մի որ եւ է ճաշակ ստանալու նոցա արուեստի մասին, իսկոյն վեր էր քաշվում վարագոյրի պաշտօն կատարող վերմակը, — եւ ահա «le Destin» միդարի վրայ թեք ընկած, թագի տեղ գլխին մի կողով անցրած, սկսում էր հնչեցնել Հերովդիսի մենախօսութիւնը

մի հին ողբերգութիւնից։ Ամենքն էլ տեսնում էին, որ այդ «le Destin»-ը մի հասարակ դերասան չէր. նորա կերպարանքը, խօսակցութիւնն ու ձեւերը վկայում էին, որ նա մի անսովոր անցեալ ունէր։ Ներկայացնում էին ինչ որ պատահէր։ Արքունի բեմից տաղավարի մէջ ընկած նորելուկ պիէսաներին կից տալիս էին եւ ինքնահնար շարադրութիւններ, որ գրում էր շատ անգամ խմբի մէջ գտանուող եւ հէնց այդպիսի բաներ թիւելու յատուկ պաշտօն վարող մի բանաստեղծ, որն որ մասնակցում էր դերասանների ամեն ազէտներին, երբեմն էլ կատարում էր երկրորդական դերեր։ Այդպիսի մի բանաստեղծ կայ եւ «Կոմիքական Ռոմանի» մէջ. առանց դորան կարող չէր սկզբում հօլայ գնալ եւ Մոլիէրեան խումբը, մինչեւ որ վերջապէս բեմական վարչութեան հետ միասին ռէպերտուարի յօրինումն էլ իւր վրայ չառաւ ինքն Մոլիէր։

Գաւառական խմբերի թիւը հասնում էր այն ժամանակ մօտ տասնհնգի, չը հաշուելով ի հարկէ դերասանների այն պատահական միաւորութիւնները, որոնք յառաջ էին գալիս մի որ եւ է տօնավաճառի, քաղաքային հանդէսի եւ տօնախմբութեան առթիւ։ Ցիշեալ տասնհընգից զատում էին իրենց յաջող գործունէութեամբ եւ առաւել լաւ կազմութեամբ միայն երկու, երեքը. Մոլիէրի խումբն էլ, ամեն տեսակ առաւելանք կրելուց յետոյ, լաւերի կարգն անցաւ։ Նորա տասներկու ամեայ թափառականութեան շրջանը, որի հանգամանքներն արդէն մանրակրկիտ հետազօտութեամբ հրատարակուած են ֆրանսիական գրականութեան մէջ,—չէ ներկայացնում շարունակ յաղթանակների մի պատկեր, ինչպէս որ ճգնում է հաստատել նորա վերջին կենսագիրներից մին։ Ճշմարիտ է, խմբի բոլոր տնտեսական վարչութիւնը հոգացող եւ ոչնչից լիութիւն ստեղծող շնորհալի Մադլէնն այնպէս էր բարեկարգել խմբի ներքին կեանքը, որ նոցա ապրուստին ամանատես դ'Ասսի բանաստեղծը մինչեւ անգամ օտանաւոր գովասանք էր յօրինում ի պատիւ այդ կեանքի։ Բայց պէտք չէ մոռանալ, որ նորա յիշած առատութիւ-

նը—«զեղուն բաժակի նման մի տուն, եօթ-ութ տեսակ համադամ, գիտօրէն թափուող գինի»,—Մոլիէրի գաւառային նժդեհութեան վերջին երկու երեք տարիներից առնուած մի պատկեր է. հարկ է գիտենալ նոյնպէս, որ Մոլիէրեան սեղանի փարթամութիւնը փառաքանող քնարերգուն մի անտուն անտէր շրջմոլիկ էր, միշտ տանուլ տուող մի թղթամոլ, միշտ փողի կարօտ եւ վերին աստիճանի տարօրինակ մի անձնաւորութիւն։ Նա երեք ամիս հիւրասիրուել էր Մոլիէրի զուարթ գերասանական շրջանում, ձրի ապրելով նորա սեղանից, եւ հնարիւն էր միթէ, որ այդ երեք հանգիստ ամիսները եգեմական չերեւնային թշուառ բանաստեղծին եւ մի աւելաբան ներբող չ'որսային նորա քնարից։

Մոլիէր ծայրէ ի ծայր չափչփեց Ֆրանսիան, պատելով այն բազմատեսակ ցեղային եւ հասարակային հակապատկերների մէջ, որոնցմով հարուստ էր հին Ֆրանսիական կեանքը։ Ուր որ գումարուէր մի «գաւառական ժողով», մեծատունների մի որ է խնջոյք, ուր որ գտանուէր մի մեկենաս կամ թէ գերասանների վրայ հաշտ աչքով նայող մի քաղաքային փարչութիւն—այն տեղ էլ գնում էր ձեռներէց խումբը. իսկ եթէ ոչ մի կողմից հրաւէր չլիներ, այն ժամանակ նա չմում էր ըստ բերման կոյր բախտի ուր եւ պատահէր։ Տեղ կար որ խումբը նաւարկում էր Ռօնա եւ Սէնա գետերով, տեղ կար որ արշաւում էր ձիերով, տեղ էլ կար, որ ճանապարհ էր կտրում քաղաքից առաքուած սայլերով։ Մի անգամ Նանտում Մոլիէրեան դերասանների ներկայացումն արգելվում է. մի ուրիշ տեղ նոցա թատրոնի յաճախորդների նախանձով յանիշատակում է մի այլ շրջմոլիկ խումբ։ Երբեմն նոցա ընդունում են սուլմունքներով, հալածում են գեռնախանձորի տարափով, եւ աւանդութիւն կայ, թէ այդ բախտին վիճակվում է հէնց ինքն Մոլիէր, որ սկզբում, իւր հանճարի ոգուն հակառակ, մի անպատեհ սէր ունէր ողբերգական դերերի մէջ դուրս գալու։ Երբեմն էլ հարկը ստիպում էր գիմելու մի որ եւ է մեծաւորի հովանաւորութեան, եւ պատահել է,

որ Մոլիէրի նախկին դասընկեր իշխան Կոնտին օգնել է նորան նեղ րոպէներում։ Բայց յետոյ յայտնի եղաւ, որ այդ մեծանուն ազնուականը Մոլիէրին նիւթապէս օգնելիս, դրամը բռնութեամբ կորզում է եղել գաւառի երեսփոխաններից, որոնք էլ այդ պատճառով յետոյ շատ անախորժ կռիւներ են սարքում դերասանների գլխին։ Սակայն եւ այնպէս իշխանի մտերմութիւնը վերջերում շատ օգտակար եղաւ Մոլիէրի համար, որովհետեւ քարշեց հանեց նորան երկրորդական ձեռնարկուների կարգից եւ առաջին անգամ նպաստեց նորա համբաւին հասնելու մինչեւի Փարիզի բարձրագոյն շրջանները։

Փարիզում արդէն գովասանքով էին խօսում նոր խմբի թէ բեմական ներկայացումների եւ թէ բէպերտուարի մասին. գաւառներից եկողներն էլ պատմում էին, թէ «Մոլիէր անունով տղայի» պիէսաներն եւ ծաղրական արլէքինադներն ոչինչ բանով յետ չէին մնում Իտալական արքունի դերասանների ֆարսերից, որոնցմով յափշտակվում էր բոլոր Փարիզը— մանուկ Լիւդովիկոս ԺԴ. ից սկսեալ մինչեւ վերջին այցելուն։

Մոլիէր գաւառի մէջ ընկնելով սկզբում անշուշ ենթարկուելու էր մինչեւ այն ժամանակ տիրապետող ճաշակին։ Հնութեամբ սրբագործուած բէպերտուարն ոչ այլ ինչ էր տալիս, բայց թէ Հարդիի, Տրիստանի եւ սոցա նման պաշտօնական գրողների ծանր ողբերգութիւններն եւ անհամ հովուական խաղերը եւ կամ թէ Լարիվէի իտալականից փոխ առած կոմէդիաները։ Մի նոր ինքնուրոյն խօսք, բուն ֆրանսիական կեաքի մի ճիշտ նկարագիր կարելի չէր գտնել ոչ մի բեմի վրայ. միայն Սկարրոնի եւ Կորնէյլի մի քանի պիէսաներն էին, որ զուտ ֆրանսիական ոճ ստեղծելով, կարող էին արդէն մի նոր ժամանակի կի թոյլ նշմարք համարուիլ։ Սակայն Փարիզի նախկին տպաւորութիւններն ապարդիւն չէին անցել Մոլիէրի համար։ Տեսանք թէ ինչպէս նա հէնց մանկութեան օրերից հրապուրուած էր փոթորկալի եւ դիւրագրգիռ ամբոխի մէջ ծնունդ առնող կայտառ եւ համարձակ կատակով։

Մատաղ հասակում հին ֆրանսիական կատակերգուների մասին գաղափար ստանալուց յետոյ նա տեսել էր ժողովրդական ծաղրածութեան եւ շատ ընտիր օրինակներն իւր «Երեւելի թատրոնի» օրով։ Իտալական խումբը տալիս էր նորան անսպառելի եւ շատ գրաւիչ յանկարծախօսութեան մի պատուական տիպար ի դէմս Ֆիբէրիո Ֆիօրիլլի անուն մեծահամբաւ Բուֆֆոնի, որ խաղում էր Սկարամուչչի ամանդական դերն եւ այս պատճառով էլ հրաւիրուել էր Ֆրանսիայում «Սկարամուշ» անուամբ։ Եւ նա իրաւ մի անզուգական էակ էր. նորան պաշտում էր ամեն մարդ. նորա մասին պատմում էին հաղար տեսակ առասպելներ եւ անեկդոտներ, որոնցից յետոյ մի հետաքրքրելի կենսագրութիւն յօրինեց նորա ընկեր Մէցցէտինին։ Նորա յանդուգն կատակներն եւ սրամիտ արարքն անվերջ էին. նորան յարգում եւ նորա տնային պէտքերի մասին խնամք էր տանում մինչեւ անգամ ինքն «Արեւ թագաւորը», որ սովորաբար շատ հակամէտ չէր շնորհատու հայեացք ընծայելու ում եւ լցէ։ Ամենահանճարեղ հանդիսականի թափանցիկ միտքն անգամ անզօր էր գուշակելու, թէ ինչ աներեւակայելի խաղեր, ծպտումներ եւ ծաղրալի օյիններ կը հնարէր յանկարծ այդ անդուլ ստեղծող ոգին։ Սկարամուշի դէմքն անչափ շարժուն էր եւ նա ինչ կերպարանք ասես կը շիներ, մի վայրկեանում ինչ ձեւ ասես կընդունէր, իւր դիւրաթեք շարժուածքի եւ ճկուն ձայնի շնորհիւ մարդկային բնաւորութեան որ երանգն ասես կ'արտայայտէր։ Իտալացիների ասելով, Սկարամուշ լուած տեղն անգամ խօսել գիտէր։ Շատ բան կարելի էր ուսանել այդպիսի մարդուց, թէ եւ խստապահանջ արուեստի առջեւ նա կլսուեր պէս մի բան պիտի թուէր։

Եւ Մոլիէր արդարեւ շատ բան ուսաւ նորանից, եւ Սկարամուշի նորա վրայ գործած ազդեցութեան մասին շատերն էլ վկայում են։ Իտալական ծաղրածուի վերոյիշեալ կենսագիրն շիտակ ասում է, թէ «անուանին Մո-

լիէր երկար ժամանակ նոցա ձեւերն ուսումնասիրելով, անկեղծ պնդում էր, թէ նորան էր պարտական իւր խաղի կատարելութիւնը»։ Մի ուրիշ ժամանակակից էլ գրում է Սկարամուշի մասին, թէ «il fut le maître de Molière et la nature fut le sien» (նա Մոլիէրի վարժապետն էր, իսկ իւր վարժապետն էր բնութիւնը*). եւ Մոլիէրի դէմ ուղղուած մի եպերագիր պատկերացնում էր նորան ձեռքում հայելի բռնած Սկարամուշի մօտ նստելիս եւ նորա դէմքի ամեն մի ծռմրոցքը, յօնքերի պռստելն եւ այլն կապկելիս։ Այս վարպետ խաղի ուսումնասիրութիւնը այն ժամանակն էլ չընդհատուեցաւ, երբ Մոլիէր գաւառներում փառք վաստակելուց յետոյ առ միշտ Փարիզ վերադառնալով սերտ բարեկամութիւն էր հաստատել իւր իտալական վարժապետի հետ եւ սկսել էր հմտանալ նորա լեզուին։ Իտալերէնի գիտութիւնը միջոց տուաւ Մոլիէրին լիովին գնահատելու իտալական խաղի բնականութիւնն ու ճըշմարտութիւնը եւ բաց արաւ նորա առջեւ մի ընդարձակ գրականական դաշտ, որի մշակողները բուն իտալացիք էին։ Օտար լեզուի միջնորդութեամբ նա ծանօթացաւ անթիւ լիբրէտօների եւ յանկարծուստ ասուող կատակերգութեան համառօտ ծրագիրների, որպէս եւ ամբողջ գրուած կոմէդիաների հետ (Commedia sostenuta), որոնց մէջ Արլէկինի, Սկապինոյի, Ցաննիի ծաղրական արկածների հետ միասին յառաջ էին գալիս նա եւ Արէտինոյի, Ա-

*) Բայց բնութիւնը և Մոլիէրի վարժապետն էր։ Նա ինքն հին գրագէտներին դիմելով ասում էր՝ «Երբ որ դուք հերոսներ էք նկարագրում՝ ինչ որ ուզում էք՝ անում էք։—դուրս էք բերում այնպիսի պատկերներ՝ որոնք իսկութեան հետ բնաւ նմանութիւն չունին՝ և հետևում էք միայն ձեր երևակայութեանը՝ որ սաեպ մեղանչում է ճշմարտութեան դէմ՝ ցնորականի նուիից ընկնելով։ Սակայն եթէ կամենում էք մարդիկ նկարագրել՝—բնականից և իսկականից ընդօրինակեցէք նոցա պատկերները։ Թող պատկերները նման լինին։ Դուք ոչինչ արած կը լինիք՝ եթէ այդ պատկերների մէջ ձեր ժամանակի սերունդը ճանաչելի չկացուցանէք»։ Փ. Վ.

րիստոյի եւ Մաքբիավելլիի կայտառ ու լիտի կատակերգութիւններն եւ ազգի ազգի մշակութիւններն ու փոխարկութիւններն ամենատարբեր աղբիւրներից, այն է— Իտալական նովելներից, սպանիական առասպելներից, հին դրամաներից, Կալդերոնի, Լոպէ դէ Վէգայի գրուածներից եւ այլն։

Ինչպէս երբեմն Շէքսպիրի դիմաց, նոյնպէս այժմ մեր նորընծայ հեղինակի առջեւ նոր աղբիւրներ են բացվում իւր առաջադրած դրամաթիքական ռէֆորմի համար։ Դեռ դաստառներում ատոանդելին նա ցնծած էր հետեւել իտալական ըէպերտուարի ինքնուրոյն յատկանիշներին, այդով ժողովրդի համակրութիւնը շահելու համար։ Նոր տով նորա խմբի մէջ սովորութիւն մտաւ երկար ու ծանր պիէսներից յետոյ տալ մի թեթեւ կատակերգութիւն ըստ իտալական ճաշակի։ Նա փոխ առաւ իտալական ֆարսից մի քանի տիպեր (Մգանարել, Սկապէն) եւ սկսաւ վերատեղծել նոցա իւր յատուկ խաղի մէջ։ Մոլիէր ոտոնիբագծում էր իւր առաջին կոմիքական երկերն առատ եկող իտալական ծրագրի (canevas) համեմատ, ուր ըստ սովորութեան տեղ ընդ հիմնուած էր պատահումների, անակնկալ դիպուածների, ծպտումների դրայ եւ բոլորն էլ համեմուած մի շատ անպատկառ հանաքով։ Այդ երկերից երկուքը—«Le médecin volant» («Թռչող բժիշկ») եւ «La jalousie du barbouillé» («Մրոտողի նախանձը»)—կարող են ճաշակ տալ նորա նախկին փորձերի մասին։ Առաջնի բովանդակութիւնն առնուած է Բոկկաչիոյի նովելլայից, երկրորդի նիւթն էլ իտալերէնից է։ Բոլէական վանցանուկ պէտքերի համար գրուած նորա միւս բազմաթիւ ֆարսերն առ միշտ կորել են, սակայն չէ կորել իտալական թատրի ազդեցութեան ներքեւ յառաջ եկած ձեւերի դիւրաթեքութիւնը, կատակների անհուն առատութիւնը։ Երբ ներկայացվում է «Քաղքի ազնուականի» ամբարձումն յաստիճան փաշայի եւ տանձիկ ծպտուած դերասանները կոտրտուելով ու հանդուրելով անիմաստ ֆրազների մի ճարճատուն խառնուրդ են մրմնջում, եւ կամ երբ «Առողջ

հիւանդի» մէջ բեմի վրայից բժիշկների ծիծաղելի թափօրը է անց կենում,—իսկոյն երեւում է, որ այդ բոլորն իտալական յանկարծախօսների հին միութեան մի հեռաւոր արձագանգ է։

Բայց ինչքան էլ Մոլիէր օտարազգի ազդեցութեան ներքեւ ստացած լինէր իւր նախկին գեղարուեստական հրահանգը, բայց եւ այնպէս անկարելի է որ կեանքի փորձը մի ինքնուրոյն աշխատութեան ձգտելու, իւր յատուկ ազգային կեանքի հետ առաւել սերտ միանալու փափագ չ՚յարուցանէր նորա մէջ։ Լաւ էր ուսանել Սկարամուշից մարդկային բնութեան ծաղրելի կամ արատաւոր կողմերի ներկայացման եղանակը. լաւ էր փոխ առնել ուրիշներից մի պատրաստի ձեւ իւր յատուկ մտքերն արտայայտելու համար,—բայց վաղուց էլ արդէն ժամանակ էր մի բուն ֆրանսիական բովանդակութիւն մտցնելու օտար ձեւերի մէջ, եւ Մոլիէր ինքն էլ խոստովանում էր այդ։ Միթէ զուր էին անցել նորա թափառաշրջիկ դերասանութեան երկար տարիները, միթէ ապարդիւն պիտի մնար նորա ծանօթութիւնը ֆրանսիական ազգի ամեն դասակարգերի հետ։ Մանկութեան ժամանակ՝ արհեստաւորների եւ քաղաքացիների կեանքը,—յետոյ վարժարանը փքուած իմաստակներով,—յետոյ դատարանն իւր բարքերով,—յետոյ բեմական աշխարհը եւ վերջապէս գաւառն իւր ինքնուրոյն էակներով, Պուրսոնիակներով եւ Սգանարէլներով, տեղական բարբառներով եւ տիպերով, թաղի կամ փողոցի նեղ շահերով, նախապաշարմունքներով եւ տգիտութեամբ—ի՞նչ լայն ասպարէզ դիտողութիւնների համար, որքան նոր եւ բաղմադիմի նիւթեր, որոնք անտես էին մնում կամ արհամարհվում էին հին կատակերգուներից։ Մոլիէր ըմբռնեց այդ նիւթերի մեծ արժէքն, որոնք ասես թէ իրենք իրենց գալիս դիզվում էին իւր գրչի տակ։ Նա առաջ էլ սիրում էր ամբոխի մէջ մտնել, սորա հետ մի կեանքով ապրել. այժմ նա առաւել մեծ եռանդով սկսաւ ուսումնասիրել բուն ազգային կեանքը։ Հարաւային փոքրիկ քաղաքներից մինի մէջ՝ Պէզնայում (Pézenas)—

մի սավրիչի մօտ մինչեւ այս օրս պահպանում են իբրեւ սրբութիւն այն բազկաթոռը, որի վրայ ժամերով նստում էր Մոլիէր, երբ գաւառական ֆիգարոյի խանութը լցվում էր եկաւոր գիւղացիներով եւ թնդում էր դոցա ուրախ ծիծաղից եւ անհոգ զրոյցներից։ Մոլիէր արդէն կենսական փորձերի մի ահագին պաշար ունէր հաւաքած, մինչ դեռ շարունակում էր յօրինել իւր առաջին ֆարսերը պատրաստի տարազներին հետեւելով։ Ինքնուրոյն ստեղծագործութեան անորոշ ձգտումն արագ արագ զօրանում էր նորա մէջ. վերջապէս նա գրեց «l' Etourdi» ն («թեթեւամիտ») որ իտալական օրինակից վերափոխուած մի բան էր, եւ այդ օրից ահա սիրտ առաւ թողնելու թեթեւ ֆարսն եւ անցնելու գրականական կոմէդիայի տեսակին։ «L' étourdi» ն կատարեալ հրճուանք պատճառեց հասարակութեան եւ առ միշտ հաստատեց Մոլիէրի համբաւն իբրեւ մի նշանաւոր կատակերգակ դերասանի եւ բանաստեղծի։ Ասեն թէ ժողովուրդն անձամբ հիացաւ պիէսայի մէջ երեւցող վերանորոգութեան այն առաջին նշաններից, որի կարեւորութիւնն ամենքն էլ զգում էին։ Մոլիէրի թշնամիներն անգամ խոստովանեցին առաջին ներկայացման անօրինակ յաջողութիւնն, որ հրաշքի պէս մի բան էր երեւցել նոցա։ «Հէնց որ հանդիսականները տեսան նորան՝ ձեռքում մի գեղարդ բռնած, ասում է ականատեսներից մին,—հէնց որ լսեցին նորա ծաղրական բարբաջանքը, տեսան հագուստը, գլխադիրն ու խոպոպիքը,— յանկարծ ամենքն էլ մի հաճոյք զգացին, դէմքերի կնճիռներն անհետացան եւ պարտերից սկսեալ մինչեւ բեմը, բեմից էլ մինչեւ օթեակները մի որոտընդոստ գովեստ էր որ թնդաց ի պատիւ նորա»։ Սակայն «l'Etourdi» ն դեռ շատ բան չէր տալիս իւր նոր խօսքը դեռ չէր բարբառել ժողովրդի սիրելին։ Իսկական ստեղծագործութեան լայն ասպարէզի վրայ բոլորովին ոտք դնելու համար պէտք էր, որ այդ հզօր եւ առոյգ քանքարը ենթարկուէր նախ կրքի առաջին տանջանքներին եւ զգար

իւր մէջ ներքին յուզման այն հրատապ մտրմոքը, որ յաւիտեան պիտի մարմնանար նորա գրուածքների մէջ։

«Ոչ ոք այնքան չէ յարգում միապետութիւնը կեանքի առօրեայ ընթացքի մէջ, որքան որ դերասանները», ասում է Նապլեոն. «միապետութիւնը նոքա առաւել օգտակար են համարում իրենց համար եւ միւս մարդիկներից աւելի աշխատում են փառաւորել նորան. սակայն նոքա չեն հանդուրժում, որ իրենց մէջ էլ մի միապետական կարգ հաստատուէր, նոքա չեն ուզում ճանաչել իրենց վրայ ոչ մի իշխան. իշխանութեան ոտուերն անգամ ատելի է նոցա»,—եւ առաւել լուսաբանելով իւր միտքը, Նապլեոն *) ռամկապետական է անուանում արդի դերասանական կեանքի կազմութիւնը, միայն թէ միտքը ինչ քանքարի ազնուապետութեամբ ներկուած։ Այդպէս էր Յիրաւի եւ Մոլիէրի շուրջը գումարուած դերասանական խմբի բնաւորութիւնը. դա մի կատարեալ եղբայրութիւն էր հասարակաց տնտեսութեամբ, ընտրողական կարգերով, եկամտի հաւասար բաշխմամբ, դերերի միահաւան բաժանմամբ։ Միայն Մոլիէրի—այդ հմուտ առաջնորդի եւ հաւատարիմ ընկերի անձնուրութիւնն էր կանգնած մէջ տեղում, բարոյապէս բարձրանալով ընդհանուր մակերեւոյթից, բայց ոչ երբէք միապետութեան թեկնածելով։ Եւ այսպէս թէ նորածին հռչակը, թէ նիւթական վիճակի բարւոքումն եւ թէ ընկերական սերտ կեանքի ներքին ներդաշնակութիւնն—միով բանիւ ամեն բան կարծես թէ նպաստում էր Մոլիէրին, որ նա վերջապէս որոշ նպատակի դիմելով մի վստահ, հանգիստ եւ ժիր գործունէութեան ձեռնարկէր։ Եւ իւրաքանչիւր մարդ այդպէս կ'անէր անշուշտ։ Բայց մի ուրիշ էակ էր Մոլիէր,—ասես թէ ի բնէ երգիծանելու համար աշխարհ եկած այդ ծիծաղելի թաւ յօնքերով, շարժուն դէմքով եւ կայտառ ձեւերով հանաքչին։ Սուր աչքի առնելով նորան բեմի արբեցուցիչ մթնոլորտից դուրս, կարելի էր գուշակել, որ նորա

*) Théâtre francais p. 97.

տրտաքին զուարթութեան ներքեւ բոլորովին ուրիշ տեսակ զգացմունքներ ու մտքեր էին թաղնուած։ Նա անոյ էր կենում բազմութեան միջից ծանր քայլերով, միշտ մտախոհ, պատկառելի դէմքով եւ ազնիւ բռնուածքով։ «Երեւակայել անգամ դժուար է, որ այդ մարդը կարող լինէր կենսրոնացած եւ զգօն լինելու ընտանեկան շրջանում։ Բոլոր երեւելի երգիծաբանների նման նա էլ ներհակ հոգեկան տրամադրութեանց ենթակայ էր։ Ամբոխի առջեւ շատախօս եւ ժիր, նա ստեղ մունջ էր հասարակ ընկերութեան մէջ։ Շատ կը սխալուէր այն մարդը, որ Մոլիէրին իւր սօտ հրաւիրելով, յիմարութիւն ունենար յուսալու, թէ նա իւր զուարճախօսութեամբ կը զբաղեցներ հիւրերին։— Մոլիէր չէ թէ սրախօսութիւն չէր անիլ, այլ քարի պէս լուռ կը մնար»։ Թախծութիւնը շատ էր սկսել այցելել նորան. բեմի վրայ ամենակայտառ խնդութեամբ ամենքին հրճուեցնելուց յետոյ նա յանկարծ անձնատուր էր լինում տխրութեան, տժգոհութեան եւ անվստահութեան. նորա վշտահար ոգուց այնպիսի առատութեամբ դուրս թափուող ծիծաղն էլ նման չէր մի անհոգ եւ հասարակ ծիծաղի. ուստի Մոլիէրի ընտանութիւնն հետազօտողներից մին իրաւունք ունէր ասելու, թէ նա մի «մելամաղձոտ հանաքչի» էր։ Թախիծն եւ մտքի լարուած գործունէութիւնը պատահական երեւոյթներ չէին նորա մէջ։ Խոկման միջոցներին նա յիշում էր իւր անցեալ փոթորկայոյզ կեանքի հանգամանքներն, եւ տանջվում էր։ Չնայելով իւր շքեղ քանքարին, նա դեռ չէր կարացել մի արժանաւոր ասպարէզ գտնել իւր համար. չնայելով զարգացած եւ ընտիր խելքին, նա դեռ ստիպուած էր խարխափել հասարակութեան յետին գաւթներում եւ շփուիլ նորա ամեն կեղտերին։ Օժտուած մի զգայուն սրտով, որ անտիպական հասակից արդէն ուժգնապէս զայրանում էր ամեն մի անիրաւութեան, մինչեւ անգամ օտարին հասած զրկանքի դէմ,—ինչե՞ր չէր քաշել նա գաւառների մէջ անտուն անտէր դեգերելիս։ Ի՞նչ էին դարձել այն վեհ նպատակները, նուիրական մտքերը, ազնիւ ձգտումը

ները, որ նա ուսել էր Գասսէնդիից,—ի՞նչ բանի էր գործ դրել նոցա կեանքի մէջ։ Ի՞նչ էր իւր յատուկ զբաղմունքը, իւր պաշտօնը. ո՞ւր էին իւր քանքարի արգասիքը։ Վերջապէս ո՞ւր էր այն սիրալիր կանացի սիրտը, որ վառէր, ոգեւորէր նորան իւր մտերմութեամբ եւ ազատ թռիչք տար նորա տաղանդին։ Չկար եւ չէր գտել նա այդ սիրտը, չընայելով, որ ընկերների առջեւ անգամ հազիւ երբեմն բացուող բանաստեղծի ամաչկոտ եւ համեստ բնաւորութիւնը վերին աստիճանի յարուցող էր կին էակի։ Երիտասարդութեան ժամանակ Մոլիէր պատրաստ էր պաշտել Մադլէնին, եւ կուրօրէն էլ գնաց նորա ետեւից. բայց հասակ առնելով բաց արաւ աչքերն եւ տեսաւ, որ այդ բարի աշխատակիցը, լաւ տնտեսուհին եւ ժրաջան կինը միայն մի ընկեր էր իւր համար, ոչ աւելի ինչ։ Առաջին սէրն արդէն սառել էր. սակայն հէնց այդ սառելու միջոցին ճակատագիրն ասես թէ գուշակել է տալիս Մոլիէրին, թէ կարելի էր փոխարինել դորան մի նոր սիրով։ Խմբի նորամուտ անդամների մէջ նա ծանօթանում է երկու կանանց հետ, որոնք հաւասար կերպիւ ընդունակ էին նորա համակրութիւնը գրաւելու։

Դոցա բնաւորութիւնները բոլորովին իրար ներհակ էին։ Մին, օրիորդ Դիւ-Պարկը, գեղափայլ էր եւ պչրասէր. միւսը, Դը-Բրին, հեզահամբոյր էր եւ հաւատարիմ։ Մոլիէր սկզբում հրապուրուեցաւ նախ այս վերջնի քնքոյշ սրտից բայց Դիւ-Պարկի շլացուցիչ խելքն ու գեղեցկութիւնն առաւել զօրեղ հանդիսացան եւ Մոլիէր ասես թէ ակամայ կապուեցաւ այդ կնոջ հետ, որ ոչինչ բանով իրեն յարմար չէր գալիս։ Նա ծածուկ պաշտել սկսաւ ինքնահաճ Դիւ-Պարկին։ Գեղուհին, առանց մի որ եւ է բան նշմարելու, առաջին օրերը հասարակ բարեկամութեամբ էր վարվում նորա հետ. բայց նորա կիրքը նշմարելուն պէս, փորձեց նորան էլ այնպէս տանջել եւ յիմարացնել, ինչպէս որ տանջում եւ յիմարացնում էր իւր մեւս բազմաթիւ խնկարկուներին։ Մոլիէր, իրեն խաբուած տեսնելով, շատ վշտացաւ. նա զղջաց դառնապէս իւր անկեղծ

յափշտակութիւնը, զզուելով հեռացաւ Դիւ-Պարկից եւ վերստին մտերմացաւ Դը-Բրիի հետ, որին յանիրաւի անտես էր թողած։ Այսպիսի հանգամանքները չէին կարող չազդել Մոլիէրի պէս զգայուն մարդու մտային երկերի վրայ. նա դէն ձգեց թեթեւ ֆարսերն եւ ներշնչուելով իրեն այցելող նոր բանաստեղծական աւիւնից, սկսաւ մի առ մի մարմնացնել կենդանի պատկերների մէջ նոր փորձած հոգեկան տագնապները, վրիպած եւ սիրոյ վիշտն ու խինդը, չարն ու բարին։ Այսպէս ահա գոյութիւն ստացաւ նորա առաջին ինքնուրոյն կոմեդիան «le Dépit amoureux» («Սիրային դժկամակութիւն») որի մէջ իսկութեան գծերն այնպէս ճիշտ են դուս բերուած, որ եթէ շինծու անունների տեղ նոյն ինքն հեղինակի եւ նորան շրջապատող անձինքների անունները դնելու լինինք, կը ստանանք մի կենդանի դրամաթիքական անդրադարձութիւն այն միջավէպի, որ իսկոյն յիշեցինք բանաստեղծի ներքին կեանքից։ *)

Մոլիէրի ամբողջ բնութիւնն ալեկոծող սիրոյ մորմնքը վերջապէս ձգեց նորան ուղիղ ճանապարհի վրայ եւ բորբոքից նորա բանաստեղծական եռանդը, որ ինչպէս տեսանք, սուբյեկտիւ, ներքին է գտնում հենց առաջին ընտիր գրուածքից։ «Dépit amoureux» ից ահա սկսվում է նորա գլխաւոր երկերի այն շարքը, որոնց վրայ կարելի կլինի քայլ առ քայլ ուսումնասիրել նորա զարգացման, ձգտումների, մտքերի եւ հոգեկան յուզմունքների ընթացքը։ Սկզբում կարծես թէ նա չի կարանալ իսկոյն հրաժարուիլ անցեալ շրջանի սովորութիւններից եւ Փարիզի մէջ էլ մերթ ընդ մերթ կրտայ ռատ եկած նիւթերից առած իտալական ճաշակի թեթեւ չնչենիներ. սակայն նոքա լոկ պատահական պտուկներ կլինին նորա իսկական գործունէութեան վրայ, որն որ այսուհետեւ օրգանիքաբար պիտի զարգանայ, բացորոշ եւ խորիմաստ

*) Lindau: «Molière, eine Ergänzung der Biographie des Dichters»; և Fournier: «Roman de Molière».

նպատակներով եւ մի հաստատուն ուղղութեամբ։ Սակայն այդ գործունէութեան համար գաւառական շրջանը շատ անձուկ էր։ Մոլիէրի բարեկամներն վաղուց արդէն կամենում էին, որ նա հրաժարուէր թատրական կեանքից եւ մշտապէս հաստատուէր Փարիզի մէջ։ Վերջ ի վերջոյ նոցանից մին, ոմանց ասելով Կոնտի իշխանը, ոմանց էլ— անուանի Մինիար նկարիչը, որ Մազարինիի մտերիմն էր, յաջողում է համոզել թագաւորի զուարճասէր եղբօրը, թէ լաւ կլինէր Փարիզ բերել Մոլիէրին իւր գերասանական խմբով։ Մոլիէր ստանում է այդ հրաւէրը Ռուանում, ուր նորան բռնում էր մասամբ ժողովրդի համակրելի ընդունելութիւնն եւ մասամբ Կորնէյլի բարեկամութիւնը, որ այդ միջոցին իւր փառքի կատարին հասած հանգիստ ապրում էր իւր մայրենի նորմանդական քաղաքի մէջ։ Երկու հեղինակներն էլ մտերմացել էին միմեանց հետ, եւ առաւել փորձառուն անշուշտ ազդեցութիւն պիտի գործէր դեռ նորընծայ սկսողի վրայ, քանի որ սա էլ, Կորնէյլի պէս, վառուած էր առողջ իրականութեան, ռէալիզմի սիրով *)։ Եւ Մոլիէր ճանապարհ ընկնելով 1658 թ. դէպի Փարիզ, ուր նորա համար մի նոր ասպագայ պիտի սկսուէր, տանում է իւր հետ Ռուանեան բարեկամի խորհուրդներն եւ ուղք է դնում մի լայն ասպարիզի վրայ արդէն իբրեւ պարզ եւ որոշ նպատակներ ունեցող մի հասուն այր մարդ։

Արքունիքն այդ միջոցին Փարիզից մեկնելու վրայ էր. քաղաքն էլ զբաղուած էր մի նոր բերուած զարմանահրաշ կէտ ձկնով։ Ֆրանսիական եւ իտալական խմբերն ասես արդէն ժողովրդի հետ ընտելացած լինելով, լիուլի յաղթանակներ էին ոնում եւ ուրեմն կարող էին շատ վրատանգաւոր ասել հանդիսանալ նորեկ գաւառացիների դէմ։ Հէնց այդ միջոցին Փարիզի մէջ հանդէս գալուց առելի դժուար բան գուցէ կարելի չէր հնարել նոցա համար։

*) Կորնէյլի ազդեցութիւնը Մոլիէրի վրայ լուսաբանում է Jules Levallois ն-«Corneille inconnu» գրքում։

նոքա սկսան իրենց ներկայացումները մի ողբերգութեամբ, բայց յաջողութիւն չը գտան. այնուհետեւ Մոլիէր դրաւ բեմի վրայ իւր երկու նորագոյն կատակերգութիւններն եւ մի անգամից այնպէս յափշտակեց եւ ծիծաղացրեց ամենքին, որ այն օրից կարկամի պէս սկսան տեղալ նորա վրայ հովանաւորութեան եւ դրամական օգնութեան խոստումներ: Խումբը շտապեց վարձել իւր համար մի մշտական բեմ՝ որ գտանվում էր «théâtre du petit Bourbon» կոչուած թատրոնում: Մոլիէրի համբաւն արդէն տարածուած էր քաղաքի մէջ՝ յոգեթանակն ապահոված: Թափառման տարիներն վերջացան. այժմ սկսվում էր նորա համար մի նոր շրջան—փառաց շրջան:

3.

Կենսական փորձով հարուստ Մոլիէր ընկաւ այժմ իրեն ծանօթ փարիզեան յորձանքի մէջ, բայց ոչ դորա ստորին խաւերի մէջ, ուր պտտվում էր երբեմն պատանեկութեան ժամանակ, այլ այն ինքնարձ եւ ընտիր, այն շքեղ եւ պերճ պալատական շրջանի մէջ, որ տիպար էր համարվում բոլոր եւրոպական ազնուականութեան համար: Ինչպէս դժուար պիտի լինէր թափառական դերասանի ազատ եւ անզուսպ կեանքին սովոր, հասարակային ունայն խտրութիւնների վրայ փիլիսոփայական կասկածով նայող եւ վերջապէս իւր արժանաւորութիւնն ամեն մի ամբարտաւանի դէմ համարձակ պաշտպանելու նախանձաւոր մարդուն մի հաստատ դիրք բռնել այդ պալատական շրջանի մէջ, որ ստրկի նման թագաւորի առջեւ քրծնելիս, գոռոզամիտ վեհութեամբ էր նայում բոլոր միւս մահկանացուների վրայ, ուր մնաց թէ մի ինչ որ է ծաղրածու դերասանի վրայ: Մոլիէր այդ մեծ աշխարհի մէջ ոտք դնելու հէնց առաջին օրից անթիւ դառնութիւններ ղգաց. մի կողմից նա հանդիպեցաւ ազնուական պարոնների մեծամտութեան, միւս կողմից՝ հնամոլ գրագէտների արհամարհական վարմունքին, որոնք վախենում էին նորե-

լուկ հեղինակի հռչակից։ Նա չը ստացաւ այն դրամական օժանդակութիւնը, որ խոստացել էին իրեն. վերջապէս այն միակ սրահն էլ, որ նա վարձել էր երկու տարով, իրենից խլեցին։ Բայց Մոլիէր անվկանդ յառաջ էր գնում առանց քայլ մի անգամ տեղի տալու ազնուական ոսոխներին։ Երիտասարդ թագաւորի մէջ մի համակրութեան նշան նշմարելով դէպի իւր անձը, նա յոյս էր յղացել, թէ միապետական երկրի այդ գերագոյն զօրութիւնը մի օր օգնութեան կը հասնէր իւր սեւ օրին։ Մոլիէրին սիրտ էր տալիս մանաւանդ եւ ժողովրդի սէրը։ Եթէ նորա ամեն մի պիէսայից յետոյ, որոնց մէջ օր ըստ օրէ աւելի քաջ էր արտայայտվում բանաստեղծի անկախ ոգին, առաւել սաստկացնում էր նորա դէմ ազնուական դասի թշնամութիւնը, — միեւ նոյնժամանակ աճում էր էր դէպի նա եւ համակրութիւնը tiers-état՝ յի, այսինքն երրորդ դասակարգի կարապետ հանդիսացող այն լուսաւորուած բազմութեան, որն որ գէթ թատրոնական գործերի մէջ համարձակութիւն էր առնում իւր սիրելուն պաշտպանելու եւ նորան հայրենեաց ամենալաւ զարդն համարելու։

Մոլիէրի Փարիզում գրած առաջին իսկ կոմէդիան ռամկապետական ոգով ներշնչուած մի ազգու բողոք էր ընդդէմ այն նուրբ պաճուճասիրութեան, որ մտել էր հասարակային բարքերի մէջ եւ սպառնում էր տիրանալ թէ գրականութեան եւ թէ գեղարուեստին։ Արդէն գաւառներում նա զզուանք էր զգացել փարիզեան սալոնների ամեն ուրեք տարածուող հովուերգական ռոմանների եւ իտալական մադրիգալների ահագին յաջողութիւնից. այժմ Փարիզի մէջ, այսինքն այդ ռոմանների եւ մադրիգալների բուն աղբիւրի մօտ գտանուելով, բնական է, որ նա եւս առաւել գարշէր դոյա կեղծ, գիւրաղգած եւ գորովական ուղղութիւնից։ Նա ինքն միշտ սիրող մնաց առողջ եւ անկեղծ ազգային բանաստեղծութեան եւ «Միզանթրոպի» մէջ Ալտեստի շրթունքով նախապատուութիւն ընծայեց ժողովրդական պարզ, անպաճոյճ

երգին՝ կրթուած քերթողների սեթեւեթեալ եւ փքուած բանահիւսութեան առջեւ։ Այսպէս լինելուց յետոյ հասկանալի է թէ ինչ տպաւորութիւն պիտի գործէր նորա վրայ սալոնների հասարակութեան հոգոտանքն ու պչրանքը, գոյա անբնական, արուեստակեալ կեանքն եւ մանաւանդ այն շինծու լեզուն, որի մէջ ամենահասարակ ոճերն անգամ պատշաճի ապագաւ բռնի փոխանակվում էին բոզբոջուն այլաբանութիւններով եւ առոյգ ճաշակի հակառակ դարձուածներով։ Այդ ընտիր հասարակութեան միջավայրն էր տիկին Ռամբուլիէի հռչակաւոր կալոյտ սրահը. ուր զարդարուն եւ զգուած ակումբը միշտ հաւաքվում էր մարքիզուհու հոյակապ մահճակալի չորս դին եւ դատարկ ժամանակ էր անց կացնում սրամտութիւններ անելով, նոր լուրեր պատմելով, քնքոյշ նիւթերի վրայ վիճելով եւ կամ Կոտէն արքայի *) նման անշնորհ քերթողներին էժան դափնիք բաշխելով։ Մոլիէրի սուր աչքից կարող չէր խուսափիլ այդպիսի ակումբների թիւր ուղղութեան վտանգը թէ գրականութեան եւ թէ հասարակութեան համար, որոնք բռնի հեռացվում էին ազգային կեանքից, եւ այս պատճառով նա գիտակցաբար շանթեց նոցա դէմ իւր երգիծաբանութեան սուր պարները «Les Précieuses ridicules» («Միծաղելի պչրասէրը») կոմէդիայի մէջ։ Ժողովուրդն իսկոյն վերահաս եղաւ նորա մոքին եւ անմիջապէս ըմբռնեց թէ ո՞ւմ դէմ էին բարուած նորա կծու հարուածները։ Կոմէդիայի մէջ գուրս բերուած անձինքն էլ նոյն բոպէին ճանաչեցին իրենց իսկական պատկերներն եւ վիրաւորուած երես դարձրին Մոլիէրից. միայն տիկին Ռամբուլիէն էր, որ ամենաճարտարութեան նշան անգամ ցոյց չըտուաւ։ Պիէսան անօրինակ յաջողութիւն վայելեց։ Դորա ներկայացումները տեսնելու համար այնպիսի բազմութիւն էր հաւաքվում ամեն կողմերից, որ մի վայր ասելով, ոչ թէ Փարիզի մէջ, այլ քաղաքի շուրջն անգամ քան մդոն տարածութեամբ մի մարդ չը մնաց,

*) Մոլիէրի մօտ Տրիսսոտէն։

որ չը փութար ականատես լինելու նոր պիէսային, որի ոճերից շատերն իսկոյն ժողովրդական առածների կարգն անցան։ Առաջին ներկայացումից յետոյ պէտք եղաւ մի քանի կրճատմունք անել նորա մէջ, որպէս զի պատկերների սատիկ նմանութիւնը փոքր ինչ թուլանայ։ Այս կերպիւ գործ ունենալը հարկաւ խոհեմութիւն չէր մի մարդու համար, որ այսուհետեւ իւր ամբողջ կեանքն աղնուականների շրջանում անցնելու ստիպուած պիտի լինէր։

Մինչդեռ Մոլիէր այս կերպիւ բարքերի անմիջական նշանակութեան ասպարիզի վրայ էր նետւում, սկսելով մի պատերազմ, որ շուտով իւր բոլոր ոյժերը պիտի կլանէր,— նորա ներքին կեանքի մէջ մի խոր յեղաշրջութիւն էր պատրաստվում։ Մինչեւ այժմ մի զօրեղ եւ տեսուն սէր չը գտնելուց վշտագնած բանաստեղծը յանկարծ վառվում է մի մեծ անձնական երջանկութեան յուսով։ Նորա դերասանների ընկերական շրջանի մէջ սկսում է յերեւան գալ մի չքնաղ օրիորդ, որ իւր սիրուն դէմքով ասես թէ ծանօթ եւ երբեմն թանգագին գծեր էր յիշեցնում նորան, եւ չը նայելով իւր մանկական հասակին գուշակել էր տալիս, թէ մերձաւոր ապագայում մի հրաշալի գեղեցկութիւն պիտի փթթէր նորանից։ Այդ մանուկը մի անգամից դառնում է զերասանական գերդաստան զարկը, ամենքի սիրելին. թատրոնի մէջ մարդ չէ մնում, որ նորան չը գգուէր եւ չը շոյէր։ Խմբի մէջ երկար ժամանակ տալիս են նորան նուազական անունս «Mlle Menon» եւ այս անուամբ նա դուրս է գալիս բեմի վրայ մանկական դերերում, ուր նա յափշտակում է ամենքին ոչ այնքան իւր խաղով, ինչքան որ դեռ նոր բացուող մի վիամիտ էակի հաճոյական երեւոյթով։ Մանուկի մէջ թաքնուած էր սիրտերը գէպի ինքն յանգուցանող մի թովչական զօրութիւն, որ յառաջ էր գալիս ոչ թէ նորա գծերի գեղեցկութիւնից, այլ ամբողջ էութեան հրապուրիչ եւ գգուիչ շնորհից, որով խմբի ամենագեղանի կանայքն անգամ չէին կարող հաւասարիլ նորան։ Կարծես թէ մի անօրինակ ապագայ էր սպասում այդ նորատի էակին. ասես թէ

միայն մի հոգատար եւ հմուտ դաստիարակի ձեռք էր հարկաւոր նորան, որպէս զի բնութեան արտաքին ձիրքերի հետ նա եւ մի կորովի միտք եւ ազնիւ բնաւորութիւն զարգանար նորա մէջ։ Անկարելի է, որ այսպիսի մտքեր չը յղանար երազատես Մօլիէրը, որ արդէն յուսահատուել էր ամենքից եւ ամեն բանից, յոգնել եւ տաղտուկ էր զգացել իւր ներքին միայնութիւնից։ Այժմ նորից մի յոյս էր ծագում նորա սրտում. իդէալացնելով դեռ չկազմաւորուած մի էակ, նա արդէն նշմարում էր դորա մէջ ճակատագրի այն ըղձալի հրեշտակին, որին վաղուց սպասում էր կարօտով։ Նա սկսում է սերտ մտերմանալ գեղաժպիտ եւ կայտառ Արմանդայի հետ, առաջնորդում է նորան, կրթում է նորա ճաշակը։ Նոցա մէջ հասակի մեծ խտրութիւն կար. սակայն այդ հանգամանքի ներշընչած դժնդակ մտքերն, որոնք ասես թէ ամաչեցնում էին դաստիարակին, շուտով տեսի են տալիս օր ըստ օրէ աճող համակրութեան դէպի շնորհալի աշակերտուհին, եւ Մօլիէր առաւել եւ առաւել սորկանում է մի տիրապետող գաղափարի, որ նա յաչադանօք ծածկում էր ամենքից, մի մտածման, թէ նա իւր յարատեւ ազդեցութեամբ կը կազմէ վերջապէս այդ սիրելի տղջկայ մէջ իւր տեսած բոլոր տիկիններից գերազանց մի մարդ, ազնիւ, անձնուէր բնաւորութիւն եւ ապա թէ հպարտութեամբ իւր կինը կանուանէ նորան։ Մօլիէր անգիտակցաբար է յղանում այս մտքերն, եւ երբ ուշքի գալով հաշիւ է տալիս ինքն իրեն, տեսնում է, որ մանկան ընծայուած խնամքից մի տարօրինակ եւ անմիտ, բայց անվանելի եւ ուժգին կիրք էր ծնուել իւր մէջ։

Այդ բոլորից զատ Մօլիէր շղթայուած էր Արմանդայի հետ եւ մի ուրիշ պատճառով, որի մասին բազմաթիւ չար լուրեր էին պատում այն ժամանակ։ Պաշտօնապէս այդ աղջիկը Մադլէն Բէժարի քոյրն էր համարուած, բայց հասարակութիւնը դոյա մօր զառամեալ հասակն եւ Մադլէնի շատ քնքոյշ խնամքն կրտսեր քրոջ նկատմամբ ի միտ առնելով, չէր

հաւատում, որ դոքա քոյրեր լինէին,—եւ հիմք ունէր չհաւատալու։ Երկու քոյրերն իսկապէս մի ուրիշ կապով էին կապուած իրար հետ, եւ Արմանդան,—Մադըլէն Բէ-ժարի փոթորկալի կեանքում պատահած այլանդակ մոլութիւններից մէկի այդ կենդանի արձագանքը, նորա քոյրը չէր, այլ դուստրն էր։ Մայրը նորա ծննդեան ժամանակ դեռ յոյս ունենալով ամուսնանալու իւր առաջին երկրպագու դը-Մոդէն կոմսի հետ, որ բացակայ էր Փարիզից, հարկ է համարում ծածկել իւր մի ուրիշ վաղանցուկ կապակցութեան նշաւակիչ պտուղն եւ ուրանում է աղջկան թէ կոմսի եւ թէ աշխարհի առջեւ։.. Այնուհետեւ ծնողական պարտաւորութիւնը երեխայի նկատմամբ յանձն է առնում առանց ամաչելու նորա հանին, այսինքն Մադըլէնի պառաւ մայրն եւ տանում է նորան մի գիւղ, ուր եւ պահում է մի քանի տարի։ Սակայն գերդաստան մէջ ի հարկէ լաւ գիտէին այդ երեքի իսկական յարաբերութիւններն եւ Մադըլէնան լռելիայն գործ էր դնում իւր մայրական հեղինակութիւնը մերժուած դստեր վրայ, հոգ տանելով նորա ապագայի մասին։ Այս բոլորից ինքն իրեն հետեւում է որ Մոլիէր չիպկտի կարանար անտարբեր մնալ դէպի Արմանդան, որ երբեմն իւր սիրած տիկնոջ զաւակն էր. Արմանդան էլ հէնց սկզբից սովորած էր ազգականի տեղ ընդունել նորան եւ խօսել սկսելուն պէս հանաքով անուանում էր նորան իւր ամուսին։ Ժամանակ անցնելուց յետոյ («Ecole des Maris,» «Այր ամուսինների դպրոց» Ա. գործող. 2. տեսարան) Մոլիէր անձամբ կը վկայէ, թէ ինչ հոգատարութիւն էր ընծայում Արմանդային եւ որպիսի հիացմամբ էր նշմարում նորա հոգեկան ձիրքերի եւ կանայի բնաւորութեան բացուիլն ու զարգանալը։ Այս մերձաւորութիւնը տեսնելիս խիստ բարոյականութեան պաշտպանները գլուխները թոթվում էին եւ իրար հետ փսփսալով քսութիւն անում, թէ Արմանդան նոյն ինքն Մոլիէրի աղջիկն էր, Մադըլէնայի հետ վայելած առաջին սիրոյ պտուղն էր։ . . .

Բայց այդ ամենից ոչինչ չգիտէր եւ ոչինչ չէր լսում սիրահար բանաստեղծը։ Նա մտածում էր միայն պսակուելու մասին եւ այս մտքից նա չէր բաժանվում, ուր եւ գտանուէր—արդեօք պալատում, թէ իւր գուարթ ընկերների շրջանում, թէ խնջոյքի մէջ, ուր իրար փոխարինում էին ազատ երգերն ու գինին, եւ թէ վերջապէս տաժանակիր աշխատութեան մէջ։ Մտախոհութեան բոպէներին նա կշտամբում էր ինքն իրեն, եւ այն ժամանակ հասակի տարբերութիւնը շատ վշտացնում էր նորան. նա մաշվում էր նոյնպէս եւ Արմանդայի դեռ նոր կազմուող բնաւորութեան վրայ մտածելիս, որ անթափանցելի էր, եւ որի մասին ոչ ոք կարող չէր գուշակութիւն անել, թէ ինչ փոփոխութիւնների կենթարկուէր արտաքին մթնոլորտի եւ իրական կեանքի հետ շփուելուց յետոյ։ Այս տեսակ անախորժ մտքերն եւ կրճիմներն այն աստիճանի գերում են Մոլիէրի հոգին, որ նա սուբյէկտիվ ստեղծագործութեան շաւղի վրայ ոտք դնելով, ինչ ներքին գաղտնիք, ինչ մտային ծփանք եւ յոյս որ ունէր—բոլորն էլ դուրս է բերում իւր երրորդ անձնագրական խոշոր կատակերգութեան մէջ, ուր կենդանի պատկերուած է թէ իւր եւ թէ իւր սիրած օրիորդի անձը։ Այդ նոր կատակերգութիւնն էր «L'Ecole des maris»-ն։ Նատերն աշխատեցան որոնել դորա տիպարները Տերենցիոսի, Լոպէ դէ Վէգայի եւ Մորէտտոյի գրուածքների մէջ. բայց եւ այնպէս անհնարին է ուրանալ դորա կապը Մոլիէրի կենսագրութեան ամենատաք էջերից մինի հետ։ Դորա մէջ էլ ինչպէս եւ յետոյ շատ անգամ, ձեւերն եւ երկրորդական պարագաներն արդարեւ ունին մի քանի շօշափման կէտեր օտար աղբիւրների հետ. սակայն հեղինակի հզօր եւ ինքնակախ մտքի ազդեցութեան ներքեւ փոխառնուած նիւթն անգամ վերածվում է ի մի ինքնուրոյն եւ նոր շարադրութիւն։ Երիտասարդ եւ անփորձ Լէսնորայի տարեց խնամակալի ամեն մի խօսքի մէջ շնչում է նոյն իսկ Մոլիէրի ազնիւ հոգին։ Արիստը չէ կամենում, իւր եղբօր Սգանարելի պէս, խիստ հնազանդութիւն պահանջել իւր ապագայ ամուսնից, չէ ուզում բրդ-

նադատել նորա կամքն եւ հակել նորա բարոյականութեան վրայ։ Այս խնդրի մասին շատ մտածելուց յետոյ նա մի բոլորովին նոր փիլիսոփայութիւն է քարոզում ապշած եւ կատաղած Սգանարելին կնոջ ազատութեան նկատմամբ, որ հաստատուած պիտի լինի ազնուութեան եւ երկուսակք հաւատարմութեան վրայ։ Այսպիսի մտքերն իրաւ տարօրինակ պիտի թուէին այն ժամանակուայ առտնին բարքերի դէմ յանդիման. բայց Արիստի գաւառած նոր սկզբունքը մի պատահական բան չէր Մոլիէրի ստեղծագործութեան մէջ. ընդհակառակն, Մոլանի ուղիղ նկատմամբ, դա Մոլիէրի կողմից մի իսկական պատերազմ էր հին գերդաստան բռնակալութեան դէմ, հին ընտանեաց մէջ տիրապետող անարդարութեան, չարիքների, տառապանքների եւ տանջանքների դէմ։ Արիստ բողոքում է ճնշման եւ անպատեհ խստութեան դէմ (Ա. գործող. 2 տեսարան). նա մերժելով մերժում է ամենայն ինչ բռնահարութիւն եւ ստիպմունք։ Նորա շնորհիւ Լէոնորան առել է ազատութեան մէջ, երիտասարդների հետ անարգել խօսակցելով եւ ուրախանալով. պէտք է, որ ամուսնութեան մէջ էլ այդպէս ազատ մնայ։ Արիստ ճանաչում է իրենց հասակի անհաւասարութիւնը, բայց ստիպմունք չէ դնում Լէոնորայի վրայ եւ վճիռը նորա ազատ կամքին է թողնում։ Արիստ հաւատում է իւր հարսին եւ խնդրում է միայն, որ իրեն էլ նոյն ազատութիւնը շնորհուի ապագայում։

Je veux m'abandonner á la foi de ma femme
Et prétend vivre ainsi que jai vécu.*)

Մոլիէր գիտութեամբ յանձն առաւ «L'Ecole des maris»-ի մէջ բոլորովին իւր բնաւորութեան ներհակ՝ քրքջմընջող եւ մռմռացող Սգանարելի դերը,—Սգանարելի, որ վերջ ի վերջոյ ըստ արժանւոյն պատժվում է իւր չափազանց արթնութեան եւ կասկածամտութեան համար։ Սակայն ոչ արդեօք չի տեսնվի Արիստի խօսքերի մէջ այն

*) Ես ուզում եմ վստահիլ իմ կնոջս և այնպէս ապրել ինչպէս որ ապրում էի։

երջանիկ, պայծառ եւ ազատ ընտանեկան կեանքի թէ-օրիան, որ գտնել էր իւր մտքում ինքն բանաստեղծը, դորանով իւր տարակուսանքն ու տատանմունքը փարատելու համար։ Այդ պիէսան կարծես թէ սփոփեց նորա սիրտը. նա հաստատ վճռեց ամուսնանալ եւ դորա ներկայացումից յետոյ, քաջալերուելով դորա մէջ արտայայտուած մտքերից, ուղղակի թատրոնից ժամ տարաւ Արմանդային եւ պսակուեցաւ նորա հետ։

Հարսանիքից հազիւ մի քանի օր անցած Մոլիէր դարձեալ տրտմութեան մէջ ընկաւ։ Նորան շփոթում էր իւր պչրասէր կինը, որ հրճուելով նոր ստացած ազատութիւնից, սկսեց թէ կամենում էր լիուլի վայելել դորան, միայն ուրախ կեանք վարել, շարունակ զբօսնել եւ զուարճանալ, մոռանալով այն մարդուն, որի ճակատագրի հետ զուգուած էր առ միշտ։ Մի թէ դա այն միամիտ աղջիկն էր, որին դեռ նոր կարելի էր պաշտել եւ մեծարել, իբրեւ մի համեստ եւ վինչեւ ի գերեզման հաւատարիմ մնալու խոստացող ընկերուհու . . . Ամուսնութեան հէնց առաջին օրից կարելի էր նշմարել կնոջ վրայ մի երես առած նորասէրի անթիւ կապրիզներ, հրապուրիչ նենգութիւններ, թովիչ նրբութիւններ։ Ումից էր ուսել նա այդ բոլոր։ Նա երկար ժամանակ մօրից հեռու էր ապրած, գեղջկային մի անկիւնում կրթուելով. բայց եւ այնպէս ոչ թէ միայն սաստիկ յիշեցնում էր յաղթանակներ կանգնելու սովոր Մադելէնին, քանի որ դա առոյգ էր, այլ դեռ խոստանում էր շատ եւ շատ գերազանցել դորանից։ Հարսանիքից առաջ Մոլիէրին մաշող մռայլ նախազգացումները սկսում են կրկին ալեկոծել նորան։ սխալ քայլի վիրաւորիչ գիտակցութիւնը թիւնաւորում է նորա հոգին։ Ընտանեկան կեանքից երջանկութիւն ոսկսող տարեց եւ յոգնած բանաստեղծը տեսնում է, որ այդ վառվրուն կինը բնաւ իրեն յարմար մի լծակից չէր։ Ոտատ եկած կնապաշտը, միայն թէ դա հասակաւոր մարդուց աւելի երիտասարդ, աւելի գեղագէմ եւ թեթեւամիտ լինէր,—աւելի շատ բարեբաստ կանէր Արմանդային, քան թէ Մոլիէր,

թէ եւ նա ոչ խելք ունեցեար, ոչ ձիրք, ոչ էլ համբաւ։ Նախանձը բոյն է դնում Միլիէրի սրտի մէջ. դեռ նախանձոտ լինելու հիմնաւոր առիթ չ'կար, դեռ մէջ տեղում մի ոսոխ չէր երեւում. բայց այսու ամենայնիւ թէ կնոջ անյագ զուարճասիրութիւնը, թէ իրեն բազմաթիւ երկրպագուներով շրջապատելու տենչն եւ թէ, վերջապէս, իրենց համեստ տան մէջ ազնուական սալոնների բաղքեր մտցնելու ձգտումները պարզ ցոյց էր տալիս, որ ճգնաժամը պիտի վրայ հասնէր վաղ թէ ուշ։

«L'école des femmes»-ը «Կանանց դպրոց» բոլորովին ներշնչուած է խաբուած ամուսնի այդ վաղահաս տանջանքների դառնակսկիծ մորմոքով. այդ պիէսան էլ հեղինակը գրել էլ իւր յատուկ կեանքի փորձով։ Դա գեղարուեստաբար հանդէս է բերում նախանձը, բայց ոչ Օտելլոյի մոլեգին նախանձը, նորա կեղեքիչ կասկածանքն ու յերկուանքը,—այլ մի ազնիւ, խելօք մարդու վիրաւորուած զգացմունքը, մի մարդու, որ համոզուած է իւր չափազանց հաւատարմութեան սխալի մէջ եւ այպանուած ու ոտնակոխ եղած է տեսնում իւր ամեն բարի գիտաւորութիւնները, իւր բոլոր ազնիւ մարդասիրութիւնը։ Արնոլֆի շրթունքով պիէսայի մէջ խօսողն անշուշտ ինքն հեղինակն է. այդ գլխաւոր անձի զգացմունքների անկեղծութիւնն եւ բուռն թափը զարմանալի են. իսկոյն երեւում է, որ հեղինակը իւր անձնական ցաւն է դրել նորա խօսքերի մէջ, կամենալով նշաւակել թէ՛ իւր դաւաճան կնոջ եւ թէ՛ նորա դատարկ մտերիմներին, որոնց նա անմոռաբար նախադասում էր իւր մարդուց։ Արնոլֆի սրտային դրամայի բոլոր հանգամանքներն անմիջապէս ընդօրինակուած են իսկութիւնից։ Բեմի վրայ դուրս է գալիս արդէն ապրած մի իդէալիստ, «ամբողջ քսան տարի ամուսինների թշուառ վիճակի վրայ հեգնող մի փիլիսոփայ», որ վերջապէս ինքն էլ խայտառակ կերպիւ նոցա կարգն է ընկնում։ Նա էլ վաղուց փայփայել է իւր սրտում անմեղ Ագնեսի մէջ մի դանկալի ընկերուհի գտնելու յոյսը. նա էլ խոստովանում է իւր սխալանքը, զայրանալով Ագնեսի

դէմքի վրայ երջանկութեան ժպիտ տեսնելիս՝—բայց չէ կարանում խեղդել իւր մէջ սիրոյ զգացմունքը։ Նմանութիւնը լրանում է այդ վերջին գծով։ Կրքի անզսպելի սաստկութիւնը, որ ոչ խելքի ազդմունքներին էր տեղի տալիս, ոչ էլ վիրաւորուած ինքնասիրութեան։ արդէն ճնշում էր Մոլիէրին իբրեւ իւր ուժից վեր եւ օրհասական մի բան։ Այս ներքին պատերազմը յետոյ էլ քանիցս տնգամ կարտայայտուի զանազան պիէսաների մէջ, մինչեւ որ վերջապէս մի դրամաթիքական մարմին չըստանայ «Misanthrop»-ում «Մարդատեաց»։ «L'école des femmes»-ի մէջ Մոլիէր դեռ աշխատում է սքողել խոկութեան կարի մօտիկ նմանութիւնը։ Նա մի վերին աստիճանի ծաղրական տիպ է շինում Արնոլֆից. հանդիսատեսն անզօր է զսպել իւր ծիծաղը նորա սիրային ճառից կամ ամուսնաւոր կիների բարոյական կանոնադրութեան ընթերցմունքից, որ Արնոլֆ բռնի տալիս է Ագնեսին ամենօրեայ սերտողութեան համար. վերջապէս լուծման մէջ էլ այնպէս բնական է դուրս բերուած երիտասարդի յաղթանակը նեղսիրտ եւ քաղթասծերուհու սիրահարութեան վրայ, որ վերջինս յիրաւի ծիծաղելի է մնում։ Կարելի է արդեօք երեւակայել մի առաւել սիրտ յուզող տեսարան, քան թէ այն թշնամական ծիծաղն իւր յատուկ անձի վրայ, ուր քանասեղծը գառնապէս հեգնում է իւր իսկ անմիտ յատիշտակութիւնը։ Վերջերում, կատակերգու քանասեղծը մահագոյժ հիւանդութեան միջոցին, տեսնելով բժշկական դարմանների ապարդիւն լինելն իւր համար եւ տրտում նայելով իւր կեանքի վրայ, դարձեալ կծու հեգնութեամբ կը ծաղրէ ինքն իրեն «Երեւակայական հիւանդի» մէջ։ Արդեօք ինչպիսի ներքին ալեկոծութեամբ խաղացած կ'լինէր Մոլիէր իւր դերն այդ կատակերգութեան մէջ, ինչ սրտամաշ զգացմունքներով գրած կ'լինէր Արնոլֆի շանթընկէց ճառերն եւ ինչ շեշտերով բեմի վրայից հնչեցրած։ Մոլիէրի ընտանեկան գժտութեան դեռ անտեղեակ ժողովուրդը զմայլում եւ թուլանում էր ծիծաղից, խաբուած ալեւորի ծաղրալի դայրոյթը տեսնելիս, եւ ով կարող էր ենթա-

դրել անգամ, թէ այդպէս յօժարափոյթ իւր գերի մէջ մնոող դերասանի սիրտը արիւն էր հոսում անբուժելի վէրքերից։

Բայց այդ բորբոքուն եւ տարօրինակ պիէսան, որ անտարակոյս մի անձնական կրքից էր բղխած եւ այդ կրքի բուռն ազդմամբ թելադրուած, ուր հեղինակը առանց ուշ դարձնելու թէօրիայի վրայ, ազատեցնում էր մարդասէրներին թէ իւր լեզուի ուժգնութեամբ եւ թէ մտքերի հերոսական համարձակութեամբ,—այդ պիէսան վերջ ի վերջոյ բաց արաւ պատեհ առթի ոպասող մարդիկների աչքը եւ նորա իրենց զայրոյթը շարժող պիէսայի մէջ հեղինակի հոգեկան տանջանքը նշմարելով, ուրախ ուրախ սկսան չարաբանել եւ դրպարտել նորան։ Ահա այդ միջոցին է սկիզբն առնում գրեթէ ժամէ ի ժամ սատկանալով Մոլիէրի դէմ լարուած պարսաւագրերի տարափը,—նորա գրականական եւ թատրոնական ոսոխների, նորա պալատական եւ հասարակային դիրքին նախանձողների։ Հին գպրութեան պաշտպան եւ անբիծ բարոյականութեան պահապան մոլեռանդների թշնամութիւնը, որն որ անգութ անդադար հալածում է նորան մինչեւ մահուան ժամը, նորա անցեալը քրքրելով, նորա կնոջ խարդաւանքն հրապարակ հանելով, նորա ընտանեկան կռիւը բորբոքելով, նորան ամենատոր գործեր յատկացնելով եւ վերջապէս, ամենազգիր գարշաբանութեամբ նորա անձը զանազան կեղտոտ կոմեդիաների մէջ նշանակելով։ Թուղթ մրոտողների ամբողջ մի բանակ զբաղվում է այդ անազնիւ գործով եւ գաղտնի տպարանները նախ Փարիզում եւ ապա Հոլլանդիայում ժրաջան աշխատում են ինչքան կարելի է վատթար եւ չարանենգ լուտանք ժայթքել նորա դէմ։

Այսպէս ահա Մոլիէրի էն էլ թէ չէ անուրախ կեանքի մէջ աւելանում է մի նոր ցաւ։ Բնական էր կարծել, որ թշնամիներից կրած յարատեւ պաշարեալ վիճակը մի պարտասիչ ազդեցութիւն կունենար նորա գործունեութեան վրայ։ Բայց ընդհակառակն—այդ վիճակն ասես թէ առաւել եւս արիութիւն կը ներշնչէ նորան։ Նա կընդունէ

մարտի հրաւէրն, նա մինչեւ վերջը կը դիմադրէ, մինչեւ յեսին շունչը պատերազմ կը մղէ իւր գրչի հզօր զէնքով եւ միայն բայաւիկ դէպքերում պաշտպանութիւն կը խնդրէ իշխանութիւնից եւ օրէնքից։

Թշնամութեան սկսուելուն պէս նա մի համարձակ պատասխան կընետէ իւր չարակամների երեսին—այդ էր իւր ինքնուրոյն կրիտիկան «LEcole des femmes»-ի վրայ, եւ դորա մէջ իւր կոմէդիայի մասին ծուռ ու մուռ դատողութիւններ անող անձինքների կենդանի խօսակցութեամբ քաջօրէն կը պաշտպանէ իւր նորաձեւութիւնները, մի ազատ տեսակէտ հատատոելով բանաստեղծի գործունէութեան նկատմամբ։ Հին գրականութեան ջատագովները զարհուրելով կը լսեն Դօրանտի շրթունքից մաշուած կանոնների մի խիստ դատապարտութիւն եւ անլուր էսթէտիքական սկզբունքների մի նոր քարոզութիւն։

Սակայն ակադէմեան կամ կաճառային բանաստեղծների թշնամութիւնը, որ ծագել էր նոցա վիրաւորուած ինքնասիրութիւնից կամ թէ հին կանոններին նուիրած ստրկական երկրպագութիւնից, այնքան վտանգաւոր չէր Մոլիէրի համար, ինչքան որ մեծաշուք ազնուականների ատելութիւնը, որոնց որ նա մի առանձին հաճութեամբ սկսել էր հարուածել իւր կոմէդիաների մէջ։ Պալատական վարք ու բարքերին արդէն տեղեակ ազնիւ Մոլիէրի վիրաւորուած սիրտը գրգռւում էր մանաւանդ այն նախանձից, որ նա զգում էր իբրեւ ամուսին դէպի իւր կնոջ իշխանազն եւ լիսի հոմանիները։ Սկզբում չափաւոր, բայց յետոյ անողոք սատակութեամբ կը շահատակէ նա իւր իսկ յարուցած վոլթորկի դէմ։ Մոլիէր շրջապատուած կլինի իրեն ամենայն ինչ վիրաւորանք հասցնելու եւ մինչեւ անգամ ծեծելու ընդունակ լիրը եւ հզօր թշնամիներով։ եւ ահա այդ միջոցին մի անակնկալ օգնութիւն կը հասնի նորան երկրի ամենամեծ իշխանից, որ իւր հովանաւորութեան տակ կը դնէ նեղուած բանաստեղծին։ Լիւդովիկոս չորս գոհ մնալով Մոլիէրի «Les fâcheù» («Տաղտկալներ») պիէսայից, որի մէջ առաջին

անգամ կայտառ դիալոգները խառնուած էին միմիքական պատկերների, պարի եւ երաժշտութեան հետ, թոշակ կը կոչէ նորան իբրեւ մի շնորհալի մարդու—homme d'esprit, —եւ Մոլիէր իւր թշնամիների ամենադաժան յարձակման ժամանակ այդպիսի օժանդակութիւն ստանալով թագաւորից, ճշմարիտ երախտագիտութեան մի քանի ջերմ խօսք կ'ասէ նորան «Remerciment un roi» ոտանաւորի մէջ։

Այդ բոպէից սկսած մի առանձին սերտ յարաբերութիւն հաստատուեցաւ ինքնիշխան միապետի եւ անկախ ռամկապետական ձգտումներով տոգորուած բանաստեղծի մէջ,—տարօրինակ յարաբերութիւն, որ այնքան տարբեր մեկնութիւնների նիւթ է եղած մինչեւ այս օրս։ Քանի՞ առաւել զօրանում էր Մոլիէրի քանքարը, քանի առաւել զայրանում էր նա ժամանակակից հասարակութեան վրայ եւ քանի առաւել սաստկացնում էր նա իւր մտրակի հարուածները տիրող դասակարգի գլխին,—այնքան էլ աճում էր դէպի նա թագաւորի համակրութիւնն եւ հովանաւորութիւնը. բանաստեղծի ջախջախիչ հեգնութիւնն եւ արմատականութիւնը, փոխանակ սառնութիւն եւ դժկամակութիւն յառաջ բերելու թագաւորի մէջ, ինչպէս որ սպասելի էր,—գոհութեան ժպիտ եւ հաճոյք է պատճառում թագաւորին, որ եւ իւր ազգու խօսքով պաշտպանում է նորան քսուների եւ մատնիչների երեսից։ Այս կարծեցեալ հակասութեան հիմքը ոչ այնքան Լիւդովիկոսի անձնական յատկութիւնների մէջ որոնել պէտք է, ինչքան որ նորա իշխանութեան նպատակների եւ յատկութեան մէջ։ Երբեմն պատահում է, որ ինքնահաճ եւ գոռոզ փառամոլութեան մէջ կարծրացած վեհապետներն անգամ պահպանում են բարոյական ընազդման եւ մարդ ճանաչելու ընդունակութեան մի որոշ մասն,—եւ Լիւդովիկոս գուշակել էր, թէ ինչ մարդ էր գտել սրամիտ հեղինակի մէջ, որ այն աստիճանի տարբերվում էր պալատական ամբոխից եւ որ հենց սկզբից հաճելի էր դարձել իրեն իբրեւ պալատական ներկայացումների եւ հանդէս-

ների մի հնարագէտ կարգադրիչ։ Ինքնակալութեան տեսակետից նայելով՝ Մոլիէրի գործունէութիւնը փառք եւ շուք էր աւելցնում միապետի շլացուցիչ մեծութեան վրայ, եւ Ռիշելիոյից ի վեր արքունիքում սովորած էին չ՚արհամարհել մի այդպիսի սիրուն զարդ թագաւորական ծիրանու համար։ Բանաստեղծը, քարոզիչը, կատակերգու դերասանը, միանալով մի յաղթապակ զօրավարի կամ պալատական գեղեցկուհու հետ, մի մի նոր ճառագայթ էին տալիս փառքի եւ բարօրութեան ճաճանչաւէտ պսակին, որ կրում էր թագաւորը։ Բայց յատկապէս Լիւդովիկոսի նման ինքնակալ անձնաւորութեան գերիվերոյ ամբոնանալն անձայն ժողովրդի բաղմութեան վրայ անհրաժեշտ կերպիւ պիտի մղէր նորան ոտալալելու կամ թուլացնելու այն բոլոր խոչընդոտները, որոնք արգելք էին լինում թագաւորի զօրութեան եւս առաւել աճելուն։ Կենդրոնացեալ իշխանութեան բոլոր ոյժը հետզհետէ միայն իւր անձի մէջ ամփոփելու սովորած մի թագաւոր, որ հրապարակաւ ասել էր, թէ «Պետութիւնը—ես եմ,» մի առանձին հաճոյք պիտի զգար անշուշտ, տեսնելով, թէ ինչպէս էին պատուհասվում դեռ իւր ժողովրդի բաղմութեան մէջ տեղ կանգնած մարդիկը։ Նա ոչ թէ միայն ներազդմիտ աչքով էր նայում ազնուական դասի կրած նշաւակութեան վրայ, այլ դեռ պատրաստ էր օգնել նշաւակող բանաստեղծին, ցոյց տալով նորան այնպիսի տիպարներ, որոնք յիրաւի արժանի էին ծաղր ու ծանակ դառնալու։ Թագաւորը չէր գուշակում 'ի հարկէ բանաստեղծի մղած պատերազմի վերջնական հետեւանքը. իւր հովանաւորութեան մէջ լոկ անձնական շարժառիթների հետեւելով, նա չէր մտածում, որ անձամբ նպաստում էր դիզուելու այն պայթիւն եւ բորբոքուն նիւթին, որ միայն մի դար անցնելուց յետոյ չէ թէ միայն հին ատատական ազնուապետական կարգը յօդս պիտի ցնդէր, հապա եւ նոյն իսկ արքայական գերիշխանութիւնը դորա փլատակների տակ թաղէր։ Վերջապէս նա ընդունակ չէր ոչ Մոլիէրի հասարակային, ոչ էլ գրականական նշանակութիւնը հաս-

կանալու։ Երբ նա մի օր բարեհաճեց հարցմունք անել Բուալոյին, թէ ով էր նորա կարծիքով այն դարու ամենամեծ ֆրանսիական բանաստեղծն, եւ Բուալոն խակոյն Մոլիէրի անունը տուաւ,—Լիւդովիկոս զարմանալով պատասխանեց։ «Միթէ՞։ Ես այդպէս չէի կարծում։ Սակայն այդ տեսակ բաներն դուք նուաւել լաւ գիտնաք»,—եւ այս պատասխանը, որի ստուգութիւնը վաւերացվում է Պասինի տան մէջ պահպանուած մի յիշատակարանով, ամեն բանից աւելի լաւ է պարզում, թէ ինչ անգիտակցական դեր էր խաղում թագաւորը Մոլիէրի գործունէութեան ընթացքի մէջ։

Մոլիէր իրեն ընծայուած համակրութիւնն եւ հովանաւորութիւնը ազնուաբար փոխարինում էր իւր անապատաղանդի եւ կայտառութեան ամեն միջոցներով։ Նա առաջուանից աւելի աշխատում էր հաւատարիմ մնալ իւր լեռջ նպատակներին եւ ուղիղ յառաջ էր գնում ընտրած շաւղով,—բայց մի եւ նոյն ժամանակ էլ պէտք էր համարում շնորհապարտ մեծարանքի հարկ մատուցանել թագաւորին այնով, որ մերթ ընդ մերթ պատաւոր կարգի ներկայացումներ էր տալիս մի որ եւ է արտասովոր դէպք փառաբանելու։ Համար կամ թէ յատուկ այդ նպատակով մի նոր պիէսա էր շարադրում, պարեր հնարում եւ այլն։ Այդ հարկը քծնութեան նշան չունէր իւր վրայ։ Մոլիէրի յառաջաբաններին եւ ոտանաւոր ընծայումների մէջ երբեմն երբեմն պատահող պաշտօնական ոճերն ու սեթեւեթներն անհրաժեշտ բաներ էին այն դարում եւ այն շրջանում։ Պատահական պիէսաները Մոլիէր գրում էր հապճեպ շտապով, բայց եւ մեծ վարպետութեամբ։ Նա միշտ գիտէր օգուտ քաղել սովորական տղբիւրներից։ Եթէ իտալական կոմեդիաների առաձեռն պատրաստ ծրագիրներն կամ հին ֆրանսիական նիւթերը նորան չ՚օգնէին,—այն ժամանակ նա ինքն կը հնարէր մի նոր բան, անդուլ կայտառութիւն եւ ծիծաղաշարժ դէպքեր մոցնելով մինչեւ անգամ ամենամաշուած նիւթերի շրջանակում։ Մոլիէր այդ փոքրիկ չնչեների մէջ էլ ցոյց էր տալիս իւր հանճարի այն յատ-

կութիւնը, որ ընդունակ էր վերանոր ստեղծել ամեն մի փոխառնուած նիւթ. ուստի իրաւամբ է ասում երեւակին Սէնտ—Բեով, թէ «Մոլիէր, որ բոլոր մեծ հեղինակներից ամենաշնորհալին եւ ամենանհարագէտն էր, գուցէ ամենից էլ շատ փոխ էր առնում ուրիշներից։» *)

Այդպէս լոյս տեսաւ մանրիկ դիտողութիւնների եւ կոմեդիաների ամբողջ մի շարք, որոնք յանկարծակի, ասես թէ մի անգամից յօրինուած լինելով («Les fâcheut» կ՚ասէս մեծ պիէսան անգամ գրուած էր 13 օրում), ըստ այնմ էլ մի վազանցուկ կեանք պիտի ունենային։ Մի քանի ծոյլ յեկ Մոլիէրասպաշտների կամ թէ Ժողովրդի ոգիութեան շնորհիւն է, որ այդ աննշան գրուածքները դեռ այս օրս էլ հրապարակ են հանւում քեմի վրայ բանաստեղծի ընտիր երկերի հետ միասին, ազնաստելով նորա մատենագրական գործունէութեան ընդհանուր պատկերը։ Բոլոր նորա «l'Amour médécin», («Սէրը Բժիշկ») «Impromtu de Versailles», («Վերսայլեան յանկարծանութիւնք») «Mariage forcé» («Բռնի ամուսնութիւն») «Սկապէնի նենգութիւնք» եւ ուրիշ պոյա նման պիէսաներն ջուրին էլ քնաս մի որ են է ծանրակշիռ խորհուրդ մի քանին քոմանդակութիւն անգամ չունին, ինչպէս «Impromtu de Versailles»-ը, որ ամենից լաւ է ծանօթացնում այդ տեսակ պիէսաների շարադրութեան եղանակների հետ։—Վարագոյրը բացվում է, քեմի վրայ կանգնած են Մոլիէր եւ իւր խմբի անդամներն իրենց յատուկ անուններով։ Մեծ շփոթմունքի մէջ են նոքա, պատճառ խոկոյն մի նոր պիէսա յօրինելու եւ սերտելու պտտուէր են տուացել թագաւորից։ Դեռ ոչինչ պատրաստ չէ. ինչպէս խումբը պիտէ պատէ ընկնում խուճապած. թագաւորի կողմից հետզհետէ մարդիկ են դալիս ակնկալ հրամանը ներելով, դերասանների իրարանցումը սասակնանում է. ճշմարտութիւնը ծածկելու էլ հնար

*) Մոլիէր ինքն էլ խոստովանում է այդ, ասելով. «Je prends mon bien où je le trouve»—ես առնում եմ իմ բարին ուր որ նորան գտնում եմ։ Փ. Վ.

չկայ։ Վերջապէս գալիս է մի դեսպան եւ աւետում է, թէ թագաւորը, պերասաններին նեղ դրութիւնն իմացած լինելով, աղաստում է նոցա ներկայացումն տալու հարկից։ Ահա այդ է բոլոր խաղը, միայն թէ կենդանացրած զուարթ դիալոգով, հանաքներով եւ սրամիտ կատակներով։ Անկարելի է ի նկատի չառնել դորա նման պիէսաների բոպէական համեստ նպատակը, որ էր մի թեթեւ զբօսանք տալ հանդիսատեսներին, եթէ կամենում ենք, որ իսկական Մոլիէրի, ազգային մտքերին շարժիչ բանաստեղծի վշտահար դէմքը չը նսեմանայ մեր աչքում ծաղրածու եւ միմոս Մոլիէրի ետեւից։

Նիւդովիկոս կարիք չունէր մատնացոյց լինելու Մոլիէրին երգիծանութեան արժանի տիպերի վրայ։ Մոլիէր արդէն ինքն էլ դառն փորձով բաւականին ծանօթացել էր դոցա հետ։ Նորա կնոջ շրջանը բաղկացած էր ըստ մեծի մասին այնպիսի ազնուականներից, որոնք ամենից շատ ատելի էին բանաստեղծին։ Դատարկութիւն եւ թեթեւութիւն, ամբարհաւաճ եւ լիրբ ձեւեր,—ես միեւնոյն ժամանակ միասին թագաւորի առջեւ ստրկաբար ստորանալու յոռկութիւն,—ահա թէ ինչով էր նշանաւոր Մոլիէրի ստանը յաւիտենական հոմանիների վոհմակը, որի մէջ, համբաւի ասելով, մանաւանդ երկու անձինք մի առանձին շնորհ էին գտած նորա ամուսնից։

Արդեօք ճշմարիտ էր, որ Արմանդայի հոմանիներն երիտասարդ դը Գիշա եւ դը Լոզէն կոմներն էին կամ թէ ուրիշները,—եւ արդեօք ո՞ր աստիճանի արդարութիւն կար այն կատաղի պասքուիլների մէջ, որոնք մի առ մի պատմում էին թեթեւամիտ կնոջ ամենագաղտնի արկածները,—այդ ոչ ոք յանձն չի առնիլ լուծելու։ Մինչեւ անգամ այս օրս էլ, երբ Մոլիէրի ընտանեկան դժոխքի հանգամանքներն արդէն լիովին պարզուած են, կան մարդիկ, որոնք պաշտպանում են Արմանդային։ Անհիմն են բոլոր զրպարտութիւնները, ասում են դոքա. թիւրիմացութիւններն եւ պատութիւնը ծագած էին մասամբ կնոջ նազանքներից, մասամբ մելամաղձոտ մարդու կաս-

կածամտութիւնից։ «Նոքա բնութեամբ իրար յարմար չեն-
կան,» ասում է Էդուարդ Թիէրրին. «եւ Մոլիէր ինքն էլ
այդ խոստովանում էր «Bourgeois Gentilhomme» ի մէջ
«Քաղքցի ազնուական», Երրորդ գործ. 18 տեսարան)։ Բացի
այդմանից, ում կարող է կշռել, թէ որքա՞ն էին գրգռում
Մոլիէրի երկմտութեան զգացմունքը նաեւ Մոնֆլեորիի ստո-
բաբարշ պասքուիլներն եւ Մադելենի կամ դը-Բրիի—այս
անհաստատ բարեկամի չարամիտ փսաքուսանքը։ Թիէրրին
կարծում է, թէ Արմանդան ուրիշների հետ նազանք
անելով կամենում էր լոկ վրէժխնդիր լինել իւր տան մէջ
կրած անտանելի դրութեան փոխարէն։ «Միթէ նա մի
օրինաւոր ընտանեկան կին—femme d'intérieur—չըղ ար-
ձաւ երկրորդ ամուսնութեան մէջ. բայց խնդիր է, թէ ար-
դեօք Մոլիէր ինքն մի լաւ ամուսին կը դառնար, եթէ Ար-
մանդայից յետոյ մի ուրիշ կին առներ»։ Սակայն եթէ
անլուծելի էլ մնալու լինի այս հարցը, թէ արդեօք նորա
կնոջ քծնութիւնն երկրպագուների հետ հասնում էր թէ
ոչ մի որոշ կապակցութեան,—այսու ամենայնիւ պարզ է,
որ կնոջ գրգռիչ եւ գրեթէ լիսի վարմունքը երիտասարդ-
ների հետ կարող էր նորա անհաւատարմութեան նկատ-
մամբ հիմնաւոր կասկածներ յարուցանել չէ թէ միայն
ամուսնու, հապա եւ օտար ականատեսի մտքի մէջ։ Մո-
լիէրի բարեկամներից ոչ ոք չէր աշխատում նորա հիւան-
դոտ երեւակայութեան վերագրել այդ կասկածները. նո-
րան սփոփում են, քաջալերում են, հաշտութեան յոյսեր
են տալիս,—բայց բուն եղելութիւնը ոչ ոք չէ հերքում. ու-
րեմն դա շատ ակներեւ էր, շատ աչքի զարնող էր։ Քանի քա-
նի՞ անգամ ներից Մոլիէր կնոջ անմիտ վարմունքը, քանի
անգամ միացաւ նորա հետ ժամանակաւոր բաժանմունք-
ներից յետոյ. բայց այդ բոլորը զուր եղաւ։ Մոլիէր տես-
նում էր, որ հաշտուելու հնար չկար։ Արդարեւ նոքա
բնութիւններով անյարմար էին մէկ մէկու. բայց եւ այն-
պէս իւր չար բախտից Մոլիէր դարձեալ շարունակում էր
սիրել Արմանդային, մինչդեռ Արմանդային, ծանօթներից
մէկի սրամիտ նկատողութեամբ, կատարելապէս երջանիկ

լինելու համար ոչ թէ Մոլիէրի նման մի «հոգեւոր ամուսին» (un mari d'esprit) եր հարկաւոր, այլ մի «մարմնաւոր ամուսին» (un mari de chair). եւ այս խօսքերի ճշմարտութիւնը նա հաստատեց իւր անբախտ մարդու մահից յետոյ, երբ որ կրկին ամուսնացաւ մի անշնորհ, բայց սիրուն եւ առողջ ձիւնափաթի հետ, որի հետ շատ էլ լաւ կեանք վարեց։

Արդիւք զարմանա՞նք, եթէ Մոլիէր սրհամարհելով ազնուական դասը, որի հետ արդէն շատ էր շփուել պալատի մէջ, եւ վիրաւորուած տեսնելով իւր անձն իբրեւ հեղինակ, իբրեւ մարդ եւ չարաչար խաբուած ամուսին, որին նախատանում են մի ոչնչութիւն,—զարմանա՞նք, եթէ նորա անկախ եւ ազնիւ ոգին յուսկապէս այդ դասի դէմ անհաշտ պատերազմ վարելը սիրելի նիւթ շինէ իւր զօրաւոր երգիծանութեան համար։ Երկնքի տոկունութեամբ, հարուածի հարուածի վրայ իջեցնելով, նրանք թաթաւ վէրքեր կը հասցնեն նա իւր թշնամիներին եւ կրկնապատիկ եռանդով կը նետուի այդ պատերազմի մէջ, իբրեւ պաշտպան թէ իւր պատուի եւ թէ աղգային պատուի։

Առանձին հարուածն այն կրկնի, որ նա իւր նոր կոմեդիայի մէջ միմոնական գրերեր կրաց ազնուականներին։ «Impromptu de Verssailles»-ի մէջ նա անկեղծ ասում է, թէ հին valet bouffon'ը—խեղկատակ ոգնասուորն ոգիրէն ամենքի գահլան տարել է եւ թէ նորա տեղ մի մանխարտ մարքիզ (marquis ridicule) պէտք է դուրս բերել իբրեւ ծաղրածու (plaisant de la comédie)։ Եւ յետոյ մի պիէսայի ներածութեան վերջ փոքր դուրս է բերում մի մարքիզ, որ «ինչ էլ լինի կամենում է մնալ բեմի վրայ եւ չընդունելով ոգնասուորների բողոքին, բանակցում է մի մանխարտ մարքիզուհի ներկայացնող դերասանուհու հետ, որ նստած է հանդիսականների շարքում»։ Սակայն այս լոյսերը կրեան անմեղ կատակներ էին թէեւ ոչ անանցան վատակներ, եթէ ցիշենք այն ազնուական մարքիզներին, որոնք ոգնոգոնած էին այդպիսի վատակներ լսելու։ Իսկական հան-

բուաձՆերը յետոյ կը տեղան նոցա գլխին։ Մոլիէր կաշխատէ նախ եւ առաջ յիմար ներկայացնել միջին կամ հասարակ դասակարգի դեռ նոր հարստացած մարդիկներին, որոնք աղնուականների մէջ մտնելու համար շտապում են ամուչել իրենց վաստակաւոր, քրտնաջան եւ ազնիւ կեանքից։ Արդէն «l'Ecole des femmes» ի մէջ (Առաջին գործ. 2 տեսարան) հեղինակը ծաղրել էր Արնոլֆի եւ ուսնեւոր շինականների անպատճառ տոհմիկների կարգը անցնելու աենչը, որով «այդ ախմախներից մէկն կամ միւսը մի փոս է փորում իւր փոքրիկ ագարակի շուրջն եւ ասա թէ պանծալով անուանում է իրեն Monsieur de l'Ile»։ Այժմ մեր առջեւ կենդանացոյն կրներկայացուի ազնուական կեանքի փարթամ շքեղութիւնից շլացած մի քաղքցի (Bourgeois Gentilhomme)—մի ծանծաղ, բայց ազնիւ հոգի, որ կաշուց դուրս է գալիս, աղնուականներից ոչինչ բանով յետ չը մնալու համար եւ աշխատում է ձեռք բերել նոյն պարգացումը, ինչ որ նոքա ունին, նոյն կրթութիւնը, նոյն, մտքանները, նոյն վայելուչ ու նուրբ ձեւերն եւ այլն։ Նորա գիւրահաւատ միամտութիւնից ուրիշ շատերի հետ միասին չարաչար օգուտ է քաղում մանաւանդ նորա մի սուտ բարեկամը, որ մի դրանիկ ապնուական է եւ խաբեբայ մարդ։ Սորա գրդմամբ ոգորմելի քաղքցու աղնուական գառնալու կոյր տենչն առաւել եւս բորբոքվում է, եւ նա վերջապէս սիրահարվում է մի տոհմիկ կնոջ վրայ, որն որ հմանիներից շրջապատուած, աշխարհային շռայլ ու զեղխ կեանք վարելու սովորած մի վատթար էակ լինելով, իսպառ ամաչտանգնում է թշուառ ամուսնուն։ Եթէ այդ փեսլին վիճակուած էր անբախտանալ կնոջից յու կլինէր որ վինը բռնի ամուսնացնէր նորան իւր հետ, ինչպէս որ այդ պատահում է «Mariage forcé» ի մէջ. այն ժամանակ նա գոնէ չէր մեղադրիլ իւր անձը այն տանջանքների համար, որ պիտի կրէր պսակից յետոյ։ Բայց ողորմելին յօժար կամքովն է լուծի տակ դնում իւր վիզը, գեղազարդելով երեւակայութեան մէջ այն կեսը, որ ոչինչ չիպիտի շնորհէր նորան, բայց թէ խաբուած ամուս-

նի խայտառակ ու յիմար դրութիւն եւ նենգամիտ շահամոլներից կողոպտուելու դառնութիւն։ Իւր մտքերը փետփրտում է ուշ խելքի եկած Ժորժ Դանդէն, նզովելով ճակատագիրն եւ կատաղելով այն մտքից, թէ նա ինքն էր եղած իւր թշուառութեան պատճառը, ինքն էր դիմած այդ նուաստութեան։ Tu l'as voulu Çeorge Dandin, tu l'as voulu!»—«Դու ինքդ կամեցար այդ Ժորժ Դանդէն, ինքդ կամեցար»,—բացականչում է Դանդէնի շրթունքով—ինքն Մոլիէր, որ Ֆրմանգային էր յանձնել անհաւատարիմ կնոջ դերը, եւ այս տեղից է յառաջ գալիս, որ չնայելով մի քանի տեսարանների ծաղրալի բովանդակութեան, յիշեալ բացականչութիւնը միշտ մի եղերական տպաւորութիւն է գործում ունկնդրի վրայ։

«Դոն-Ժուանով, վերջապէս, կնքվում է բարձր դասակարգերի դէմ լարուած սատիրաների շարքը. ազնուականների բոլոր մնայլ յատկութիւնները միացած են հերոսի բնաւորութեան մէջ։ Դոն-Ժուան—մի կատարեալ տիպար է անառակութեան, անհաւատութեան, լրբութեան եւ կեղծաւորութեան։ Նա խելօք է եւ ամբողջ գլխով բարձր մի որ եւ է Դանդէնի կնոջ թեթեւսոլիկ սեղեխներից։ Մի տեսակ Տարտիւֆ է այդ անամօթ ցինիկը, որ գիտէ մեծ վստահութեամբ եւ ահագին զօրութեամբ իշխել իրեն շրջապատող հասարակութեան վրայ, մինչեւ որ «չը գլորէ նոցան գահից յեղափոխութեան քարէ հիւրը»։*) Մոլիէր, գահալիժելով պատուանդանից այդ վնասակար էակին եւ զօրացնելով պատկերի ճշտութիւնը մի կենդանի մարդուց ընդօրինակուած գծերով, ամենասոսկալի հարուած է տալիս իւր ոխերիմ թշնամիներին։ Բօմարշէն եւս իւր «Ֆիգարոյի ամուսնութեան» կծու խայթոցներով, որոնք ամենքան նպաստեցին յեղափոխական մտքերի տարածուելուն, Մոլիէրի օրինակին կը հետեւի։ «Դոն-Ժուանի» մէջ արդարեւ նոր մտքերի մի անսովոր ձայն է

*) Lindau, „Molière, eine Ergänzung der Biographie des Dichters".

լսում՝ որ ժամանակով մի արմատական յեղաշրջում պիտի ձգէր ազգային կեանքի մէջ։ Եւ, զարմանա՞լի բան, այդ նոր ձայնը հնչում է յատկապէս հեղինակին ատելի Դոն-Ժուանի շրթունքից։ Մոլիէրի աչքում գարշելի են Դոն-Ժուանի պէս անբարոյական ցինիկները։ բայց իշխող դասակարգերի ուրիշ մարդիկն էլ դորանից լաւ չեն. ինչ զայրութեամբ որ պախարակում է նա մեծամեծների վատթար բարքն ու վարքը, նոյն զայրութեամբ կը մորակէ նա եւ կեղծաւոր բարեպաշտներին։ Եթէ պէտք է ընտրութիւն անել դոցա մէջ, թող ուրեմն առաւելութիւնը սկեպտիկի կողմը մնայ,—ահա այդպէս է կազմվում յիշեալ պիէսայի մէջ այն երեւելի «տեսարանը աղքատի հետ» (երրորդ գործող. 2 տեսարան), որ մեծ գայթակղութիւն պատճառած լինելով բարեկրօն ընթերցողներին, երկար ժամանակ դուրս էր ձգուած թէ գրքերից եւ թէ բեմից։ Աղքատն ողորմութիւն է խնդրում Դոն-Ժուանից, աղաչելով օգնել իրեն յանուն եկեղեցւոյ. Դոն-Ժուան նախ մերժում է աղքատի խնդիրը, նորա հաւատի ունայնութեան վրայ հեգնելով,—բայց մի վայրկեանից յետոյ ուշքի է գալիս եւ տալիս է նորան մի առատ ողորմութիւն։ «Ա՛ռ, տալիս եմ քեզ յանուն մարդկայնութեան» (au nom de l'humanité), ասում է նա,—եւ այս նոր խօսքի մէջ, որ առաջին անգամ է լսվում բեմից, Մոլիէր «նրշմարել է տալիս այս լուսաւորիչ, մարդասիրական եւ փիլիսոփայական ոգին, որ վերջապէս յաղթող պիտի հանդիսանար տասնութերորդ դարում»

4.

«Նա շատ սիրեց Մոլիէրին՝—եւ նորան շատ բան կը ներուի»,—այսպէս է գործ դնում Լիւդովիկոսի վերաբերմամբ Աւետարանական խօսքերը Մոլիէրի ջերմ պաշտողներից մին*)։ Բանաստեղծի կենսագիրն պատրաստ է նե-

*) Claretie՝ Moliére, sa vie et ses oeuvres՝

րել թագավոր մեղաւորին նորա բոլոր կամաւոր եւ ակամայ մեղքերն այն հովանաւորութեան համար, որ նա ընծայում էր երգիծաբան կատակերգուին։ Եւ իրաւ թագաւորի տարօրինակ հովանաւորութեան շնորհիւն էր, որ Մոլիէր կարանում էր աներկիւղ սաստկացնել իւր կոմէդիայի հարուածները եւ շարունակ յառաջ գնալով, առաւել կատարելութիւն տալ այդ կոմէդիայի գեղարուեստական ձեւերին եւ դաստիարակիչ մտքերին։ Մոլիէրի կոմէդիան այժմ դարձել էր հասարակութեան զարգացմանը հզօրապէս նպաստող մի զօրութիւն։ Այդպէս լինելով՝ մի վսեմ պարտաւորութիւն էր դրվում նորա վրայ։ Հասարակութեան առջեւ որոշ բարոյական իդէալներ քարոզելիս, նա պարտական էր դատաստանի կանչել այդ իդէալների դէմ գործուած բոլոր զեղծումներն, առանց խրտրութիւն անելու կամ մեղմացնելու իւր հարուածներն՝ ի շնորհուկս այս կամ այն անձնաւորութեան։ Բայց այդ պաշտօնը հաւատարմութեամբ կատարելու համար այժմ մի կրկնապատկուած արթնութիւն էր պահանջվում Մոլիէրից, որովհետեւ նորա գործունէութեան պայմաններն աննշմարելի կերպիւ փոխուելու վրայ էին, նոր վտանգներ սպառնալով։ Լիւդովիկոսի հովանաւորութիւնն այժմ էլ ապահոված էր. բայց բանն այս է, որ հէնց թագաւորի անձնաւորութեան մէջ սկսել էին արդէն յերեւան գալ բանաստեղծին շատ ատելի եւ զզուելի յատկութիւններ։ Թագաւորի բոլոր ուշքն ու միտքը պատանդուած էր այժմ նրբութեան հասնող մտրութիւններով, ամբողջ աշխարհի առջեւ լրբօրէն նիւթուող հազար ու մի ինտրիգներով։ Դ ի տ ո ղ երգիծաբանի եւ վաւաշոտ արքայի միջեւ կարող չէր այլ եւս միաբանութիւն եւ մտերմութիւն տիրել։ Առանց վարակուելու պալատական մթնոլորտի ստրկութեան ազդից, Մոլիէր հաւատարիմ մնաց իւր համոզմունքներին, եւ դժգոհութեան դառն զգացմունքը աճելով մթերուեցաւ նորա սրտում։ Միայն դաժանամիտ կամ թէ նախապաշարուած քննիչը, ինչպէս էր Վ.Էյլիօն, կարող էր կարծեցեալ ծառայականութեան (servilité) հետ-

քեր նշմարել բանաստեղծի այն նուիրմունքների մէջ, որոնք, ինչպէս արդէն ասացինք, միայն էտիքէտին եւ կամ պալատի մէջ սովորական ճորոմաբանութեան ոգուն գէթ փոքր ինչ յարմարուելու համար էին գրուած։ Բայց այդ իբր թէ ծառայամիտ եւ նուաստ մարդը չը զսպեց իրեն, երբ չափաւորութիւն պահպանելն եւ պալատական պատշաճին հնազանդելն իւր ուժից վեր դարձաւ. նա «չընեներց» թագաւորի մէջ պատահած փոփոխութեան։ Հէնց այն միջոցին, երբ Լիւդովիկոս զակատուած էր Մոնդէսպան մարքիզուհու ետեւից, որին տմարդօրէն առեւանգել էր ազնիւ ամուսնուց, Մոլիէր բեմի վրայ դրաւ իւր «Amphitrion»ը («Ասպնջական»)։ Բնաբանը նա Պլաւտից էր փոխ առել, ինչպէս եւ «Avare»ի («Ժլատի») նիւթը. ամեն բան շրջապատել էր հին կեանքի պայմաններով, պատկերի մէջ տեղն էլ գրել էր Արամազդին,—սակայն ով չէր ճանաչիլ հեշտասէր շանթընկէցի մէջ նոյն ինքն Լիւդովիկոսին, որ վատթարաբար պղծում էր ամուսնական սրբութիւնը։

Մոլիէր իւր ձեռքը Լիւդովիկոսի վրայ բարձրացնելիս, որին երկար ժամանակ խնայել էր, հետեւում էր իւր պաշտած իտալական վարժապետների օրինակին, որոնք ուր էլ ձգուէին ճակատագրից, միշտ պահպանում էին ազատ բեմի աւանդները։ Նոքա Մոլիէրի օրով էլ յաճախ զայրացնում էին ֆրանսիական արքունիքին իրական դէպքերի եւ մարդիկների սուր յանդիմանութեամբ. իսկ երբ նորա մահից մի քանի տարի յետոյ այդ իտալացի հեգնիչները տիկին Մէնտընոնի եւ թագաւորի կապակցութիւնն էլ ծաղրեցին «La fausse prude» «Սուտ զգօն» կոմէդիայի մէջ,—դուռը պատժեց նոցա անվեհեր համարձակութիւնն եւ աքսորեց նոցա Փարիզից *)։ Մոլիէր իրեն աչքին դիպչող հասարակային հիւանդութեան նշանները «Ամֆիտրիոնի» մէջ յերեւան հանելուց յետոյ, տեսաւ իւր

* Depois, Le théâtre français sous Louis XIV.

* Henri de Lapommerade: Molière et Bossuét:

շուրջն ընդհանուր ախտաժէտութեան անթիւ գուժկանները, որոնց դէմ բոլորը բառնալը նա իւր հասարակային կոչման սրբազան պարտքը համարեց։ Այժմ սկսել էր գլուխ բարձրացնել մի նոր եւ առաջիններից զօրեղ թշնամի։ Մոլիէրի գուշակութիւնը թագաւորի մասին արդէն կատարվում էր. բարեբախտաբար նա ինքն չը տեսաւ այն թշուառ տեսարանը, որ ներկայացնում էր Լիւդովիկոս իւր իշխանութեան վերջին տարիներում։ Ապաշաւ եւ զեղջ թագաւորը այժմ պաշարել էր իրեն սուտ ճգնաւորներով եւ ֆանատիկոսներով. նա կամենում էր ապաշխարել, բայց բռնակալական կեանքը, ծածուկ շուայտութիւնը, խարդաւանքն եւ կայտառ ընթրիքները շարունակվում էին առաջուայ պէս։ Կեղծաւորեալ ջիղութիւնական բարեպաշտութեան օր ըստ օրէ սաստկացող ռէակցիան չէր խուսափում Մոլիէրի աչքից։ Այդ ռէակցիան, այդ յետադիմութիւնն արդէն շատ զոհեր էր կլանել։ Մոլիէրի նախկին դասընկեր իշխան Կոնտին, որ Դոն-Ժուանի նման մի խառնագնաց կենսասէր էր, դարձել էր այժմ մի կատաղի կրօնամոլ, աշխարհային զբօսանքների եւ թատրոնի թշնամի, բեմի վնասակարութեան մասին լուտանք յորինող մատենագիր։ Ազնուական սրահների հերոսներն ու հերոսուհիք սուտ երկիւղածութեան դիմակներ հագած՝ դարձել էին մի մի գառնուկ։ Նորելուկ քարոզիչը, աշխարհային ակումբների լեղուագար բարոյախօսը արդէն բարձ ու պատիւ էր ստանում կրթուած հասարակութեան մէջ եւ ապաշխարութիւն քարոզող գոռոզաբան ոճը մի հզօր զէնք էր դառնում իշխանութիւն ձեռք բերելու համար, որ եւ ճարտիկ գործ էր դրվում յօգուտ անձնական շահերի։ Հասարակութիւնը սկսել էր մի առանձին հաճոյք գտնել այդ բոլորովին թատրոնական ապաշաւանքի եւ կեղծ զղջութեան մէջ. ժողովրդի ընտիր մասը գունդագունդ շտապում էր ականջ դնելու ապաշխարութեան քարոզիչներին, ինչպէս որ դիմում են ականատես լինելու մի որ եւ է նոր պիէսայի առաջին ներկայացմանը, եւ հէնց այդ տեսակէտից էլ գնահատում էր քարոզչի

յաջողութիւնը։ Մի եւ նոյն ժամանակ եկեղեցւոյ ներքին գժտութիւններն եւ յարատեւ նենգութիւնները, որոնք հաւասար նիւթվում էին տիրապետող ջիղութիւններից եւ հերձուածող եանսէնիստներից, ազդեցիկ մարդիկներին իրենց կողմը գրաւելու եւ իշխանութեան բազուկը հակառակորդների դէմ զինելու համար,—եւս առաւել նպաստում էին ժողովրդին զբաղուելու եկեղեցական խնդիրներով, եւ այս ընդհանուր յուզմունքը գնալով սաստկանում էր շնորհիւ կղերականութեան հնարագէտ արքանեակների, որոնք գիտութեամբ պղտորում էին հասարակութեան միտքը։ Աշխարհային կարգերը, գրականութիւնն եւ մանաւանդ թատրոնը խստիւ դատապարտվում էին այդ մարդիկներից, իբրեւ եպերելի, վնասակար եւ սնոտի բաներ։ Ողբերգութիւնն իւր բիբլէական նիւթերի շնորհիւ դեռ համբերվում էր. բայց փրկութիւն չկար կատակերգութեան եւ սորա պաշտօնեաների համար։ Մոլիէր արդէն քանիցս անգամ փորձեց իւր վրայ այդ հազիւ ինքն իրեն զսպող մոլեռանդութեան ոյժը, որ միայն մի պատեհ առթի էր սպասում նորա համարձակ լեզուն էլ պապանձեցնելու համար։ Միայն թագաւորի երկիւղն էր, որ դեռ սանձահարում էր կղերականներին. թագաւորի առջեւ նոքա զգոյշ էին, առօրեայ բարոյական խրատների շրջանից դուրս հազիւ էին յանդգնում «ճըշմարտութեան» մի խօսք ասել նորան. այլ սուտը շողոմքի հետ խառնելով, աշխատում էին վարագուրել նորա հեշտասիրութիւնն եւ «երկնից օրհնութիւնը հայցել նորա երկիցս ապօրինի զաւակների համար»։

Այդպիսի մի չարագուշակ զօրութեան եւ դորա ապականիչ ազդեցութեան վրայ խարան դնելն մի կարեւոր հասարակային գործ պիտի համարուէր։ Ախտը հին էր, բազմադարեան. դա արդէն մի ամբողջ պատմութիւն ունէր, եւ հին ժխտողական գրականութեան բազմաթիւ տիպարները ցոյց էին տալիս, որ Ֆրանսիայի մէջ յառաջադէմ մտքերն ամեն ժամանակ պատերազմած էին կղերական ուղղութեան դէմ։ Արդէն «Roman de la Rose»

նշանակում էր ի դէմս Foux-Semblant 'ի կեղծաւորութեան ոգին, որ առաւել սիրում է ապրել սուտ վարդապետների մօտ, որոնք թէեւ հագնում են աբեղայական հանդերձ, բայց չեն զսպում իրենց բարքը»։ Մաթիւռէն Ռէնիէի երգիծաբանութեան մէջ կեղծ բարեպաշտութեան գծերն ստանում են առաւել եւս կոշտ, առաւել պժգալի յատկութիւն եւ կեղծաւորի սովորական տիպն ընդունում է մի նոր երանգ—երգիծաբանը յառաջ է բերում մի խորամանկ եւ ծածկամիտ կին—Տարտիւֆ, որ բարեպաշտութեան հետ գիտէ միաւորել նոյնպէս եւ կաւատի ու փասքուս միջնորդի պաշտօն ցոյ երիտասարդների շրջանում։ Սկարրօնի վէպերից մէկի մէջ դուրս են բերուած երկու խաբեբայ ամուսինք, որոնք չարաճճի նենգութիւններ եւ գողութիւններ անելուց յետոյ սկսում են խաբել միամիտ ժողովրդին եւ օգուտ քաղել նորա տնապաշտութիւնից. ցերեկով նոքա աղօթքներ են երգում, մեղաւորների դէմ շանթեր արձակելով, իսկ գիշերները քէֆ են անում տանը նստած։ Վերջապէս խոպոպական խմբի շնորհիւ շատ ընդունուած էր ֆրանսիական բեմի վրայ Արէտինոյի կոմէդիաներից մին եւ յատկապէս—«l' Hipocrito»-ն, որ պատկերակում էր սուտ բարեպաշտներին յատուկ ընչաքաղցութիւնն եւ չարչիութիւնը եւ մի հարուստ գերդաստան մէջ էր դնում կեղծաւորին, իբրեւ «տան բարեկամ եւ խղճի վերակացու»։ Ուրեմն այդ տիպն արդէն գծագրուած էր եւ մի պատմական անցեալ ունէր. բայց եւ այնպէս անժխտելի է, որ Մոլիէրի նախորդներն այդ տիպի միայն ընդհանուր գծերի վրայ էին կանգ առել եւ դորա իսկական նշանակութիւնը դեռ ոչ ոք չէր ցոյց տուել։ Նիւթն արդէն նոր չէր, բայց միայն Մոլիէրի գրիչը կարացաւ մերկացնել լիովին կղերականութեան կորստաբեր ոյժը, որ հիմնուած էր ամբոխի միամտութեան եւ մտային կուրութեան վրայ։ Արբութեան դիմակ կրող «Տարտիւֆը» ոչ թէ միայն չափազանց վաւաշոտ անձն է, հապա եւ անզուսպ իշխանութեան տենչով վարակուած մի մարդ. նորան անձուկ է թւում իւր թշուառ վիճակը, նա դուրս է ձգդ-

տում այդ վիճակից, անխտիր ամեն միջոց գործ դնելով ստորերկրեայ պատերազմէ վարում ամբողջ հասարակութեան դէմ եւ վերջիվերջոյ մի ահարկու բռնակալ է հանդիսանում դորա գլխին։ Եւ այդ մարդու սոսկալի զօրութիւնը, որ առ ժամանակ աբողուած է խոնարհութեան դիմակով, առաւել ստդու է դառնում այն արտաքին բարեվայելչութեան շնորհիւ, որ փայլում է նորա բոլոր երեւոյթից։ Ֆրանսիական բեմի վրայ մինչեւ այս օրս սովորական ըուտինան աշխատում է պատկերացնել Տարտիւֆին իբրեւ մի զզուելի, ոսկորուտ, վտիտ ու կոպիտ մարդ. մինչդեռ Մոլիէր ի նկատի ունէր շեշտել յատկապէս նորա ձեւերի ողոքիչ փափկութեան, արտաքին պատկերի փաղաքուշ վայելչութեան եւ առ հասարակ նորա բուն մարդկային հրապոյրների վրայ։ Այդպէս լինելով նա առաւել հեշտ կարող էր խաբուսիկ ճառեր մրմնջել Էլվիրային, գիւթել նորան «de l'amour sans scandale et du plaisir sanr peur» ի.—անաղմուկ սիրոյ եւ անվտանգ զուարճութեան հեռապատկերով, համոզել նորան, որ «վերջապէս ինքն էլ հօ մի հրեշտակ չէր», առաջարկել նորան «մի փոքրիկ սակարկութիւն երկնքի հետ» եւ իւր ճգնաւորական ոգեշունչ խարդաւանքներով խսպառ խաբել նորա մարդուն։ Եւ քանի մեղրակաթ լինին նորա ճառերն, այնքան աւելի հզօր կլինի նորա թագնուած զօրութիւնը, սառն հաշուատեսութիւնն եւ վրէժխնդիր չար ոգին։ Թաքթաքուն միջոցներով սուսիկ փուսիկ նա այնպիսի մի ցանց կը հիւսէ իւր զոհերի շուրջը, որ նոքա ամենքն էլ կրխեղդուին դորա մէջ, իսկ ինքն բոլորի վրայ յաղթանակ կանգնելով, էլ ոչ մի իշխանութիւն չի դաւանիլ իրենից վեր։ Ֆրանսիական կղերին ի հնուց յատուկ այդ գիծը այնպիսի մի հոգեբանական ճշտութեամբ է ըմբռնուած, որ միմիայն դորա շնորհիւ արդէն Մոլիէրի «Տարտիւֆն» անհամեմատ բարձր էր կանգնում նորա բոլոր նախորդների փորձերից։

Աւելորդ է բացատրել, որ «Տարտիւֆը» լոյս էր տեսել իբրեւ մի հաւաքական ընաւորութիւն, որի մէջ մարմնա-

ցած էին մի ամբողջ կաստայի յատկութիւններն ու յատկանիշները։ Նորա համար մի առանձին նախանկար, մի ջոկ օրիգինալ ցոյց տալու ջանքերն ապարդիւն եղան մինչեւ այժմ։ Ամենից շատ հաւանական էր համարվում այն կարծիքը, թէ Մոլիէրեան Տարտիւֆի կաղապարը Ռոկէթ եպիսկոպոսն եղած պիտի լինէր, որն որ շատերի վկայութեամբ մի խաւարասէր, երեսպաշտ եւ հոգեկան սեւաթոյր աղտերով լի մարդ էր, բայց 1876 թ. նորա յիշատակը մասամբ իւրք մաքրուեցաւ մի երկհատոր հետազօտութեամբ, որ ճգնում է ապացուցանել, թէ նա իւր նեղսիրտ պաշտօնակիցներից տարբեր եւ մինչեւ անգամ դոցա նախապաշարմունքների դէմ մարտնչող մի ազգասէր եպիսկոպոս էր։ Ակներեւ է՝ որ եպիսկոպոսի դրուատիչը յափշտակուած է ամենայն ինչ յանցաւորութիւն իւր հերոսից ի բաց լուանալու ցանկութեամբ. եթէ եպիսկոպոսը յիրաւի մի անբիծ մարդ եղած լինէր, ոչ կ՚ուզենար կամ կը յաջողէր այն աստիճանի ստորացնել նորան։ Գալով Մոլիէրին, եթէ նա աչքի առջեւ ունենար նշաւակել միայն մի հանրածանօթ մարդու պատկեր,—այն ժամանակ նորա երգիծանութեան բոլոր սրութիւնը մի անհատ անձնաւորութեան կը դիպչէր եւ չէր վառիլ ամբողջ հոգեւորական դասի մոլեգին բարկութիւնը։ Կղերական բանակն իսկոյն ըմբռնեց քաջասիրտ կատակերգուի ձեռքով խայտառակութեան սիւնին կապուած տիպի հաւաքական լինելն եւ շատ լաւ տեսաւ, որ Մոլիէր չէ թէ մի մասնաւոր դէպք էր յառաջ բերում, այլ համարէն հոգեւորականութեան յատուկ աղտերի գիտակցական ընդհանրացումն։ Այդպէս հասկանալով հարուածի իմաստը, վերք ստացողների վրէժն էլ միանգամից կատաղի բնաւորութիւն ընդունեց. նոքա սկսան անմիջապէս փոթորկալի արգելքներ շանթել անդգամ բանաստեղծի դէմ, վար զարնել նորան քարոզների եւ եպերական գրուածքների մէջ, գրգռել նորա դէմ պարլամէնտը, գանգատներ մատուցանել թագաւորին եւ վերջապէս յաջողեցան խափանել տալ պիէսան, որ ամբողջ մի տարի ու կէս ար-

գելքի ենթարկուեցաւ, ի չիք դարձնելով դերասանների բոզոքը, որոնք նորից թոյլատուութիւն ձեռք բերելու համար մինչեւ անգամ մի առանձին դեսպանութիւն առաքեցին այն միջոցին պատերազմի բանակում գտնուող Լիւդովիկոսի մօտ։ *) Լիւդովիկոս խոստացաւ անձամբ աչքէ անցնել պիէսան։

Փարիզից վերադառնալուց յետոյ թագաւորը թոյլատրեց պիէսայի ներկայացումը, բայց, հոգեւորականներին տեղի տալով, պահանջեց, որ Մոլիէր մի քանի փոփոխութիւններ մտցնէ նորա մէջ։ Այդպէս էլ արաւ Մոլիէր, սակայն պիէսայի բուն նշանակութիւնն այդով քնաւ չը թուլացաւ եւ առաջին ամբողջ ներկայացումների տպաւորութիւնը չ'անհետացաւ։ Մոլիէր փոխեց մինչեւ անգամ կոմէդիայի անունը, «Տարտիւֆից»—«Խաբեբայ» դնելով, զեղչեց ամեն բան, ինչ որ շատ որոշ կերպիւ էր ակնարկում հոգեւորականների կենցաղավարութեան վրայ, հանեց Տարտիւֆի վրայից կրօնաւորի վերարկուն, դարձնելով նորան մի աշխարհական շղարշազարդ եւ սուսերակիր բարեպաշտ,—բայց ժողովուրդը հէնց սկզբից վերահաս էր եղած երգիծանութեան իսկական իմաստին եւ բոլոր յաջորդ սերունդներին էլ այդ հայեացքն աւանդեց։ Տարտիւֆը էր եւ կը մնայ միշտ ոչ թէ միայն ջիզուիթներին չարաչար հարուածող մի մտրակ, այլ եւ կենդանի մարմնացումն մի որոշ տիպի՝ որ եղած է ամեն դարերում, ամեն ազգերի մէջ, ուստի եւ ամենքին քաջ ծանօթ է։

Պատերազմը հզօր թշնամիների դէմ եւ հասարակային աղէտների տեսարանից բանաստեղծի մէջ ծագած յուսահատութիւնն եւ յոռետեսութիւնը միանգամայն դառնացրին Մոլիէրի էն էլ թէ չէ անմխիթար հոգին։ Ընտանեկան բախտաւորութեան յետին նշոյլն անգամ կորել էր նորա համար, առանին կեանքն անտանելի էր դարձել։

*) „Շատ հաւանական է, Արքայ, որ ես այլեւս ոչ մի կնատակերգութիւն չեմ գրիլ, եթէ Տարտիւֆները յաղթանակ տանելու լինին", գրում էր Մոլիէր 6 օգոստոսի 1667 թ. Փ. Վ.

նա մերթ բաժանվում էր կնոջից, մերթ բոլորովին հեռանում, մերթ մի ջոկ բնակարան բռնում իւր տան ոտորին յարկում. սակայն ուր էլ գնար—կնոջ կոպիտ հոմանիներին ազազակն ու քրքիջը հանապազ հնչում էին վշտահար ամուսնու ականջին։ Մոլիէր վաղուց հասկացել էր այդ կնոջից խսպառ բաժանուելու անհրաժեշտութիւնը, բայց մի վճռողական քայլ անելու ոյժ չէր զգում իւր մէջ. խաբուսիկ յոյսը, թէ բախտը գուցէ նորից կը վերադառնար, չէր թողնում նորան. այդ յոյսն էր միայն, որ դեռ կապում էր նորան կեանքի հետ. ուստի կարող ենք հեշտ երեւակայել, թէ ի՞նչպէս դժնդակ պիտի թուէր նորան իւր աղնիւ սրտին հասած ամեն մի նոր պատուրանքը . . . . նորա հոգու այդ թախծագին ու մռայլ տրամադրութեան իբրեւ լիակատար արտայայտութիւն յառաջ է գալիս «Միզանթրոպը»—բանաստեղծի ամենահասուն եւ ընդ ամին ամենատուբյէկտիվ երկը եւ—շատերի ասելով—նորա Համլէթը։

«Միզանթրոպի» համար էլ, ինչպէս «Տարտուֆի» համար, Մոլիէր ժառանգում է իւր անթիւ հին եւ նոր նախորդներից մի յաւիտեան ճշմարիտ բնաբան*). այդ բնաբանն է—ամբողջ մարդկային սեռի ատելութիւն, որ ծագում է խորաքնին մարդիկների սրտում առօրեայ բարոյապիտութեան եւ գերագոյն բարոյական օրէնքների մէջ եղած յարատեւ հակասութեան շնորհիւ։ Դեռ Պլատոնից եւ Արիստոտելից**) ճիշտ սահմանուած մարդատեցութիւնը կերպորանվում էր հնութեան ժամանակ Ատենացի Տիմոնի մէջ, որի տարօրինակ ճակատագիրն միշտ

*) „Միզանթրոպի“ այլ և այլ յատկութեանց նկարագիրն արուած է Auguste Vidale 'ի գրքի մէջ—„Des divers caractères du Misanthrope“.

**) Վերջինս Մոլիէրի նման երկու խումբ է բաժանում մարդիկներին. մի խմբի մարդիկն անկախ են և հնարակութեան դէմ հանապազ կռիւ վարող, միւսինը—չափաւոր են և հնարակութեան յարմարուելու, հակամետ

ուսումնասիրութեան նիւթ է եղած անթիւ բանաստեղծների, փիլիսոփաների եւ պատմաբանների համար։ Մարդատեացի տիպն երբեմն երկուքի է բաժանվում, ինչպէս օրինակ, Նէքսպիրի ողբերգութեան մէջ, ուր սնանկութիւնից դառնացած եւ յուսահատած մեծատուն Տիմոնի կրքոտին կանգնած է մաղձոտ եւ արհամարհոտ Ալեմանտը, որ գրեթէ մանկական հասակից սկեպտիկոս էր. մի ուրիշ քերթող էլ, յատկապէս Լիբանոսը, դեռ Մոլիէրից շատ դարեր առաջ փորձում է սիրահարուած, ուրեմն մարդկային կրքերից ոչ ազատ ներկայացնել խստաբարոյ միզանթրոպին։ դարձեալ մի ուրիշը, աշխատում է, Լուկիանի պէս, պատկերացնել Տիմոնի մարդատեցութիւնը իբրեւ հետեւանք բարեկամներից յուսահատուելուն։ Այս տեղ էլ Մոլիէրին էր վիճակուած ի մի հաւաքել այդ տիպի ջոկ ջոկ գծերն եւ ընդհանրացնել ժամանակակից մարդկութեան միզանթրոպիան։ Նա արդէն փաղուց թերթեւ ստուերագրել էր միզանթրոպի բնաւորութիւնը «Don Garcie de Navare»-ի մէջ, եւ այժմ առաւել հիմք ունէր վերադառնալու մի եւ նոյն տիպին։ Նորա Ալչէստն երբէք շոյուած չէ եղել բախտից, նա անհուն ճոխութիւնից յանկարծակի չէ ընկել չքաւորութեան մէջ,—նա միայն մի դատ է կորցրել, եւ նորան մարդատեաց անողն այդ երկրորդական դէպքը չէ, անձնական վիճակի անցաւորութեան այդ միակ փաստը չէ։ Նորա մարդատեցութիւնը մի հզօր եւ ազնիւ հոգու գիտակցական համոզմունք է. այս համոզմունքը ծագել եւ ամրացել է նորա մէջ չէ թէ միայն ընդհանուր մարդկային թերութիւնների տեսարանից, հապա իրեն շրջապատող հասարակութեան սղէտալի վիճակից, որ կատարեալ զառամութեան եւ քայքայման պատկեր էր ներկայացնում։ Նա զայրանում է ամբողջ հասարակային կազմութեան դէմ. արքունիքը, դատարանը, աշխարհիկ բարոյականութիւնը, ոտրկահոգի եւ սուտագորով գրականութիւնը—ամեն բան սնունդ է տալիս նորա բողոքին։ Նորա ձայնի մէջ լսվում են խիստ նոտաներ—վիրաւորուած մարդկային զգացմունք եւ քաղաքացու բարկութիւն։ Ալ-

ցեստի զայրագին ճառերի տպաւորութիւնը սաստկացնելու համար նորա կողքին կանգնած է զգուշամիտ եւ չափաւոր Ֆիլէնտը, որ միշտ գիտէ ընտրել միջին ճանապարհը, որ ոչ այս կողմն է անցնում, ոչ էլ այն կողմը, ասելով—

C'est une folie à nulle autre seconde
De vouloir se mêler de coriger le monde*) . . .

եւ նորա շրթունքով խօսում է աշխարհի սովորական բարոյականութիւնը, որ հեգնութեամբ է վերաբերում չափազանց վառվռուն Ալսէստների պարսաւաղէտ քարոզներին։ Գեղարուեստօրէն նկարագրուած այդ երկու տիպերի մէջ հին եւ նոր գաղափարների հակադրութիւնն է դուրս բերուած։ Խելացի եւ արդարամիտ Էլիանտը չէ կարանում չը խոստովանել (Զորրորդ գործ. 1 տեսարան), որ «Ալսէստի բոլոր հոգին թափանցող անկեղծութեան մէջ մի հերոսական եւ ազնիւ բան կայ», եւ աւելացնում է, թէ «մեր դարում այդ մի հազուագիւտ առաքինութիւն է»։ Այս պատճառով էլ մի դար անցնելուց յետոյ, յեղափոխութեան ժամանակ, «Միզանթրոպը» ամենասիրելի պիէսաներից մին կը դառնայ եւ Կամիլ Դեմուլէն իսկական յեղափոխիչ կ'անուանէ Ալցէստին, իսկ Ֆիլէնտին—ինքնահաւան, կուշտ «Feuillant»։**)

Ալսէստը կարող էր անբնական երեւնալ, եթէ Մոլիէր միայն ազգու քարոզների եւ նեղսիրտ բողոքների մէջ սահմանափակէր նորա դերը։ Սակայն հեղինակը մարմին եւ արիւն է տալիս այդ բնաւորութեան, իւր յատուկ մտքերի թարգման է դնում նորան եւ նմանութիւնը լրացնելու, Ալսէստի դրութեան տրագիզմը սաստկացնելու համար կապում է նորան մի անմիտ սիրով թեթեւամիտ ու

*) Անման յիմարութիւն կլինէր կարծել, թէ մարդս կարող է ուղղել աշխարհը։

**) Ֆեոլլեան կոչվում են Սիստերցիում վանքի (Դիժոնի մօտ) միաբանները։ Փ. Վ.

պչրող Սէլիմենի հետ։ Նորա յաչաղկոտութիւնը, յարատեւ կասկածները, երգիծանքն իւր փուճ ոտքների վրայ, զգաստանալու աղերսներն որ ուղղում է իւր ամուսնին, — այդ բոլորն անմիջապէս տխուր իսկութիւնից առնուած գծեր են։ Ալսէստի, ինչպէս եւ Մոլիէրի համար, միայն մի լուսաւոր կէտ է մնացել կեանքի մէջ—այդ է հաւատն դէպի իւր սիրած կինը, մի անջնջելի հաւատ, որ դիմանում է կնոջից կրած ամեն վշտերին։ Ուրեմն որքան զարհուրելի կլինի նորա վերջնական յուսահատութիւնը. քոյոր կեանքը կը խաւարի նորա համար. նա այլ եւս հնար չի ունենալ մտնելու իրեն ատելի հասարակութեան մէջ, նա կը հեռանայ դորանից եւ առաւել լաւ կը համարէ անապատի մէջ ապրել.

Je vais sortir d'un gouffre ou triophent les vices
Et chercher sur la terre un endroit écarté
Oú d'être homme d'honneur on ait liberté!*)

Եւ նա յուսակտուր դուրս կը փախչի սենեակից, ապշած թողնելով ամենքին։ Ցաջորդ սերունդն ուրախանում էր, որ բեմից հեռացող եւ հասարակութեան հետ կռիւը խզող Միզանթրոպի վերջին խօսքը liberté էր—ազատութիւն։

Մոլիէրի բարոյական տանջանքների վրայ շուտով աւելացան եւ ֆիզիքական ապէտներ։ Նորա կուրծքը կեղեքվում էր անտանելի ցաւերից, եւ իւր վերջին գրուածքների մէջ նա ասես թէ ակամայ մատնացոյց էր լինում դժնդակ հազի վրայ։ Նա ստիպուեցաւ վերջապէս գործ ունենալ իւր կատակաբանութեան ոնոպատ նիւթ տուող բժիշկների հետ եւ իւր յատուկ անձի վրայ փորձել այն շառլատանութիւնն, որ ծաղրել էր երբեմն «Պուրժոնիական», «Ակամայ բժշկի» եւ ուրիշ պիէսների մէջ։ Այդ բժիշկները դարմանում էին նորան նախանոյեան ի մաթի-

*) Կը դուրս գամ այս վէրից, ուր թագաւորում են ախտերը, և կերթամ որոնել երկրի վրայ մի զատ անկիւն, ուր մարդս ազնիւ լինելու ազատութիւն ունենար։

քական միջոցներով, մինչդեռ նորա բոլոր գայութիւնը դարդուած էր, նորա հոգին հիւանդ էր—այդ ցաւի դէմ նոքա գարման չունէին։ Մահուան դաղափարը սկսում էր յաճախ այցելել Մոլիէրին,—եւ ահա նա փորձում է իւր բնական անկեղծութեամբ դարձեալ մի անգամ հրապարակաւ նշանակել ինքն իրեն իւր փոքրոգութեան համար։ Այդպէս է լոյս տեսնում նորա «Երեւակայական հիւանդը»։ Հին բժիշկների կոմիքական տիպն իւր երկար վերարկուով, ահագին գրեխով (հօգնայով) անմարսելի եւ խրթին լատինաբանութեան անվերջ ճարճատմունքով մի պժգալի այլանդակութեան է հասնում այդ պիէսայի մէջ. բժիշկների խումբը մոլեգին ֆանատիկոսների մի վոհմակ է դառնում դորա մէջ—եւ վայ խեղճ սուտ հիւանդին։

Մոլիէր արդէն հոգեւ էր շունչ քաշում իւր վերջին պիէսայի սերտողութեան ժամանակ. բայց այնքան մեծ էր նորա կարեկցական հոգատարութիւնն ընկերակից դերասանների մասին, որ Մոլիէր, առանց ինքն իրեն խնայելու, դարձեալ շարունակում է խաղալ, «որպէս զի իւր ծուլութեամբ մի կտոր հացից չը զրկուէին եւ աղքատութեան մէջ չընկնէին այդ խեղճ մարդիկը», որոնց բոլոր եկամուտը միայն իւր ջանքերից էր կախուած։ Բուալօն շատ աշխատում է բեմից հեռու պահելու յոգնած բանաստեղծին, բայց նա չէ լսում եւ իւր վերջին ոյժերը հաւաքելով, պինդ շպարվում է իւր դէմքի մահանման գունատութիւնը ծածկելու համար եւ գուրս է գալիս հանդիսակութեան առջեւ «Երեւակայական հիւանդի» դերի մէջ։ Հանդիսատեսների ասելով, նա երբէք այնպէս լաւ չէր խաղացած իւր դերը։ Նորա կուրծքից դուրս թռչող հառաչանքները, մերթ ընդ մերթ երեսն ալեծալող ձգձգումներն ընդունվում են իբրեւ վարպետ գերասանի ծաղրական միմոսութիւն։ Բայց ահա պիէսան վերջանալու վրայ է, գալիս է անմիտ ուրախ դոկտորների ինտերմէդիան, երբ որ նոքա իրենց ընկերութեան անդամ պիտի շինեն Արգանին։ Բեմը լցվում է գիտնականների բաղմութեամբ, որոնք քարբարոսական կէս ֆրանսերէն, կէս լատիներէն ոճով արտասանում են նոր-

ընծայ գօկտորի երդման ձեւը. «Juras gardare statutam per Facultatem praescripta cum sensu et jugeamento?» — «Juro» — երդվում եմ, պատասխանում է Մոլիէր բեկբեկ ձայնով, եւ այդ է լինում նորա վերջին խօսքը բեմի վրայ 1673 թ.). Նա մեռնում է 51 տարեկան *): Ինչպէս պատերազմի դաշտի վրայ ընկնող մի զինուոր, Մոլիէր նախանձելի վիճակ ունեցաւ՝ բաժանուելու կեանքից բեմական արուեստի ծառայութեան տմենատաք ոստիներից: Մանուկ հասակից իւր ամբողջ կեանքը նուիրեց նա այդ արուեստին, դորանից զօրութիւն զգեցաւ կեանքի դժուար պատերազմը վարելու համար, դորան ընծայեց իւր նուիրական մտքերն, դորանով մարմին տուաւ իւր սիրած գաղափարներին, դորան բարձրացրեց նա յատնիճան ժողովրդական դատարակի՝— եւ դորան ծառայելով փչեց իւր հոգին, ծափահարուած համակրող բազմութիւնից: Այն օրից ի վեր նորա փառաւոր մահուան յիշատակն արժանապէս տօնվում է Ֆրանսիայի առաջնակարգ թատրոնում, Comédie Française-ում, որ մինչեւ այս օրս պարծանքով Մոլիէրեան տուն է անուանում իրեն—Maison de Molière: Իւրաքանչիւր տարի, փետրվարի 17-ին, որ նորա մահուան տարեդարձն է, բոլոր ներկայացումները լինում են սովորաբար միմիայն նորա պիէսաներից եւ միշտ էլ վերջանում են «Երեւակայական հիւանդի» արժանայիշատակ ինտերմեդիայով **): Բեմի վրայ նորից հանւում են գլխաւոր դերասանները կարմիր վերարկուներով: Բեմի խորքում կանգնած է լինում Մոլիէրի անդրին: Ահա հնչում է երդմնեցնող գօկտորի հանդիսաւոր ձայն: Առաջին անգամ ամենը պատաս-

*) Փարիզի արքեպիսկոպոսն արգելեց քրիստոնէական թաղման ձէս կատարել բանաստեղծի մարմնի վրայ: Պէտք եղաւ թագաւորի միջնորդութիւնը, որպէս զի երկու քահանայ գային մարմնը գերեզման յուղարկաւորելու համար: Փ. Վ.

**) Նոյնը լինում է Փետրուարի 17 ին և բոլոր ֆրանսիական թատրոններում:

խանում են—juro! բայց երկրորդ հարցմունքից յետոյ—էլ պատասխան չկայ. բոլոր ժողովուրդը հանգիստ վեր է կենում տեղերից եւ դերասանների հետ միասին աղաղակում է «կեցցէ՞ Մոլիէր»։ Այդ բոպէին մի օր Մոլիէր ինքն էր պատասխան տալիս. նորա թանգագին ստուերի ներկայութիւնը կարծես թէ ամենքն էլ զգում են յուզուած որտով.*)։

Եւ այդ աւանդական հանդէսը, որ կնքվում է կիսարձանի վրայ դաքնի պսակներ դնելով, մի արտաքին թատրոնական ցոյց չէ։ Դա շոշափելի կերպիւ շարունակ յիշեցնում է յետագայ ֆրանսիական սերնդին այն ճշմարիտ միտքը, թէ ժողովրդին սիրելի հին երգիծաբանն անբաժան է նորանից, թէ ինչպէս էլ մեծ լինէին ազգի նորագոյն յաղթանակները մտային ասպարէզի վրայ, երախտագիտութեան պարտքը պահանջում է ցոյց տալ դոցա յաջորդական կապն այն բոլորի հետ, ինչ որ սիրում եւ ինչ բանի համար որ մարտնչում էր երբեմն Մոլիէր—ազգի ժրաջան գանձարակն եւ նորա հարազատ որդին։

Թարգ. Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ։

---

*) Քանի որ Մոլիէր կենդանի էր, ֆրանսիական Ակադէմիան իւր պատուից ստոր համարեց կաճառակից ընդունել նորան, որովհետև նա եկեղեցուց բանադրուած մի դերասան էր և շատ ազատամիտ բանաստեղծ։ Սակայն այժմ Ակադէմիայի սրահը զարդարվում է Մոլիէրի մի շքեղ արձանով, որի տակ գրուած է ոսկետառ. «Rien ne manque à sa gloire il manquait â la nôtre»—«ոչինչ չէ պակասում նորա փառքին, նա էր պակասում մերինին»։ Ֆրանսիական ազգն էլ իւր կողմից մի փառաւոր արձան կանգնեց իւր պատիւ բանաստեղծի. 1. 1843 թ. Ռիշելիո փողոցում, այն տան հանդէպ, ուր որ նա մեռել էր։ Փ. Վ.։

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶՆԵՐԸ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ*)

Հազիւ տասներկու կամ տասնեւհինգ տարի կայ որ Մանկական պարտէզների սկիզբը դրուեցաւ Ամերիկայի Միացեալ նահանգներում: Այս օգտակար գործի սկզբնապատճառն եղան մի քանի խելացի ու վեհանձն կանայք, որոնք Ֆրէբէլի կրթական եղանակի գործադրութեան փորձերը տեսել էին Եւրոպայում, եւ նորա բանաստեղծական գեղեցկութեամբ հրապուրուած՝ մտքերը դրին նոյն կըրթութեան սկզբունքներին ու միջոցները ծանօթացնել իրանց հայրենակիցներին այն եռանդով ու տոկունութեամբ որ գիտե ներշնչել մանուկների սիրը:

Առաջին փորձերն անողներն եղան Բոստոնում օրիորդ Պիբոդի եւ իւր քոյրը տիկին Հորաս Ման. այս տիկինները իրանց գրուածներով եւ կենդանի խօսքով զօրաւոր կերպով նպաստեցին Ֆրէբէլի գաղափարները տարածելուն[1]:

Տիկին Հորաս Մանը մասնաւորապէս կատարեալ անձնուիրութեան օրինակը տուեց, կամենալով գործնականը տեսականի հետ միացնել, եւ նա անձամբ մի քանի տարի շարունակ կառավարեց մի մանկական պարտէզ, ուր գործ էր դնում Ֆրէբէլի եղանակը իւր բոլոր խստութեամբ: Եւ յիրաւի այդ ամենաշնորհի կրթութիւն էր եւ ամենահաստատուն միջոց մի նպաստաւոր կարծիք ստեղծելու հասարակութեան մէջ յօգուտ նորածին գործի:

---

*) Այս յօդուածը քաղուած է մի տեղեկագրից որ անցեալ տարի մատուցուեցաւ Ֆրանսիայի Հասարակաց կրթութեան նախարարին:

1). Օրիորդ Պիբոդիի առաջին յօդուածները 1867-ի կամ 1868 ի թուականն են կրում. իսկ 1873-ին նա հիմնեց մի օրագիր, Համբաւաբեր մանկական պարտէզների, որի նպատակն էր Ֆրէբէլի կրթութեան եղանակը կանոնաւոր քննութեան ենթարկել:

Արդէն 1870 ին Բոստոնում կար մի Ուսուցչական դպրոց իւր օրինակելի Մանկական պարտէզներովը, տիկին Կրիգէի և իւր զոտեր վարչութեան ներքոյ, որոնք աշակերտել էին տիկին Մարէն-Հոլցին:

Մանկական պարտեզների յաջողութեանը մի նոր գրաւական եղաւ օրիորդ Բեյտեի Նիւ-Յորկ գալը: Այս անձը, որ Ֆրեբելի այրիի մօտ աշակերտել էր, յիշեալ քաղաքում հիմնեց մի ռուսուցչական դպրոց եւ մի մանկական պարտեզ դաստիարակների կրթութեան համար, եւ նա պատրաստեց մօտ 300 ռուսուցչուհի, որոնք այսօր ցրուած են Ամերիկայի բոլոր նահանգներում: Օրիորդ Բեյտեն, այսօր տիկին Կրաւս, մեծ օգնութիւն գտաւ իւր ամուսնու կողմից, եւ նոցա հաստատութիւնը ամենայառաջադիմներից մէկն է իւր տեսակի մէջ*)

Այնուհետեւ նորանով մանկական պարտէզներ հիմնուեցան Ֆիլադելֆիայում, Վաշինգտոնում եւ ուրիշ քաղաքներում, իւրաքանչիւրը իւր ռուսուցչանոցով, ուր Ֆրեբելի կրթութեան եղանակը մէկ կողմից աւանդվում եւ միւս կողմից գործ էր դրվում, եւ նորա բոլորը ամերիկական հասարակութիւնների կողմից խրախոյս եւ պաշտպանութիւն գտան: Եթէ մի երկիւղալի բան կայ, այն է որ այս հաստատութիւնների մէջ ընդունուած երեխաների թիւում հարուստ ծնողաց քիչ շատ փչացած զաւակներ լինելով, գուցէ ստիպուած զրնուեն այս վերջիներին մի քանի զիջողութիւններ անել, որոնք կարողեն վնասել մարքուրեան միութեանը եւ վատ օրինակ դառնալ ռուսուցչուհի—աշակերտուհիների համար:

Այս առաջին շրջանից եւ յատկապէս 1876-ի հարիւրամեակից յետոյ, մի ընդհանուր շարժում երեւեցաւ յօգուտ մանկական պարտէզների, որ տարեց տարի զօրացաւ, եւ այս հաստատութիւնների թիւը աճելով աճեցաւ. այնպէս որ 1880-ին արդէն Միացեալ-Նահանգներն ունեին 232 մանկական պարտեզներ, 8,871 երեխաներով եւ 524 ռուսուցչուհիներով:

Որքան մանկական պարտէզների թիւը աւելանում էր, այնքան աւելի յաւ պատրաստուած վերատեսչուհիների կարիքը զգալի էր լինում, եւ այս պակասը լրացնելու համար եթէ ոչ բուն ռուսուցչական դպրոցներ, գոնեա մասնագիտական դասընթացներ բացուեցան ամէն տեղ: Օրիորդ Բոպս. Բոստոնի մի մանկական պարտէզի վե-

---

*). *Այս հաստատութիւնը ունի 50 երեխայ 4 ից մինչև 9 տարեկան հասակում և բաժանուած է վեց դասարանների, որոնց կառավարում են ութը ուսուցիչներ: Ընթերցանութիւնը սկսվում է 7 տարեկան հասակից,—թէև իրաքանչիւր աշակերտի համար 500 ֆրանկ վճար է առնվում տասն ամսուայ համար, բայց և այնպէս դժուար կը լինէր այնքան ուսուցիչներ պահել, եթէ տիկին Կրաւսը իւր պատրաստած աշակերտներին չպարապեցներ Մանկական պարտիզում:*

ատեսչությունին, տիկին Պոդնամ Չիկագոյում, օրիորդ Բլոմ Սեն-Լուիում այս նպատակով մասնաւոր դասընթացներ հիմնեցին, եւ այսօր Միացեալ Նահանգների բոլոր քաղաքներում գտնվում են կանայք, որոնք մի միայն մանուկների օգուտները աչքի առաջ ունենալով անընդհատաբար նոյն դերը կատարում են:

Ամենից առելի հետաքրքրութեան եւ ուշադրութեան արժանի են Բոստոնի եւ Սեն-Լուիի մանկական պարտեզները թէ իրանց կազմակերպութեամբ եւ թէ վարչական միօրինակութեամբ: Նոցա թիւը եւ հիմնարկութեան պատմութիւնը մի զարմանալի օրինակ են ներկայացնում այն անխոնջ գործունեութեան, որ Միացեալ Նահանգների բնակիչները ցոյց են տալիս ընդհանրապես ամեն պարագաներում: Այսպէս, Բոստոնը ունի երեսուն մանկական պարտէզ, որ հիմնել է եւ կառավարում է հրջակաւոր Ազասիս պրոֆեսորի դուստրը, տիկին Պոլին Շօլ. բոլորը միասին պարունակում են 1,800 երեխայ 2-ից մինչեւ 5 եւ 6 տարեկան հասակում: Նոցա վարչութիւնը կանոնաւոր կազմակերպութիւն ունի. 17 առանձին յօդուածներից բաղկացած կանոնադրութիւնը [1]) ցոյց է տալիս այս հաստատութիւնների դիտաւորութիւններն ու նպատակը, եւ այդ կանոնադրութեան գործադրութիւնը յանձնուած է մի տեսչուհու հսկողութեանը, որի միջնորդութեամբ հիմնադիրը ծանօթանում է բոլոր ցանկութիւնների ու պէտքերին:

Այս հաստատութիւնների նիւթական վիճակը շատ գոհացուցիչ է թէ բնակարանների [2]) եւ թէ կահ կարասիների կողմից, որոնք ընդհանրապես բաղկացած են Ֆրէբելի սիստեմի գործադրութեան համար անհրաժեշտ իրերից, որպիսի են տեղափոխուող թիկնաթոռներ, քառակուսի սեղաններ, բարձ գրատախտակներ՝ դանիլների անկիւններում դրուած, Ֆրէբելեան պարզեւներ, ամերիկայական դասերի համար հարկաւոր եղած պատկերներն եւ իրեր, զանազան տեսակ խաղալիկներ, տիկիններ, եւ այլն: նոյնպէս եւ սեղաններ, ամաններ,

---

1). Առաջին յօդուածը իբրև սկզբունք յայտարարում է թէ 25 երեխայից աւելի չպիտի յանձնուի մի ուսուցչուհու հսկողութեան՝ թէ առաւելագոյն աղքատ ծնողաց զաւակները պիտի ընդունուին ուսումնարանում: Մարմնական պատիժները խստիւ արգելուած են:

2). Այնտեղ ուր հասարակաց ուսումնարանները աւելորդ սենեակներ ունէին, տիկին Շօվը իրաւունք ստացաւ իւր մանկական պարտէզները հաստատելու: Այս տեսակ ծաղկոցների թիւը 17 է. մնացած 13-ը առանձին բնակարաններում են գտնվում և բոլոր յարմարութիւններն ունին:

բաժակներ եւ անձեռոցներ երեխաների նախաճաշիկի համար [1]), Տեղ տեղ կայ եւ մի դաշնակ, որ գործ է դրվում երեխաների երգեցողութեան եւ մանկական ժամանակ:

Պարապմունքը սկսում է առաւօտեան ժամը 9-ին եւ կիսօրին վերջանում. ամեն մի վարժութիւն, որոնցից ընթերցանութիւնը բոլորովին արտաքսուած է հինգից մինչեւ ութը տարեկան: Այս վարժութիւնները բաղկանում են թեթեւ դասերից մանուկներին ցոյց տրուած իրերի վրայ, եւ նոցա նպատակը սը այնքան կրթելն է, որքան երեխաներին տպաւորութիւններ տալ եւ նոցա հետաքրքրութիւնը շարժել: Փոքրիկ եւ եթէ հերիւրի է այսպէս ասել, չ ինչ բաներ են այդ վարժութիւնները, որոնց բոլոր կարեւորութիւնը, նայելով երեխաների մատաղ հասակին, կայանում է իրանց պարզութեան մէջ:

Սակայն այս թեթեւ դասաւանդութեան մէջ ամենայն ինչ մի որոշ դիտաւորութիւն եւ մի դրական նպատակ ունի, այն է զարգացնել մանկան մէջ նկատողական ոգի, եւ հետեւապէս վարժեցնել նորան անձամբ խորհելու, համեմատելու եւ դատելու իր սահմանափակ շրջանի մէջ: Երեխան չէ սովորում կարդալ. բայց նա սովորում է խօսել; եւ մինչ մեկ կողմից իր փոքրիկ բառարանը հետզհետէ հարստանում է, միւս կողմից պահանջվում է նորանից որ իր մտքերը կանոնաւոր կերպով բացատրէ:

Առանձին ուշադրութեան արժանի է այն ազդեցութիւնը, որ ունին նկարչութեան վարժութիւնները թարեւտախտակի վրայ: Փոքրիկ շինութիւնները պինդ ճիւթերի օգնութեամբ, գոյների յարմարաւոր դասաւորութիւնը, թղթի կտորներից գործուած եւ հիւսուած իրեղէնների մէջ: Մանուկներն շատ շուտով ստանում են ձեռքի մեծ հարպիկութիւն եւ ճիշտ հայեացք այս բոլոր մանր աշխատութիւնները կատարելու, որոնք կարգի ու համաչափութեան հետ ստեղծողական կարողութիւն են զարգացնում նոցա մէջ: Բայց այս վարժութիւնները չպէտք է մինչեւ չափազանցութեան հասցնել [2]):

---

1). *Հետաքրքիր է այս նախաճաշիկներին ներկայ լինել. 2-ից մինչև 5 տարեկան փոքրիկ երեխաներ այնպիսի խնամքով, կարգով ու մաքրութեամբ են կերակրվում, որ կարող է շուայլութիւն համարուել։ Իբրև սկզբունք ընդունուած է որ 2 տարեկան երեխաներն անգամ առանց ուրիշների օգնութեանը ման գան և ուտեն։*

2). *Այս նկատողութեան առիթ տուած է մի իրողութիւն, որին ականատես եղած են մի մանկական պարտիզում, ուր 4 տարեկան մանուկներ կար են կարում, տիկինների հագուստներ շի-*

Մանկական պարտեզների ուսուցչուհիները վեհանձն հիմնադրի գաղափարներով ներշնչուելով եւ նորա օրինակին հետեւելով, ամենամեծ անձնուիրութեամբ կատարում են իրանց պարտականութիւնը՝ շարունակ ուսանելով [1]) եւ իրանց ուսածը խելացի կերպով գործ դնելով: Թէ եւ օրը միայն երեք ժամ են պարապում մանուկների հետ, բայց այս համեմատաբար կարճ ժամանակամիջոցում նոցա միտքը այնքան յարուցած է եւ այնքան աշխարհութիւն է պահանջվում նոցանից, որ նորա չեին կարող երկար ժամանակ դիմանալ, եթէ օրական պարապմունքը աւելի լիներ [2]):

Տիկին Շովի հոգատարութիւնը տարածվում է մինչեւ իսկ իր խնամքին յանձնուած մանուկների գերդաստանների վրայ. ուսուցչուհիների վրայ պարտք է դրուած այցելել նոցա եւ տեղեկութիւններ հաւաքել նոցա վիճակի ու կարօտութիւնների վրայ:

Այս բոլոր պարտաւորութիւններից դուրս ուսուցչուհիները ստիպուած են կանոնաւորապես ներկայ գտնուիլ զանազան դասախօսութիւնների, որոնց նպատակն է կրթութեան խնդիրները քննութեան ենթարկել եւ յուսաբանել:

Այսպէսով այս տիկինները ամբողջապէս դաստիարակութեան գործին նուիրուած լինելով, հասկանալի է որ նոցա վարձատրութիւնն էլ ըստ այնմ բաւական գոհացուցիչ պիտի լինի. իւրաքանչիւր ուսուցչուհի իր աշխատութեան փոխարէն ստանում է 600-ից մինչեւ 700 դոլլար, այն է 3,000 մինչեւ 3,5000 ֆրանկ: Բացի երեսուն մանկական պարտեզներից, տիկին Շով հիմնել է ինը պատրաստական, որոնք նոյն կարգապահութեամբ եւ իմաստութեամբ են կառավարվում, եւ պարունակում են 400 երեխաներ:

նում երբեմն նաեւ կարկատաններ են անում։ Փոքրիկ մանուկների այս ճարպիկութիւնը կարող է ապշեցնել, բայց լաւ հետեւանքներ չի ունենալ, որովհետեւ այդ մատաղ հասակում նոցա գործարանները այնքան դիւրաթեք ու քնքոյշ են, որ նոքա մեծ ջանք պիտի անեն մատնոցն ու ասեղը բռնելու։ Եւ այս իհարկէ վտանգաւոր է։ Թէեւ աշխատանքը շատ կարճատեւ էլ լինի։

1). Ուսուցչուհիների պատրաստութեան համար յատկացած դպրոցը ամէն տարի բաց է լինում նոյեմբերի ամսից մինչեւ մարտ ամիսը։

2). Ցոգնելու գլխաւոր պատճառներից մէկն էլ այն է, որ մանկական պարտէզներում զանազան ազգութիւնների պատկանող երեխայք կան, որոնց պէտք է անգլիերէն լեզուն ուսուցանել։

Այս երկու հիմնարկութիւնների պահանջած տարեկան ծախքը, ինչ պէս ասում են, 500,000 Ֆրանկի է հասնում, եւ այս գումարը մեծ չէ, եթէ աչքի առաջ ունենանք նոցա կազմակերպութիւնը բոլոր մանրամասնութիւններով:

Բոստոնում ուրիշ տասներկու մանկական դպրոցներ էլ կան հարուստ դասի մանուկների համար, եւ երկու կամ երեք աղքատների համար, որ այլ եւ այլ մարդասէր անձինք են հիմնել:

Չնայելով այսքան զոհողութիւնների, մանկական դպրոցների թիւը չէ համապատասխանում հասարակութեան պահանջներին: Բայց նոցա մատուցած ծառայութիւնները այնքան ակներեւ են եւ այնպէս լաւ գնահատուած հասարակութիւնից, որ այս հաստատութեան բարեկամները ամենեւին չեն կասկածում թէ վաղ կամ ուշ Բոստոնի Դպրոցական Վարչութիւնը կը ստիպուի մանկական դպրոցների թիւը ժողովրդի պիտոյքների համեմատ աւելացնել, եւ նոցա եւ ուրիշ ռուսումնարանների մէջ գործ դրուած տարբեր, երբեմն նոյնիսկ հակասական դասաւանդութեան եղանակի մէջ մի ընդհանուր կապ դնել:

Սէն-Լուիում գործը աւելի առաջ գնացած է, այնտեղ մանկական պարտէզները կանոնաւորապէս կապուած են հասարակաց ուսումնարանների հետ, որոնց առաջին աստիճանն են կազմում, եւ իբրեւ քաղաքային հաստատութիւններ՝ քաղաքի ծախքովն են պահւում:

Այս գործի յաջողութեան պատիւը վերաբերում է ամբողջապէս օրիորդ Բլօվին, որի գործունութեան պարագաները որքան հետաքրքրաշարժ նոյնքան խրատական են: 1873-ին Եւրոպայում ճանապարհորդելուց յետոյ, այս խելացի, ջերմ երեւակայութեան, կրթեալ ու մշակեալ մտքի տէր երիտասարդ անձը, որ մի նշանաւոր եւ հարուստ գերդաստանի է պատկանում, եւ որ այն ժամանակ 22 կամ 23 տարեկանից աւելի չէր, իւր ծախքով հիմնեց առաջին մանկական պարտէզը, եւ անձամբ կառավարեց նորան:

Շուտով այս նորութիւնը գրաւեց հետաքրքիր անձանց ուշադրութիւնը, որոնք սկզբում կասկածական աչքով էին նայում օրիորդ Բլօվի ձեռնարկութեան վրայ: բազմաթիւ երիտասարդ աղջիկներ եւ բարեկամուհիներ խմբուեցան եռանդուն օրիորդի շուրջը եւ Ֆրէբէլի փիլիսոփայութեան ամենաջերմ հետեւողներն եղան: Իւր հիմնադրի անձնական բարեմասնութիւնների շնորհիւ Սէն-Լուիի առաջին մանկական պարտէզը հենց սկզբից մի ռուսուցչական դպրոցի կարեւորութիւնը ստացաւ, ուր օրիորդ Բլօվը նոր գաղափարի տարածման համար իւր նմանութեամբ պատրաստեց զանազան հարուստ եւ աղքատ կանայք, որոնց նա հրապուրում էր իւր կենդանի ու համոզիչ լեզուով եւ իւր պերճ ռուսուցմամբ, եւ որոնք նոր վարդապետութեան ճշմարիտ առաքեալները դարձան:

Այսպէսով օրիորդ Բլօվի իմաստուն ջանքերը, այն զարմանալի եւ երբէ կարելի է այսպէս ասել՝ մագնիսական ազդեցութիւնը, որ նա գործում էր իւր նետզնետ աճող ունկնդիրների վրայ, կարճ միջոցում հասարակաց ուշադրութիւնը իւր վրայ դարձրին, եւ նա յաջողեցաւ վերջապէս մի ընդհանուր համակրութիւն յարուցանել յօգուտ մանկական պարտէզների: Շարժման գլուխը կանգնեցաւ մի խելացի եւ հեռատես դաստիարակ, պ. վերաստեռչ Հարրիսը, որ արժանապէս գնահատեց օրիորդ Բլօվի բարեմասնութիւնները, եւ հասկացաւ թէ ինչ օգուտ կարելի է քաղել փոքրիկ մանուկների դաստիարակութեան մէջ նորա բացառիկ ընդունակութիւններից:

Այնուհետեւ գործի յաջողութիւնը ապահովված էր:

Նոր ձեռնարկութիւնը, որի կազմակերպութիւնը օրիորդ Բլօվին յանձնուեցաւ, արագ արագ զարգացաւ եւ ցանկալի արդիւնքը տուեց: Այսօր Սեն-Լուիի մանկական պարտէզների թիւը 64-ի է հասնում. նոցա մէջ հաւաքուած 3,759 երեխաներ *) 300 ուսուցչուհիներով, որոնցից 129 հոգի ինքնայօժար կերպով նուիրում են իրանց ժամերը մանուկների կրթութեանը, առանց վարձատրութիւն ստանալու: Երբէք օրիորդ Բլօվը չէր կարող կարծել, որ իւր սիրած ու զգուած գաղափարը այդպէս արագ եւ արդիւնաւէտ կերպով պիտի իրականանայ:

Իւր գլխաւոր նպատակին հասնելուց յետոյ, այս անխոնջ անձը նորանոր պարտաւորութիւններ յանձն առաւ, եւ այն այնպիսի եռանդով որ տասնապատկեց իւր ոյժերն ու գործունեութիւնը: Իւր վրայ առնելով ուսումնարանների մանկավարժական եւ գործնական կազմակերպութիւնը, միանգամայն ընդհանուր հսկողութիւնը եւ ուսուցչուհիների պատրաստութիւնը, նա ամէն բանի հասաւ եւ իւր լաւ վարչութեամբ գործի ապագան ապահովեց: Այս գործը այսօր ամենամեծ յառաջադիմութեան հասած է:

Սեն-Լուիի մանկական պարտէզները, որոնք ընդհանրապէս ուսումնարանների շինութիւնների մէջ են տեղաւորվում, ամենայարմար նիւթական պայմանների մէջ են գտնվում. ընդարձակ դահլիճներ են յատկացած նոցա համար, որոնք լաւ լուսաւորուած են եւ լաւ օդ ունին: Այդ դահլիճները միջին թուով 90-ից մինչեւ 110 երեխայ են

*) Այս 3,759 երեխաները չհաշվում են միայն մանկական պարտէզները: Բայց կան ուրիշ 4,069 մանուկներ, որոնք բացի առաւօտեան պարապմունքից մանկական պարտէզներում, կէսօրից յետոյ կրթութիւն են ստանում տարրական ուսումնարաններում, որով մանկական պարտէզներում ընդունուած երեխաների թիւը իսկապէս 7,828-ի է հասնում:

ընդունում, որովհետեւ հարկ է եղել զիջողութիւններ անել եւ փոքրը ինչ շեղուիլ Ֆրէբէլի սիստեմի սկզբունքներից, որ պահանջում է քիչ մանուկներ նստեցնել մի սենեկում: Սակայն իբրեւ կանոն ընդունուած է որ իւրաքանչիւր ուսուցչուհի իւր օգնականով 25 կամ շատ շատ 30 աշակերտից աւելի չունենայ իւր տեսչութեան ներքոյ:

Երեխաները ընդունվում են 4 տարեկան հասակից եւ մնում են մինչեւ 7 տարեկան հասակները*):

Կան կարասիքը բաղկացած է նոյն իրեղէններից ինչպես եւ Բոստոնում եւ վարժութիւնները, զոնեա ըստ երեւութին, շատ չեն տարբերվում այն վարժութիւններից որ գործ են դրվում յիշեալ քաղաքում: Բայց օրիորդ Բլօվը, որ Ֆրէբէլի կրթութեան եղանակը իրան յատուկ կերպով բացատրեց, այնպիսի կենդանութիւն, հետաքրքրութիւն ու զարժում մտցրեց նոյն եղանակի մէջ, որ ուրիշ ոչ մի տեղ չէ կարելի տեսնել եւ որոնք իւր մանկական պարտէզներին ինքնուրոյն եւ յատուկ կերպարանք են տալիս:

Զանազան թերեւ ու զուարճալի պարապմունքներ են տալիս երեխաներին, որոնք նպաստում են նոցա զգայարանքները զարգացնելու. նոքա տեսակ տեսակ բաներ են շինում թղթից՝ ծալելով, գործելով կամ ճիւսելով, նոյնպես եւ կաղապարելով կամ պարզապես թղթի վրայ նկարելով: Այս պարապմունքները աստիճանաբար են գնում՝ հեշտից դժուար եւ պարզից աւելի բարդ զբաղմունքների անցնելով, որով եւ կրթական ընտիր միջոցներ են:

Հետաքրքիր է տեսնել օրիորդ Բլօվի սանիկներին իրանց պարապմունքի ժամանակ: Տեղաւորուելով վեց սեղանների շուրջը իրանց հասակի, ոյժի, զարգացման եւ պարապմունքների համեմատ՝ նոքա այնպիսի սիրով, ուշադրութեամբ եւ լաւ բան դուրս բերելու ցանկութեամբ են աշխատում, որ պարզ երեւում է թէ ինչ մեծ զուարճութիւն են զտնում այդ վարժութիւնների մէջ**): Բայց միեւնոյն ժամանակ նոքա սովորում են կարգ ու կանոն պահել, իրանց արածի վրայ խորհել եւ իրանց միտքը մի բանի վրայ կենդրոնացնել, եւ այս գեղեցիկ սովորութիւնները անտարակոյս մեծ ազդեցութիւն կ'ունենան նոցա յետագայ զբաղմունքների, հետեւապես նաեւ նոցա ապագայի վրայ:

---

*) *Բայց օրիորդ Բլօվը, որ մեծ վստահութիւն ունի իւր գործի օգտակարութեան վրայ, կամենում է ուսումնարանը մանկական պարտէզների հետ ձուլել, և առաջին յառաջադիմութիւնը որին նա ձգտում է, գոնէ առ այժմ մանուկներին իւր հաստատութեան մէջ պահելն է մինչև 9 տարեկան հասակները։*

**) *Այս վարժութիւնները կէս ժամ են տևում։*

Պարապմունքների արդիւնքը ամէն ակնկալութիւնից վեր է, եւ այս հասկանալի է, քանի որ, ինչպէս ասացինք, իբրեւ սկզբունք ընդունուած է երեխաներին միշտ ծանօթից դէպի անծանօթը եւ հեշտից դէպի դժուարը առաջնորդել: Աշխատութեան պարզութիւնը թեթեւացնում է գործը, եւ յաջողութիւնը քաջալերում է մանուկներին. այստեղ է յառաջադիմութեան բոլոր գաղտնիքը:

Առանձին զուարճութիւն են զգում երեխաները զանազան իրեր կաղապարել: Նոցա սովորեցնում են նախ երկրաչափական ձեւեր վերարտադրել, յետոյ այնպիսի առարկաներ որոնց նիստը խորանարդ է. ատիճանաբար եւ նոր ջանքեր անելով, բայց առանց յոգնելու, այնքան այդ ջանքերը անզգալի են, նոքա յաջողում են աւելի բարդ բաներ շինելու, այնպիսի բաներ, որոնց պարզ ձեւերին նախապէս ծանօթացած են:

Նոյն եղանակը միեւնոյն յաջողութեամբ գործ է դրվում նկարչութեան եւ ուրիշ պարապմունքների մէջ:

Երեխաների աշխատութիւնները զարդարում են դահլիճի պատերը, եւ այնպէս են դասաւորուած որ կարելի լինի նոցա արած յառաջադիմութիւնը տեսնել:

Մարմնամարզական վարժութիւնները, որոնք շատ յանախ են գործ դրվում, կարծես ոչ այնքան առողջապահական նպատակ ունին, որքան երեխաներին լաւ կայնուածք եւ շնորհալի ձեւեր տալու դիտաւորութիւն, թէ եւ մանուկների առողջութիւնն էլ շահվում է նոցանից: Այս վարժութիւնների կից երգերը մի տեսակ կենդանի մնջախաղ (միմիկա) են կազմում, որ երգուած բառերի հետ կապ ունի: Ուսուցչուհիները կատարում են նախ այդ բոլոր վարժութիւնները, եւ երեխաները նոցա դիտաւորութիւնները ըմբռնելով՝ անմիջապէս հետեւում են նոցա մնջախաղին այնպիսի զուարճութեամբ, որ կարծես թէ թատրոնումն են գտնվում: Ընդհանրապէս երգեցողութիւնը եւ մարմնամարզութիւնը որ անբաժան է առաջինից, ինչպէս եւ խաղերը, մեծ տեղ են բռնում օրիորդ Բլովի կրթական միջոցների մէջ:

Առարկայական դասերը, ինչպէս եւ եւրոպական նմանօրինակ հաստատութիւնների մէջ, ծառայում են իբրեւ գլխաւոր միջոց երեխաներին իրանց լեզուի եւ արտաքին աշխարհի հետ ծանօթացնելու: Այս դասերը շատ աւելի լաւ են մատակարարվում քան սովորական ուսումնարաններում: Այս մասին օրիորդ Բլովը մի կարգ սահմանեց, որ որքան նոր՝ նոյնքան օգտակար է: Դպրոցական տարուայ վերջին նա հաւաքել է տպիս այն բոլոր առարկաները, որոնք անհրաժեշտ են համարվում առարկայական դասերը մանուկներին հասկանալի ու հետաքրքրական անելու: Այս իրերի մէջ մտնում են եւ երեխաների սեպհական աշխատութիւնները, որոնք ցոյց են տալիս

նոցա տարուայ ընթացքում արած յառաջադիմութիւնը: Ամեն ինչ վերցվում է, դանլիճի պատերը մերկանում, պահարանները դատարկվում են, պետք է նորից սկսել:

Այս հանգամանքը փոխանակ վնաստեցնելու մի զարմանալի յորդոր ու եռանդ է տալիս երեխաներին իրանց կատարած գործը նորից սկսելու: Նորա ձեռք են զարկում աշխատութեան, վերստին պատրաստում են հաւաքածուները, եւ ամեն մէկը ստիպուած է իւր կարողութեան համեմատ նպաստել դանլիճը զարդարելուն, որի վրայ մանուկները նայում են եբրեւ իրանց սեպհականութեան վրայ: Նոյն իսկ սեւամորթ երեխաները աշխատում են իրանց դանլիճը զարդարել, եւ նորա նոյնքան անձնասիրութիւն են ցոյց տալիս այս գործում որքան եւ սպիտակները:

Մի մանկական պարտեզ փոքրիկ սեւերի համար իբրեւ փորձ հիմնուեցաւ Սեն-Լուիում, որպես զի կարելի լինի դատել թէ ինչ ազդեցութիւն կարող է ունենալ կրթութիւնը ստրուկ ծնողներից ծնած երեխաների վրայ:

Այս գործին նուիրուած երիտասարդ սպիտակ ռուսուցչուհին վկայում է թէ այս կարգի մանուկները միւսներից շատ ստոր են. նորա վայրենի են, զայրացկոտ, ենթարկուած իրանց բնազդումներին, կրքոտ իրանց ցանկութիւնների մէջ, եւ ամենեւին չեն կարող իրանց անձի վրայ իշխել: Միով բանիւ, նորա կարծիքով այդ երխաները դեռ եւս ծնուած չեն բարոյական կեանքի համար, եւ ըստ այնմ էլ պէտք է վարուիլ նոցա հետ: Երիտասարդ դաստիարակի ասածների ճշմարտութիւնը ստուգելու համար, բաւական է այս երեխաների զբօսանքներին ներկայ լինել. նոցա անտեղի ջարդութիւնները, անմիտ շարժումները, աղմկալի վեճերը չնչին բաների համար, եւ նոցա անզուսպ խաղասիրութիւնը մի ծիծաղաշարժ միանգամայն եւ անակնկալ տեսարան են ներկայացնում:

Սորա էլ հաւաքածուներ են կազմում առարկայական դասերի համար. մէկը մի մեխ է բերում, միւսը ապակիի կտորներ, երրորդը մի պատկեր, մի բամբակենու ծաղիկ, եւ այլն: Ռուսուցչուհին այս բոլոր առարկաները խնամքով ամրացնում է մի տախտակի վրայ, եւ բոլոր փոքրիկ սեւերը հիանում են իրանց բերած պարգեւների վրայ եւ զանազան նկատողութիւններ են անում, որոնցից երեւում է թէ իրանք իրանցից շատ գոհ են:

Սեն-Լուիում, ինչպես Բոստոնում եւ ընդհանրապես Միացեալ Նահանգների բոլոր քաղաքներում, մանկական պարտեզների մէջ օրը մի անգամ են միայն պարապում, կէսօրից առաջ, 9 ժամից մինչեւ 12 ժամը: Սակայն վարժութիւնների յաջորդութիւնը, նոցա պեսպիսութիւնը, երեխաների ուշադրութիւնը գրաւելու եւ նոցա հետաքրքրութիւնը պահպանելու համար շարունակ գործ դրուած ջան-

քը, երգերը եւ անընդհատ շարժումները,—այս բոլորը քիչ չի յոգնեցնում դաստիարակներին, որոնք իրանց ոյժերը կազդուրելու պիտին ունին օրուան մնացած մասում:

Բայց օրիորդ Բլօվը իւր բոլոր օգնականներին ներշնչել է այն սրբազան հուրը, որով ինքը ոգեւորուած է. նորա կարծես չեն զգում թէ յոգնած են, այնքան միտքը ի՛նչխում է մարմնի վրայ, եւ միայն մի հոգեբանական երեւոյթ կարող է բացատրել նոցա ցոյց տուած գործունեութիւնը:

Բացի իրանց ամենօրեայ ծանր պարտաւորութիւնից, նորա շարունակում են իրանց ընտրած ու սիրած առարկայով պարապել, ներկայ գտնուելով այն տասն եւ վեց դասախօսութիւններից մեկին կամ միւսին որ շաբաթուան ընթացքում հրապարակաւ առանցվում են, եւ որոնք հետզհետէ սահմանուել են ուսուցչուհիների կրթութեան պակասը լրացնելու համար: Այս մի տեսակ փոխադարձ ուսումնասիրութիւն է, որին օրիորդ Բլօվի ներշնչմամբ իւրաքանչիւրը նպաստում է: Անմ այսպէս հիմնադրի առաջին աշակերտուհիները, որոնց նա պատրաստեց սորանից տասը տարի առաջ եւ որոնք այսօր նորա անձնուէր օգնականներն են, փոփոխակի երեւում են ուսուցչական ամբիոնի վրայ, որտեղից ուսուցանում են նորեկներին, եւ աշակերտական նստարանների վրայ, ուր իրանք բարձրագոյն կրթութիւն են ստանում: Նորա զբաղվում են կրթութեան բարձր խնդիրներով, գրականութեամբ եւ փիլիսոփայութեամբ նոյն իսկ օրիորդ Բլօվի ներկայութեանը: Ուսուցչապետի առաջնորդութեամբ վիճաբանութիւններ են արծարծվում դասախօսուած գիտութիւնների վրայ. այս վիճաբանութիւնների մէջ, որոնց ամենքը մասնակից են լինում, քննվում եւ լուսաբանվում են զանազան մութ ու անհասկանալի խնդիրներ, որոնց մասին որոշ եզրակացութիւնների են հասնում:*)

---

*) Եթէ փոքր ինչ երկար խօսուեցաւ օրիորդ Բլօվի անձնաւորութեան վրայ, այդ նորա համար էր որ ցոյց տրուի թէ լուսաւորեալ երկրում ինչ մեծ մասնակցութիւն կարող է ունենալ հասարակային գործերում մի անձ որ ամբողջապէս նուիրուած է ընդհանրութեան օգտին:

Ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրում ենք մի միջադէպի վրայ էլ, որ շատ հետաքրքրական է: Պատահեցաւ որ օրիորդ Բլօվը բաւական երկար ժամանակ բացակայ գտնուեցաւ իւր ծննդեան քաղաքից: Երբ յետ դարձաւ, իւր մանկական պարտէզները խանդարուած վիճակի մէջ գտաւ շնորհիւ այն փոփոխութիւնների, որ քաղաքական ազդեցութիւնների պատճառով եղել էին վարչական անձանց և ուսուցչական խմբի մէջ: Հակառակորդները շտապեցան Ֆրէբէլի սիստէմին վերագրել այն ինչ որ դաստիարակների անփորձութիւնից էր առաջ գալիս: Բայց օրիորդ Բլօվը ամէն բան ի մօտոյ քննելուց յետոյ Դպրոցական վարչութիւնից պահանջեց որ յիսուն

Բոստոնի եւ Սեն-Լուիի փորձերը մեծ ադմուկ հանեցին եւ իրանց հետեւողներն ունեցան. ինչ որ երկու առաստաձեռն, խելացի ու բարեսիրտ կանայք յաջողեցան անել իրանց ծննդեան քաղաքում, նոյնը ուրիշները փորձում են անել երկրի զանազան տեղերում եւ այն ոչ առանց յաջողութեան*)

Բազմաթիւ քաղաքներում, Սան-Ֆրանցիսկոում, Միլվանկեում, Նիւ-Եորքում **) եւ այլն, մասնաւոր անձինք, առանձին եկեղեցիներ, կանանց մասնաժողովներ***), Ժուժկալութեան ընկերութիւններ մանկական պարտէզներ են հիմնում, եւ ջնայելով ոմանց հակառակութեանը Ֆրեբելի կրթական եղանակի դեմ եւ այլոց յարուցած կասկածներին նորա գործադրութիւնը ընդհանրացնելու հնարաւորութեան մասին, սկսուած գործը հետզհետէ զարգանում է:

Սակայն որքան եւ մեծ յոյսեր խոստանայ այս գեղեցիկ շարժումը, չի կարելի ուրանալ որ մասնաւոր անձանց շնորհիւ հիմնուած հաստատութիւնները, որքան եւ բազմաթիւ լինին, անկարող են եւ երկար ժամանակ, եթէ ոչ միշտ, անկարող կը լինին ժողովրդի բոլոր սիտոյքներին լրումն տալու: Եւ յիրաւի, ինչ են 50 միլիոն բնակիչ ունեցող երկրի համար այն 232 մանկական պարտէզները, որոնք պարունակում են ընդամենը 8,871 երեխայ: Ենթադրելով թէ առա-

---

անարժան ուսուցչուհիներ անմիջապէս պաշտօնից արձակուին. նորա առաջարկութիւնը կատարուեցաւ, եւ այնուհետեւ ամէն բան առաջուան պէս կարգին գնաց։

) Շատ անգամ դիմումներ օրիորդ Բլօվի փորձառութեանը, որի համբաւը հեռաւոր տեղեր է տարածուել։ Խորհուրդ են հարցնում նորան, զանազան նահանգներից աշակերտներ են ուղարկում պատրաստելու, և դեռ նորերումս Տորոնտո քաղաքը հրաւիրեց նորան գալ մի նոր մանկական պարտէզի կազմակերպութեանը առաջնորդելու։

**) *Միացեալ Նահանգների ֆրանսիական ընկերութիւնների յանձնաժողովը, մարդասիրական զգացմամբ ներշնչուած, 1881 ին մի պատսպարան հիմնեց Նիւ-Եորքում աշխատաւոր գերդաստաններին օգնութիւն հասնելու և Ֆրանսիական լեզուի գործածութիւնը պահպանելու նպատակով։ Ֆրանսիական գաղթականութեան բոլոր անդամները մասնակից եղան այս հաստատութեան ծախքին, որի մէջ հարիւր երեխայ պատսպարվում, կերակրվում ու կրթվում են, և ուր պահում են նոցա առաւօտից մինչև երեկոյ։ Տարեկան ծախքը հասնում է 3,400 դոլլարի կամ 17,000 ֆրանկի։ Հաստատութիւնը կատարելապէս ծառայում է իւր նպատակին, և շուտով բացուելու է նորա մի նոր ճիւղը։*

***) *Ցինցինատում երեք մանկական պարտէզ հիմնուեցաւ աղքատ երեխաների համար և կառավարվում են մի առանձին յանձնաժողովով, որի անդամները կանայք են։ Նոցա տարեկան ծախքը 15,000 ֆրանկ է։ Երեխաները ձրի են ուսում առնում։*

տաձեռնուրիւնը անսպառ լինի, եւ նա միշտ անսպառ է Միացեալ Նահանգներում, մանաւանդ երբ խօսքը կրթութեան վրայ է, կարելի է գուշակել որ մանկական պարտէզների այժմեան թիւը տասը տարում կը կրկնապատկուի, եւ թէ հետզհետէ նոցա թիւը նոյն համեմատութեամբ կաւելանայ: Այս ի հարկէ մեծ բան է իբրեւ արդիւնք համակրական շարժման յօգուտ մանուկների, բայց եւ այնպէս ընդհանուր դրութիւնը շատ չի փոխուիլ եւ պէտքերը համարեա նոյնը կը մնան:

Պէտք է խոստովանել որ Միացեալ Նահանգներում հասարակ ժողովրդի որդոց կրթութեան մէջ մի զգալի պակաս կայ որ բղխում է դպրոցական կազմակերպութեան թերութիւնից: Երեխաները սկսում են ուսումնարան գնալ միայն 5 կամ 6 տարեկան հասակից, եւ ծնողները մեծ մասամբ օրական աշխատանքով զբաղուած լինելով՝ նոցա որդիքը հսկողութիւնից եւ առաջնորդութիւնից զուրկ են մնում եւ ամէն տեսակ փողոցային վտանգների ու վնասակար ազդեցութիւնների են մատնվում իրանց կեանքի առաջին շրջանում, որ գուցէ ամենակարեւորն է, այն շրջանում երբ նոքա պէտք է լաւ սովորութիւններ ընդունին մտքի կրթութիւնից առաջ*):

Այս խնդիրը, որ ամենայն իրաւամբ դաստիարակների ծանր հոգածութիւնների առարկայ է եղած, միայն այն ժամանակ կարող է վերջնականապէս լուծուիլ, երբ Նահանգները իրանց վրայ առնեն երեխաների սկզբնական կրթութեան բեռը, հոգը եւ պատասխանատուութիւնը: Ինչ որ կարելի լինի անել այս ընդհանուր միջոցից դուրս, նոյն իսկ առանձին անհատների ամենամեծ ջանքերը, իբրեւ մի մասնաւոր արժէք ունեցող բան պիտի նկատուի: Այս բանը շատ լաւ են ըմբռնում Ամերիկացիք եւ շատ լուրջ մտքեր արդէն զբաղուած են մի գոհացուցիչ ելք գտնելու ձեռնհաս անձինք, որոնց հեղինակութիւնը կրթական խնդիրների մէջ հանրածանօթ է, ուսումնասիրում եւ համեմատում են օտար երկրների այլ եւ այլ դպրոցական կազմակերպութիւնները, աշխատելով գտնել մի միջոց որով կարելի լինի թէ ծնողաց եւ թէ երեխաների շահերը պաշտպանել:

Միւս կողմից, ամէն տեսակ կարծիքներ են յայտնվում Ֆրէբելի կրթական սիստէմի վրայ. ոմանք ընկերական նկատումների վրայ յենլով՝ հակառակ են այդ սիստէմի տարածմանը**): ուրիշ-

*) *Ցաւալի է որ մանկական պարտէզները չեն կարող լիովին այս մեծ անկարմարութիւնների առաջն առնել՝ ըստ որում երեխաները օրը միայն երեք ժամ են անցկացնում այս հաստատութիւնների մէջ:*

**) *Մշակների դասի համար՝ ուր այնքան բարոյական և ֆիզիկական թշուառութիւններ կան՝ մանկական պարտէզը մի ճշմա-*

ները նպաստաւոր կերպով են խօսում նորա վրայ: Իրարու հակառակ գործողութիւններ էլ են տեսնվում. այստեղ մանկական պարտէզը իբրեւ փոքր միացնում են դասամնարանի հետ. իսկ որ որ փորձը արդեն եղած է, հրաժարվում են նորանից իբրեւ շատ դժուար իրագործելի: Այսպէս անա Բոստոն քաղաքը 1870-ին մի մանկական պարտէզ բանալուց յետոյ՝ 1879-ին փակեց նորան, չնայելով այն նպաստաւոր կարծիքին որ դասամնարանների վերատեսուչը յայտնել էր այս հաստատութեան մասին 1876-ին*):

Վերջապէս մի քանի Դպրոցական վարչութիւններ, իբրեւ հասարակաց կարծիքի թարգմանիներ, իրանց տարեկան տեղեկագրի մէջ ցանկութիւն են յայտնում, որ մանկական պարտէզները հասա-

---

րիտ բարիք է: Բայց կասկածելի է որ Փրեբելը այն գաղափարն ունեցած լինի, թէ մայրերը օտարներին պիտի յանձնեն իրանց մատաղ զաւակների կրթելու հոգը, և զարգացնելու այն կարողութիւնները որ նոքա ծնելիս իրանց հետ բերում են: Ահա մի խնդիր որ լուրջ խորհրդածութեան արժանի է: Ի՞նչ ազդեցութիւն կ'ունենայ ընտանիքի վրայ եթէ երեխան խլուի նորանից, և եթէ նա իւր ամենամեծ երջանկութիւնը ուսումնարանում պիտի գտնէ: Արդեօք գերդաստանական կապերը, որոնք արդէն այնպէս սաստիկ թուլացած են մեր քաղաքակրթութեամբ, բոլորովին չե՞ն խորտակուիլ:

«Շատ խոչընդոտներ արդելք են լինում կրթութեան այս եղանակը մեր ուսումնարաններում մտցնելու. 1) ծախքը, 2) երեխաների սահմանափակ թիւը մի ուսուցչուհու համար: Սկզբնական կրթութիւնը միայն 9 դոլլար (45 ֆրանկ) արժէ իւրաքանչիւր երեխայի համար: այս չափաւոր վարձը բացատրվում է աշակերտների մեծ քանակութեամբ և ուսուցչուհիների ստացած փոքր ոռճկով: Իրերի այս դրութեան մէջ մանկական պարտէզը սովորական կրթութիւնից ոչինչ առաւելութիւն չունի, որովհետև նա հակառակ է շատ աշակերտներ միասին պահելու սովորութեանը ուստի և այս սիստէմը հաստատելու համար պէտք կը լիներ 50-ից մինչև 70 դոլլար (225-350 ֆրանկ) վարձ նշանակել իւրաքանչիւր աշակերտի համար: Եէ՛որ Մանկական պարտէզների Ադաջնորդն էլ ասում է. «Պարզ է որ մանկական պարտէզի մատակարարած կրթութիւնը ածան չէ նստում»: Եւ փոքր ինչ յետոյ աւելացնում է: «Մի կասկած կայ մեր դաստիարակների մէջ. արդեօք Գերմանական ծանր բնաւորութեան համար ստեղծուած կրթական դրութիւնը կարող է յարմարուիլ ամերիկական երեխաների դիւրագրգիռ բնաւորութեանը: («Փիլադելֆիայի Տեղեկագիր» 1882):

) Նա ասում էր իւր տեղեկագրի մէջ. «Մեր ունեցած միակ մանկական պարտէզը 25 երեխայ է ընդունում 3-ից 7 տարեկան հասակում և բոլորն էլ հարուստ ընտանիքներից: Այս հաստատութիւնը, որ հիմնուեցաւ 1870-ին, շարունակ յառաջադիմել է, և այսօր օրինակելի ուսումնարան է համարվում: Քաղաքի բաղմամարդ թաղերում մանկական պարտէզները մեծամեծ ծառայու-

ռակային կրթութեան սիստեմի մէջ ընդունուին եւ նորա առաջին աստիճանը կազմեն*)։

Բայց այստեղ դրամական մեծ դժուարութիւններ են առաջ գալիս, եւ երկիւղ կայ որ՝ չնայելով ամերիկական ժողովրդի հարստութեանը եւ առատաձեռնութեանը, Նահանգների կառաւարութիւնները չկարողանան պէտք եղած հարկերը սահմանել մանկական պարտէզների ծախքերը հոգալու այն չափով որ նոցա այժմեան կազմակերպութիւնը պահանջում է։ Ընդունելով որ ժողովրդի տասներկուերորդ մասը բաղկանում է 2-ից մինչեւ 5 տարեկան երեխաներից, մենք կունենանք 4,180,000 երեխաների անագին թիւը, որոնց համար հարկաւոր կը լիներ 41,800 դինարիոն ունենալ միւս ուսումնարան-

---

թիւններ կը մատուցանէին ծնողներին, որոնք այնքան զբաղուած են իրանց օրական աշխատանքով, որոնք չեն կարող հարկաւոր խնամքը տանել իրանց զաւակների վրայ։

«Մենք ունինք շինութիւններ որոնք կարող էին յատկացուիլ մանկական պարտէզներին, բայց քաղաքային խորհուրդը դեռ չէ համաձայնել այս հիմնարկութիւնների հաստատութեան համար պէտք եղած գումարը տալ, վախենալով որ մի գուցէ չափազանց մեծ ծախքեր հարկաւոր լինի անել, քանի որ յայտնի է թէ մի ուսուցչուհի 25 աշակերտից աւելի չէ կարող կառավարել։ Բայց իմ կարծիքով այս թիւը կարելի էր աւելացնել, և այսպէսով ծախքի մասին եղած առարկութիւնը մինչև մի աստիճան կը ոչնչանար»։

Մանուկների օգնութեան ընկերութեան (Children's Aid Society) *վերջին տարեկան տեղեկագրի մէջ հետևեալ եզրակացութիւնն ենք կարդում մանկական պարտէզների մասին. «Ընկերութիւնը հիմնեց երեք պատսպարան, երեք մանկական պարտէզ. թէև փորձը ցոյց տուեց թէ Ֆրէբելի եղանակը ինչպէս լաւ է պատրաստում մանուկներին գիտութեան զանազան ճիւղերի ուսումնասիրութեան համար սովորական ուսումնարանների մէջ, սակայն նոցա պահանջած ծախքերը այնքան մեծ են, որ ընկերութիւնը միջոց չի ունենալ, եթէ մասնաւոր անձինք օգնութիւն չհասնեն նորան»։*

*) *Որպէս զի կարելի լինի Ֆրէբելի կրթական եղանակի ազդեցութիւնը գնահատել սովորական ուսումնարանի վերաբերութեամբ, պէտք է անշուշտ հետևել մանուկներին իրանց ուսման մէջ։ Կան շատ դաստիարակներ որոնք կասկածում են թէ այդ ազդեցութիւնը օգտակար լինի. բայց այդ դեռ ոչինչ չէ ապացուցանում, քանի որ յիշեալ կրթութեան միջոցների արժէքը գլխաւորապէս նոցա գործածութիւնից կախուած է։ Ուրիշ դաստիարակներ, որոնք Ֆրէբելի ոգին լաւ են ըմբռնել, պնդում են ընդհակառակն թէ մեծ մանկավարժի սիստեմը անհերքելի արդիւնքներ է տալիս մանուկների յետագայ կրթութեան համար։ Բայց ինչ կ'ուզէ լինի, ամերիկական սիստեմը մի մեծ անյարմարութիւն ունի, այն է որ երեխաներին միայն երեք ժամեն պահում մանկական պարտէզում։*

ներին կից եւ 170,000 ուսուցչուհի, բոլոր օգնական վարժուհիները*):

Արդ ինչպես պիտի հոգացուին այսպիսի պիտոյքները: Ոչ ոք չգիտե: Մեր սովորական տեսակետից նայելով խնդրի վրայ՝ դժուարութիւնները անյաղթելի են երեւում եւ սակայն մարդիկ վստահութիւնները չեն կորցնում: Երբ խնդիրը մեծամեծ շահերի վրայ է, Ամերիկացիք գիտեն այնպիսի զոհողութիւններ անել, որոնցով ուրիշ տեղ անկարելի համարուած բանը հեշտութեամբ գլուխ է բերվում: Այս զարմանալի ազգի մէջ, որին ոչ աւանդութիւնները, ոչ անցեալի հետ կապերը չեն կանգնեցնում իւր յառաջադիմութեան ճանապարհի վրայ, եւ ուր օգտակար համարուած գաղափարները այնպիսի արագութեամբ մտնում են իրական կեանքի մէջ, բան չկայ որ կարողանայ երկար ժամանակ անհնար համարուիլ:

Սակայն եթէ այս ակնկալութեան հակառակ մանուկների պաշտպանութեան գործը իբրեւ մի մասնաւոր եւ անհատական գործ մնալու էլ լինի, դարձեալ նա բաւական է ամերիկական կանանց փառքը ապահովելու, որոնք այս գեղեցիկ հաստատութեան հիմը դրին եւ ամենայն անձնազոհութեամբ աշխատում են նորա զարգացման համար:

Ս. ՊԱԼԱՍԱՆԵԱՆ:

---

*) *Հաշուելով 100 երեխայ մի մանկական պարտէզի համար և 25 մի ուսուցչուհու համար։*

ԿՆՈՋ ԿՈՉՈՒՄԸ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

(Լ.—էդ. Բէ—ինէրէ)

(Նուէր մեծ. Տիկին Նուռնէ Խոսրովեանին)

Ա.

ԻՆՉՊԷՍ ՏՂԱՅՈՑ, ՆՈՅՆՊԷՍ ԵՒ ՕՐԻՈՐԴՆԵՐԻՆ ՀԱՐԿԱՒՈՐ Է ՀԻՄՆԱՒՈՐ, ՆՊԱՏԱԿԱՅԱՐՄԱՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ:

Կինը իւր բնութեան եւ էսթէտիքական կոչման համեմատ չի կարող գիտութեան մէջ մարդուն հաւասար մասնակցութիւն ունենալ. բայց կնոջը՝—մարդու պէս մատչելի է գիտութեամբ ձեռն բերուած ճշմարտութիւնը։

Հելլեր։

Կնոջ հոգեւոր ընդունակութիւնները բոլորը միասին եւ իւրաքանչիւրն առանձին վերցրած՝ այնպէս հակիրճ կերպով են տարբերվում տղամարդու հոգեւոր բնութիւնից, որ այս տարբերութիւնը վերացնելու եւ կանանց մարդոց հաւասար, միատեսակ պարապմունքներ տալու բոլոր փորձերն ու ջանքերը ապարդիւն եղան։ Բայց եւ այնպէս այժմս ոչ մի խելացի կին չի համաձայնիլ Ժ. Ժ. Ռուսսոյի այս կարծիքին թէ. «Je ne refuse pas á une femme, mais aux femmes les facultés de l'homme» *): *Մեր սեռին յատուկ կնոջ գոր-*

---

* «Ես չեմ հերքում մի որ և է կնոջ ունեցած մարդկային կատարելութիւնները (ընդունակութիւնները)։ բայց բոլոր կանանց՝—անկասկած»։ Ժ. Ժ. Ռուսսո։

ծունէութեան շրջանը իւր որոշ սահմաններն ունի, բայց և այնպէս նա մարդու գործունէութեան շրջանից պակաս ընդարձակ չէ։ Կինը զուր կը ջանար խլելու մարդուց իրեն յատուկ ասպարիզում տիրապետելու իրաւունքը. և մարդն էլ անկարող է հետևելու կնոջը նորան պատկանելի իդէալական աշխարհը։

Ամենին իրենը։ Կինը և մարդը հաւասար իրաւունք ունին. նոքա միակերպ ընդունակ են իւրեանց ոյժերը զարգացնելու, և կասկած չը կայ որ այն հեղինակը *), որի երևակայութեան մէջ ծնունդ առաւ Իւլիայի պատկերը, մի կնոջ՝ որ զարդարուած էր զգացմունքի և բանականութեան բոլոր ձիրքերով, իւր գրուածքով ուզեց ցոյց տալ ոչ թէ կնոջ ստորադրուած լինելը մարդուն, այլ նոցա բարոյական տարբերութիւնը։

Այն կարծիքը, որ յաճախ լսվում է կանանց բերանից, իբր թէ իրենք մարդոց հետ համեմատելով ստոր արարածներ են համարվում, թէ և իրական երևոյթների վրայ է հիմնուած, բայց և այնպէս այդ փաստերը սեռերի զանազանակերպութիւնից են յառաջանում, և բացատրվում են միայն կնոջ պակասաւոր, թերի դաստիարակութեամբ։ Կնոջ դաստիարակութեան որոշ յատկութիւնը, իբրև կեանքի համար պատրաստելու միջոցի,—սխալ հայեացք ունենալուցն է յառաջանում. բացի սորանից կարծում են, որ հոգու աստիճանաբար ու հիմնական զարգացումը միայն մարդուն է յատուկ։ Եռանդուն գործունէութեան, բարեխղճութեան և պարտականութեանց սրբութեամբ կատարելու պակասութիւնը, որ յաճախ ցոյց են տալիս կանայք, ամենևին չի հիմնվում նոցա մտաւոր ընդունակութեանց թուլութեան, կամ թէ իրենց յատուկ փոփոխամտութեան վրայ. այլ աւելի այն խորին համոզմունքի բացակայութեան, թէ իրենց վիճակուած է կեանքի մէջ որոշ կոչումն և որ նոցա երջանկութիւնն ու բարօրութիւնը կախուած է նորանից, թէ ինչպէս են այդ կոչումը կատարում։

*) Շէքսպիր. «Ռոմէո և Ջուլիէտտա»։

Բնաւորութեան ընտիր յատկութիւններն անհրաժեշտ է արմատացնել ինչպէս մարդու, նոյնպէս և կնոջ մէջ։ վասն զի հասարակական և ընտանեկան բարօրութիւնը երկու սեռի փոխադարձ համերաշխութեան վրայ է հիմնուած։ Ընտանեկան և հասարակական կենցաղավարութիւնը նոյնքան են պահանջում կնոջից, որքան պետական և քաղաքական հանգամանքները մարդուց. և միայն այսպիսի հայեացք ունենալով կնոջ բնութեան վրայ, կարելի է նորա անկախ և լիակատար զարգացմանը նպաստել։

Բայց կարող է արդեօք այս հայեացքն արմատանալ այն հասարակութեան մէջ, ուր մարդուն ասում են։ «Դու պէտք է աշխատես, կաշուցդ դուրս գաս, ճդտես, ճանաչես կեանքի ողջ էութիւնն ու նշանակութիւնը»։ իսկ կնոջն ասում են։ «Դու ստեղծուած ես քնքոյշ արարած լինելու, բանաստեղծական և թոյլ զգացումներով, դատարկ բաներով պարապելու, զուգուես, զարդարուես, մայրենի լեզուդ թողած, ֆրանսերէն լեզուով կոտրտես...։ «մի խօսքով, նորա դլխին կարդում են մեր հաճոյամոլ մայրերի ու վարժուհիների նորաձև իմաստակութեան բոլոր խրատները։ Այս ուղղութիւնը ոչ միայն հասարակութեան բարձր շրջաններումն է տիրապետում, այլ մինչև անգամ ողջ միջին դասակարգը սնուած է այս ճիւաղական անուշահոտ խրատներով և միայն չնչին բացառութիւն են կազմում այն մայրերը, որոնք գիտակցաբար նուիրվում են իրենց վսեմ կոչմանը և իրենց յանձն առած պարտաւորութիւնները սրբութեամբ կատարում, որով նոքա պատսպարվում են ժամանակակից նախապաշարմունքներից։

Տգիտութեան ու կոպիտ կոչտացած բարուց ժամանակներն, այս դիպուածում, բոլորովին հակապատկեր են ներկայացնում։ Սպարտացիք ստիպում էին օրիորդներին տղայոց հաւասար զինուորական կրթութեամբ և մարմնամարզական խաղերով պարապելու, որպէս զի ուժեղ և առողջ մայրերի սերունդ պատրաստեն. և այս լիովին համապատասխանում էր ազգի ոգուն, որ անընդհատ պատերազմների էր ենթարկուած և որ սովորել էր մարմնական ոյժն ու զօրութիւնը

ամեն բանից վեր դասել։ Մարմնու հետ ի միասին զարգանում էր կնոջ մէջ նա և բանականութեան ոյժը, ոչ թէ սրտի, այլ խոհեմութեան անվեհերութիւնը. այնպիսի ընտիր յատկութիւններ՝ որոնք նոցա պատուաւոր տեղ տուին պատմութեան մէջ։

Ներկայումս մենք չենք ցանկանում այդ խիստ, միակողմանի առաքինութիւններին դառնալ. մենք աւելի ենք ուզում. ներդաշնակութիւն ենք որոնում ոյժի և քնքշութեան, հոգու և մարմնու մէջ. միայն այնպիսի արարածներին մատչելի ներդաշնակութիւն, որոնք լի են զօրութեամբ և կենսական թարմութեամբ։ Բայց այդպիսի արարածների զարգացումը միայն այնպիսի նախագծուած լուրջ դաստիարակութեամբ կարելի է ձեռք բերել, որպիսին արդէն մարդոցն է տրվում։

Կանանց մեծագոյն մասը չի սիրում և չի ճանաչում իւր բարձր կոչումը այն պատճառով միայն, որ այդ կոչումը շատ սակաւ է ըստ արժանւոյն լուսաբանվում։ Անշնորհք և անընդունակ լինելով գործելու, նոքա ամեն բանի վրայ թեթև աչքով են նայում։ Նոցա տկար տեսութիւնից ծածկուած է այն սրբութեան փայլը, որով պսակվում է պարտաւորութեան ճիշտ կատարելը։ Այն ինչ մարդը մեծ մասամբ դեռ մատաղ հասակից արդէն գիտէ, որ ինքը պարտաւոր է որոշ կոչումն կատարելու. իսկ այն պատանիները, որոնք իւրեանց հասարակական դիրքով ազատ են այդպիսի պարտաւորութիւնից, սովորաբար թեթևամիտ արարածներ են լինում, և կանանց նման անգործութեան մատնուած, թոյլ կեանք են անցուցանում։ Այս ապացոյց է, որ կոչման ու գործունէութեան գիտակցաբար ճանաչելը մարդու և կնոջ մէջ միահաւասար հարկաւոր աշխոյժ ու անկախութիւն է զարթեցնում։ Եւ արդեօք ուրիշ ինչ աւելի յարմար կոչումն վայել է կնոջ, քան ընտանեկան պարտաւորութեանց սրբութեամբ կատարելը, բառիս բուն նշանակութեամբ. ինչ առաւել լաւ կոչումն վայել է նորան, քան մօր և դաստիարակչուհու սրբազան կոչումը։

Բայց ինչպէս ծաղիկը միայն իրան յատուկ հողի վրայ

է իւր լիակատար զարգացմանն հասնում, այնպէս էլ օրիորդին տուած նպատակայարմար կրթութիւնը կարևոր հողը պիտի նախապատրաստէր, որի վրայ կարողանար զարգանալ կանացիութեան իսկական ծաղիկը։ Զուր կ՚որոնէին նորան թեթեւամիտ վարդապետութեան անհիմն աւազի վրայ. ինչպէս մարդու, նոյնպէս և կնոջ դաստիարակութիւնը մի հիմնաքար պիտի ունենայ. այն է՝ «պարտաւորութեան խստութեան և կարևորութեան գիտակցութիւնը»։ Կնոջ ճշմարիտ և լիակատար կրթութիւնը շատ դժուար գործ է. և իրօք շատ ուշ են սկսում այդ կրթութիւնը և շատ վաղ ընդհատում։ Այդ պատճառաւ էլ զարմանալու չէ, որ աշխարհ են գալիս բազմաթիւ տհաս արարածներ, որոնք ոչ մի բանում օգտակար չեն կարող լինել։ Նոցա խորթ է թէ հողևոր և թէ ընտանեկան աշխարհը, այն ինչ, սոյն երկու շրջանների միութեան մէջ է կայանում կնոջ կոչման բաղմակողմանի զարգանալու հնարաւորութիւնը։

Սակայն բարոյական առաքինութեանց զարգացումը առանց մտաւոր կրթութեան անկարելի է. և թէպէտ ներկայումս շատ բան են ուսուցանում օրիորդներին, այնու ամենայնիւ նոցա ուսումը շատ թերի և պակասաւոր է, որովհետև այդ ուսուցումը կատարվում է ընդհատումներով և առանց խիստ յաջորդականութեան։

Մեզանում, Գերմանիայում, օրիորդները առաջ տարրական դպրոց են գնում, ապա մտնում են միջնակարգ դպրոց կամ մասնաւոր դասեր են առնում, և 15—16 տարեկան հասակում նոցա դաստիարակութիւնը հէնց այն ժամանակն է աւարտվում, երբ խելքը դեռ միայն նոր է հասունանում և ուսումն առաւել գրաւիչ է դառնում։ Բաւական էր մի քանի աննշան տարիներ, որ այս տհաս ուղեղները նախկին տգիտութեան մէջ ընկնէին և այնուհետև նոցանից շատերը հազիւ կարող են յարմար առիթ գտնելով, կորցրածը վերադարձնելու։ Եւ տղայոց ամենագլխաւոր գերազանցութիւնն օրիորդներից նորանումն է կայանում, որ առաջինները մինչև երիտասարդական հասակը հսկողութեան տակ են մնում և հաստատուն կարգապահութեան ենթարկվում։ Հէնց սո-

բանում, և ոչ թէ երևակայած բարձր ձիրքերումն է կայանում կրթութեան ասպարիզում նոցա ցոյց տուած աւելի մեծ ընդունակութիւնը։ Ինչպէս դասական և բէալական դպրոցները տղայոց տալիս են ընդհանուր կրթութիւն, ուսումնական ասպարիզում կամ գործնական կեանքում գործելու, հէնց դոյնպիսի հիմնարկութիւններ էլ հարկաւոր է օրիորդների համար հաստատել, ուր նոքա մինչև 18 տարեկան հասակը յաջորդաբար և անընդհատ մտաւոր կրթութիւն ստանային, որը նոցա իրաւունք կը տար իրօք կրթուած համարվելու։—Կանոնաւոր ուսուցման համար նշանակուած մինչև այդ ժամանակամիջոցը կնոջ խելքը կարող էր թէ ցանկալի ուղղութիւնն ստանալ, և թէ անկախ զարգացման ընդունակ դառնալ. սակայն այդ ուսուցումը չը պէտք է օրուայ բոլոր ժամերը իլէ, այլ պէտք է նոյնպէս միջոց տրուի և տնտեսական պարապմունքներին, չը վնասէ մարմնոյ զարգացմանը և չափազանց չը լարէ ոգեկան զօրութիւնները։ Ներկայումս մենք չենք կարող երևակայել մի կին, բառիս բուն նշանակութեամբ, առանց մտաւոր կրթութեան, որ նորա միակ պատուարն է իւր սեռի թուլութիւնների դէմ,—որը իւր անգործութեամբ արտաքին պչրանքին անձնատուր եղած, պարզ ապացուցանում չը լինէր, թէ իւր համար դեռ ևս ճշմարիտ կրթութիւն չը կայ։ Ի՞նչ օգուտ կարելի է ստանալ այս մանուկներից, որոնք դպրոցից շտապում են կեանքի ասպարէզը մտնելու, գիտակցաբար չը նախապատրաստվելով մինչև անդամ ոչ վսեմ կոչումն, և ոչ զօրեղ, որոշ ձգտումն։ Նոցանից շատ քիչն են երբեմն օրինաւոր մայր և խոհեմ կին դառնում։ Պարահանդէսների ու խնճոյքների փայլից շլացած, յայտնվում են նոքա դահլիճներում շքեղ զարդարուած և անուշահոտ իւղերով օծած։ բայց շատ սակաւ է թագնվում դոցանում բարի և հաստատակամ սիրտ և վեհ հոգի, որ այնքան կարևոր է կնոջ համար։ Ուրախութեամբ և դիւրութեամբ են տահում մի քանի արագաթռիչ, փայլուն տարիներ. բայց տեսարանը պէտք է փոխուի և ահա անողոք իրականութիւնը բացվում է դուռը։ Արդեօք նոցանից շատերը նախապատրաստուած կը լինեն

մաքառելու դորա դէմ, և արդեօք շատերի ոյժից վեր չեն լինի նորա արդարացի պահանջները։ Ամուսնական կամ թէ մի այլ կեանք է սպասում այս ուրախ, անհոգ արարածներին, միևնոյն է.—բայց դոցանից միայն նորա կը հասնեն կեանքի նպատակին, ումն որ կրթութիւնը միջոց է տուել հասնելու։ Բայց եթէ նոյն իսկ կրթութիւնը պակասաւոր էր, վայը ի վերոյ և միակողմանի, ապա ուրեմն նա չէր կարող յիշեալ ընտիր յատկութիւնները իւր սանուհիներին ուսանել։ Գեղաժպիտ մանուկներ։ Մենք ամենևին չենք ուզում ձեր ուրախութիւնը խլել ձեզանից. զարդարեցէք ձեր մազերը վարդերով և պաճուճուեցէք հրեշտակային հանդերձներով. բայց տայ Աստուած, որ այդ հանդերձների գեղեցիկ ծալքերի տակ պահած ունենայիք մաքի և ոգի խոհութեան անփոխարինելի զրահը։

Բ.

ԲԱՐՈՐՈՒԹԻՒՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԷՋՆ Է.

Ամենքի համար բաւական գործ կայ։—

Գործունէութիւնը, աշխատանքն է այն գիւթական զօրութիւնը որ պէտք է ազատէ կնոջը ծուլութիւնից, աւելորդ հաճոյամոլութիւնից, թեթևամտութիւնից և աշխարհային սնոտի բաւականութիւնների հրապոյրից։ Զարգացման ինչ բարձր աստիճանին էլ չը հասնէր կինը, ինչպիսի լուսաւորեալ շրջանում չը գտնուէր նա, թող աշխատանքը սըրբազան պարտաւորութիւն լինի նորա համար։ Թող բոլոր կանայք ոգևորուեն այն համոզմունքով, որ իրենք աշխարհային սահագին շղթայի մի օղակը լինելով, պէտք է գործեն և դէպ յառաջադիմութիւն ձգտեն, և որ նոցանից ոչ մէկին վայել չէ ձեռնթափ բաժանուիլ կեանքից։ Այսուհետև թող ամենագեղեցիկ կանայքն էլ մասնակցեն կրթութեան վսեմ գործին, նորա յառաջադիմութեան նուիրուած գործունէութեան, նորա իրական կատարելագործութեան և մար-

դասիրութեան։ Թող այլ ևս չասեն. «Ես տղամարդ չեմ, ես ինչ պէտք է անեմ»։ Կնոջ կեանքը, սիրտը և միտքը ամենուրեք գործունէութեան ասպարէզ կը գտնեն։ Սորա համար բաւական է միայն կարևոր ունակութիւնը ձեռք բերել։ Իսկ առ այժմ, մեծ մասամբ, կնոջ ձեռքը թոյլ և անզօր է. միտքը մոլորութեամբ նախապաշարուած, իսկ սիրտը փոքրոգի և զգացումներով աղքատ։

Մարդու գործունէութիւնը արտաքին հանգամանքներով է պայմանաւորվում. կնոջ գործունէութիւնը միայն ներքին դրդմամբ կը զարգանայ։ Ներքին դրդիռների պակասութիւն չը կայ, այլ շատ անգամ միայն հմուտ ղեկավարող ձեռք է պակասում։ Բայց որովհետև շատ կանայք հազիւ հազ են ապրում և մինչև անգամ իւրեանց արեան քրտինքով էլ չեն կարողանում օրական պարէնը հայթհայթել, հէնց այդ պատճառաւ էլ նոքա պէտք է գործունէութեան վրայ նայեն, իբրև իրենց կամաւ յանձն առած մի բարոյական պարտաւորութեան կատարման վրայ։ Ի՞նչպէս կը ցանկայի ես, որ իմ ձայնս հասնէր և այնտեղ, ուր զեղխութիւնը, շռայլութիւնը և հաճոյամոլութիւնը որորվում են թաւշեայ գահոյքների ու բարձերի վրայ։ Թող շռայլ, հաճոյամոլ և մեծամիտ կանայք լսէին Համեստ հրաւէրս. «Աշխատենք և գործենք հասարակաց բարօրութեան համար»։ Այս նոցա աւելի հարկաւոր է, քան թէ մի ուրիշի։ Այնուհետև կնոջ արժանաւորութիւնն ու իսկական հպարտութիւնը կը զարթնէին նորանում, կը թարմացնէին նորա սիրտն ու միտքը և կը փարատէին նորա ոգեկան տանջանքներն ու երևակայական հիւանդութիւնները, որոնք լոկ միայն ծուլութեան և անգործութեան ծնունդ են։ Միայն սերտ բարեկամական, հոգևոր և իրական գործունէութիւնը մարդու կեանքին կատարելութիւն ու կանոնաւորութիւն է տալիս։ Այդպիսի կատարելութեան հասած կինը՝ օրինակելի արարած կը լինի։ Վհատութիւնը, հոգւոյ վրդովմունքը, երևակայական հիւանդութիւնները, ամենասքանչելի պարտականութեանց արհամարհելը,—այս բոլոր չարիքները հեռու կը լինեն կնոջից, երբ նա աշխատութիւնը սրբ-

բազան զոհ համարելով, կը նուիրէ իւր անձը Աստուծոյ պաշտամունքին։ Ինքնագոհութեան բարերար հանճարը, բարեկամին սիրելը, ուրախութիւնն ու հոգւոյ անդորրութիւնը կը պարգևեն նորան գեղեցկութիւն, սքանչելի հրապոյր, և կուղեկցեն նորան մինչև խորին ծերութիւնը, լինի նա կուսական վիճակում, թէ ամուսնական կեանքում։

Բայց ինչ տխուր տեսարան է ներկայացնում մեզ այն ընտանիքը, ուր կինը չի ճանաչում իւր պարտաւորութիւնները, այլ ծառայում է լոկ միայն բաւականութեանց և հաճոյամոլութեանց ծարաւը յագեցնելու, և մի միայն իւր ամենաչնչին, մանրակրկիտ բաղձանքներն իրագործելու։

Լաւ չէ և պառաւող օրիորդի պատկերը, որը մարող երիտասարդութեան միջոցին, կանգնած է ձեռքերը ծալած, մռայլ հայեացքով, չը գիտենալով թէ ինչ անել, չունենալով մի ուրիշ ապաստարան, քան այն աշխարհային հասարակութիւնը, ուր նա արդէն աւելորդ է համարվում, և ուր նորան այլ ևս չեն շողոքորթում, փայփայում և ոգեշնչում։ Առաջինը իւր հարազատ ընտանեաց առաջն է յանցաւոր, վերջինս՝—ամբողջ հասարակութեան և մանաւանդ իւր առաջ։

Աստուած օգնական է մեր գործունէութեան։ Սկսենք աշխատել եռանդով, հաւատով և սիրով։—Աշխատանքը գրաւիչ է. մարմնական ոյժերը զարգացնելով և մեր մտաւոր պաշարը հարստացնելով, նա կը փրկէ մեզ անբարոյականացնող ախտերից։

Գ.

ՄԻՋԻՆ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ։

Ամեն ազգերում, ինչ աստիճանի լուսաւորութեան վրայ էլ չը գտնուէին նոքա, կանայք ամենուրեք զբաղուած են տնային տնտեսութեան մանրակրկիտ և առօրեայ հոգսերով,

մինչդեռ աւելի ծանր և դժուարակիր աշխատանքները տղամարդոց բաժին է լինում։ Այս կարգը բնական է և չի կարող փոխուիլ։ Որ մարդը տանը կերակուր եփէր կամ կար տներ, իսկ կինը դատաւոր լինէր կամ քարոզներ կարդար, այդ լոկ ցնորք է։ Կնոջը տնտեսութիւնից հեռացնելով, կը նշանակէ, հանել նորան իրեն յատուկ գործունէութեան շրջանից և մի այնպիսի ասպարիզի վրայ ձգել նորան, ուր մի առ ժամանակ գուցէ նա կարողանար գործել, բայց իշխել այդ ասպարիզի վրայ, երբէք չէր կարող։ Միայն խաղաղ, ընտանեկան կեանքի պահմաններում կարող է կնոջ հոգին ապահով և ազատ զարգանալ։ Ընտանեկան օճախը, ուր վառվում է սրբազան հուրը, կնոջ պարտականութիւնները ճանաչելու գիտակցութեամբ տոգորուած, և այն ախորժանօք համեմած, որպիսին միշտ ղգում ենք ազնիւ աշխատանքից յետոյ, — ահա կնոջ գործունէութեան ասպարէզը։ Այս է պահանջում նորա բնութիւնը։ Ցնտեսական հոգսերը չը պէտք է միայն ծառաներին թողնել. թող և ընտանեաց մայրն ու նորա դուստրները ամենի վրայ արթուն հսկողութիւն ունենան, ամեն ինչ իւրեանց ձեռքով ուղղեն։

Կասկած չը կայ, որ մեր ընտանեկան կեանքը օրէցօր առաւել ու առաւել նուազ բաւականութիւն է տալիս։ Կանանց յարատև աճող կարիքների ու պահանջների շնորհիւ, շատ մարդոց համար սեփական ընտանիք հաստատելը համարեա անհնար է լինում։ Այս տխուր երևոյթի պատճառը ակներև է. մարդոց այդ վհատութիւնը և անբաւականութիւնը յառաջանում է գլխաւորապէս կանանց դէպ աշխարհային բաւականութիւններն ունեցած չափազանց սիրուց և իրենց ընտանեկան պարտաւորութիւնները կատարելու անընդունակութիւնից։ Հասարակութեան այդ տարտամ դրութիւնը ամենուրեք հարց է ծնեցնում. «Ապա ուրեմն ինչո՞ւմն է կայանում կնոջ կոչումը. մտքի զարգացման, թէ լոկ տնտեսական հոգսերի ու աշխատանքների մէջ։ Ապարդի՞ւն վիճաբանութիւն։ Միայն այդ երկու տարրերի համերաշխութիւնը կարող է նպաստել կնոջ բնաւորութեան զարգացմանը. նորան չէ՞ տուած մի առանձին մտաւոր խորազննու-

թիւն, բայց նա ընդունակ է իդեալական կեանք յառաջացնել և բարօրութիւն պահպանել այն ասպարիզի վրայ, ուր բացառապէս ինքն է իշխում։ Եւ իրօք նա ձեռք է բերում այդպիսի ազդեցութիւն գործնականապէս, որի անհրաժեշտ կարևորութեանը վկայում են նորա բանականութիւնը և պարտքը։ Այս խօսքիս կանայք կը պատասխանեն. «Ամենևին ոչ, մեր ամենագլխաւոր պարտաւորութիւնն այն չէ, որ լոկ միայն կերակուր եփենք, կար անենք, տունն աւելենք։ Մենք ցանկանում ենք աւելի մեծ նշանակութիւն ունենալ, մարդոց պէս, մենք էլ ուզում ենք գիտութեամբ և արուեստներով պարապել»։ Այս պահանջը միակողմանի, անխոհեմ և անբարեխիղճ է։ Կինը, ինչպէս և մարդը, ունի իւր պարտաւորութեանց որոշ շրջանը, ունի իւր վանմ կոչումը, Դ միայն այդ կոչմանը ծառայելով, նա իրաւունք ունի կեանքի մէջ բաւականութիւններ պահանջել։

Այո՛, կինը տղամարդուն հաւասար իրաւունք ունի ամեն տեսակ հոգեկան բաւականութեանց համար, բայց նոյնպէս հաւասարաչափ պարտաւոր է և ամեն օր աշխատելու։ Ոչ մատնանիշ կանէ ինձ մի որ և է անհատի հոգեկան գործունէութեան վրայ, որ նախապէս չը ստիպէր նորան բազմաթիւ նիւթական արգելաւորութիւնների յաղթելու, մինչև որ սիրտ մաշող ձևականութիւնից կ'ազատուէր։ Որքան մանրակրկիտ դժուարութեանց պէտք է յաղթէ նկարիչը վրձինով, գրչով կամ փայտագրելով աշխատելիս։ Որքան տաղտկալի, ամենայն օր կրկնուող վէճերի և բանակռիւների պէտք է համբերեն բժիկները, ուսուցիչներն ու աստիճանաւորները։ Մի՞թէ մեր կեանքը յարատև կռիւ չէ նիւթի յետ. և ի՞նչ իրաւունք ունի կինը պահանջելու, որ միայն իրան ազատ կացուցանեին այս կռվից։ Ի՞նչպէս կարող է նա բոլորովին հրաժարուիլ այն արուեստական պարտաւորութիւնները կատարելուց, որ դրվում են նորա վրայ մարդու կենսական պահանջները բաւականացնելու կարևորութեամբ։ Մտածող մարդը ենթարկվում է բնութեան մեքենական օրէնքներին, ընդ նմին պահպանելով հոգւոյ անկախութիւնը. միտքը յանդիմանում և կշտամբում է նիւթականութիւնը, արհամարհում է նո-

ղան, իսկ ինքը առաւել ու առաւել հպատակում է նորան։ Ոչոք մինչև ցայժմս առանց պատժուելու չի արհամարհել ֆիզիքական ոյժերն ու պահանջները։ Նոքա անողոք, սաստիկ վրիժառու են։ բայց նոցա կարելի է գերակշռել, մեղմել նոցա, հետազօտելով նիւթական աշխարհի անխուսափելի պայմանները և իմաստուն կենցաղավարութեամբ կարիքներին վերջ տալով։ Ահա սորանումն է կայանում հոգւոյ յաւիտենական, ճշմարիտ յաղթանակը։ Եթէ կինը այս տեսակէտից քննէր իւր ամենօրեայ պարտաւորութիւնները, նոքա այնպէս անտանելի չէին երևալ նորան։ Դաստիարակութիւնը միշտ աչքի առաջ պիտի ունենայ կնոջ այսպիսի նշանակութիւնը և միջոց տայ նորան դժուարութեանց յաղթելու։ Բացի այն ամենը լրիւ գիտենալուց և կարողանալուց, ինչ որ իրօք կնոջից կարելի էր պահանջել ընտանիքում, դարձեալ կայ մի ուրիշ միջոց։ Ձենք կամենում, բայց պէտք է խոստովանել, որ եթէ անհրաժեշտ կարևոր լինէր ընտրել մէկն ու մէկը. այսինքն՝ կնոջ մտաւոր կամ տնտեսական զարգացումը, որից պիտի կախումն ունենար ընտանեաց վիճակը, մենք անպայման վերջինը կընտրէինք. խելքը նսեմանում է ամենօրեայ հոգսերի ու նեղութեանց մէջ, եթէ իմաստուն ղեկավարող ձեռքը չի հեռացնիլ դոցա։ Իսկ մաքուր և հիւրընկալ տնտեսութիւնը այն առաւելութիւնն ունի, որ գոնէ արտաքուստ թափանցում է նորա մէջ բանականութեան լոյսը։ Մտաւոր զարգացումը միայն նիւթական բաւականութեան ժամանակ հնարաւոր է։ Միջին կարողութիւն ունեցող օրիորդին, սոսկ գործնական տեսակէտից նայելով, աւելի կարևոր է ուսումնասիրել ընտանեկան զբաղմունքները, քան դաշնակի վրայ նուագել. առաւել լաւ է կերակուր եփել սովորել, քան թէ օտար լեզուներով խօսել. շապիկներ կարել, քան թէ ամենանուրբ գործուածքներ պատրաստել։

Բայց յուսով ենք, որ այդպիսի բացառական ընտրութիւնը մտաւոր կրթութեան և կամ տնտեսական ուսումնասիրութեան, ներկայումս այլևս կարևոր չէ։ Երկու՝ ըստ երևութին թշնամական հոգևոր և ֆիզիքական տարրերը

կարող են անդորրութեամբ զետեղուել կնոջ մէջ, որին վիճակուած է ամենօրեայ կեանքի զարդը լինելու։ Այս միաւորութեան հնարաւորութիւնը աներկբայ է։ Կային և կան այս աստիճանի զարգացման հասած կանայք, իսկ ինչ հնարաւոր է մի քանիսի համար, նոյնը մատչելի կը լինի նա և շատերին, գուցէ և ամենին։

Ցուէք աղջկան հասկացող մայր կամ դաստարակչուհի, որ ինքը հիմնաւորապէս գիտենար այն, ինչ ուրիշին պէտք է ուսուցանի և կարող է իբրև լաւ օրինակ հանդիսանալ. ուսուցէք աղջկան և այն պարտաւորութիւն համարիլ, ինչ մինչև ցայժմ դատարկ բան էր կարծուում։ Աւելացրէք նորան մի քանի տարի հանգիստ զարգացման համար։ Մի դարձնէք 15 կամ 16 տարեկան մանկանը աշխարհասէր տիկին, ժամանակ տուէք նորան մտաւորապէս և գործնականապէս կըրթութեան որոշ աստիճանի վրայ կանգնելու.—և դուք նպատակին հասած կը լինիք։

«Մարդս պատրաստի աշխարհ է մտնում, բայց հարկաւոր է նորա ճանապարհները գտնել» ասում է Բախելը։ Ահա այս է կրթութեան խնդիրը։ Ցոյց տուէք օրիորդին ճանապարհը, տուէք նորա բնութեանը կանոնաւոր ուղղութիւն, նորա խելքին հաստատուն հիմունք, և նա անվտանգ և հանգիստ իւր ճանապարհով կընթանայ, ինչպէս բնութիւնը իւր գործարանական զարգացման մէջ։ Թող իւրաքանչիւր օրիորդ գիտենայ, որ նա պէտք է այբուբէնի պէս ուսանի տնտեսական բոլոր զբաղմունքներն ու աշխատանքները, որ նա մարդու չի դնալ, մինչև որ չը սովորի այն պարտականութեանց կատարելը՝ որոնց դրել է նորա վրայ նոյն իսկ բնութիւնը, և կը տեսնէք որ նա կամաւ և յօժարութեամբ ենթարկուում է ամենի համար այդ ընդհանուր կանոնին։—

Սակայն սորանից չէ հետևում, որ բոլոր կանայք միակերպ պէտք է դաստիարակուած լինին։ Հակումները, տաղանդները, հանգամանքները, անշուշտ ապագայ զարգացման ժամանակ առաջ կերթան, և առաջնուայ պէս կը գտնուին այնպիսի կանայք, որոնք սիրով և յօժարութեամբ կը նուիրուեն տնտեսական պարտաւորութիւններին, մինչդեռ ու-

բիշները կը ձգտեն դէպի մաքուր պարապմունքները, բայց ուսումնական տարիներում իւրաքանչիւր օրիորդի պէտք է տալ թէ տեսական և թէ գործնական կրթութիւն. «Այն նպատակը՝ որին կամենում ենք հասնել, կնոջ տրտաքին և ներքին անկախութիւնն է, և կայանում է իւր պարտականութիւնները գիտակցաբար ճանաչելու և կատարելու մէջ։» Հէնց որ այս նպատակին կը հասնենք և կը հասկացնենք նորան իւր գոյութեան նպատակը, այն ժամանակ շնորհալի կինը ամեն տեսակ միջոցներ ձեռին կունենայ առօրեայ կեանքի դէմ մաքառելու և երբէք գեղխութեան զոհ չի դառնալ, իսկ այն կինը՝ որ աւելի գործնական ուղղութիւն ունի, զգալով ընտանեաց հոգեկան պէտքերը, և մանաւանդ որ կրթութեան ժամանակ ստացել էր նոցա բաւականացնելու միջոցները, երբէք չի ստորանալ մինչ այն աստիճան միակողմանի, մանրակրկիտ ուղղութեանը, որ ամենամեծ նեղութիւնն է նորա բոլոր շրջապատողների համար։

Շատերը կարծում են, որ տնտեսութիւնը ամուսնանալուց յետոյ էլ կարելի է սովորել։ Բայց այն ժամանակ ումից սովորել. ինչպէս ձեռք բերել ողջ տունը կառավարելու կարողութիւնը։ Ամեն գործ պէտք է ուսումնասիրել, նորանում պէտք է վարժուել։ Կասեն, թէ սորա համար սպասաւորներ կան»։ Բայց պէտք է ասել, որ լոկ միայն սպասաւորներին թողնուած տնտեսութիւնը միշտ անտեր է լինում։ Եթէ խոհարարը կարողանում է լաւ կերակուր եփել՝ սեղանն էլ ընտիր է լինում. եթէ նա մաքուր է և կարգ ու կանոն է սիրում, սոցա հետքերը ամբողջ տանը նկատելի կը լինին։ Բայց ինչ կը լինի հակառակ դիպուածում, երբ սպասաւորները, ինչպէս սովորաբար լինում, է չը գիտեն իրենց գործը, կամ գիտենալ չեն ուզում։ Ուր կը գտնուի այն ժամանակ մի զօրեղ ձեռք, որ կարողանար կառավարել տունը։ Իրաւ է, տանտիկինը եթէ միջոց ունի, չը պէտք է ամեն բան ինքը շինի, ամեն բանում խառնուի. ընդհակառակն՝ նորա գործն է ցուցել պարապմունքները, ուղղութիւն տալ նոցա, և որ գլխաւորն է, հետևել, որ ամեն ինչ

կանոնաւոր և ժամանակին կատարուէր։ Բայց սորա համար նա պէտք է պատրաստուած լինի, գիտենայ աշխատել, հաստատուն տնտեսութեան ողջ կազմուածքը և չէ՛ սոսկի միայն այն ժամանակ, երբ արդէն հասել է կարիքի, անկարգութեան դրդէն։ Իւրաքանչիւր օրիորդ պէտք է գիտենայ այդ և այնուհետև նորան դիւրին կը լինի ապահովել ընտանեկան բարեկեցութիւնը։ Այդ բարեկեցութիւնը ապահովւում է կարգով, մաքրասիրութեամբ, խնայողութեամբ և ջանքերի ու ժամանակի կանոնաւոր որոշմամբ։ Եւ այս նեցուկներից մինը պակասում է, անմատչելի կայ ընտանեկան բարեկեցութիւն, իսկ այս ամենօգտակար յատկութեան շնորհիւ, տնտեսութիւնը մի կազմակերպուած ամբողջութիւն է ներկայացնում, սաց զանազանելու, թէ նա յարգեայ տանիքի տակն է, թէ շքեղ պալատներում։

Արժանաւոր, խելացի մայրը, որ անձամբ կարող է ուսուցանել որդուցը տնտեսական պարապմունքներ, զոկ միայն իւր ներկայութեամբ հաստատում է ամեն միտք, թէ այս պարապմունքներն անպիտան և սոսոր են ինչ կը վերաբերի սպասաւորների հետ ունեցած անխուսափելի պատահարներին, օրիորդի մտաւոր զարգացումը և նորա զգացումների նրբութիւնը լիովին բաւական են յետ պահելու նորան աւելորդ հպարտութիւնից և հրամաններից։ Ընդ նմին, սպասաւորների հետ վարուիլը և այլ ամեն բան նոյնպէս ուսումնասիրելու առարկայ պէտք է լինի։

Մի թէ կարելի է անպիտան համարել այն պարապմունքը, որ տանում է դէպի ամենագեղեցիկ նպատակ։ Մենք ամենևին չենք պահանջում, որ օրիորդը անձամբ ընտելանալ ամենակոպիտ աշխատանքներին, որոնց նա կարող է սպասաւորին կատարել տալ։ Բայց ընտանեկան ամենակարևոր, ամենագժուար պարապմունքները չեն կարող սոսոր համարուիլ մինչև անգամ և ամենաքնքոյշ ձեռքերի համար։ Մի թէ սոսոր է համարվում քանդակագործի աշխատանքը, որ պէտք է ամենագժուար նախապատրաստութեանց օգնութեամբ միմեանց հետ դասաւորել մարմարիոնի կտորները ամենաչքնաղ գեղարուեստական արդիւնք արտադրելու համար։

Հասարակ արուեստական դժուարութեանց յաղթել պահանջող օրէնքը կրկնվում է մարդկային ամեն տեսակ զբաղմունքների ժամանակ թէ մեծի և թէ փոքրի. այդ օրէնքին ենթարկվում է տնտեսական պարտաւորութեանց կատարելը, և լաւ կազմակերպուած տնտեսութիւնը նոյնպէս արուեստի արդիւնք է, ինչպէս և մարմարիոնէ արձանը, պատկերը կամ ներդաշնակ մեղեդին։ Բայց տուն կառավարելու հմտութիւնը դիւրութեամբ չի ձեռք բերվում. ընդհակառակն, դորա համար պէտք է պատրաստուել և գործ դնել բաւականաչափ բարի կամք, պէտք է ծանօթ լինել իսկական պահանջներին, մանաւանդ որ սովորական աշխարհային նիստ ու կացը ապարդիւն է լինում ընտանիքում և խոհանոցում։ Եւ որովհետև ոչ միայն թեթեւամիտ, այլ և ամենախոհեմ կանայքն անդամ ցանկանում են ամուսնանալ, այդ պատճառաւ նոքա էլ, առանց բացառութեան, պէտք է ձեռք բերեն տնտեսագիտական անհրաժեշտ ուսումը։

Ամենաշնորհալի կանայք միայն այն պատճառաւ չեն տանում առօրեայ իրականութիւնը, որ ինքեանք դորա համար շատ քիչ են պատրաստուած։ Ոչ մի կին չը պէտք է ամաչի մի քենական աշխատանքից, հէնց այն պատճառաւ, որ իրեն սեռի բաժինն է կեանքի բոլոր տնտեսական կողմը. մտաւորապէս կրթուելով, նա միայն այլապէս է նայում արտաքին առարկաներին, քան թէ կարող էր այս անել խեղճ աղախինը, որին, իրեն ծանր և թշուառ կեանքում չը վիճակուեցաւ կարգ ու կանոն և մաքրութիւն սովորել, այն մտքով՝ ինչպէս մենք հասկանում ենք։

Այսպէս և ամենակրթեալ ու խելօք կինը մի՞թէ երբեմնապէս չ՚ունի ներքին յուսահատական րոպէներ. արդեօք նորա սիրտը միշտ բաւականութիւն է ստանում նորանով, ինչ նորա ինքնասիրութիւնը և փառամոլութիւնը շոյում է։ Ո՛չ. նորա կեանքում լինումեն և հոգեկան դժգոհութեանց րոպէներ, երբ նա էլ մխիթարութիւն է գտնում մեքենական զբաղմունքների մէջ, աչքի առաջ ունենալով իւր գործունէութեան ճշմարիտ և օգտակար արդիւնքը։ Այդ գործունէութեանը նայելով, նա կարող է ինքն իրան ասել. եթէ ես

չեմ էլ հասնում իմ ամենընտիր, վսեմ ձգտումներին, գոնէ հնարաւոր է լինում շրջապատել ինձ բաւականութեամբ և ուրախացնել մերձականներին։

Այո՛, կանայք. ձեր տնտեսական պարտաւորութիւնների մէջն է այն զօրութեան աղբիւրը, որից զրկուած է մարդը, որին այդպէս յաճախ նախանձում էք։ Զը յաջողուեցան նորա ձգտումները, և ահա կանգնած է նա կորի գլուխ, յուսահատ, ամենից թողնուած. նորա գործունէութեան մէջ կենդրոնացած են նորա բոլոր գիտութիւնը ու ընդունակութիւնները։ Իսկ ձեզ մնում է տանը խաղաղ, անդորր և հանգիստ սպասել, ուր դուք վերադառնում էք ամենածանր փորձութիւններից յետոյ և ուր միշտ կարող էք գործել անսակրկելի արդեամբ։ Խելքը վերածնում է ամենահանգիստ տնտեսական զբաղմունքների մէջ, և այն, ինչ դուք համարում էք ստոր զբաղմունք, վերադարձնում է ձեզ կորցրած ոյժը, այն հսկայի նման, որ առաւել և առաւել հզօրանում էր լոկ հայրենական երկրին մերձենալով։

Դ.

ԶՆՈՒԱԳՈՐԾ.

Համերոսի ժամանակները ամենաբարձր յարգանաց առարկան էր ճախարակի և ասղան ճարպիկ գործածելը։ Այժմ արդիւնագործութիւնը այնքան դիւրացրեց մեր կանանց գործը, որ նոքա այլ ևս կարիք չունին Յունաստանի և հին Գերմանիոյ կանանց նման ճախարակի առջև նստած իրենց ընտանեաց ողջ հանդերձեղէնը պատրաստել։ Մեր ժամանակ ձեռագործները կորցրին այն մեծ նշանակութիւնը, որ ունէին մեզանից առաջ, երբ ինքեանք թագուհիները, նամիշտներով շրջապատուած, պարապում էին ձեռագործով, իրենց ամենաանհրաժեշտ պիտոյքները լրացնելու համար։ Բայց և այժմ էլ մենք չենք կարող առանց ձեռագործի բաւականանալ, որով, Յոյների ասելուն պէս, հպարտանում էր նոյն իսկ Պալլադան։ Ձեռագործը անպայման կանանց ուսմանելի առարկայից շարքը պիտի մտնէ, և գործնական պարապ-

մունքների ամենանշանաւոր մասը կազմի և իւրաքանչիւր օրիորդ պէտք է իմանայ։ Այն տանտիկինը, որ կար անել չը գիտէ, չի կատարում իւր պարտականութիւնները, ինչպէս և նա, որ հասկացողութիւն չունի կերակրի և ուրիշ տնտեսական գործերի մասին։ Լոկ միայն նուրբ ձեռագործների մէջ վարժուելը անօգուտ է. պէտք է կարևոր է գիտենալ այն բաները, որոնք առօրեայ պահանջները լրացնում են։ Կինը այն ժամանակ աւելի կախումն ունի ուրիշներից, երբ ինքը չի կարողանում իւր զարդարանքներով զբաղուիլ և չի կարողանում ամենահասարակ ցանկութիւնները կատարել, որոնք ծագում են նորա դէպի գեղեցիկ զգեստներն ունեցած սիրուց։ Շատ տիկնայք և օրիորդներ չեն կարող դորա համար աշխատող ձեռքեր վարձել. անհամեմատ բազմաթիւ են այնպիսիքը, որոնք պէտք է իրանք իրանց համար զգեստներ պատրաստեն և առ հասարակ անախորժ է տեսնել այնպիսի կնոջ, որ չի կարող ասեղ գործածել։ Անվիճելի է, որ կանայք առանձին տաղանդ ունին դէպի ձեռագործը, և այս պարապմունքը թէ և արհեստների ամենաստոր կարգին է պատկանում, բայց իւր տեսակում կարող է ամենամեծ նրբութեան հասնել. այս պատճառաւ էլ ոչ մի կին, որ ձգտում է հիմնաւոր, բազմակողմանի կրթութիւն ձեռք բերելու, չը պէտք է արհամարհէ ձեռագործով պարապելը։ Բայց հարկաւոր չէ սկզբում սաստիկ նուրբը ձեռագործներով զբաղուիլ, նախ քան օրիորդը կարողանար կատարելապէս սովորել կարել և գործել. իսկ ով արդէն սովորել է այս, նա դիւրութեամբ կը սովորի և ձեռագործի բոլոր մնացած տեսակները։ Ջանասէր օրիորդը լաւ վերահայեցողութեան և ղեկավարութեան շնորհիւ այս դիպուածում կը յաղթէ բոլոր դժուարութեանց, դեռ մինչև այն հասակը, երբ ֆիզիքական ոյժերի զարգանալուն պէս, նորա համար աւելի դժուար տնտեսական գործով զբաղուելու ժամանակը կը գայ։

Սակայն ձեռագործը այնքան յատուկ է կանայի բնութեան, որ յիրաւի կանայք մեծ մասամբ մի առանձին յօժարութեամբ են պարապում նորանով։ Գործելը երբեմն տրամադրում է կանանց մինչև անգամ մի փոքր դէպի ցնորական երևա-

կութիւն. երբեմն էլ սառնասրտութիւն է ծնեցնում դէպի աւելի լուրջ և դժուար պարապմունքները։ Այս պատճառաւ էլ գործելը միայն յայտնի սահմաններում օգտակար է և յարգանաց արժանի։ Բայց վայ այն կանանց, որոնք միայն իրանց կար ու գործելը գիտեն և ամեն ինչ մոռանում են գուլպայի համար։ Աստուած ազատէ այն տեսակ կնոջ աշխատասիրութիւնից, որ միայն հոգում է ահագին կար և գործուածներ պատրաստելու, կարծես թէ կարի մեքենան չէր կարող նոյնը աւելի ածան և աւելի գեղեցիկ կատարել։ Ինչու պարապել նորանով, ինչ գործարաններն են արտադրում։ Բայց օգտակար է բաւականաչափ կարել իմանալ, և մանաւանդ շորեր ձևել։ Իսկ գուլպաներ ու վերմակներ գործելը աւելի լաւ է պառաւներին թողնել։ Այդ զբաղմունքները նոցա տկար աչքերին և յոգնած ձեռքերին առաւել վայելուչ են։

Բաւական օգտակար հետևանքների կը հասնէին, եթէ այն ժամանակը որ այժմ զոհւում է ապարդիւն ձեռագործների համար, գործադրուէր մտաւոր ընդունակութեանց կատարելագործութեան, նուրբ արուեստների ուսումնասիրութեան և յատկապէս տնտեսական պարապմունքների համար. լոկ միայն դէպի մեքենական զբաղմունքներն ունեցած կրքի համար, որոնց մէջ մի առանձին կարիք չը կայ, յանցանք է խլել մտաւոր զարգացման համար անհրաժեշտ ժամանակը։ Եթէ միայն օրիորդները ձգտէին դէպի աւելի բարձրը և վսեմը, չ՚արհամարհելով ընդ նմին և հասարակ բաները, այն ժամանակ հաւատի ենք, որ չէինք տեսնիլ նոցա այն մեռցնող և տխուր գործը կատարելիս, որոնք միւս բոլոր մեքենական պարապմունքներից աւելի տաղտակացնում են մահացու տխրութեամբ։

Խօսքը ամփոփելով, չի կարելի չը յիշել և այն բարերար ազդեցութիւնը որ բարոյապէս և մտաւորապէս ունի կանանց վրայ նոցա գործնական պարապմունքների կատարելը։ Եթէ նոքա լաւ ուղղութիւն են ստացած, մեքենական զբաղմունքներով զարգանում է նոցանում պարզ և կանոնաւոր դատողութիւնը, մինչև անգամ սրամտութիւն։

Կերակուր եփելը պահանջում է բաւականին ճարպիկութիւն, հնարագիտութիւն և համբերութիւն. առանց հաշիւ ոչ մի կերակուր չի յաջողուիլ եփելու։ Շատ տաղանդաւոր կանանց բարկացկոտութիւնը և անկարգութիւնը առաջ է գալիս հէնց նորանից, որ նոքա սովոր չեն հանգիստ սրտով սկսել գործը, համբերութեամբ շարունակել և աւարտելուն սպասել։—Ճշմարիտ որ այն մատենագրուհիները, որոնք շտապում են լոյս ընծայել իրենց շատ անգամ տհաս շարադրութիւնները, վատ չէին անիլ օրինակ առնելու մի բարի տանտիկնոջից, որի տանը ըստ կանոնի լաւ հասնում է խմորը և կարմրում է համեղ կարկանդակը։—Ի վերջոյ, նոյն իսկ մարդասիրութիւնը պահանջում է որ կինը գործնական ուսումն ստանար։ Յաճախ լսում ենք գանգատներ ծառաների հետ վատ վարուելու, կոպտութեան, քարասրտութեան և անարդարութեան մասին։ Այս ախտին ենթարկվում են շատ անգամ մեր ամենազգաց ու տիկինները։ Յաւ է խոստովանել, որ այդ նազելի տիկնայք արտասուալից աչքերով լսելով ոգևորող երաժշտութիւնը,—միշտ վսեմի և գեղեցկի մասին երևակայելով, նոքա յանկարծ դառնում են խիստ և կոպիտ, հէնց որ բանը ծառաներին կամ բանւոր կանանցն է վերաբերում։ Մթթէ այս հակասութիւնները ծագում են քարասրտութիւնից, եսականութիւնից, տգիտութիւնից։ Մթթէ լոկ միայն ցուցամոլութիւնը և լաւ երևալու ցանկութիւնը տիպում է այս կանանց լաւ վարուել և դուրալի խօսել բարեկամների և մանուկների հետ։ Անիմանալի են թւում այս փոփոխամիտ էակները, որոնք զմայլեցնում են մեզ իրենց սիրելի վարմունքով հիւրասենեակներում, իսկ խոհանոցում և կարի սենեակում անասելի վատ են վարվում խոհարարուհու և կար անողի հետ։ Թէև ի հարկէ այս ցոյց է տալիս սրտի պակասաւոր կրթութիւնը, բայց մենք ի զուր կանանց այդ աստիճան ստախօս և վատ կը համարենք, ինչպէս որ նոքա առաջին անգամից մեզ թւում են. շատ յաճախ ոչ թէ քարասրտութիւնը, այլ ուղղակի գործի հետ ծանօթ չը լինելը պատճառ է լինում ընտանեկան աղմուկների։ Ի՞նչպէս կարող է կինը և օրիորդը արդարութեամբ վերաբերուիլ դէպի աղախինը, երբ ինքը

մինչև անգամ գաղափար էլ չունի նորա աշխատանքի մասին։ Ով անձամբ երբ և իցէ շապիկ է կարել, նա արդէն չի կըտրիլ կար անող կնոջ արիւն քրտնքով աշխատած կոպէկը, չի զրկիլ նորան ապրուստի միջոցից։ Եւ որքան անյարմարութիւններ են յառաջանում այն կնոջ համար. եթէ նա գործի հետ ծանօթ չը լինելով, իւր գործը ուրիշին է յանձնում։ Անկարելի է արդարութիւն պահանջել այն տանտիկնոջից, որ չը գիտէ թէ իրան ինչ է հարկաւոր, որ չի կարող հասկացնել խոհարարուհուն, թէ այս ինչ կերակուրը ինչպէս պէտք է եփել։ Այդ տգիտութիւնը հասցնում է կանանց կամ չափազանց ծայրահեղ ժլատութեան, կամ մինչև անգամ անմիտ շռայլութեան։ Սորանից էլ յառաջանում է ճնշողութեանց մեծ մասը, որոնք անտանելի են դարձնում մշակ դասակարգի կեցութիւնը։

Ի՞նչպէս կարող ես գնահատել ուրիշների աշխատանքը, եթէ գաղափար չունիս նորա արժանաւորութեան մասին։ Բայց գիտէ արդեօք մատաղահաս օրիորդը, որը իւր կեանքում ասեղ չի վերցրել ձեռքը, և որ օրերը անհոգ անց է կացնում, թէ որքան ծանր աշխատանաց ժամեր էին հարկաւոր նորա պարահանդէսի զգեստը պատրաստելու համար։ Գիտէ՞ արդեօք մանկահաս տանտիկինը, թէ որքան ծանր է լինում երբեմն մի աղջկայ համար, որ իրան ծառայելու համար վարձել է, կատարելու նորա բոլոր քմահաճ պահանջները։

Մեր տիկիններից շատերը գուցէ սարսափէին, եթէ իմանային, թէ իրանք որքան անգութ և ժլատ են երևում նոցա աչքում, որոնք ծաղիկներով են զարդարում նոցա կեանքը։ Աղախինը, լուացարարը, կար անողը պիտի ոչ թէ ստրուկներ լինեն տանը, այլ օգնականներ. իսկ տանտիկինը և իւր դուստրները պէտք է գիտենան ամեն գործի ձեռնամուխ լինել. իրանք օրինակ տան, խրախուսեն աշխատողներին և լոկ իրենց ներկայութեամբ, գործին տեղեակ լինելով և խոհեմ բարեսրտութեամբ կարողանան ազդել նոցա վրայ երբէք կը մոռանալով թէ արեան քրտնքով է ձեռք բերվում նոցա իւրաքանչիւր կոպէկը։

նուագ. բայց երբ որ նա վատնվում է ամէն բոպէ, վոքը առ վոքը, նորա վրայ այլ և ուշադրութիւն չեն դարձնում։ Այն ինչ այս հէնց այն ժամանակն է, երբ փոշիի տակ ծածկվում է կանացիութեան քնքոյշ գոյնը, իսկ խիստ բարոյազէտները ուսերը վեր քաշելով, կրկնում են միայն սերտած յաւիտենական ֆրազները կնոջ թոյլ և փխրուն բնութեան մասին։ Այո, նա թոյլ սարսաղ է, քնքոյշ, երբեմն մինչև անզամ թեթևամիտ և անհաստատ. բայց այս պատճառաւ էլ առաւել կարօտ է ներքին հաստատուն օգնութեան։ Ոչ թէ միայն մեքենայական զբաղմունքները, այլ դէպի հոգու արտադրութիւնները ցոյց տուած դարձնէութիւնը և համակրութիւնը տալիս են նորան ներքին տոկունութիւն և անկախութիւն։ Սորա համար կնոջն հարկաւոր է ոչ թէ ուսումնականութիւն, այլ այն կրթութիւնը, որը լուսաւորելով բանականութիւնը և պահպանելով նորան նախապաշարմունքներից, պարգևում է նորա սրտին ճշմարիտ վեհութիւն։ Բանն այն չէ, որ նա բարեացակամ լինի մի քանի դիպուածներում. լուսաւորուած, ճշմարիտ բարի սիրտը պէտք է միշտ համակրէ մերձաւորին, կարողանայ ամենքի հետ արդարախոհ լինել։ Բայց հասնում է արդեօք կինը այդպիսի կատարելութեան այն բոլոր միջոցներով, որոնք այժմ դսրծ են դնւում նորա կրթութեան համար։ Չգում է նա արդեօք մինչև անզամ կրթութեան վեհ նպատակը։ Վերջապէս ժամանակակից կրթութիւնը հաղորդում է արդեօք կնոջ հոգուն այն արժանաւորութիւնը, իսկ նորա խելքին այն ճշմարիտ լուսաւորութիւնը, որոնք բարերար ներգործութիւն ունենալով սրտի վրայ, պիտի ոգևորէին նորան դէպի գիտակցական վեհութիւնը, դէպի անկեղծ և մշտական բարեացակամութիւնը։

Այս առթիւ դեռ շատ բան է հարկաւոր անել։ Բարերար վերանորոգութիւնը այն ժամանակ միայն տեղի կունենայ, երբ կանանց դաստիարակութեան գործում մի կողմը կը թողնուի պճնասիրութեան և հաճոյամոլութեան ցանկութիւնը, և ողջ դաստիարակութիւնը ուղղուած կը լինի մի միայն խելքն ու սիրտը հիմնաւորապէս լուսաւորելուն։ Ար-

դեօք ձեռնունայն արարածներ չեն թուում մեզ այն կանայք, որոնք ամեն բանից քիչ քիչ գիտեն, և իրօք ոչինչ չը գիտեն հիմնաւոր, որոնք առարկայի խորը չը թափանցելով, ընդունակ են միայն ամենավայր ի վերոյ, չնչին զրաքսու�ութեան։ Այս չնչին արարածներին նայելով, մենք չենք կարող չը համաձայնել այն մարդոց հետ, որոնք շատ անգամ գերադասում են անկիրթ, բայց վարուելու մէջ պարզ և բնական ձևով ապրել իմացող օրիորդին ամենախելօք և ամենաուսումնական օրիորդներից։

Կնոջ կրթութեան ամենամերձաւոր նպատակը կայանում է նորանում, որ նա միացնէր հիմնաւոր, օգտակար տեղեկութիւնները բնաւորութեան գորովի և պարզութեան հետ։ Ողջ մին է, թէ մենք մի քանի աւելի կամ պակաս տեղեկութիւններ ունինք. բանն այն է, թէ ո՞րպիսի են մեր տեղեկութիւնները, և ի՞նչ ազդեցութիւն ունին նոքա մեզ վրայ։ Միշտ կը գտնուի մինը, որ մեզանից աւելի գիտենայ. բայց ընդարձակ տեղեկութիւններ ունենալով հանդերձ, սիրտը դարձեալ կարող է զարգացած չը լինել, և միայն լոկ գրքերից սովորած ուսումնականութիւնը միշտ չի ազատում մեզ նախապաշարմունքներից։ Ընդ նմին, կրթութեան գործում կինը նշանաւոր առաւելութիւն ունի մարդուց. մարդու համար ուսումը միշտ կապուած է որ և է արտաքին նպատակի հետ. իսկ կինը կարող է մուտանալ գիտութեան մանրամասնութիւնները և բաւականանալ նորա բովանդակութեան ընդհանուր տպաւորութեամբ։ Նա կարող է, այդպէս ասել, կոտրել իմաստութեան ձևը, ամանը, և սեփականել իրան միայն իմաստութեան էութիւնը։ Նա կը լինի կրթուած, մարդու նման ուսումնական չը լինելով. աւելի հաճելի է տեսնել նորան մտաւոր զարգացման բարձրագոյն աստիճանի վրայ կանգնած, եթէ ճաշակասէր կնոջը զարդարող պարզութիւնը և համեստութիւնը արտաքին հայեացքներից թագցնում են նոյն իսկ նորան այդպիսի կատարելութեան հասցրած ճանապարհը։

Սակայն անխոհեմութիւն կը լինէր հաստատել, որ կնոջ

համար այս կամ այն գիտութիւնը անօգուտ է և անմատչելի։ Այս հարցը վճռվում է միայն նոցա ունեցած հակումներով, դէպքի առարկան ունեցած փափագով և հանգամանքներով։ Բայց անհրաժեշտ է ցոյց տալ այն սահմանները, առանց որոց այդպէս անուանեալ կրթուած դասակարգի օրիորդները չեն կարող մնալ։ Այս սահմանների շրջանում մուտք կը գործեն համեստ, բայց դրական գիտութիւններ։ Նոքա, որոնք այդպիսի գիտութիւն ունին ներկայումս ամաչում են, թագուցանում են նորան, մինչդեռ սնապանծ տիկինները հպարտանում և պարծենում են միայն լեզուների, երաժշտութեան և ուրիշ արուեստների գիտութեամբ։

Ցաւալի է տեսնել, թէ ինչպէս պակասաւոր, թերի և աննշան է շատ օրիորդների կրթութիւնը։ Նոքա պարապում են միայն ֆրանսիական գրախօսութեամբ և չնչին նամակներ շարադրելով։ Նուագում են Լիստի և Տալբերգի յօրինուածները, և հազիւ գիտեն Գեօթէի և Շիլլերի անունները։ Օրիորդներին ամենից կարևորն է հիմնաւորապէս իմանալ մարդկութեան պատմութիւնը, մայրենի լեզուն, աշխարհագրութիւնը, ընութեան օրէնքները և ազգային գրականութեան դասական, կլասիքական արդիւնքները։ Եթէ հնար չը կայ հաղորդելու աւելի բազմակողմանի տեղեկութիւններ, բաւական է և այն, որ զարթեցնուի մտածողութիւնը, հաղորդուի մտքին պայծառութիւն, հոգուն ինքնուրոյն անկախութիւն։ Գլխաւորն այն է, որ պահանջ կարթնի դիտենալու աւելի, կամ գոնէ յիշողութեան մէջ պահելու այն, ինչ սովորել է, և միջոց տրուի նոր տեղեկութիւնները կապելու արդէն յայտնի եղածների հետ։ Բայց այդպիսի դիպուածում և ամենաշատ զբաղմունք ունեցող կինը, մինչև անգամ ընտանեաց և տնտեսութեան վրայ ունեցած ամենամեծ հոգացողութեան միջոցին էլ, մեծ ոգևորանք և բաւականութիւն կը գտնի մի լաւ գիրք կարդալով, կազդուրելու նորանով իւր միտքն ու սիրտը և քաղելու նորանից իրեն հարկաւոր տեղեկութիւնները, որ կարողանայ անդադար հետևել իւր հարազատ զաւակների

հոգևոր զարգացման և ուղղութեանը։—Վայրի վերայ և թերուս բանականութիւնը ամենևին չի կարող գոհութիւն վայելել բարեգործութիւն անելով, և չի կարող գրաւուել ոչ մի գեղեցիկ բանով. նա ընկնում է անպիտան միակերոլութեան մէջ և միայն բաւականութիւն է գտնում գուցէ ամենահասարակ վիպասանութիւններ կարդալում, որոց բազմութեամբ լոյս տեսնելը վերջին ժամանակներս ապացուցանում է դժբաղտաբար, թէ ինչ շատ են ներկայումս այդ ապրանքի գնողները։

Օտար լեզուները և գեղարուեստները այն ժամանակ միայն կարևոր նշանակութիւն ունին, երբ նոցա գիտենալը կապուած է վերոյիշեալ առաւել օգտաւէտ տեղեկութեանց հետ։ Եթէ ծնողաց հանգամանքները և օրիորդի ընդունակութիւնները ներում են, այն ժամանակ յիրաւի չը պէտք է յարմար առիթը ձեռքից թողնել ուսուցանելու նորան գոնէ երաժշտութիւն և գէթ օտար լեզուներից մէկը։ Դժբաղտաբար, երաժշտութեան ուսումնասիրելու ժամանակակից պահանջները այնքան չափազանց են, որ նոքա արտաքսում են այս արուեստը ընտանեկան շրջանից։ Պէտք է խոստովանել որ երաժշտութիւնը, իբրև կրթութեան միջոց, շատ ընդարձակ տեղ է բռնում և այնքան ժամանակ է խլում, որ նոյնը կարելի էր աւելի արդեամբ գործ դնել, եթէ միայն օրիորդները բուսականանալին առաւել հասարակ յօրինուածներ նուագելու, քան դժուարին։ Եթէ մի առանձին ձիրք չունի օրիորդը, լիակատար անխելքութիւն է ոչ միայն օրական 5 ժամ, այլ և երեք ժամ դաշնակի առաջ անցկացնելու, միայն փառասիրական ցանկութիւնից դրդուած, ջանալով ընտելացնել մատները այնպիսի ցայտումների և ելևէջների, որպիսիք հանճարեղ հեղինակը յօրինում է շատ անգամ միայն իրան նմանողներին ծաղրելու համար։ Ում համար երաժշտութիւնը սրտի առաթիայ է, ով պարապում է նորանով, որպէս դի միջոց գտնի նորանով արտայտելու այն հոգեկան տպաւորութիւնները, որոնք լեզուով չեն տովում; նա երաժշտութեան մէջ առանց մասնաւոր ցայտունների էլ բաւականութիւն կը գտնէ։ Թող օրիորդները այս նպատակի համար

միայն պարապեն երաժշտութեամբ և ոչ թէ լոկ դատարկ փալլի համար հիւրասենեակներում, այն ժամանակ ճշմարիտ է, ոչոք չէր մերժի այդ պարապմունքը։ Բայց բաւական է, որ օրիորդը օրական մէկ կամ երկու ժամ նուիրէր երաժշտութեան, և նորա պատճառաւ բարձի թողի չառնէր այն զբաղմունքները, առանց որոց նա չէ կարող իրօք կըրթուած համարուիլ։ Արուեստները նոյն են, ինչ որ տնտեսութիւնը։ Նոցա յառաջադիմութիւնը կատարվում է միայն խելացի գործադրուած օգտաւէտ տեղեկութիւններով, և արուեստը այն ժամանակ միայն բարերար ներգործութիւն կունենայ, երբ նա ճշմարիտ կրթեալ հոգւոյ և նուրբ, շնորհալի ճաշակի արտայայտութիւն է։ Իսկ սորան կարելի է միայն հասնել արդիւնաւոր դաստիարակութեամբ։ Այդպիսով, պատմութիւնը զարթեցնում է ճշմարտութեան գիտակցութիւնը, իսկ դասական գրականութիւնը՝—գեղեցկի զգացմունքը։ Անհերքելի է և այն, որ երաժշտութիւնը միակ արուեստն է, որ կարելի է առանց մեծ ընդունակութիւններ ունենալու էլ ուսանել, որովհետև փոքր ինչ իմանալն էլ բաւական է որ մեզ ուրախացնէ և մխիթարէ։

Այս բանը կարելի է ձեռք բերել առանց զուր ժամակորոյս լինելու. բայց ուրիշ արուեստներ չը պէտք էր ուսուցանել օրիորդներին, եթէ միայն նոքա չունէին դէպի այդ արուեստները առանձին հակումն. իսկ արուեստների գործածութիւնը, որպէս խաղալիքների, պէտք է բոլորովին հեռացնել դաստիարակութիւնից, այլապէս անհնարին է նորա բարւոքումը։ Կիսատ պրատ գիտութիւնը սաստիկ կորստաբեր է և չըպէտք է տեղի ունենայ։ Օտար լեզուն, եթէ հիմնաւորապէս չը պէտք է ուսումնասիրուի, ամենևին հարկաւոր չէ սովորեցնել։ Լեզուի ուսումնասիրութիւնը պէտք է սկսել մանկական հասակից և մի քանի տարի կարգով շարունակել։ Այն ծնողները, որոնք 13 կամ 14 տարեկան հասակում սկսում են սովորեցնել իրենց մանուկներին փոքր ինչ ֆրանսերէն և երկու կամ երեք տարուց յետոյ դադարեցնում են այդ ուսուցումը, միայն ի զուր տեղն են կորցնում փողը և ժամանակը։ Իսկ օտար լեզուների հիմնաւոր

ուսումնասիրութիւնը ի հարկէ աներկբայելի օգուտ է տալիս։

Ինչպէս որ արուեստներն ամենից շատ աշխուժացնում են սիրտը, այնպէս էլ լեզուներով պարապելը բարերար ներգործութիւն է անում մտքի վրայ։ Օտարազգի գրականութեան հետ ծանօթանալով, որ բովանդակում է ժողովրդի ոգին, օրիորդը ստանում է դաստիարակութեան ամենակարևոր միջոցը, թէ և մինչև անգամ ձեռք չը բերէր կատարեալ հմտութիւն իւր մտքերը օտար լեզուներով արտայայտելու համար։ Սովորեցրէք օրիորդներին լեզուներ, բայց սովորեցրէք հիմնաւորապէս. իսկ եթէ հնար չկայ լեզուն հիմնաւորապէս ուսումնասիրելու, առաւել լաւ է բոլորովին թողնել, որպէս զի դա խոչընդոտն չը լինի առաւել անհրաժեշտ տեղեկութիւնները ձեռք բերելուն։

Առաւելապէս կրթութեան գործում, քան մի ուրիշ որ և է ասպարիզում, ցաւալի է սահմանափակուիլ միայն անհրաժեշտով. բայց միայն սորանով կարելի է կանանց թերի և անկատար կրթութեան առաջն առնել։ Որքան էլ սահմանափակ չը լինէր գիտութեանց շրջանը, նա պիտի ամբողջապէս լրացած լինի, այլապէս մենք կը մնանք միշտ վայր ի վերոյ դատող և չենք ունենալ իրերի վրայ պարզ, ճշգրիտ հայեացք։ Կանանց գիտութեան պակասաւոր լինելը միայն նորանից է յառաջանում, որ մեզ ուսուցանում են ոչ բաւականին հիմնաւորապէս։ Այր—ուսուցիչները մինչև անգամ նեղութիւն էլ չեն յանձն առնում բանալու իրենց սանուհիների առաջ գիտութեան էութիւնը, բացատրելու պատմութեան, գրականութեան ոգին։ Իրաւ է, այդ և շատ դժուար է այն օրիորդների համար, որոնք 14 և 15 տարեկան հասակում համարվում են արդէն աւարտած ուսման համար նշանակեալ ժամանակամիջոցը։ Բայց և նոյն իսկ փաստերը հաղորդվում են կանանց առանց պատշաճաւոր լրութեան և առընչութեան, բայց յայտնի է, որ երբ գիտութեանց մէջ այս սերտ կապը չը կայ, այնտեղ խօսք էլ չի կարող լինել հիմնաւոր կրթութեան մասին։ Բոլորովին ուրիշ բան կը լինէր, եթէ մենք ունենայինք այնպիսի ուսումնարաններ, ուր նախագծած որոշ ուղղութեան համաձայն, օրիորդների զար-

գացումը կատարուէր պարտուպատշաճ յաջորդականութեամբ և լրութեամբ։ 6—18 տարուայ ժամանակամիջոցում կարելի է չափազանց շատ բան ուսանել, եթէ միայն ուսումը դատարկ խաղալիկ չը դարձնեն։ Այն առարկաները, որոց մասին մենք վերը խօսեցինք, ֆրանսիական լեզուի հետ կարող էին լրիւ աւանդուիլ այդ 12 տարուայ մէջ և դեռ էլի շատ ժամանակ կը թողնէին ձեռագործի և տնտեսական զբաղմունքների ուսումնասիրութեան համար։ Այսպիսով օրիորդները առաւել քիչ կը յոգնէին զանազանակերպ վարժութիւններով, իսկ մարմնամարզութիւնը, որ այժմ անհրաժեշտ է սաստիկ նստակեաց կեանքի համար, բայց փոքր ինչ անյարմար է հասակն առած օրիորդների համար, կը փոխարինուէր խոհանոցում դուրս ու ներս անելով և տնային տնտեսութեան հոգսերով։ Այդ կերպով դաստիարակուած օրիորդը երբէք այլ ևս դժուարութիւն չի կրիլ իւր ապագայ զարգացման ժամանակ. նա ունի բոլոր ամենակարևոր յենակէտերը. մայր դառնալով՝ նա կը կատարէ իւր պարտաւորութիւնները. ամուրի մնալով՝ նա առանց ոյժերը սաստիկ լարելու ձեռք կը բերի կարևոր կրթութիւնը, որ միջոց կը տայ նորան ինքնուրոյն, անկախ էակ լինելու։ Բայց որ ամենագլխաւորն է, կանոնաւոր մտաւոր կրթութիւնը կը զարգացնի կնոջ սիրտն ու զգայականութիւնը. ճշմարիտ կրթութիւնը ոչ թէ գիտութեանց մեծ պաշար ունենալումն է կայանում, այլ խոհեմութեան, նախապաշարմունքներից ազատ և ամենաանաչառ, բարի սրտի մէջ։ Կրկնում ենք, որ այս յատկութիւնները կարելի է ձեռք բերել և առանց օտար լեզուները և արուեստները գիտենալու. բայց առանց խորը ուսումնասիրութեան պատմութեան, բնութեան օրէնքների և ազգային գրականութեան, որը ոգևորում է կենսական ամրութեամբ։ Այս ամենակարևոր առարկաների ուսումնասիրութիւնը, սրտի յատկութեանց հետ ի միասին, կը կրթի և ճաշակը։ Իւր ազգի դասական մատենագիրներին ճանաչող և սիրող օրիորդը, ինքը կը խուսափի գրականութեան ամենավատ և անպիտան արդիւնքները կարդալուց։ Կնոջ ապագայ կրթութեան համար ընթերցանութիւնը շատ մեծ միջոց է, և այս պատճա-

ռաւ էլ պէտք է ամենայն խստութեամբ ջանալ նորան ճշմարիտ ճանապարհի վրայ կանգնեցնելու։ Մօր և դաստիարակչուհու անհրաժեշտ պարտաւորութիւնն է արթուն հսկողութիւն ունենալ դստեր ընթերցանութեան վրայ։ Վատ գրքերի հետ ծանօթանալը կարող է ոչնչացնել մինչև անգամ ամենալաւ դաստիարակութեան պտուղները։ Քանի որ խելքը դեռ բաւականաչափ չի հասունացել, պէտք է հեռացնել այն ամենը, ինչ որ կարող էր վնասել նորան և նա մանաւանդ բանաստեղծութեան և վիպասանութեան այն փքուն և անբովանդակ արդիւնքները, որոնցով ծանրաբեռնել է մեզ նորագոյն մատենագրութիւնը։ Չափազանց զգայականութիւնը և դիւրագրգռութիւնը պէտք է միակերպ արմատախիլ անուին օրիորդների սրտից։ Այն ոսկեզօծ փառակազմ գրքերը, որ մեզանում նուիրում են կանանց, յաճախ վէպերից պակաս վնասակար չեն նոցա համար. օրիորդները դոցանից առաւել առողջարար սնունդի կարօտ են։ Սակայն մենք ամենևին չենք ուզում ասել, որ օրիորդներին անպայման պէտք է արգելել վէպերի ընթերցանութիւնը. ընդհակառակն, լաւ վիպասանութիւնը առաւել լաւ է զարգացնում բարութեան, ճշմարտութեան և գեղեցկութեան ճաշակը, քան շատ ուրիշ բաղմահատոր բարոյագիտական շարադրութիւններ։ — Կնոջ աչքը պէտք է վարժուի ճանաչելու իրական կեանքը նա և բանաստեղծական նկարագրութեան մէջ, թէ և, երբեմնապէս, այդ կեանքը իրօք թաւում է և վշտալից և սոսկալի. բայց ամենից առաւել պէտք է ջանալ հեռացնելու օրիորդներից գրականութեան վատ և անպիտան արտադրութիւնները։ —

Վերուը խօսք եղաւ այն կանանց մասին, որոնք ամաչում են տնային աշխատանքներից, բայց այստեղ չի կարելի չը յիշել և այն տարօրինակ մայրիկներին ու նոցա դուստրներին, որոնք արհամարհանքով են նայում ամեն մտաւոր զբաղմունքների վրայ։ Ամենից առաւել նոցա է վերաբերում Ելիսավէտա Շտէհէմանի խօսքերը. «Սիրով արհամարհում են այն, ինչ որ չեն հասկանում և ինչին որ տգիտութեան պատճառաւ չեն հաւատում։ Եթէ մինը անշնորհք է, այնուհետև

նա միշտ համամիտ է պարսաւելու և ծաղրելու ուրիշների ձգտումները, փոխանակ պարզ խոստովանելու, որ նա գաղափար անգամ չունի գործի մասին»։ Ապաբաղտութիւն է, եթէ այս յարգելի տանտիկինների առաջ հանդէս կը գայ մի վսեմ ձգտումներով ոգևորուած կին, որի համար ուրիշ առաւել վսեմ բաներ կան, քան գուլպայ գործելը, աղախիններ պահելն ու կիրակնօրեայ փարթամ ճաշ պատրաստելը։ Ի՜նչ մեծամտութեամբ նոքա ուսերը վեր են քաշում, երբ խօսք է լինում լաւ գրքի, կամ մի ուրիշ մտաւոր արդիւնքի մասին. նոքա իսկոյն և եթ շտապում են նկատել. «մենք դորա համար ժամանակ չունինք», կամ թէ. «այդ կնոջ վայել խօսակցութիւն չէ»։ Բայց նոքա չէ՞ որ ժամանակ ունին տնտեսութեան ամենամանրակրկիտ նկատողութեանց համար, չէ՞ որ ազատ ժամեր ունին ամենաանպիտան վէպեր կարդալու, չէ՞ որ ժամանակ ունին անվերջ բամբասանքների և զրպարտութեանց համար այցելութիւններ անելու։ Ուրեմն ի՞նչը կարող է հաշտեցնել այս երկու ծայրահեղութիւնները, եթէ ոչ կրթութիւնը։ Նոյն յարգանքը, որպիսին մենք ցանկանում ենք զարթեցնել օրիորդների մէջ դէպի տնտեսական աշխատանքները. պէտք է կազդուրէ նոցա նա և մտաւոր պարապմունքների համար։ Եթէ առաջինների վրայ օրիորդները պէտք է նայեն իբրև իրանց մերձակայ պարտաւորութիւններ կատարելու վրայ, այնուհետև վերջիններս նոքա պէտք է համարեն իբրև իրենց բարձրագոյն, յաւիտենական բարիք։ Միայն զարգացման այդպիսի աստիճանին հասած կինը մարդու պէս հանդիսանում է որպէս իւր վիճակի անկախ, ինքնուրոյն տնօրինող։—

2

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ի՞նչպէս են կարողանում մարդիկ այդքան յօժարութեամբ անընդհատ ժամակորոյս լինել զուր և անօգուտ բաւականութեանց համար, եթէ կէս դար հազիւ բաւական է, որ մարդս սովորէր վայելուչ կեանք վարել.—Մինչդեռ մեր առաջ այնքան բազմաթիւ խրատական և անմեղ գեղեցկութիւններ են հանդիսանում, որոնց մեր հոգին ծարաւի է։

Ելիսավէտա Շտէհէման։

Բայց կասեն շատերը, արդեօք կայ միջոց այդ բոլոր պահանջներին բաւականութիւն տալու։ Եթէ օրիորդների մտաւոր ընդունակութիւնները պէտք է զարգացնել, այնուհետև ինչպէս ժամանակ գտնենք տնտեսութիւն ուսուցանելու նոցա։ Սորան դժուար չէ պատասխանել։ Կնոջ կրթութեան երկու կողմերն էլ դիւրին է միացնել ոչ միայն ուսումնական տարիներում, այլ նա և նոյն իսկ կեանքի մէջ, եթէ միայն մենք չափից դուրս անձնատուր չենք լինում աշխարհային բաւականութեանց, որոնք խեղդելով զգայմունքը, մեզ թեթևսօլիկ են դարձնում և նախապաշարմունքների ու փառասիրութեան զոհ շինում։

Խօսքն այստեղ ոչ թէ հարուստ ընտանիքների մասին է, այլ այն դասակարգի, ուր աշխատանքը և հոգևոր կեանքը պէտք է ձեռք ձեռքի տուած ընթանան. այս սերտ կապի վրայ է հիմնվում միջին դասակարգի բարօրութիւնը։ Միջին դասակարգը վաղուց պէտք է վերադառնար նախկին պարզութեան, հոգեկան բաւականութեանց և դէն ձգէր հարուստ հասարակութեան ամեն տեսակ հաճոյամոլութեանց

կոյր նմանողութեան փորձերը, որի սովորութիւնները չեն համապատասխանում ոչ մեր նիւթական միջոցներին, ոչ կեանքի եղանակին։

Դժբաղտաբար, ամբոխը առաւել ու սառաւել գրաւվում է բաւականութեանց ու զուարճութեանց կրքերով, որոնք նորա ոյժերից շատ և շատ վեր են. այն ինչ կինը միշտ կը մնայ փառասէր, երերուն և թեթևամիտ, մինչև որ նորա մէջ չենք զարգացնիլ իրեն բնութեան յատուկ առաւել ազնիւ կողմը, մինչև որ նորա ձգտումներին կարևոր ուղղութիւնը չենք տալ որ նա հասարակութեան մէջ հաստատուն դիրք բռնէր։

Ոչոք ի հարկէ, չէ մտածում պախարակել հանրակեցութիւնը, բայց անկարելի է չը զինուել անվերջ պարահանդէսների ու երեկոյթների, խաժամուժ ամբոխի ժողովների դէմ, որոնք շատ քիչ անկեղծ բաւականութիւն են տալիս, բայց միշտ գրաւում են այնպիսի մարդոց, որոնք իրենց աղքատ հոգևոր զարգացման շնորհիւ սարսափում են այն մտքից, թէ մի գիշեր իրանց ընտանեաց շրջանում պէտք է անցկացնեն։

Այն դեռահաս օրիորդի համար, որ նոր է սկսում աշխարհ մտնել և միայն երևակայում և մտատանջվում է պարի, շքեղ հագուստի, սիրաբորբոք քնքշութեանց և երկրպագուների մասին,—դադարում են բոլոր մտաւոր զբաղմունքները, բոլոր վսեմ ձգտումները. նա ցանկանում է միայն կեանք վայելել, որոնում է աղմկալից բաւականութիւններ, և սորանով ամենակարճ ժամանակում ոչնչացնում է իւր ամենաընտիր ընդունակութիւնները, ամենաղեղեցիկ յատկութեանց սերմերը։ Շատ կարելի է, կարծում են, թէ ողջ մին է, 15 թէ 18 տարեկան հասակում կը սկսէ օրիորդը ժողովարաններ յաճախել։ Բայց իրօք այդ տեղ ահագին տարբերութիւն կայ։ 15-ից մինչև 18 տարեկան հասակում անհաւատալի արագութեամբ կազմակերպվում է օրիորդի բնաւորութիւնը, և այս պատճառաւ էլ ահա այստեղ է հարկաւոր լուրջ զբաղմունքների շարունակելը, որոնք միայնակ կարող էին յետ մղել նորան դէպի թեթևամտու-

թիւնն և ցնորական երևակայութիւնն ունեցած բնածին հակումից, որը խեղդում է նորա մէջ նոյն իսկ առ ճշմարտութիւնն ունեցած սէրը։

Բայց և այնպէս այս հասակումն էլ կարելի է զուարճութիւն ու բաւականութիւն պատճառել մանկահաս օրիորդին, իրեն տարիների ու մանկական հասկացողութեան համապատասխան։ Այս բաւականութիւնները կարող են զարթեցնել նորանում սէր դէպի կեանքի խաղաղ վայելչութիւնները և լիովին փոխարինել նորա համար բոլոր մանկական պարահանդէսներն ու դիմակահանդէսները, հասարակական կեանքի այդ տիկնական կատակերգութիւնը։

Կասկած չը կայ, որ 18 տարեկան օրիորդը, որ պատրաստուել է կեանքի համար կանոնաւոր դաստիարակութեամբ, աշխարհ է մտնում նորա մասին բոլորովին ուրիշ հայեացքով, քան այն նազելի, դորոգ 15 տարեկան տիկինները, որոնց առաւել յարմար կը լինէր դեռ էլի մանկանոցներում պահել։ 18 տարեկան հասակում օրիորդի սեփական արժանաւորութեան և պատուոյ զգացումը զարգանում է, արժանաւորութիւն, որ դեռ նիրհում է մանուկի մէջ, իսկ արժանաւորութիւնն ի հարկէ, կանացի բնութեան ամենալաւ սեփականութիւնն է։ Նոյն այդ արժանաւորութիւնը պահպանում է կնոջը փառասիրութեան և շողոքորթութեան բոլոր ցոյցերից, որոնց այնպէս դիւրութեամբ հպատակում է կնոջ սիրտը։

Mais c'est la flatterie qui courbe si bas ces têtes ardentes et légères*) բոլորովին իրաւամբ նկատեց շնորհալի մատենագրուհին. այս պատճառաւ պէտք է հեռացնել օրիորդներից ամեն տեսակ շողոքորթութեան նշոյլները, քանի որ նոքա ուրիշ մտքով կը հասկանան այդ և քանի որ չեն սովորել հասկանալու նորա իսկական նշանակութիւնը։

Կանոնաւոր դաստիարակուած և լաւ կրթուած օրիորդը հասարակական կեանքն է մտնում համեստութեամբ և ար-

*) Բայց շողոքորթութիւնն է, որ խոնարհեցնում է անչափ ցած այս վառվռուն և թեթևամիտ գլուխները։

ժանաւորութեամբ, որոնք նորան ճշմարիտ գրաւիչ են դարձնում։ Ինքնագլուխ գործելով, նա չի կարօտում հասարակութեան գովեստներին. նորան մատչելի են վսեմ ձգտումները, ամենաընտիր բաւականութիւնները, իսկ աշխարհիս աղմկալից զուարճութիւններից նա միշտ ուրախութեամբ և անձնական գոհունակութեամբ կը վերադառնայ դէպ ընտանեկան կեանքը, իւր թանգագին ընտանեաց շրջանը։ Նոր աշխարհ մտնող օրիորդը առաջին տարիները կրում է անասելի վրդովմունքներ, և առաւել այս միջոցին, քան երբ և իցէ, նա զտնվում է արտաքին տպաւորութեանց ազդեցութեան ներքոյ. այս պատճառաւ էլ նորան չը պէտք է աշխարհ մտցնել, մինչև որ նա գիտակցութեան կը հասնի և մի որոշ մտաւոր հասունութեան։

Բայց և այնպէս նոյնքան ծաղրալի կը լիներ զրկել օրիորդներին հասարակական բոլոր բաւականութիւններից, որքան և ծաղրալի կը լիներ չափազանց վաղ և յաճախակի մտցնել նորան աշխարհ։ Տէրը փրկէ մեզ ու ազատէ այն նազելի դեռահասներից, որոնք արհամարհում են սպարերը, ուրախ հասարակութիւնը կամ խելօք հանաքը։ Ուրեմն սկսենք սպարզ և բնականաբար վայելել հասարակական կեանքի զուարճութիւնները, բայց նոքա չը պէտք է լինեն մեզ համար լոկ միայն ժամանակ անց կացնելու միջոց։ Աշխարհս բացի զուարճութիւններից և բաւականութիւններից, կնոջ համար պէտք է լինի նաև կեանքի վարժարան. փորձառութիւնը և դիտողականութիւնը նա ձեռք է բերում, ինչպէս և մարդը, միայն տնից դուրս. բայց սորա համար նորան հարկաւոր է նախ և առաջ կարողանալ նեցուկ գտնել ընտանեաց և իւր մտաւոր զարգացման մէջ. այն ժամանակ միայն աշխարհը ոչ թէ կը փչացնի նորան, այլ կը լրացնէ նորա կրթութիւնը։

Ընդհակառակն, տեսէք թէ ինչ է այն օրիորդների վիճակը, որոնք ոչինչ չ՝անելով, միայն փայլում են հասարակութեան մէջ։ Աշխարհային փոթորիկներից տարուելով, նոքա շուտով տեսնում են իրանց առանց դեկի ու առագաստների կենսական ալեկոծեալ ծովի մէջ։ Նոցա անպատճառ ջղային

հիւանդութիւն և միգրէն է պատահում միշտ այն գիշերները, երբ նոքա տանը պէտք է անցկացնեն. նոքա կենդանանում են միայն պարահանդիսում, ուր պարում են մինչև ուժասպառ լինելը։ Մինչև անգամ զարմանալի է, թէ ինչպէս այն օրիորդները, որոնք չը գիտեն յոգնել երեկոյթներում, ամուսնանալուց յետոյ սկսում են յանկարծ տանջուել ջղային հիւանդութեամբ և յոգնում են ամենափոքր տնային գործ կատարելիս։ Նոցա համար անտանելի հեղձուցիչ է խոհանոցի և լուացարանի օդը, բայց հեղձուցիչ չէ պարահանդիսի հիւրերի խռնուածքում։ Նոցա զբաղմունքներից զզուելը և այն դժգոհութիւնը, որով նոքա կատարում են իրանց պարտաւորութիւնները, այնքան փչացնում է նոցա, որ նոցա իրանց տներում տեսնելով, դժուար է հաւատալ, թէ սոքա հէնց նոյն տիկնայքն են, որոնք այնպիսի հրապոյրով ժպտում էին պարահանդիսում, ծաղիկներով և անուշահոտութեամբ զարդարուած։ Ցաւալի է տեսնել, թէ ինչպէս երբեմն մատաղահաս զոյգը ամենաճոխ օթևաններում թախծութիւնից մեռնում է միայն նորա համար, որ տանտիկինը չի կարողանում լինել ոչ այլ ինչ, եթէ ոչ աշխարհային նազանեմ տիկին։

Հոգեկան բաւականութեանց ներդաշնակ միաւորութիւնը նիւթական աշխատանքի հետ շնորհում է մարդուն այն խաղաղ երջանկութիւնը, որի հետ ոչինչ չի կարող համեմատուիլ։ Թէպէտ և հասարակական բաւականութիւնները կասեցնում են մի առ ժամանակ մարդկային բնութեանը յատուկ առ գործունէութիւնն ունեցած ձգտումն, սակայն նորան առ միշտ խլացնել անհնարին է։ Նա երևում է իբրև ուրուական աշխարհային բաւականութեամբ յագեցած կնոջ աչերին, և իւր ոչնչութեան մասին զարհուրելի մտատանջութիւնը յաճախ վրդովում է նորան շքեղ խնճոյքներում։ Եւ այժմս էլ շատ կանայք կը դառնային ճշմարտութեան ճանապարհը, փոխարինելով փառասիրութիւնը պարզութեան և գործունէութեան, եթէ միայն կարողանային այդ անել։ Դժբաղտաբար, տգիտութեամբ և անփորձութեամբ նոքա ընկնում են մեղքի և մոլորութեանց մէջ. նոցա այդ տեղ

ձգում է մեր փքուած, կեղծ դիմակով պատսպարուած հասարակութիւնը, և նա մեռցնում է անուղղելի չարութեամբ կնոջ զգայուն սիրտը, որը ամրապնդուած չէ հիմնաւոր դաստիարակութեամբ։ Կնոջ մէջ ախտը միշտ աւելի գերադոյն աստիճանին է հասնում, քան մարդու մէջ։ Նա քնքոյշ է և զգայուն, և վատ ուղղութեամբ դաստիարակուելով, ընկնում է այնպիսի ծայրահեղութեանց մէջ, որոնք խիստ հակառակում են ամենայն բարի, ճշմարիտ և գեղեցիկ բանին։ Տղամարդը թէկուզ էլ անհիմն կրթութիւն ստանար, այնու ամենայնիւ նա միշտ որոշ հասարակական զբաղմունքներ ունի, որոնք պահում են նորան յայտնի չափաւոր սահմանների մէջ։ բայց աշխարհային զուարճութեանց անձնատուր եղած կինը չունի նա և գոնէ այդ պատուարը։ Անընդհատ զբաղուած լինելով ունայն փառասիրութեան և եսամոլութեան մանրակրկիտ խնդիրներով, նա ի վերջոյ դառնում է յաւակցութեան և արհամարհանաց առարկայ։

Կանացի խելքը յայտնի չէ իւր խորունկ մտածողութեամբ. նորա մէջ աւելի շատ կայ ընդգրեցիկ ըմբռնողութիւն և անբաւարար մտաւոր զարգացման շնորհիւ, նա հակումն է ստանում ամենահրէշաւոր խորհուրդներ տածելու և մի որևէ է լոկ չնչին դիտումից կամ նկատողութիւնից անվերջ բամբասանքներ է ստեղծում։ Բամբասելուն ընտելանալու սովորութիւնը դարձնում է կանանց կեղծ, թեթևսոլիկ արարածներ, որոնք չը հասկանալով իրանց տուած վնասը, չեն խնայում մինչև անգամ ամենավսեմ զգացումները և միայն իւրեանց վիրաւորական և ծաղրալի բարբաջանքի առարկայ են որոնում։ Զարը տաւել առաջ է գնում այն կանանց մէջ, որոնք անընդունակ են ոչ վէճ նպատակներին նուիրուելու, ոչ իրողութիւնը հիմնաւորապէս ճանաչելու, — ուստի դոցանից կազմվում են այն մանրակրկիտ դաղափարները, որոնք թափանցում են ամբողջ հասարակութեան խորքը, նորան ուղղութիւն են տալիս և իրենց մեղկ և աւերիչ ներգործութեամբ մի քանի տասնեակ տարիներ ուշացնում են ամենաբնտիր, ամենաազնիւ յոյսերի իրագործելը։ Թէ այն կինը, որը բացառապէս տնտեսութեանն է նուի-

բուած,—ինչպէս և նա, որը միայն աշխարհային վայելչութեանց և նոցա պահանջների մասին է հոգում, երկուսն էլ համահաւասար նեղ հայեացք ունին կեանքի վրայ. թէ մէկի և թէ միւսի սրտի և բնաւորութեան ընդհանուր թերութիւնները ծագում են լուրջ մտաւոր կրթութեան բացակայութիւնից։ Նոքա երկուսն էլ շատ քիչ բարոյական արժանաւորութիւն ունին, ուստի և հետևանքը նոյնն է լինում.— մի և նոյն է, սուրճը ձեռիդ բռնած հասարակ տանը բամբասես, թէ շքեղ դահլիճում։

Մտքի դատարկութիւնը և սրտի կոշտութիւնը առաւելապէս ծագում են դէպի փոփոխամտութիւնն ունեցած անյագ կրքերից, որը անմտութեամբ է սքողում ամենաընտիր ոգիները։ Գրաւիչ և վայելուչ վարուել իմանալը, որոնց կարևորութիւնը չի հերքիլ ոչ մի կրթուած մարդ, բազմիցս դառնում են արդէն ոչ թէ միջոց, այլ լոկ միայն բացառապէս նպատակ. իսկ արտաքին գրաւիչ դիմակի տակից բարձրացնում են իւրեանց գլուխը ողորմելի շողոքորթութիւնը տգիտութիւնն ու ստորութիւնը այնտեղ՝—ուր մոռացութեան է տուած իսկական և ճշմարիտ արժանաւորութիւնը։ Դաստիարակութեան ամենագլխաւոր պարտաւորութիւններից մէկն էլ հէնց նորանումն է կայանում, որ օրիորդին ճիշտ գաղափար տար այն հասարակութեան մասին, որ ներկայանում է նորա պատանեկական երևակայութեանը իւր բոլոր գիւթիչ հրաշալիքներով։ Conservez si vous pouves, les intérêts qui vous attachent à la société, mais cultivez en même temps les sentiments, qui vous en séparent։ *)

Աշխարհս աշխատում է ամեն ինչ հաւասարացնել և հանդուրժում է միայն այն բանին, ինչ որ նորան չի հակառակում. նորան հարկաւոր են այնպիսի մարդիկ, որոնք նորա պահանջների առաջ վիզը ճկում և քծնում են, որոնք քսութեամբ գովում են նորա բոպէական բաղ-

*) Պահպանեցէք՝ եթէ կարող էք՝ այն շահերը՝ որ ձեզ կապում են մարդկային ընկերութեան հետ՝ բայց ընդ նմին մշակեցէք նա և այն զգացումները՝ որ նորանից ձեզ կը բաժանէ։

ձանքները, որոնք միայն շռայլութիւն և բաւականութիւն են որոնում։ Աշխարհս չի կարող թոյլ տալ մինչև անգամ մի փոքր լուրջ քննադատութիւն անելու. այդ քննադատութիւնը մահացու հարուած կը հասցնէր նորան. ով այս կռիւին պաշտել է ուզում, պէտք է զոհի դորան իւր ամենաբնտիր համոզմունքները։ Բայց ո՞ւր է հանրակեցութեան և աւելորդ աշխարհամոլութեան սահմանը։ Այստեղ, ինչպէս և ամեն բանում, ճշմարիտ կրթուած մարդը պէտք է գըլխաւորապէս ղեկավարուի իւր սեփական գիտակցութեամբ։ Հասկանալով և գնահատելով վսեմ բաւականութեանց արժանիքը, կինը երբէք չի խուսափիլ հասարակութիւնից, բայց և երբէք նորա ստրուկը չի դառնալ։ Ղեկավարուելով ոչ թէ դէպի բաւականութիւններն ունեցած կրքով, այլ խելացի ընտրողականութեամբ, նա առաջին հանդիպածի հետ բարեկամութիւն չի անիլ, որ միայն կարող էր նորան բաւականութեան առիթ պատճառել. նա ինքը կը մտցնի իւր ծանօթութեան շրջանում վսեմ ձգտումների դաղափարը, ամենևին չը հոգալով աշխարհիս արտաքին ունայնութեան մասին։

Ի վերջոյ և այն վնասակար ազդեցութիւնը, որպիսին հասարակութիւնն ունեցաւ մեր ընտանեկան կեանքի վրայ,— այդ չարիքը պէտք է տրմատախիլ անեն արժանաւոր, խոհեմ կանայք։

Ժամանակ է վերջապէս միջին դասակարգին դէն ձգելու հարուստներին նմանուելու այն մանկական ցանկութիւնը, որոնց համար աշխարհասիրութիւնը աւելի քիչ վնասակար է. նոքա պարապորդ ժամերի պակասութիւն չունին, և զուարճութեան համար նոքա կարիք չունին զոհելու կըրթութիւնը։ Բայց ցաւալի է նայել մեր օրիորդների վրայ, թէ ինչպէս նոքա երբեմն ամբողջ օր ու գիշերներ նստում են աշխատելու, որպէս զի միայն գոհացնեն իրանց փառասիրութիւնը, և հանդերձների շքեղութեան մէջ բարձր շրջանի տիկնոջից յետ կը մնան։ Ժամանակակից տարազներին համապատասխան շորերի հագնելը այնքան գրաւում է նոցա, որ դորա համար ամբողջ շաբաթներ են գործ դնում, մոռա-

նալով, որ նոցա խելքը և սիրտը առանց սնունդի են մնում, և որ դորա փոխանակ, այդ կորցրած ժամանակը կարող էին գործածել հոգու համար անփոխարինելի և անգին բարիքներ ընձեռելով։

Տարազների պահանջները հասել են այնպիսի չափազանց զարգացման, որ լոկ միայն նոցա բաւականութիւն տալու համար բարձի թոռի են առնում և գիտութիւնը, և ընթերցանութիւնը և բոլոր տնային պարտաւորութիւնները։

Ո՛չ միայն ծաղրալի, այլ և ամենայն ցաւակցութեան արժանի է, եթէ միջին դասակարգի օրիորդը հագնվում է իւր կարողութիւնից վեր և ի զուր այնքան ժամակորոյս լինում արտաքին ունայն փայլի համար, մոռանալով որ իրեն վսեմ իդէալի,—աշխարհասէր հարուստ տիկնոջ պըչրանքները կատարում են նորա նաժիշտները և այդպիսով նորանից ժամանակ չեն խլում առաւել լուրջ զբաղմունքներին յանձնատուր լինելու։ Ընդ նմին, եթէ մեր շրջանում օրիորդը իւր արտաքոյ կարգի զարդարուելովը աչքի է ընկնում,—այդ շռայլութիւնը նորան ներելու նպատակաւ, ասում են. «բայց գիտէք որ այդ բոլորը նա ինքն է կարում»։ Եւ ահա՛ հէնց այս էլ նշանակում է ի զուր տեղը թանկագին ժամանակը կորցնել արտաքին ունայնասիրութեան վրայ, և հրաժարուիլ ամեն վսեմ գեղեցիկ և բարի բաներից։ Յիշեցէք Գեօթէի ասածը... «Մի և նոյն բանը ամենին չի սազում»։ Բայց ներկայումս կարծում են, որ մինչև անգամ առօրեայ կեանքում ամեն ինչ ընտանի է իւրաքանչիւրին։

Ճաշակի պակասութիւնը և մեր դրութիւնից առաւել բարձր երևալու ցանկութիւնը ենթարկում են մեզ տարազներին ո՛չ միայն փողոցում, այլ և մեր տանը։ Այդպիսով առաւել ու առաւել ընտանեկան միջոցները չեն համապատասխանում արտաքին կենցաղավարութեան։ Տարէ ցտարի նուազում են միջին դասակարգի այնպիսի կանայք, որոնք շատ փող չը վատնելով իրանց զարդարանքների վրայ, միշտ այնպէս են հագնուած լինում, որ անարգել կարող են տընտեսութեամբ պարապել և առանց շորերը փոխելու, վայելուչ կերպով ընդունել ամեն հիւրի, կամ նոյն շորերով

տնից դուրս գալ։ Մեծամասնութիւնը նստած է տներում զզզուած և միայն այն ժամանակ են հագնվում, երբ տնից դուրս են գնում. ահա այստեղ են շղշղում թանկագին մետաքսեայ շորերը, ծածանվում ժապաւէններն ու ծոփերը. այդպիսի զուգուած զարդարուած տիկնոջը հանդիպելով, հագուստից չես էլ կարող իմանալ, բարձր դասակարգին է պատկանում նա, թէ խեղճ աստիճանաւորի կինը կամ աղջիկն է։

Հագուստի աւելորդ նրբութիւնները ստիպում են կնոջը խորշել իւր գործնական պարտաւորութիւնները կատարելուց։ Կամ նա պէտք է հրաժարուի կեղծ գեղեցկութիւն ունենալուց, կամ թէ չի կարող կառավարել տունը, ձեռքը մեկնել, ուր այդ հարկաւոր է։ Բայց այս դեռ բոլորը չէ։ Այն շքեղութիւնը և փայլը, որոնցով երևում են հասարակութեան մէջ նոյնը, շատերը, գոնէ ըստ երևութին, կամենում են պահպանել և իրանց տներում։ Ցիրաւի, ծաղրալի է տեսնել միջին դասակարգի տներում այնպիսի շքեղութիւն, որ ամենևին չի համապատասխանում նոցա կարողութեան։ Թանկագին կահ կարասիքը և գեղեցիկ զարդերը շատ լաւ են և բոլորովին իրանց տեղն են այն դահլիճներում և հիւրասենեակներում, որոնք բացվում են միայն հիւրեր ընդունելու համար. իսկ առօրեայ բնակութեան համար ծառայող սենեակները պէտք է իրենց նշանակութեան համապատասխան յարմարեցրած լինին։ Բայց այժմ մինչև անգամ ներսին օթևանները այնպէս լցուած են զանազան ալբոմներով և թանկագին զարդերով, որ, յիրաւի, չը գիտես թէ ուր դնես բաժակը կամ կարը—նա մանաւանդ, ինչպէս ներս թողնես այնտեղ մանուկներին։ Կանայք յօժարութեամբ զրկում են իրանց ամեն բանում, երբ հիւրեր չկան, ամենայն նեղութիւն և զրկանք յանձն են առնում միայն նորա համար, որպէս զի հիւրերը չը վրայ հասնէին աշխատելիս կամ համեստ ճաշի ժամանակ։ Մի քանի տանտիկիններ ամենայն խընամքով և անտանելի վրդովմամբ այդ արտաքին փայլը պահպանելով, ընդ նմին մի որոշ աստիճանի կատարում են իւրեանց իսկական պարտաւորութիւնները։ Սոքա առաւել արժանի են ցաւակցութեան, աւելի շուտ ժպիտ են յառաջացնում,

քան թէ խիստ յանդիմանութիւն։ Բանն այն է, որ տնտեսութիւնը չը պէտք է ամենի առաջ ցոյց տալու առարկայ շինել, բայց ինչու համար նորան այդպիսի երկիւղով պէտք է ուրիշներից թագցնել. ինչու նորանով պարապելիս պէտք է ամաչել միջին դասակարգում միայն այն պատճառաւ, որ նորանով չեն պարապում բարձր շրջաններում։ Ամենասովորական պարտաւորութիւնները կարելի է շնորհքով և վայելչութեամբ կատարել և այնուհետև այլ ևս կարիք չի լինիլ վախենալու անսպասելի այցելուից։

Ընդհակառակն, պէտք է հալածել այնպիսի տանտիկիններին, որոնց տան լոկ միայն արտաքին փայլը ծածկում է ներքին ողբալի անկարգութիւնը։ Որպէս զի կարողանային փառասիրութեանը բաւականութիւն տալ, երեկոյթին հիւրերին ընտիր խմիչքներով և գինիներով հիւրասիրել, որպէս զի կարողանային իրանց տանը ամենայն օր հիւրեր ընդունել և ամենաշքեղ հանդերձեղէնքն ունենալ, այս բաների համար նոքա մի քանի ամիս շարունակ գրեթէ քաղցած են մնում։ Նայեցէք այս արտաքին փայլունութեան ներսի խորքերը. Ինչպիսի կարիք, Ինչպիսի ժլատութիւն, Ինչպիսի անյարմարութիւններ կը տեսնէք։ Ահա թէ նոքա Ինչու են տնից վախչում, որպէս զի մոռացութեան տան այս անսխորժ տեսարանները։ Վատ սպիտակեղէն, վատ սեղան, սպասաւորների և կեանքի ամենակարևոր յարմարութեանց պակասութիւններ,—ահա նոցա կեցութեան իսկական նկարագիրը։ Այն ժամանակ ամուսինը, ի հարկէ, ամենայն տեղ իրան աւելի երջանիկ է համարում, քան թէ տանը, և հասկանալի է, թէ Ինչու մանուկները, թէ և արտաքուստ կանոնաւոր և վայելուչ են հագնուած, բայց և այնպէս—դոցա մտքերը և զգացումները մնում են կոպիտ և անպիտան, իսկ ժամանակով կը լինեն նոյնքան թեթևսոլիկ և փառասէր, ինչպէս իրանց մայրերը, որոնք այնքան վատ են կատարում իրանց պարտաւորութիւնները։

Բայց բաւական չէ, որ այդ ուղղութիւնը խանգարում է ընտանեկան երջանկութեանը, նա էական վնաս է տալիս ամբողջ հասարակութեան։ Եթէ նա միայն մնալու լիներ մէկ

դասակարգի մէջ,—չէր դիմանալ ծաղրին և հալածանքին,—բայց տարափոխիկ ախտի նման նա վարակում է հասարակութեան բոլոր շրջանները։ Այնքան քիչ են այնպիսի կանայք, որոնք բաւականաչափ հաստատամտութիւն, կամքի ոյժ և ազնուութիւն ունենային, որ իրանց կարողութեան համապատասխան ապրէին,—որ նոցա մատով կարելի է ցոյց տալ. իսկ այնպիսի տնտեսութիւնը, ուր եկ ու մուտքի ծայրը ծայրին չեն հասցնում, ի հարկէ, չի կարող արհամարհանք չը զարթեցնել։ Եթէ ծաղրելի էր տանը զրկողութեանց համբերելը, բայց տանից դուրս փայլելը,—և առաւել ևս այնպիսի շռայլութեամբ ապրելը, որը ունեցած միջոցներից վեր է,—պարզ դողութիւն է աշխատող անձանց վերաբերութեամբ։ Կանայք։ Ահա այն ասպարէզը, ուր դուք կարող էք ճշմարիտ օգտակար լինել հասարակութեանը։ Դուք, որ ընտանեկան գբաղմունքները խիստ չնչին էք համարում, դուք, որ ցանկանում էք առաւել ընդարձակ ասպարիզում գործել, լաւ նայեցէք, արդեօք այստեղ չը պիտի սկսուին ձեր պարտաւորութիւնները, արդեօք դուք ամբողջ մարդկութեանը ծառայութիւն արած չէք լինիլ, եթէ ձեր ճշմարտասիրութիւնը և ազնուութիւնը վրդովւում են, երբ մտածում էք, թէ փայլում էք նոցա հաշուով, որոնք արիւն քրտինք են թափում ձեզ համար, որոնց մանուկներն ապրում են այդ աշխատանքի քրտանց գնով։ Կարելի է արդեօք համակրել այն կնոջը, որքան էլ գեղեցիկ և գրաւիչ լինէր նա, եթէ ի զուր է նորա դուռը բաղխում արհեստաւորը կամ վաճառականը իրան հասանելի փողի համար։ Ինչպէս ճմլվում է մարդու սիրտը այս արտաքին շռայլութիւնը տեսնելիս, որի յետևից թագնված է ներքին աղքատութիւնը։ Բայց որքան ծանր է մտածել, որ այս թշուառ դատարկութիւնը, որը կործանում է մէկ սերունդը միւսից յետոյ, աշխատող անձանց բարօրութեան հետ, բաւականացնում է միայն ողբալի փառասիրութիւնը։

Այն մարդը, որ կարողանում է իւր աշխատող մերձակաների արեան քրտնքի հաշուով ապրել, որը այնքան ազնիւ չէ, որ աւելի լաւ համարէր թօթափել իրանից արտա-

քին շքեղութիւնը, քան թէ խլել արժանի վարձը նորանից, ով իւր համար աշխատել էր,—այդպիսի մարդը կրկնում եմ, չի կարող լինել յարգանաց արժանի, ինչպիսի զարմանալի հանճարով էլ օժտուած չը լինէր նա բնութիւնից։ Հեռու, հեռու մեզանից ստոր, ժպտալի դգուանք ճռճռան ֆրազներով, առանց զգացմունքի ու մտքի։ Կանայք. ամենից առաւել հոգացէք կեանքի ներդաշնակութեան մասին և հասարակշռութիւն պահպանելով ամեն բանի մէջ, մի մոռանաք ձեր հաշիւները վերաստուգելու։ Թէ տանտիկինը, թէ մայրը և թէ գործունեայ օրիորդը՝—հասարակութեան ամենաօգտակար անդամներ են, եթէ նոքա յարգում են իրանց մերձակաների իրաւունքները, և այդպէս անուանեալ բարձր շրջանի հասարակութեանց կոյր հետևողութեամբ չեն աւերում արժանաւոր քաղաքացիների ընտանիքները։

Բ

ԿԵՂԾ ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆԵՐ.

Կանանց կրթութեան ամենամեծ նպատակն է տալ կնոջը ինքնուրոյնութիւն և գիտակցական կենցաղավարութիւն։ Կինը այս առաւելութիւններից, ի հարկ է, պէտք է օգուտ քաղի գործնական կեանքի մէջ. բայց սորանից չի հետևում, որ նա, ինչպէս ներկայումս շատ անգամ պատահում է, առանց մի առանձին կարիք ունենալու, պիտի շեղուէր իւր պարտաւորութիւնների բնական շրջանից և ի վնաս նոցա, իրեն համար նորա գործունէութեան ասպարէզ որոնէր։ Նիւթական կեանքի անդադար աճող կարիքները ապացուցանում են այս. կինը աշխատանքի մէջ պէտք է որոնէ ապրելու միջոցները, բայց շատ անգամ այն էլ է լինում, որ նա դիմում է շահախնդրական արհեստին միայն իւր փառասիրութիւնը և դէպի շքեղ հանդերձներն ունեցած աւելորդ կիրքը յագեցնելու համար։ Ընտանեկան կեանքում պարզութեան հետ միասին անյայտանում է և իւր դիրքից գոհ լինելը. սրտատրոփ ձգտումը դէպի շահախնդրութիւնն ու արտաքին փայլը մեր կանանց յատկանիշներն են կազմում և նոքա են

զրկում նոցա ամենտեսակ բանաստեղծական գորովից։ Օրիորդի գործունէութիւնն սովորաբար պէտք է կենդրոնանայ իւր սեփական ընտանեաց շրջանում. այդ տեղ նա կարող է ուսումն աւարտելուց յետոյ պատրաստիլ իրան կեանքի համար և այդ ասպարիզում նա իւր համար միշտ բաւականաչափ զբաղմունքներ կը գտնէ։ Բայց նոյն իսկ այս պարտաւորութիւնը ամենից շուտ է մոռացվում. մատաղահաս օրիորդները մոռանում են, որ ոչ միայն ամուսինները, այլ և ծնողները նոյնպէս իրաւունք ունին նոցա գործակցութեան վրայ, և որ նոքա պարտաւոր են օգնել տանը և նպաստել ընտանեկան բարօրութեան։

Այն դաստիարակութիւնը, որպիսին մենք ենք ցանկանում, կը լրացնէր այդ պակասութիւնը և զարգացնելով մտաւոր գործունէութիւնն ու ներքին եռանդը, օրիորդներին առաւել անտարբեր կը դարձնէր դէպի այն արտաքին առարկաները, առանց որոց պարզ և համեստ մարդը շատ դիւրութեամբ կարող է կեանք վայելել։ Եթէ օրիորդների ուսումը պէտք է մինչև 18 տարեկան հասակը շարունակուի, սորանով էլ դարձեալ նոցա դաստիարակութիւնը չի սահմանափակվում։ Ուսումնական տարիներում միայն հիմք է դրվում, իսկ յետոյ օրիորդը ինքնուրոյնաբար պիտի շարունակէ իւր կրթութիւնը։ Շատ անգամ ծանր կարօտութիւնը ստիպում է օրիորդներին և առաւել վաղ հայթայթելու իրանց օրական պարէնը. բայց առաւել ևս յաճախ նոցա դրդում է դէպի շահախնդրական աշխատանքը չափաւորութեան և պարզութեան պակասութիւնը։ Նոքա մեծ մասամբ ամենևին չը գիտեն ընտանեկան պարտաւորութիւնները և չեն համակրում նոցա. նոցանից շատ քչերը ծանօթ են այն գոհունակութեան զգացմունքին, որպիսին կարելի է գտնել փոփոխաբար վարժուելով երբեմն տնտեսութեան և երբեմն մրտաւոր զբաղմունքների մէջ. յաճախ նոքա զանազան միջոցների են դիմում, որ ազատուէին ընտանեկան անախորժ հոգսերից. կամ նոցա փոխարէն ուրիշ զբաղմունքներ են գրտնում։ Օրինակի համար բարձր դասակարգի օրիորդներից շատերը այնպիսի զբաղմունքներին են յանձնատուր լինում,

որպիսիք աւելի վայել էր նոցա իւրեանց աղքատ հասակակիցներին թողնելու, որոնք ապրուստի ուրիշ միջոց չունին։ Նոքա կար են վերցնում ձեռագործական խանութներից և ընտանեկան կարիք չունենալով, ստացած արդիւնքը գործ են ածում թանկագին իրերի և շքեղ զարդերի վրայ։ Հասկանալի է, որ նոքա չքաւոր օրիորդներից կիսով չափ աւելի ժամն կը բանեն, իսկ վաճառականին քնչ փոյթ. ի հարկէ, գործը նրան կը տայ, ով աւելի ժամն է վերցնում. բայց սորա հետևանքն այն է լինում, որ չքաւոր օրիորդը, որը ձեռագործից աւելի ուրիշ բան չը գիտէ, այժմ անկարող է իւր ձեռքի աշխատանքով ապրել։

Դէպի շքեղ հանդերձներն ունեցած անհուն ցանկութիւնից դրդուած, նստած են օրիորդները սեղը ձեռքին, առանց գլուխը բարձրացնելու, զրկում են խեղճերին կտոր հացից, և իրանց զրկում մտաւոր սնունդից, փոխանակ դէն ձգելու սնոտի ցանկութիւնները և իրենց կարողութեան համապատասխան կեանք անցուցանելու։ Այդպիսի ընտանիքներում դուք շատ հազիւ կը գտնէք երջանկութիւն և բարօրութիւն։ Քոյրերը հաշվում են ամեն մի ըոպէն, որ նոքա ընտանեկան զբաղմունքների համար պիտի գործ դնեն. տնտեսական ամեն գործ կատարվում է դանդաղ և անսիրտ. գեղեցկի և գրաւիչ լինելու մասին այստեղ խօսք չի կարող լինել. ժամերը թանգ են, պէտք է փող վաստակել։ Շահախնդրութիւնը ապականում է և կոշտացնում նոցա մատաղ սրտերը։

Այդպիսի ընտանիքում երբէք չէք տեսնիլ համակրութիւն դէպի մտաւոր արդիւնքները։ Ծլատութիւնը և ունայնութիւնը ամեն բանի վրայ տարածում են իրանց կոշտ, սառն բազուկը։ Օրիորդները, որոնք աւելի հասարակ պահանջներ ունենալով, կարող կը լինէին ազատ ժամանակը նուիրել մտաւոր ընդունակութեանց զարգացմանը, և դորանով պահպանել թարմութիւն, հոգւոյ արիութիւն և դորովը, անժամանակ դառնում են կնճռոտ, խստաբարոյ. նոցա մեռաքսեալ հանդերձներն ու թանկագին զարդերը չեն պարգևում նոցա այն չքնաղութիւնը, որոնք ամենապարզ ար-

տաքին կեցուԹեան ժամանակ հաղորդում են մարդուն անկեղծուԹիւնը և հոգւոյ բարուԹիւնը։

Բացի այս երևելի կար անողներից, կայ նոյնպէս մատաղահաս վարժուհիների մի խումբ, որը հեռանում է ընտանեկան օճախից ամենից առաւել նորա համար, որ չի կամենում մասնակից լինել ընտանեկան հոգսերին ու աշխատանքներին։ ՍովորուԹիւն է դառել մեր մանկահաս օրիորդներից դաստիարակչուհիք պատրաստել, մինչդեռ հազիւ հարիւրից հինգը անկեղծ կոչումն է զգում դէպի այդ ասպարէզը։ Նոյն իսկ դէպի ասպարէզն ունեցած ձգտումը կարող է անկեղծ և անյողդողդ լինել առաւել հասուն հասակում։ Ընդ նմին, ինչ էլ որ չասեն,—բայց պարզ է, որ իւրաքանչիւր օրիորդ ցանկանում է մարդու գնալ և ամուսնուԹիւնը նոքա նախադասում են իրանց ապագան ապահովելու միւս բոլոր միջոցներից. սորանից հետևում է, որ իւրաքանչիւր օրիորդ նախ և առաջ պէտք է ստանայ ընդհանուր կրԹուԹիւն, համապատասխան ընտանեկան կեցուԹեան պահանջներին։ Բայց որտեղից կարելի է ձեռն բերել սորա համար կարևոր տեղեկուԹիւնները, երբ նա արդէն 18 տարեկան հասակում ձգտում է կատարեալ մանկավարժ դառնալ։ Այսուհետև այլ ևս զարմանալի չէ, որ միջին դասակարգումն անգամ պատահում են շատ օրիորդներ, որոնք բոլորովին անփորձ են տնտեսուԹեան և տնային աշխատանքների մէջ։ Մինչդեռ այդպիսի օրիորդները միշտ օգուտ են քաղում յարմար դիպուածից վերադառնալու ընտանեկան կեանքը. ինչ է պատճառը, որ տեսականապէս լաւ կրԹուԹիւն ստացած օրիորդը յաճախ դառնում է վատ տանտիկին և անխոհեմ մայր. բայց արդեօք կարող է այլ կերպ լինել, երբ նա զարգացել է միակողմանի կերպով և առաւել շուտ նման է ուսում առած մեքենայի, քան թէ կնոջ։ Բայց և այնպէս, այդպիսի կանանց մտաւոր կրԹուԹիւնը շատ քիչ միԹարական կողմեր է ներկայացնում. վասն զի նոցա ինքնուրոյն կատարելագործուԹեան համար գործ դրած ժամանակը սովորաբար շատ չնչին է։ Զուարճալի է կարդալ ամեն օր յայտարարուԹիւններ 18 և 20 տարեկան վարժուհիների

մասին, որոնց անուան հետ թուում են այնպիսի գիտութիւններ, որոնց ձեռք բերելու համար նոցա հարկաւոր էր գործ դնել առ նուազն, դարձեալ գոնէ մի 10 տարի։ Այս ուղղութիւնը ամենայն յանդիմանութեան արժանի է. վատ վարժուհիների մանուկներին պատճառած չարիքը սարսափելի է։

Օտարի զաւակներ կրթելը մարդկային ամենադժուար զբաղմունքներից մէկն է. իսկ այդ կրթութիւնը առանց այլ և այլութեան յանձնում են դեռահաս, թերուս օրիորդներին, որ նոյն իսկ իրենք մանկավարժական ղեկավարութեան կարօտ են։ Կնոջ դաստիարակութիւնը ընդ միշտ պէտք է իւր գլխաւոր նպատակն ունենայ պատրաստելու նորան ընտանեկան նեղ շրջանի համար և ընդ նմին ընդունակ դարձնելու նորան այս նեղ շրջանից հանդէս գալու առաւել ընդարձակ, որոշ գործունէութեան ասպարիզում, երբ որ ժամանակը կը գայ։ Բայց բոլորովին անօգուտ է այն անբնական տագնապը, որով օրիորդների մատաղահաս խելքին պատուաստում են զանազանակերպ առարկաների վայր ի վերոյ գիտութիւնը, իսկ այնուհետև դուրս են թողնում նոցա իբրև արդէն հասունացած և ամենադժուար աշխատանքներին ընդունակ արարածներ, այն երևելի հասարակական շրջանը, ուր շատ յաճախ կորչում է և ապականվում մի ի բնէ անմեղ և համեստ էակի ամբողջ ներքին արժանաւորութիւնը։

Լոկ միայն հպարտութիւնը և քչով գոհ լինել չը գիտենալը դրդում է օրիորդներին, առանց մի ակներև կարօտութեան և շատ վաղ թողնելու ընտանեկան շրջանը։ Նոքա իրանց համար ստորութիւն են համարում ընտանեկան պարտաւորութիւնների կատարելը և և կամենում են, ինչպէս էլ որ չը լինի, անպատճառ բարձր դասակարգին պատկանել, պճնուիլ, զուգուիլ ու զարդարուիլ երևելի տիկնանց դեր կատարելով։ Սուելի յաճախ այս սպատճառներն են դրաւում օրիորդներին քան անկեղծ ձգտումն դէպի լուրջ աշխատանքը։ Բայց ցաւալի է նայել այս վաղահասների վրայ, երբ նոքա վերադառնում են ծնողական տունը, նուիրելով ամենալաւ տարիները և զգացումների թարմութիւնը սառն և

մանաւանդ երբեմն ապերախտ աշխարհին։ Այն հասակում, երբ մարդս պէտք է հասնի լիակատար մտաւոր զարգացման և հասունութեան, նոքա արդէն յոգնել են, նուաղել, ուժասպառ եղել, շատ քիչ են տրամադիր իրենց համար արդէն տաղտկալի զբաղմունքին նուիրուելու և անընդունակ ընտանեկան կեանքի պահանջներին բաւականութիւն տալու. այն ինչ առաջուանից առաւել քնքշացել են և այժմ առաւել քիչ, քան երբ և է, նոքա պէտքական են խաղաղ և պարզ կեանքի համար։ Այս պատճառաւ էլ մենք իսկապէս երջանիկ ենք համարում այն օրիորդին, որին կարօտը չի ստիպում շատ շուտ թողնելու իւր ընտանիքը. թող նա մնայ իւր ծննդավայրում, մինչև որ չի ձեռն բերել բաւականաչափ զօրութիւն մաքառելու իրեն խորթ աշխարհի փորձութեանց դէմ և իրեն ստանձնած փշալից և դժուար գործը կատարելու համար։

Մինչև 25 տարին օրիորդը չի կարող վստահ լինել իրան լաւ դաստիարակչուհի համարելու. բայց այդ ժամանակամիջոցը բաւական է վերջնական, լիակատար և կանոնաւոր կրթութեան համար։ Սակայն այս հասակումն էլ բաւական չէ միայն հոգալ լոկ ձեռն բերած գիտութիւնների ծաւալը աճեցնելու մասին. մի արուեստով աւելի կամ պակաս գիտնալը—մեծ բան չէ. գլխաւորն այն է, որ կրթութիւնը մի սերտ ամբողջութիւն ներկայացնէր և բարերար ներգործութիւն ունենար սրտի ու բնաւորութեան վրայ։ Առանձին առարկաների ուսուցիչներ և ուսուցչուհիք միշտ շատ կան. բայց ամենուրեք չի գտնուիլ ճշմարիտ, գործունեայ դաստիարակչուհի, որին յատուկ լինէր խոհեմ հանդարտութիւն, հայեացքների ճշտութիւն ու յստակութիւն, որ հեռի լինէր նախապաշարմունքներից և օժտուած բարոյական արժանաւորութեամբ։ Այս յատկութիւնները ձեռք են բերվում միայն այն հասակում, երբ սիրտն արդէն ենթարկուել է փորձութեանց, կամ գոնէ բաբախում է աւելի հանդարտ և ոգևորուած է օտարների երջանկութեանն ու բարօրութեանը նպաստելու անկեղծ ցանկութեամբ։ Մենք չենք դատափետում այն օրիորդներին, որոնք արդէն մատաղ տարիներից սկսած

նուիրել են իրանց դաստիարակչուհու ծանը պաշտօնին. բայց այս էլ պէտք է ասենք, որ հազիւ նոր ծլած ծառը չի կարող անյապաղ պտուղ բերել։ Մանուկների դաստիարակութեան համար, որ երբեմն կատարվում է ամենաանյաջող պայմանների տակ, կարևոր է բազմակողմանի խորհրդածութիւն, իւր անձը ճանաչելու խորին գիտակցութիւն և կեանքի բաւականաչափ ծանօթութիւն։

Հիմնաւոր կրթութիւն ստացած և զարգացած օրիորդը երբէք չի պանծալ այն չոր ու ցամաք ուսումնամոլութեամբ, որով պարծենում են շատ թերուս վարժուհիք։ Նա կը հասկանայ, որ իւր գործը ոչ թէ միայն մանուկներին ուսուցանել, մարզել և հանդարտեցնելն է, այլ նոցա կրթել բառիս բուն նշանակութեամբ։ Այդ մտքով դաստիարակութիւնը մի գեղեցիկ և սուրբ կոչումն է, թէ և երբեմնապէս արք և կանայք ծաղրում են պառաւ դաստիարակչուհիներին։ Այս կոչումը լի է ճշմարիտ բանաստեղծութեամբ և վսեմութեամբ. նա զարդարում է կնոջը և կարող է նորան գրաւիչ և սիրելի դարձնել։ Բայց այդ կոչմանը յանձնատուր բազմաթիւ կանանցից շատ քչերն են ընտրեալ, իսկ դոյա շտապելով գործին ձեռնարկելը վնասում է գործի յաջողութեանը։ Եթէ մանկահաս օրիորդը իրօք ստիպուած է ինքը իւր օրական պարէնը հայթհայթելու, թող նա տարրական դպրոցի վարժուհու պաշտօնը յանձն առնի, ուր նա կարող է ոչ միայն ուսուցանել ուրիշների հսկողութեան ներքոյ, այլ և ինքն էլ դեռ կատարելագործուիլ։ Խոհեմ ծնողները ներկայումս առաւել ու առաւել քիչ են վստահանում իրենց զաւակներին մանկահաս օրիորդներին յանձնել. ապա ուրեմն, որքան փորձուած կը լինին վարժուհիք, նոյնքան և նոցա դրութիւնը ապահովուած կը լինի։ Վարժուհին իւր սեպուհ պարտականութիւնը պիտի համարէ որ ինքը իւր վարք ու բարքով ու գիտութեամբ յարգանք զարթեցնէ նոցա մէջ, որոնք նորա վրայ նայում են երբեմն, ինչպէս տան աւագ աղախնի վրայ, և սրտի ճշմարիտ և անկեղծ կրթութիւն տարածէ այնտեղ, ուր առաւել շատ կարօտ են։

Բայց դաստիարակչուհիների մի ուրիշ դասակարգ էլ կայ,

որոնց պէտք է յանդիմանել միայն նորա համար, որ նոքա շատ ուշ են սկսում իւրեանց զբաղմունքները։ Անմտաբար իւրեանց երիտասարդութիւնն անցնելուց յետոյ, նոքա կարծես թէ զարթնում են, զգում են ձգտումն գործելու, կամ թէ երբեմն անյաջող հանգամանքների փոփոխութիւնները սաիպում են նոցա դիմելու ապրուստի այս աղբիւրին։ Նոցա համար դաստիարակութիւնը ո՛չ թէ նպատակ է, այլ միջոց. մի երկու երեք տարում նոքա աշխատում են ձեռք բերել այն, ինչ մոռացել են. այնպէս որ նոքա թէ և հասակով աւելի հասուն են, բայց մանկահասներից առաւել հիմնաւոր և լաւ զարգացած չեն։ Սոցանից ոչ մէկին չը պէտք է մանուկներ յանձնել. բայց վտանգ չը կայ յանձնելու նոցա այնպիսի օրիորդի, որ իւր ընտանեկան նեղ շրջանում համեստաբար և խաղաղ բազմակողմանի զարգացումն է ստացել, ամենևին չը հոգալով թէ բաղտի բերմունքները ուր կը ձգեն նորան։

Այսու ամենայնիւ չը պէտք է մոռանալ, որ օրիորդի ամենաառաջին և մերձակայ պարտաւորութիւնն է ծառայել ընտանեացը, քանի որ տանը գործ և լուրջ զբաղմունք կայ, օրիորդը չը պէտք է տնից դուրս գործունէութեան ուրիշ ասպարէզ որոնէ։ Կրթուած ու սիրելի օրիորդը ամենայն շրջան զարդարում է. նա իւրաքանչիւր ընտանեաց թանգագին գանձն է. եթէ հանգամանքները ներում են, նա պէտք է մնայ իւր տեղը, մինչև անգամ եթէ շատ էլ հարկաւոր չէ. բայց թո՛ղ նա պատրաստ լինի բաղդի իւրաքանչիւր փոփոխութեան համար։ Հէնց սորանումն է կայանում կնոջ զարգացման տարբերութիւնը, սորա համար էլ նա կը մնայ առ միշտ գեղեցիկ և գրաւիչ, որ նորան վիճակուած չէ տանջուիլ մի որ և է միակողմանի ճիշտ գիտութեան վրայ. բայց նա պէտք է իւր խելքը այնքան զարգացնէ, որ կեանքի ոչ մի փոփոխութիւն չը կարողանար նորան անպատրաստ գտնել և վհատեցնել։

Ամենից առաւել խորին համոզմամբ խորհուրդ ենք տալիս իւրաքանչիւր օրիորդի չընտրել վարժուհու պաշտօն, եթէ ինքը դորա համար անընդունակ է։ Եւ այս բանում

հարկաւոր է համեստութիւն և ինքնաճանաչութիւն լիակատար և գոհացուցիչ արդիւնք ստանալու համար։

Լաւ տնտես կինը առաւել շուտ իւր դլխի ճարը կը տեսնի, քան վատ վարժուհին։ Կարելի է շատ կրթուած լինել, բայց չունենալ իւր գիտութիւնը ուրիշին հաղորդելու շնորհքը. եթէ բանն այդտեղ է հասել, ինչո՞ւ օրիորդը չը պէտք է օգտուի իւր տնտեսական տեղեկութիւններից։ Տնտեսութեամբ պարապելը ստորութիւն համարել յատուկ է միայն անմիտ հպարտութեանը։ Ո՛չ մի պաշտօն, որ մեզ ապրուստի միջոց է տալիս, ստորացուցիչ չէ. իսկ տնտեսութեան մէջ կրթուած օգնականուհին անպատճառ ձեռք կը բերի յարգանք և սէր։ Լաւ մայրը առաւել շատ նորան կընդունի իրան տուն, քան պճնասէր վարժուհուն, իսկ իւր զաւակներին ինքը կարող է կրթել։ Ուրիշներին օգտակար լինելու բարեխիղճ ցանկութիւնը միշտ միջոցներ կը գտնէ նպատակին հասնելու համար. բայց միայն ցաւալի է, եթէ մատաղահաս տարիները կորչում են անօգուտ և զուր զբաղմունքների մէջ։

Ը

ՕՐԻՈՐԴԱՅ ԴԻՇԵՐՕԹԻԿ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ։

Այն բոլորից յետոյ, ինչ որ ասուեցաւ ընտանեկան կեանքի մասին, որին մենք լիակատար նախապատրաստութիւն ենք տալիս, չի կարող զարմանալի երևալ, որ մենք շատ բանում դէմ ենք ինստիտուտական կրթութեան։ Դժբաղդաբար մեզանում, Գերմանիայում սովորութիւն է դարձել,— օրիորդներին, ուսումնարանական դասընթացը աւարտելուց և առաջին կոնֆիրմացիայից*) յետոյ, մէկ կամ երկու տա-

*) Կոնֆիրմացիա (լատ.) բողոքականների սովորութիւնն է քրիստոնեային վերայհաստատելու մկրտութեան մէջ, որը կատարուել է առաջին անգամ Սուրբ Հաղորդութիւնն ընդունելուց յետոյ։

րով ինստիտուտ (գիշերօթիկ վարժարան) տալ ուսումն լրացնելու համար։ Բայց ահա այս սովորութիւնը նոցա կեղծ ուղղութիւն է տալիս այն պատճառով, որ ինստիտուտներում պատրաստում են ըստ մեծի մասին ոչ թէ կանայք, այլ աշխարհամոլ տիկիններ, որոնք դիտեն միայն փայլել հասարակութեան մէջ։ Ինստիտուտների կազմակերպութեան համապատասխան, այնտեղ ամենայն ինչ պէտք է կատարուի որոշ կարգով, խիստ կանոններով, որոնց հաւասարապէս և առանց բացառութեան ենթարկվում են բոլոր սանուհիները։ Մանկահաս օրիորդների առաւել անկախ և ինքնուրոյն զարգացումը այստեղ ճնշվում է նա և նորանով, որ վարժարանի վարչութիւնը պարտաւորուած հոգում է իւրաքանչիւր իրեն ինամոց յանձնուած օրիորդի կատարելագործութեան տեսանելի արդիւնքների մասին։ Մեծ մասամբ պահանջում են, որ օրիորդի վրայ առաջին հայեացք ձգելիս, իսկոյն երևային նորա վսեմ վարմունքը և քաղաքավարութիւնը, և այս պատճառաւ նոքա ամենից աւելի ընտելանում են լոկ միայն արտաքին, շատ անգամ աւելորդ քաղաքավարական ձևերին, և ահա այս է պատճառը, որ ինստիտուտը նոր աւարտած և ըստ երևութին լաւ կրթուած օրիորդները յաճախ ամենաանտանելի արարածներն են լինում։

Բնաւորութեան կազմակերպելը ինստիտուտում գրեթէ երբէք առանձին ուշադրութեան չի արժանանում. իւրաքանչիւր մանկան բնածին հակումները նոր ոյժով զարթնում են, հենց որ միայն նա կաղատուի ճնշումից, որին ենթարկուած էր վարժարանում, ուր այս հակումները աւելի հալածվում էին, փոխանակ նոցա աղնուացնելու և լաւացնելու մասին հոգալու։ Բացի դորանից, շատ անգամ ինստիտուտում կրթուած օրիորդները մի ինչ որ գռեհիկ, անշնորհ և անտեղի ձևեր ունին, որոնք խլում են օրիորդից բոլոր նորա չքնաղութիւնը։ Ինստիտուտները մեծ մասամբ երկու սխալ ուղղութիւն են յառաջացնում. կամ օրիորդները 17 և 18 տարեկան հասակում ծաղրալի անձնավստահութեամբ պարծենում են իւրեանց սերտած դասերի ուսումնականութեամբ և սկսում են դատողութիւններ տալ ամեն տեսակ

առարկաների մասին, կամ թէ չէ, նոքա լինում են անտանելի, տխուր, իրանց արձանացած պահելով, որոնցից ոչ մի խօսք չես կարող լսել։

Կասկած չը կայ, որ փոքր ի շատէ բարեյաջող հանգամանքների ժամանակ, օրիորդները առաւել լաւ են հասնում իրանց ընտանեկան շրջանում պարզ, բնական զարգացման, ուր հնարաւոր է ինչքան ֆիզիքական, նոյնքան և հոգևոր ոյժերի վարժութիւնը, ուր օրիորդը իւր պարտաւորութիւնները կատարում է ոչ թէ որոշուած ժամերով, այլ ամեն րոպէ դրդվում է դէպի յօժար օգտակար գործունէութիւն, ուր անդադար ուսուցումը միանում է տնտեսական զբաղմունքների հետ, ուր ի վերջոյ, նոքա աննկատելի կերպով ընտելանում են օտար անձանց հետ վարուելու քաղաքավարի և բնական ձևերին,—մինչդեռ ինստիտուտներում նոքա սովորում են միայն յաճախ կեանքի մէջ անդործադրելի պայմաններն ու կանոնները պահպանել։ Ինստիտուտական կեանքի մի նշանաւոր պակասութիւնն էլ այն է, որ օրիորդները զրկուած են հասարակութեան հետ հաղորդակցութիւն ունենալուց,—հէնց այն տարիներում, երբ երևակայութիւնը նկարագրում է նոցա համար աշխարհային կեանքը անսովոր գեղեցկութեամբ և պայծառ, վարդի գոյներով։

Ընտանիքում մեծացող օրիորդը դատարկ ցնորքների մասին չի երևակայիլ. նա տեսնում է կեանքը այնպէս, ինչպէս որ կայ. թէ և նորան դեռ աշխարհ չեն բերում, բայց նա ընտելանում է դորան ընտանեկան կացութեան մէջ, ընտելանում է մարդոց հետ վարուելուն և առանց զարմանալու և կուրանալու, ոտք է դնում հասարակութեան մէջ։ Իսկ ինստիտուտում կրթուած օրիորդները, իրանց հետ այն տեղից դուրս են բերում ամենասխալ և թիւր գաղափար կեանքի մասին. այնտեղ թէ և արգելուած է վիպասանութիւնների ընթերցումը, բայց ծածուկ գաղտուկ կարդացվում են, և ինստիտուտն աւարտող օրիորդը շատ անգամ ծանրաբարոյութեան դիմակի տակ ծածկում է ներքին դիւրագրգռութիւն, և պատրաստ է առաջին հանդիպող մարդու վզովն ընկնելու։ Եւ յիրաւի ո՞ր դաստիարակչուհին կարող է փոխա-

ընել արթուն, աչալուրջ և գորովագութ մօր հսկողութեանը. ուրիշ ինչ առաւել անարատ և մաքուր կարող է լինել այն ընտանեկան շրջանից, ուր բնական ուրախ տրամադրութեան ժամանակ թէ ծանր և թէ դուրեկան զբաղմունքները ձեռք ձեռքի տուած են ընթանում, իսկ կեանքի ուղղակի, անմիջական ծանօթութիւնը կրթում է խոհականութիւնը և դրդում դէպի գործունէութիւն։ Ի հարկէ, ամենից առաւել ցանկալի կը լինէր, որ բարոյական դաստիարակութիւնը կարողանար կատարուել տանը, իսկ մտաւոր կրթութեան համար լինէին լաւ կազմակերպուած դպրոցներ։

Բայց ի՞նչ էլ որ չասենք, այնու ամենայնիւ ինստիտուտները կը մնան իբրև անհրաժեշտ հիմնարկութիւններ. միշտ կը գտնուին օրիորդներ, որոնք կեանքի զանազան ճախողակ հանգամանքների շնորհիւ չեն կարող կրթուիլ առանց հասարակական վարժարանների։ Մնում է միայն ցանկալ, որ յօգուտ այդպիսի օրիորդների ինստիտուտական կազմակերպութեան մէջ բարերար վերանորոգութիւններ մտցնուէին, ըստ կարելւոյն առաջն առնելու այն անյարմարութեանց, որոց հետ նա սերտ կապուած է։ Այո՛, կանանց պէտք է տալ աւելի լաւ կրթութիւն, այժմեանից առաւել կանոնաւոր։ Այս է այն ձայնը, որ լսվում է իւրաքանչիւր ազնիւ և խելօք կնոջ հոգւոյ խորքից։ Տա՛յ Աստուած, որ այդ ձայնը ամենայն տեղ կենդանի, համակրելի արձագանք գտնէր։

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ուր խօսքը կանանց մասին է, այնտեղ չի կարելի չը խօսել ամուսնական կեանքի մասին, որ առ միշտ կը մնայ նոցա գոյութեան վաղճանական միջնավայրը։ Յիրաւի զարմանալի է, որ մինչև անգամ շնորհալի կանայք այժմս թոյլ են տալիս իրանց ամուսնութիւնը մերժելու, այն ինչ իսկապէս և նոցա մէջ քիչ չեն այնպիսիք, որոնք կամաւ կարող լինէին հրաժարուիլ նորանից։

Մեզ թւում է որ մարդը իւր աւելի անկախ հասարակական դիրք ունենալու շնորհիւ առաւել շուտ կարող էր գովել հների բարքն ու վարքը և նոցա հասարակական կազմակերպութեան մէջ գտնել այն բանի ապացոյց, թէ պետութիւնը և բարոյականութիւնը կարող են գոյութիւն ունենալ առանց ամուսնութեան։ Բայց վայ կանանց, եթէ այդպիսի հայեացքը ընդհանրանար։ Ասածները հաստատելու համար բաւական է միայն յիշել այն ստոր դրութիւնը, որի մէջ գտնվում էին կանայք հին դարերում. ամուսնութիւնը ոչնչացնելուց յետոյ, նոքա վերստին նոյն ստրկութեան մէջ կընկնէին։ Կնոջ հասարակական նշանակութիւնը և բարձր զարգացումը ստացվում է նորա ընտանիքում. իսկ ուր չը կայ ամուսնութիւն, այնտեղ չը կայ և ընտանիք։ Ծան Պաուլի ասելով. «Կնոջը հարկաւոր է նեղ շրջան. միայն քաղաքացու ընտանեաց մէջ նա ստանում է ճշմարիտ նշանակութիւն. առանց այդ նեցուկի, առանց ցողունի մնացած այս քնքոյշ ծաղկի տերևները ցեխը կընկնէին։ Մարդը կարող է դարձեալ համաքաղաքացի լինել և եթէ ոչ ոք չունի, որին կարողանար կուրծքին սեղմել, նա ինքը կրծքով կընկնի դետնին և կը սկսի նորան գրկախառնել, թէ և չի կարող աւելին ընդգրկել, քան թէ իւր գերեզմանի համար հարկաւոր է։ Բայց կինը, որը յոյս է տածում համաշխարհային քաղաքացիութեան վրայ, հրեշաւոր հսկայ է կամ դիմակ, որ միայն ազատ, պարապորդ հետաքրքրութիւն է զարթեցնում»։ Մենք այն կարծիքի չենք, իբրև թէ կնոջ երջանկութիւնը միայն ամուսնութեան մէջ հնարաւոր է. բայց և այնպէս ճշմարիտ կանացի սիրտ ունեցող կինը պէտք է խոստովանուի, որ նա այստեղ միայն կարող է հասնել իւր բարձր զարգացմանը, իւր լիակատար հասունութեանը։ Մինչև անգամ գրեթէ անհնարին է երևակայել այն անդունդը, դէպի որը պիտի գլորուէն կանայք ամուսնական կապը ոչնչացնելով, այն ինչ ժամանակակից ընտանեկան կեցութեան պայմանները առաւել լաւ են ապահովում նոցա անկախութիւնն ու զարգացումը. նոցա պահում են որոշ սահմաններում, բայց ոչ փակուած. նոքա ամուսիններ են, բայց ոչ ստրուկներ. մին-

չև անգամ կնոջ համար սորանից առաւել ուրիշ դրութիւն անկարելի էր երևակայել, որը տար նորան մարդոց հաւասար իրաւունքներ։

Բոլորովին սխալ է այն կարծիքը, իբր թէ որքան որ կանանց մէջ կրթութիւնը առաւել շատ է տարածվում, նոքա այնքան առաւել ամուսնական պայմաններից բարձր են կանգնում, ընդ սմին չը կորցնելով իւրեանց բնութեանը յատուկ բոլոր չքնաղութիւնը։ Ֆրանսիայից մեզ հասած ցնորամիտ կարծիքները, որոնք գովում են անսանձ սէրը, կարող են միայն բոպէական համակրութիւն գտնել. բայց իւրաքանչիւր ճշմարիտ զգացմունքի տէր կինը պէտք է վճռողաբար մերժէ դոցա ոչ թէ քնքշութիւնից և կեղծ ամօթխածութիւնից դրդուած, այլ նորա համար, որ նոքա իրօք վրդովում են բարոյական զգացմունքը։ Կնոջ ամենաանարատ սուրբ սէրը պէտք է ունենայ որոշ ուղղութիւն և բացառիկ առարկայ։

Ամուսնութեան դէմ սկսեցին զինուել Ֆրանսիայում այն պայմանների պատճառաւ, որպիսիք գոյութիւն ունին այն տեղ այս օրէնքը կատարելու ժամանակ. այն ինչ Գերմանիայում ամուսնութիւնը հիմնվում է ուրիշ, առաւել բարոյական սկզբանց վրայ։ Այստեղ այլապէս չեն ամուսնանում, եթէ ոչ իրենց յօժար կամքով և փոխադարձ համաձայնութեամբ. իսկ բռնի ամուսնութիւնք թէ և կատարվում են, բայց շատ հազիւ. ընդ նմին հարսի և փեսայի ունեցած մօտ ծանօթութիւնը նոցա կատարեալ առիթ է տալիս միմեանց ճանաչելու։ Ի հարկ է, ամուսնութիւնը կարող է անբարոյական դառնալ, նայելով թէ ինչպէս է կատարվում, բայց այս դեռ ևս նոյն իսկ ամուսնութեան կապի պակասութիւն չէ։ Ո՞վ չը գիտէ որ այսօր ոչ միայն բարձր, այլ և միջին շրջաններում ամուսնութիւնը նոյն իսկ սկզբում անհամաձայնութեան պատճառներ է պարունակում նշանածների մէջ, որ շատերը դառն անտարբերութեամբ են մօտենում բեմին, — բայց այս բոլորի մեղաւորն ո՞վ է։ Ինչո՞ւ համար ներկայումս աւելի շատ են խօսում ամուսնութեան թերութեանց՝ քան թէ նորա սրբութեան մասին։ Հէնց այն

պատճառաւ, որ նա չի պահպանվում սրբութեամբ, որ կինն իսկապէս ստորանում է մինչև ստրուկի դրութիւնը, երբ նա արհամարհելով ամուսնութիւնը, այնուամենայնիւ անկարող է առանց դորան ապրել և պսակվում է լոկ միայն մի ցանկութեամբ,—այն է՝ հասարակութեան մէջ որոշ դիրք ստանալու և ոչ թէ նորա համար, որ ընտանեաց շրջանում կատարէր իւր կոչման վերաբերեալ պարտաւորութիւնները։ Բայց իսկական ընտանեկան կեանքը ծնունդ է առնում մէն միայն անարատ, երջանիկ ամուսնութիւնից. հասարակութիւնը չի կարող գոյութիւն ունենալ առանց ընտանեաց հիմունքի և նոյն իսկ պետութիւնը վայելչապէս է զարգանում միայն այն դիպուածում, եթէ հասարակական կեանքը գտնվում է ընտանեկան ներքին սկզբունքի ազդեցութեան տակ։

Մեր ժամանակ կանանց սեռի ամենանշանաւոր պարտաւորութիւնը նորանումն է կայանում, որ վերադարձնէին ամուսնութիւնը նորա նախկին, հիմնաւոր սկզբունքներին, բարձրացնէին նորից նորա սուրբ նշանակութիւնը և այս խորհուրդին տային բարոյական ոյժի ամենամեծ լիազօրութիւն, առանց որոյ անկարելի է կնոջ ինքնուրոյն զարգացումը։ Կինը, լիակատար ինքնագիտակցութեամբ գնահատելով ամուսնական կեանքը իբրև իրեն համար ամենամեծ երջանկութիւն, մի և նոյն ժամանակ պէտք է կարողանալ առանց նորան էլ ապրել, չը կորցնելով սրտի անդորրութիւնը և զոհունակութիւնը։ Պատկառանքով և երկիւղածութեամբ, և ոչ թէ կրքոտ փութաջանութեամբ պէտք է մտնել տաճառի դրներից. ոչ բոպէական գրգիռը և ոչ ստոր շահախնդրութեան ու փառամոլութեան շարժառիթները պէտք է մտցնեն մեզ այս սրբավայրը։ Այս դիպուածում մենք կարիք էլ չունինք իմանալու, թէ ի՞նչ շարժառիթներով է առաջնորդվում տղամարդը. կինն այստեղ թագուհի է, միայն նորան է պատկանում սիրոյ և զգացմանց թագաւորութիւնը, նորանից է կախուած ամեն ինչ իւր կամքով և հասկացողութեամբ տնօրինել։ Տալով այն ամենը, ինչ իւր հոգում ամենաընտիր մասն է կազմում, նա իրաւունք ունի պահանջելու իւր համար և ամենից ընտիրը։

Կնոջ բարոյական արժանաւորութիւնը և ոգեկան անկախութիւնը ոչ թէ ամուսնութիւնը աւելորդ են դարձնում, այլ պէտք է ազնուացնեն, վսեմացնեն նորան։ Սրտի ընտրութիւնը օրիորդի համար շատ նշանաւոր գործ է, և այս պատճառաւ էլ նորան անհրաժեշտ է բացատրել իւր բարոյական ընութեան պահանջները և նոյն իսկ դոցա բաւականացնելու պայմանները։ Այս պատճառաւ էլ և այստեղ, որքան առաւել ուշ կը մտնի օրիորդը հասարակութեան մէջ, որքան առաւել յարատև կը լինի նորա մանկութիւնը, այնքան առաւել լաւ։ Սակայն մենք չենք դովում պառաւ օրիորդներին, կամ նոցա, որոնք իրանց հասակից առաւել խելօք կը լինին, այլ որոնում ենք այնպիսի օրիորդներ, որոնք ճանաչում են իրանց և շատ վաղահաս լարուած երևակայութեանը յանձնատուր չեն լինում, այնպիսի օրիորդներ, որոնք ընդունակ են խորին զգացմանց, վասն որոյ և կարող են սիրել և ոչ սիրոյ բորբոքներ շռայլել։

Ճշմարիտ է, որ տղամարդիք հաւանում են այնպիսի օրիորդներին, որոնց սեփական ոչնչութեան գիտակցութիւնը դարձնում է նոցա գայթակղութեան զոհ և որոնց դիւրին է հասկացնել, թէ առանց մարդոց անհնարին է նոցա գոյութիւնը և որոնք իրանց երբէք հարց չեն առաջարկում, թէ մարդը ինչ պէտք է լինի։ Բայց այս թմրած, փոքրոգի զգայականութիւնը պիտանացու չէ իրական կեանքի համար. մենք պէտք է առաւել վսեմ գաղափար ունենանք կնոջ կատարելութեան մասին, եթէ ցանկանում ենք որ կանայք բարերար ներգործութիւն ունենային ժամանակակից հասարակութեան վրայ։

Ի՞նչ հարկաւոր է մեզ այս մռայլ, տաղտուկ հոգւոյ թախիծը։ Ինչո՞ւ լոկ միայն ուրուականների յետևից ընկնենք և յաւիտենական բարկութեամբ կործանենք կուռքերը, հենց որ միայն կը համոզուինք նոցա ներքին դատարկութեան մէջ և յետոյ նորից ձեռք մեկնենք նոր կուռքերին։ Թառամած, ապշած սիրտը սկսում է էմանցիպացիայի

մասին դեղերել. կինը առ ոչինչ է համարում, կարծես ատում է մարդուն, բայց և այնպէս դարձեալ սիրում է նորան, երկրպագում է նորան, իսկ փոքր առ փոքր իւր անյաղ ցանկութիւնները, անսանձելի կիրքը, ըստ երևութին բանաստեղծական արկածները,—այս ամենը վերջանում են նորանով, որ ինքն էլ չը գիտենալով, ընկնում է ամենակոպիտ եսամոլութեան մէջ։ Ամուսնութիւնը ճնշող է, ամուսնութիւնը ծանր է այն կնոջ համար, որ լոկ միայն զգայական կրքով ուզում է ամուսին ընտրել և նորից թողնել։ «Մատաղ հասակումս սիրում էի այն ինչ պարոնին, ասում է նա, բայց խաբուեցայ. սա ինձ աւելի է դուր գալիս, աւելի լաւ է հասկանում ինձ և ես կ'ուզեմ սորան պատկանիլ»։ Եւ ցաւն այն է, որ այդպիսի դատողութիւնները առաջին հայեացքից երևում են ճշմարտանման. և ինչպէս չը նեբենք երիտասարդական սխալանքները։ Բայց սարսափելի են այդպիսի մոլորութեանց հետևանքները։ Ամուսնութիւնը կորցնում է իւր բարոյական արժանաւորութիւնը, երբ այլ ևս չի հիմնվում ամուսինների փոխադարձ սիրոյ վրայ. բայց լոկ միայն քմահաճութեամբ խորտակել այս կապը,—առաւել ևս կորստաբեր է։

Աշխատեցէք միմեանց ճանաչել դեռ ամուսնական կեանքը մտնելուց առաջ,—իսկ այնուհետև իմացէք համբերութեամբ տանել միմեանց փոխադարձ թերութիւնները և չափաւորել ձեր ցանկութիւնները։ Ի հարկէ, այս պայմանների կատարելը չի վերացնիլ սրտի բոլոր գայթակղութիւնները և առաւել մեծ զգուշութեամբ կատարուած ամուսնութիւնը և անկեղծ սիրով,—դարձեալ կարող է ապաբաղդ լինել,—բայց այս միայն մարդկային անկատարելութեան դառն պտուղն է։ Սիրտը հիասթափվում է թէ ամուսնութեան միջոցին և թէ նորանից յետոյ. իսկ ամուսնական շաղկապի մասնաւոր թերութիւնները կնոջ իրաւունք չեն տալիս այդ կապը խանգարելու և դարերով սրբագործուած այդքան վսեմ և կնոջ բնութեան այնքան համապատասխան կարգադրութիւնը մերժելու։

Ամենից առաւել օրիորդների մէջ պէտք է յարգանք

զարթեցնել դէպ իւրեանց անձը, որ կարող է նոցա համար ամենալաւ նեցուկը լինել կեանքի ամեն տեսակ հանգամանքներում։ Մ՚ԹԹէ օրիորդները առաւել նուազ բանաստեղծական կերևան, առաւել նուազ չքնաղութեամբ կը փայլին, առաւել նուազ գրաւիչ կը լինին միայն նորա համար, որ նոցա կուսական չքնաղութեան գոյնը կը լուսաւորուի, կարծես արևից,—ներքին գիտակցութեամբ, այն արդարացի հպարտութեամբ,—որ դժբաղդաբար, շատ անգամ պակասում է նոցա։

Չի կարելի անպայման հերքել, որ ամուսնութիւնը կնոջը տուած առաւելութեանց հետ միասին, չը դնէր նորա վրայ և մի քանի սահմանափակ կողմեր. նա շատ բարձրաթռիչ երևակայութեան թևեր է կտրել և գուցէ սպանել է շատ տաղանդներ։ Բայց այս պատճառաւ էլ հարկաւոր է լաւ դաղափար տալ օրիորդին ամուսնական կեանքի մեծ նշանակութեան մասին, ինչպէս էլ որ ճնշող չը լինեն նորա պայմանները։ Ամուրի կինը ազատ է մնում այն պարտաւորութիւններից, որպիսիք յանձն է առնում ամուսնացող օրիորդը, բայց և վերջինս չի կարող ցանկալ օգտուել միայն ամուսնութեան օգուտներից և չը կատարել նորա պահանջները։ Եթէ չես կամենում այդ պարտաւորութիւնները յանձն առնել, մի գնար մարդու։ Նոյն իսկ օրէնքը պահանջում է մարդուց, որ նա վայելչապէս պահպանէր իւր ընտանիքը. կնոջ համար այդպիսի քաղաքական օրէնք չը կայ, բայց և այնպէս նորա համար աւելի մեծ է բարոյական պարտաւորութիւնը հոգալ, պահպանել և խնայել այն, ինչ որ ամուսինը ձեռք է բերում։ Ո՛չ մի հանճար ո՛չ մի տաղանդ չեն ազատում նորան այս պարտաւորութիւնից. նա իրաւունք չունի իւր համար բաւականութիւն և անկախութիւն ձեռք բերել նոցա հաշուով, որոնց բաղդը իւր խնամոցն է յանձնուած։ Այն կինը, որ գոհ չէ այս պարտաւորութիւնը կատարելու գիտակցութեամբ, չը պէտք է ամուսնանայ, այլապէս նա յանցաւոր կը լինի իւր սեփական ընտանեաց և ամբողջ հասարակութեան առաջ։

Այդպէս էլ շատ քիչ իրաւունք ունի կինը արհամար-

հել իւր պարտաւորութիւնները այն պատճառով միայն, որ նա չի գտել ընտանեկան կեանքում այն երջանկութիւնը, որպիսին որոնում էր և յոյս ունէր գտնել։ Մթթէ պետութիւնը և հասարակութիւնը այդպիսի դիպուածում ազատ են կացուցանում մարդուն իւր ընտանիքը խնամելու պարտաւորութիւնից։ Ո՛չ, նա այնուամենայնիւ պէտք է կատարի այդ։ Նոյնը վերաբերում է և կնոջը և որքան էլ որ մեծ չը լինէր հիասթափումը, նա չի կարող կորուսանել իւր պարտուց յանձնատուր եղած էակին։ Միայն թոյլ, անպիտան բնաւորութիւնները ընդունակ են թէ կեանքում և թէ վիպասանութեանց մէջ անհասկանալի և խաբուած սրտերի յաւիտենական թատրերգութիւններ խաղալ։ Իրաւ է, հիասթափումը ամենից տանջողն է կնոջ սրտի համար, – բայց նա չը պէտք է կորուսանէ նորան։

Այո, զգացումը մեր էութեան կենդրոնատեղին է, նա վսեմացնում է մեզ և տալիս իսկական դեղեցկութիւն. — նա անսահման է և չը պէտք է սահմանափակուի լոկ միայն սիրոյ տեսակով։ Երջանիկ են նոքա, որոց հասկանալի է զգացմունքի ճշմարիտ ձայնը, բայց նոքա միայնակութեան չեն դատապարտուիլ անգամ այն ժամանակն էլ, եթէ ամուսնութիւնը նոցա երջանկութիւն չի տալ։ Կնոջ սիրտը պէտք է սնուած լինի և առ մարդկութիւնն ունեցած սիրով. նորան յատուկ են իդէալական ձգտումները և հետևելով նոցա, նա կարող է նոյն իսկ հիասթափութիւնից բարձր կանգնել։

Մեր միջին դասակարգում շատ հազիւ են ստիպում օրիորդներին ամուսնանալ։ Բայց ամենից յաճախ նոցա դըրդում են նոյն իսկ հանգամանքները և նոքա մարդու են գնում որ ապաստան գտնեն կամ հասարակութեան մէջ որոշ դիրք ստանան։ Իսկ անմիտ մայրերն ու մօրաքոյրները մանկութիւնից խելքից հանում են օրիորդներին, խրատելով նոցա, որ իբր թէ երջանկութիւնը միայն ամուսնութեան մէջն է, և ամենայն միջոցներից օգտվում են աղջկան մարդու տալու։ Այս սովորութիւնը այնքան ստոր է և անմիտ, որ դորա մասին մինչև անգամ չարժէ խօսել. բայց այդպիսի

ուղղութիւնը լաւ ապացուցանում է, թէ ինչպէս անհրաժեշտ է մեզ մայրերի աւելի ընտիր սերունդ։

Հանգամանքների լուծը կը վերացուի, եթէ դաստիարակութիւնը օրիորդին միջոց կը տայ ինքնուրոյն կեանք վարելու. իսկ այն օրիորդը, որ ոչինչ չի սովորել և միայն բազմաթիւ պահանջներ ունի, ի հարկ է, զուրկ է գոյութեան ամեն միջոցներից։ Ինքն ըստ ինքեան չնչին լինելով՝ բայց և այնպէս նա ամուսնանալ է ուզում։ Բայց ահա սորանումն է կայանում ամուսնութեան վատութիւնը, որը պէտք է վրդովէ իւրաքանչիւր ազնիւ կնոջ սիրտը։ Իսկ կանանց անպիտանութիւնը ստորացնում է նոցա մինչև ստրկուհիների աստիճանը, դրդելով նոցա ամուսնանալ կարօտութեան երկիւղից, և ոչ թէ դէպի տղամարդն ունեցած յարգանաց անկեղծ զգացմունքից և սիրուց։

Մարդը իւր կողմից կորցնում է դէպի կինն ունեցած ամենայն յարգանք. գայթակղութեան թեթև զոհը այլ ևս նորա հրամայողը չէ, այլ խաղալիկը։ Ո՞ւր է մեր նախահայրերի այն գեղեցիկ համոզմունքը, թէ օրիորդի սէրը ամենամեծ վարձատրութիւնն է կեանքի մէջ։ Այժմ չեն էլ մտածում, որ պէտք է առաքինի և արդար, անարատ և բարոյական լինել, որպէս զի կարողանան գրաւել կնոջ սիրտը և նորան անկեղծ երջանկութիւն պատճառել։ Ի՞նչքան էլ ստոր, անպիտան, ստախօս և մոլի չը լինէր տղամարդը, նա յանդգնում է յոյսեր տածել մինչև անգամ ամենագեղեցիկ, ամենասիրելի էակների վրայ ամուսնանալու նպատակով, որոնք իւրեանց կողմից էլ, առանց սարսափի նորան ձեռք են մեկնում։

Դէպի կանանց արժանաւորութիւնը և նշանակութիւնն ունեցած համակրութիւնը այն ժամանակ միայն նոցից կը ջերմացնէր ողջ հասարակութեանը, երբ նոյն իսկ կինը կունենար առաւել տոկունութիւն և ինքնագիտակցութիւն։ Այն ժամանակ մարդն էլ, նախ քան կը մտածէր նորան կին առնելու, կաշխատէր նորան համահաւասար առաքինութեան, համոզմունքների հաստատութեան և ինքնաճանաչութեան աստիճանին հասնել։

Ժ.

Ա.ՄՈՒՐԻ ԿԻՆԸ:

Այն օրիորդների համար, որոնք առանց կողմնակի օգնութեան կարօտ լինելու կարող են ապրել, ամուրի կեանքը ոչինչ մի առանձին սարսափելի բան չի ներկայացնում։ Որքան բազմաթիւ կանայք, որոնք առանց մտածելու շտապով մարդու են գնացել, յօժարութեամբ կը ցանկային փոխել իւրեանց վիճակը այն օրիորդների վիճակի հետ, որոնք իւրեանց համոզմունքներին հաւատարիմ մնալով չեն համաձայնուել առանց իւրեանց ներքին տրամադրութեան, լոկ շահախնդրական նպատակով ամուսնանալ։ Ամենայն վիճակ իւր ուրախութիւններն ու տրտմութիւններն ունի. իւր կոչումը հասկացող և իւր ընդունակութիւններից օգուտ քաղել իմացող օրիորդը կարող է հասարակութեան մէջ նոյնքան յարգելի դերք բռնել, որքան և կինը։

Օրիորդի համար լոկ միայն մի բան, որ ամենազգալի զրկանք է, այդ ոչ ամուսնու սէրն է, ոչ ապագայի ապահովութիւնը, այլ մօր քաղցը անունը, որը անծանօթ է օրիորդական լսելիքին։

Այս դիպուածում չեմ կարող դէպի ձեզ չը դառնալ, կանայք, ձեզ՝ որ բազմիցս անգթաբար ծիծաղում էք օրիորդների վրայ։ Դուք նոցանից առաւել գրաւիչ և սիրելի էք երևում ոչ թէ այն պատճառով, որ դուք իրը նոցանից աւելի խելօք էք, կամ իրը թէ ձեր սրտում աւելի սէր կայ. ոչ, այլ ձեր բոլոր գերազանցութեամբ դուք պարտական էք այն մանկական աշխարհի թովիչ ազդեցութեանը, որ ձեզ շրջապատում է։ Չը լինէր այդ աշխարհը, դուք էլ այնպէս խոժորադէմ և կնճռոտ, պաղարիւն և անհամակրելի պիտի երևայիք։ Օրիորդական ամենաճշմարիտ և արդարացի թախիծը և տաղտուկը,—այդ մայրական ուրախութեանց, մայրական երջանկութեան լացակայութիւնն է։ Բայց մթթէ

այս պակասութիւնը ոչինչ բանով չի կարող լրացուիլ։ Մանկական աշխարհումն է հոսում այն կենսատու աղբիւրը, որ տալիս է կնոջը և թարմութիւն և առողջութիւն, և նորա շրջանում ամուրի կինն անգամ նոյնքան օգտաւէտ կարող է լինել, որքան և հարազատ մայրը։ Բայց սորա համար օրիորդը պէտք է առաւել լաւ յարմարուի մանկութեան պահանջներին, նորան նուիրի իւր կրթութիւնը, զգացման բարութիւնը, ճաշակի նրբութիւնը և անարատութիւնը.—իբրև մանուկների խնամակալուհի, դաստիարակչուհի և ընկերուհի, նա նոցա իշխելու վրայ ձեռք է բերում մօր իրաւունքները և նորա ջանքերը լիակատար վարձատրվում են իւր գործունէութեան բարերար հետևանքներով։ Հազարաւոր որբիկներ, բիւրաւոր մանուկներ իւրեանց ձեռքերն են կարկառում դէպ այն ամուլ կանայք, որոնք շատ անգամ իւրեանց գորովը և փայփայանքը շների ու կատուների համար են շռայլում, իսկ իւրեանց հարստութիւնը փառասիրական քմահաճութեանց համար։ Այս մանուկները լիովին ձեզ կը պատկանեն։ Սիրեցէք նոցա, կրթեցէք և դարձրէք նոցա հասարակութեան համար օգտակար անդամներ, և դուք աւելի օգուտ կը տաք, քան հարազատ մայրերը, որոնց համար ի հարկ է, մի առանձին սխրագործութիւն չի լինիլ այն բանը, որ իրանք են խնամք տանում իւրեանց հարազատ որդւոց դաստիարակութեան մասին։ Այո՛, իւրաքանչիւր օրիորդի սրտի մէջ պէտք է զարթեցնել ու զարգացնել մայրական սիրոյ զգացումը, միացնելով այդ մտաւոր կրթութեան և նպատակայարմար գործնական տեղեկութեանց հետ։ Այն ժամանակ նա պատսպարուած կը լինի ամեն ներքին թշնամուց և չի վախենալ պառաւութիւնից, որ այժմ նորա համար ճշմարիտ երկիւղալի է։ Սրտի մէջ այլ ևս տեղ չի լինիլ ո՛չ քարասրտութեան, ո՛չ վշտի, երբ այդ սիրտը համակրութեամբ բաբախում է հասարակաց բարօրութեան համար. չի բթանալ այն խելքը, որը գիտէ արդեամբ զբաղուիլ, վայելել գեղեցիկը և գնահատել նորան։

Բայց որպէս զի այս բոլորին կարելի լինի հասնել, օրիորդներին մատաղահաս տարիներից արդէն պէտք է յի-

շեցնել, որ նոքա աւելի երկար ժամանակ պառաւ կը լինին, քան թէ մանկահաս։ Մեծ հմտութիւն հարկաւոր չէ, որ 18 տարեկան հասակում կարելի լինի դուր գալ, բայց մեր կեանքի նպատակը պէտք է նորանում կայանայ, որ ըմբռնենք թէ իսկական գեղեցկութիւնը այն ժամանակն էլ արժանաւորութիւն ունի, երբ կը թոռմի պատանեկութեան վարդի գոյնը։

Աւելորդ կը լինէր մի առ մի թուել կանանց անգործութեան այն ցաւալի հետևանքները, որ կունենայ նոյն իսկ նոցա ոչ մանկահաս տարիներում։—Բայց դժուար է երևակայել անգամ, թէ ինչ ահագին ազդեցութիւն կարող էին ունենալ հասարակական կեցութեան բարւոքման վրայ նոցա բոլոր ներկայումս նիրհող ոյժերը։

Օրիորդի համար իրեն յատուկ բնութեան սահմաններում շատ գործ կայ։ Միայն օրիորդական դպրոցներն ու կրթական հիմնարկութիւնները կարող են տալ նոցա ամենաընդարձակ գործունէութեան ասպարէզ։ Կնոջից ուրիշ ով աւելի լաւ կարող է ճանաչել աղջկայ բնոյթը։ Մինչև անգամ դաստիարակութեան գործումն էլ մարդը ճգնում է ցոյց տալ իւր գերազանցութիւնը կնոջ վրայ. նորա համար մեծ մասամբ կնոջ կրթութիւնը մի երկրորդական բան է և ոչ թէ պարապման գլխաւոր առարկայ։

Եթէ լաւ կրթուած և դաստիարակուած օրիորդները իրանց նուիրէին աղջկանց դաստիարակութեան գործին, ահագին օգուտ կարող էին բերել մանաւանդ նորանով, որ նոցա աւելի մօտ ծանօթ են նոյն իսկ իրանց բնութեան թուլութիւններն ու պակասութիւնները։

Այս բանը հերքելու համար սովորաբար այն կարծիքն են յառաջ բերում, որ կինը չի կարող յաջողութեամբ ուսուցանել, որովհետև նոյն իսկ իւր կրթութիւնը թերի և պակասաւոր է։ Բայց մի՞թէ նա չի կարող այնքան սովորել, որքան դիտութիւն առ հասարակ հարկաւոր է կնոջը։ Մանաւանդ որ շատ քչերին կը յաջողուի դպրոցի կառավարչուհիների պաշտօնները ստանձնելու, որոնց համար անհրաժեշտ է բաղմակողմանի տեղեկութիւններ ունենալ. բայց շատ կա-

նայք կարող են իրանց համար մի որևէ առարկայ ընտրել, որ և կ'ուսումնասիրեն նոյնքան հիմնաւորապէս, ինչպէս և մարդը։ Թող կրթուած օրիորդը ընտրէ իւր համար, նայելով իւր ի բնէ սէր ունենալուն, կամ պատմութիւն, կամ բնագիտութիւն, կամ գրականութիւն։ Նա ի հարկէ չի գրիլ կամ գուցէ չը կարողանայ գրել այս առարկաների մասին ուսումնական շարադրութիւններ, բայց ծաղրալի կը լինէր պնդել, թէ նա անկարող կը լինի իւր գիտեցածը հաղորդել իւր սեռին պատկանող մանուկին։ Կամ թող այն օրիորդը, որ մի առանձին բնատուր շնորհք ունի լեզուներ ուսումնասիրելու, մի քանի տարի անցկացնի Անգլիայում կամ Ֆրանսիայում, և իւրացնի այնտեղի բարբառը, թող ուսուցանի այդ բարբառը, փոխարինելով բնական վարժուհիներին, որոնք շատ անգամ բացի լոկ միայն մայրենի լեզուն գիտնալուց, ամենացաւալի տգիտութիւնն են ներկայացնում։

Այս նպատակի համար հարկաւոր բոլոր տեղեկութիւնները, ի բաց առնելով գուցէ օտար լեզուների ուսումնասիրութիւնը, օրիորդը դիւրութեամբ կարող է ձեռք բերել խաղաղ ընտանեկան շրջանում, նա մանաւանդ եթէ լաւ նախապատրաստուած է կանոնաւոր ուսուցմամբ։

Անկասկած է նոյնպէս, որ դեղարուեստներով պարապելը բարեյաջող հանգամանքներում նոյնպէս մատչելի է օրիորդներին. բայց այս զբաղմունքները միշտ լիովին չեն գոհացնում զգացմունքի պահանջները. այն ժամանակ հարուստ օրիորդների առաջ, բացի հասարակաց բարեգործութիւնը, հանդէս է գալիս գործունէութեան մի առանձին շրջան։ Դա է խեղճ դասակարգի կանանց և օրիորդների մասին խնամք տանելը, որոնք մեծ մասամբ վնասվում են վատ դաստիարակութեամբ, կամ երբեմն էլ բոլորովին զուրկ են ամեն տեսակ կրթութիւնից։ Դատապարտուած լինելով միայն մեքենայական աշխատութեան, նոքա իրենց սահմանափակ և նեղ շրջանում չեն կարող հիմնաւորապէս ուսումնասիրել և այն զբաղմունքները, որոնք նոցա ապրուստի միակ միջոցն են կազմում։ Այս կանանց անընդունակութիւնը և աշխատանքին անսովոր լինելը, դժբաղդաբար շատ յաճախ,

ընտանեկան կեցուլթեան կորստեան պատճառն են լինում, ուր մարդու բոլոր ջանքերը ապարդիւն են անցնում։ Արհեստաւորներին և բանուորներին ամենալաւ օգնուլթիւնը նորանով կարելի էր հասցնել, որ նոցա աշխատասէր և ազնիւ, մաքրասէր և կարգ սիրող կանայք տային, որոնք կարող լինէին խնայել նոցա աշխատած կոպէկները և օգնէին մարդոց ընտանիքը պահպանելու գործում։ Այս դասակարգի համար ամենամեծ և ճշմարիտ բարերարուլթիւն կը լինէր հիմնել մի այնպիսի վարժարան, ուր կարողանային դեռ մանկուլթիւնից հեռանալ բարոյական ապականուլթիւնից և իրանց ընտանեաց անկարգ շրջանից, և պատրաստուէին ոչ թէ նաժիշտներ և կար անողներ լինելու, այլ կատարելու իրենց կեցուլթեան յատուկ բոլոր պարտաւորուլթիւնները։ Շատ բան արդէն ձեռնարկել են ստորին դասակարգի և մանաւանդ արհեստաւորների կրթուլթեան համար. նոցա ուսուցանում են այժմ գիտուլթեան այն օրէնքները, որոնց վրայ հիմնվում է նոցա մեքենական գործունէուլթիւնը և այսուհետև աւելի զգալի կը լինի նոցա համար տգէտ և անբարոյական կանայք ունենալը։

Որպէս զի այս կանանցն էլ կարելի լինէր ազատել անխոհեմ ամուսնուլթիւնից, կամ աւելի վատ վիճակից, նոցա պէտք է ուսուցանել արդիւնաւէտ աշխատանքի, և այս նոր երջանկուլթիւն կը պատճառի առ հասարակ բոլոր ընտանիքներին, նոցա համար լաւ ազախիններ պատրաստելով։

Այս առարկան շատ նշանաւոր է և արժանի կանանց ամենալուրջ ուշադրուլթեան։ Դժբաղդաբար, մինչև ցայժմս ոչն տեսակ բոլոր փորձերը կայանում էին միայն ձեռագործի հասարակ դպրոցներ բանալով, իսկ բուն էուլթիւնն ամենևին այդ չէ։ Եւ քանի՞ ազնիւ հոգիք և հանճարեղ ընդունակուլթիւններ կարող էինք ազատել մենք կորստից, եթէ միայն լաւ գիտենայինք այն հասարակ կանանց բնատուր ձիրքերը, որոնք դրեթէ ոչինչ կրթուլթիւն չեն ստանում։

Ապա ուրեմն սովորեցէք, տնտեսուլթիւն արէք, աշխատեցէք, լուսաւորուեցէք և լուսաւորեցէք ուրիշներին, օգ-

նութեան ձեռք կառկարեցէք խեղճին աշխատանքի և տրրտմութեան մէջ, և չիշեցէք վսեմ պատուիրանի խօսքը. «Անօգուտ կեանքը՝—վաղահաս մահ է»։

ԺԱ

ԸՆՏԱՆԵԱՅ ՄԱՑՐԸ.

Ոչինչ այնքան չի շարժում մարդու հոգին, ոչինչ այնքան չի վսեմացնում նորան, որքան այն ընտանեկան կեցութեան տեսարանը, ուր տիրապետում են կեանքի խոհեմ սկզբունքները։ Նորա միջնավայրը համարվում է կինը, այս տեղ ամենայն ինչ լուսաւորվում է նորա չքնաղութեամբ և կարողութեամբ. առանց նորան տղամարդը, ինչքան էլ որ առաքինի չը լինէր, չի կարող հասնել դոյն տեսակ երջանկութեան։ Ընտանեկան օճախում, այս սրբավայրում, ուր կինը իւր պաշտօնն է մատուցանում մարդկութեանը, իւր ներքին արժանաւորութեան զօրութեամբ չը պէտք է հանդուրժի ոչինչ անմաքուր, կեղծ ու պատիր և ստոր բաների։ Նորա առաջին հոգսը, որպէս վերին աստիճանի ներդաշնակ արարածի, այն պէտք է լինի, որ սոյն ներդաշնակութիւնը թագաւորեցնէ, իւր բոլոր շրջապատողների վրայ։ Տան գոհունակութիւնը և անդորրութիւնը,—ընտանեկան երջանկութեան առաջին պայմաններն են։ Ամուսինը և զաւակները այն համոզմունքով պիտի սնուած լինին, որ ոչ մի տեղ նոցա համար չի կարող այնքան դուրեկան լինել, ոչ մի տեղ այնքան լաւ, որքան իրանց տանը։ Մեծ մասամբ կինն ինքն է մեղաւոր, որ մարդը բաւականութիւն է փնտրում ընտանեկան շրջանից դուրս։ Սիրելի և խելացի կինը դիւրութեամբ կը գրաւի մարդուն և սիրել կը տայ իւր ընտանիքը։

Մի և նոյն ժամանակ, նա, օգնելով մարդուն նորա զբաղմունքների մէջ, դատարակելով զաւակներին և մերձաւոր բարեկամների շրջանում զարթեցնելով համակրութիւն դէպի ամեն գեղեցիկն ու վսեմը, նա հասնում է այն-

պիսի նշանակութեան, որ վեր է ամեն տեսակ փառասիրական և հաճոյամոլութեան ցոյցերից։ Սորա համար ամենևին հարկաւոր չեն մեծ միջոցներ, բաւական են ամենահասարակ պայմաններ։ Ճշմարիտ գեղեցկութեանը հարկաւոր չէ ոչ հարստութիւն և ոչ փայլ. նա ինքը ամենին գեղեցկութիւն է շնորհում։ Ընդ նմին անվիճելի է, որ ճշմարիտ լուսաւորութիւնը ամենից առաւել պարզութիւն է սիրում։ Թողնենք հագուով ու սրտով աղքատներին նոցա փայլուն արտաքինը, նոցա գեղեցիկ հանդերձները, շքեղ զարդարուած սենեակները, ճոխ սեղանները։ Մի՞թէ այս շռայլութեանը, որ երբեմն մի առանձին գոհունակութիւն էլ չէ պատճառում, կը նախանձի խելացի մարդը, որ առանց այդ էլ վայելում է մաքուր հոգեկան բաւականութիւններ։

Խոհեմ մայրը ամենից առաւել պէտք է ջանայ զարթեցնելու զաւակների մէջ սէր դէպի պարզութիւնն ու համեստութիւնը. սովորեցնի նոցա զանազանելու արտաքին փայլը ներքին արժանաւորութիւնից, չարհամարհելով ոչ մէկը և ոչ միւսը։ Մինչև անգամ մարդուս դէպի բաւականութիւնն ունեցած հակումն նա կարող է ազնուացնել, սովորեցնելով մանուկին բաւականութիւն գտնել ընտանեկան ուրախութեանց և ազգականներին ու ծանօթներին քաղաքավարի ընդունելու և պատուելու մէջ։ Ոչ որ մանկութիւնից ընտելացել է երջանիկ լինել ընտանեկան շրջանում, նա դժուար թէ թեթևամտութեամբ զգայական բաւականութեանց յետևից կընկնի, որոնք այնքան շատերի կորստեան պատճառն են լինում։ Իսկ այս դժբաղդ ուղղութեան սերմը,— ա ն պ ա տ ճ ա ռ ս կ զ բ ն ա կ ա ն դ ա ս տ ի ա ր ա կ ո ւ թ ե ա ն մ է ջ պէտք է սրոնել։ Մայրը սրբութեամբ պէտք է կատարէ ընտանեկան տօները. հէնց նոյն իսկ նոքա են զարթեցնում մանկան մէջ համակրութիւն դէպ աշխարհային ուրախութիւնները։ Հանդամանքները ոակաւ են այնքան ձախողակ լինում, որ ընտանիքը ստիպուած լինէր զրկել իրան այդ բաւականութիւններից, որոնք մի առանձին ծախք չեն պահանջում։ Մի ծաղկի փնջիկ, մի փոքրիկ նաշխուն ձեռագործ, մի որ և է քաղցրեղէն,—և սոքա բաւական են մա-

նուկներին ուրախութիւն պատճառելու։ Սորանով նոքա կը սովորեն ուրիշներին բաւականութիւն պարգևել, և իրանց այնպէս կը տանեն, որ ընդհանուր ուրախութիւնը չեն խանգարիլ. անմեղ բաւականութեանց մի անընդհատ շարք մատչելի է այն երջանիկ մանկութեանը, որ ծաղկում է հոգատար, անձանձիր աշխատող և ամեն ճշմարտին, բարիին ու գեղեցկին համակրող մօր ձեռքի տակ։ Հոգալով մանկան զգայականութիւնը զարթեցնելու և նորան ուղղութիւն տալու մասին, նա հէնց դորանով յառաջ է բերում համերաշխութիւն, որը ապագայում սերտ կապերով միաւորում է պատանիների ամբողջ սերունդ։

Փառասէր և զուարճութեանց ագահութեամբ յանձնատուր եղող կինը ժամանակ չունի զաւակների հետ ապրելու։ Ոչքան բազմաթիւ մայրեր հազիւ թէ արժանի են այդ անուան։ Ահա հէնց այս է կնոջ ամօթալի ստորութիւնը։ Յայտնի է, որ բոլոր բարի հակումները ամրանում են մատաղ հոգու մէջ դէպի հայրական տունն և ծնողներն ունեցած սիրով ու համակրութեամբ. բայց սառն անտարբերութիւնը սպանում է նոցա։ Մանուկներին հարկաւոր է հարազատ սիրտ, որին չի կարելի ոչինչ դնով գնել։

Մանուկներին առաւել լաւ չի կարող կրթել և այն թմրած, անընդունակ կինը, որ չը գիտէ թէ ինչից սկսէ, որ ճշմարիտ գաղափար չունի իւր պարտաւորութեանց մասին։ Մինչև անգամ եթէ նա ի բնէ բարի և խելացի լինի, —այդ էլ բաւական չէ. նորան պէտք է դեռ ևս կատարեալ գիտակցութիւն այն բանի, թէ նա ինչ պէտք է անի մանուկների բարօրութեան համար։ Ի վերջոյ, իրաւ է, պատահում են և այնպիսի մայրեր, որոնք միայն իրանց զաւակների սիրովն են ապրում և ի բոլոր սրտէ ցանկանում են նոցանից հասարակութեան օգտակար անդամներ պատրաստել. բայց արդեօք շատ են այնպիսիք, որոնք մտաւոր կրթութեան ժամանակ կարողանային նոցա վրայ ազդեցութիւն ունենալ և այն էլ ոչ միայն մանկութեան հասակում, այլ և աւելի ուշ։

Անասելի սուրբ և վսեմ է մօր կոչումը, որ լիովին

արժանի է այս անուանը։ Մանկան ողջ ապագան գտնվում է նորա ձեռքում։ Նա կարող է ստորացնել կամ բարոյապէս վերանորոգել ամբողջ սերունդ։ Մեծ և ծանր նախատինք է լուսաւորուած կանանց համար այն գիտակցութիւնը, որ նոցանից քչերը միայն լիովին հասկանում են իրենց նշանակութիւնը. այլ կարճատեսները միայն գանգատվում են իրանց գործունէութեան նեղ շրջանի վրայ ներկայումս էլ, և իրանց կեանքը ծուլութեան, փոթորկալից բաւականութեանց կամ տնային տնտեսութեան մանրակրկիտ վէճերի մէջ են անցուցանում,—մինչդեռ նոքա պէտք է նուիրէին իւրեանց անձը ամենաազնիւ ձգտումներին։ Կինը միակ հնարաւոր, խելացի ազատութիւնը կարող է ստանալ մտաւոր գործունէութեամբ, ընութեան ծրագրած սահմաններում։

Մանուկներին դաստիարակելով, կրթելով և ուղղութիւն տալով, նա անհամեմատ աւելի մեծ օգուտ է բերում, քան եթէ մասնակցէր հասարակական գործունէութեան։ Նա ազդեցութիւն ունի ամբողջ ազգերի վիճակի վրայ, զաւակներ պատրաստելով պետութեան և հասարակական ծառայութեան համար։ Մինչև պատանեկութեան հասակը որդին անկապտելի կերպով պատկանում է մօրը. ուրեմն վերջինս պարտաւոր է նորան ներշնչել արթուն և գործունեայ կեանքի պահանջը։

Հին սպարտացի կնոջ նման, որ առաւել լաւ էր համարում որդուն մեռած տեսնել, քան անպատուած վերադառնալիս, մայրը պէտք է մանուկների մէջ խորին արհամարհանք զարթեցնէ դէպի ամեն վատ ու ստորը, պէտք է ներշնչէ նոցա մէջ սէր առ հայրենիք և համոզմունքի ուժով ներգործէ նոցա վրայ այնպէս՝ որ որդին պատրաստ լինի առանց շուտ ենթարկուելու ամենայն տեսակ հալածանաց, քան թէ մօր արհամարհանաց և կշտամբանքին։ Ամեն ժամանակների մեծ մարդիկ գրեթէ առանց բացառութեան ընտիր մայրեր են ունեցել։ Բայց և իւրաքանչիւր կնոջ սրտում միշտ բաւականաչափ զգացմունք և անձնուիրութիւն կայ դէպի բարին, ճշմարիտն ու գեղեցիկը. դժբաղդաբար, այս գեղեցիկ սերմերը կամ բոլորովին խեղդվում են, կամ թէ

արժանաւոր, վսեմ նպատակների պակասութեան պատճառաւ չեն հասնում կատարեալ զարգացման։ Ինքն իրան աղնուացնելով, կինը հէնց դորանով կը նպաստի ամբողջ հասարակութեան բարոյական վերածնելութեան։ Կնոջ լոկ երևալը բարերար ներգործութիւն է ունենում բոլոր շրջապատողների վրայ, այդ պատճառաւ էլ նա պէտք է արժանի լինի այդպիսի ներգործութեան։ Այն ընտանեաց մայրը, որի աչքի առաջն է իրեն պարտաւորութեանց իդեալը, անձանձիր կաշխատի, ամենևին չը յոգնելով առօրեայ մանրակրկիտ հոգսերից, վասն զի նա գիտէ որ այս տաղտկալի մօգալիկից պէտք է գեղեցիկ տեսարան դուրս գայ։ Եւ ի՜նչ մեծ վարձատրութիւն է նորա համար, երբ նա վերջապէս կարող է մտցնել իրական կեանքի մէջ արդարասէր և աղնիւ, աներկիւղ և պարտաւորութեանց հաւատարիմ զաւակներ։ Բայց սորա համար նոյն իսկ ինքը ամենից շատ պէտք է սիրէ ճշմարտութիւնը և չը սովորեցնէ մանուկներին լոկ միայն շահախնդրութեան և եսամոլութեան համար սողալու մոլութեան առաջ։ Տուէք հասարակութեանը որքան կարելի է նախապաշարումներից ազատ շատ պատանիներ, որոնք պատրաստ լինէին անկեղծաբար հատուցանել իրանց կոչմանը,—այն ժամանակ աղքատութիւնը կը գտնի իսկական պաշտպաններ, աշխատանքը՝ անկեղծ բարեկամներ, իսկ արդարադատութիւնը՝ ամենազօրաւոր նեցուկ։ Ձեր զաւակների վրայ ունեցած ազդեցութեան շնորհիւ, դուք կը լինիք աշխարհիս ճշմարիտ տիրապետողները, և կը յաղթէք նորան, ոչ թէ սմազոն կանանց նման բռնութեամբ, այլ կանացի ոյժի և գեղեցկութեան անվրէպ սիրով, որպէս մարդկութեան ճշմարիտ հանճարներ։

Մօր ազդեցութիւնը առաւել զօրեղ է աղջկայ, քան թէ տղայի վրայ. աղջկայ համար նա պէտք է լինի ամենալաւ օրինակ նորա ամբողջ կեանքի ընթացքում։ Արդեօք օրիորդը կարող է արհամարհանքով նայել ընտանեկան պարտաւորութիւնների վրայ, երբ նորա նազելի, կրթուած մայրը կատարումէ դոցա այնքան խնամքով, հոգատարութեամբ և տոկունութեամբ։ Արդեօք սիրելի մօր խստապահանջ պարզութեան առաջ չի

լոիլ հպարտութեան, դէպի շքեղ զարդերն ու զգեստներն ունեցած կրքի ամեն տեսակ տրտունջը։ Բայց ինչ մեծ դժբաղդութիւն է այն օրիորդի համար, որը փառասէր և ունայնամիտ մայր ունի, որը սրտատրոփ սպասում է այն րոպէին, երբ ինքը պէտք է իւր աղջկան զուգուած ու զարդարուած ժողովարանը տանի։ Սեփական արժանաւորութեան զգացմունքից զուրկ մայրը չի կարող զարթեցնել իւր դստեր մէջ սեփական արժանաւորութեան զգացմունք և այնուհետև հասկանալի կը լինի տղամարդոց այն ողորմելի ներողամտութիւնը, որ նոքա ունին դէպի կանայք։

Մայրա կան զգացմունքը պէտք է ազատէր թեթևամտութիւնից ու պճնասիրութիւնից և այն կանանց, որոնք արդէն կորստեան անդընդի ծայրին են կանգնած։ Շատ կանայք կարծում, են որ դեռ էլի ժամանակ կը լինի իրանց կենցաղավարութեան եղանակը փոխելու, երբ իւրեանց դուստրները կը մեծանան. բայց աւա՜ղ, այն ժամանակ արդէն ուշ է։ Մանուկը, բոյսի նման, զարգանում է այն մթնոլորդի համապատասխան, որը շնչում է։ Ապագայում ոչ մի խստութիւն չի կարող ուղղել այն, ինչ որ փչացուած է ձեռնունայն և չնչին մարդոց վաղահաս ծանօթութեամբ։ Մանաւանդ օրիորդի համար դաստիարակութեան ժամանակ ամենից կարեւորն է օրինակը։ Նորա քնքոյշ բնոյթը ընդունում է լաւ և վատ տպաւորութիւնները զարմանալի արագութեամբ, և նոքա նորա վրայ անհամեմատ առաւել զօրեղ են ներգործում, քան թէ տղայի վրայ։ Ինչպէս յաճախ մենք քարկոծ ենք անում թեթևամիտ կնոջը, բայց եթէ հարցնենք նորա մօր և նորա երիտասարդութեան հանգամանքների մասին,—այնուհետև բաղմիցս մեր զայրոյթը կը փոխուի խորին ցաւակցութեան զգացմունքի։

Սակայն ինչ հարկ կայ սորա մասին երկար խօսել. աներկբայ է, որ կինը լիակատար հնար ունի ազատելու իրան և իւր սերունդը ամեն անարժան հանգամանքներից։ աներկբայ է և այն, որ ժամանակը հասել է նորա նիրհած ոյժերին գործելու։

Ինչպէս կը փոխուէր մեր հասարակական կեանքը կանանց ազդեցութեամբ, եթէ նոքա բաւականաչափ հաստատա-

մրտութիւն ունենային ամենայն ինչ իրենց միջոցների համապատասխան տնօրինելու, առանց խոչընդոտն լինելու մեր հոգեկան պահանջներին։ Հէնց նորա համար, որ ճըշմարիտ հիւրընկալութիւնը աւելի ու աւելի անյայտանում է, և չափազանց ընդարձակվում այն հասարակութիւնը, որ միայն բաւականութիւն է գտնում սնապանծութեան և շռայլութեան մէջ։ Եթէ մայրն ու քոյրերը երեկոներն անցուցանում են դատարկ այցելութիւններով, ապա ուր գտնեն բաւականութիւն նոցա ամուսիններն ու որդիքը, եթէ ոչ հիւրանոցներում։ Եթէ այժմս երբեմնակի մարդիկ ու կանայք միասին են պատահում, այդ էլ միայն շքեղ պարահանդէսներում կամ ճոխ խնճոյքերումն է լինում. իսկ հարցրէք խընդրեմ դոցանից, արդեօք մեծ բաւականութիւն են գտնում այդ քմահաճ հանդէսներում, ձեզ կը պատասխանեն յորանչելով և ուսերը վեր քաշելով։ Այն ինչ երիտասարդների սիրով յաճախելը ընտանեկան շրջաններում շատ կարող էր նպաստել և երջանիկ ամուսնութեանց կայանալուն։ Պարահանդէսներում և ժողովարաններում նոքա տեսնում են միմեանց շքեղ զարդարուած և այնտեղ անկարելի է մարդոց ճանաչել։ Ընդհակառակն, մարդը պէտք է ընտանեկան շրջանում ուսումնասիրէր կնոջը, ընտանեկան կեանքի պայմանների մէջ, ուր ինքն էլ իւր կողմից կարող է ապացուցանել որ ոչ միայն լաւ պարել գիտէ, այլ և առաւել օգտակար և դրաւիչ խօսակցութեան ընդունակ է, քան ինչպիսին լսվում է մեր շքեղ ժողովարաններում։

Աշխարհասէր մարդկանցից բոլորովին չի կարելի աւելին սպասել։ Բայց նայեցէք համեստ ընտանեաց ներսը, ուր միշտ կարելի է գտնել սիրալիր ընդունելութիւն, ախորժալի, խելացի խօսակցութիւն և քաղցր հիւրասիրութիւն։ Մենք լիակատար իրաւունք ունինք ցաւելու հին փառաւոր անցեալի վրայ, երբ առաւել յաճախ էր լինում հիւրընկալութիւնը և երբ բարք ու սովորութեանց պարզութիւնը ներում էր հիւրասիրելու ամենաչափաւոր կարողութիւն ունեցող ընտանիքներին անգամ։ Իսկ այժմ, բացի հարուստ տներից, որոնք հիւրընկալութեան համար միայն յայտնի

օրերումն են բացվում, արդեօք շատ կան այնպիսի ընտանիքներ, ուր կարելի լինէր գնալ առանց հրաւէրի, միանգամայն վստահ լինելով, որ այդ տեղ կարելի կը լինէր մի քանի դուրալի ժամեր անցուցանել։ Սորա պատճառը ոչ թէ հանրակեցութեան պակասութեան մէջ է, որ ընդհակառակն շատ տարածուած է, այլ նորանում, որ քաշվում են ցոյց տալ իրանց կեցութիւնը առանց կարեւոր պատրաստութեանց։ Եւ այնտեղ էլ, ուր կարողութիւնը և միջոցը ներում է հիւրեր ընդունելու, պահանջվում է, որ այցելութեան ժամը վաղուց յայտնի լինէր. այն ժամանակ միայն ամեն ինչ պատրաստ է, ամեն ինչ իւր տեղն է։ Պճնասիրութեան ծախքերն այնքան նշանաւոր են, որ մարդիկ ակամայ ստիպուած են շատ համեստ ապրել տանը և հիւրընկալութեան ամենատգնիւ և պարզ պարտաւորութիւնը ծանր է թւում նոցա յօժարութեամբ կատարել։ Բաւական էր միայն, որ մի քանի կանայք յանձն առնէին տնօրինելու իւրեանց տնտեսութիւնն ու զարդարանքը իրենց ամուսինների նիւթական միջոցների համաձայն։ Այն ժամանակ նոքա կարող էին անհամեմատ աւելի շուտ շուտ իրանց բաւականութիւն պատճառել բարեկամներին հիւրասիրելով։ Լաւ տանտիկինը դիւրութեամբ է փոխարինում քաղցրաւենիք շինողին. այն ամենը, ինչ պատրաստել է նա ճաշակով և հմտութեամբ, համեմվում է նոյնպէս ախորժալի, օգտակար զրուցատրութեամբ,—իսկ այս ճշմարիտ որ շատ և շատ շքեղ, փարթամ երեկոյթներից առաւել գերազանց է։ Ի՞նչ հարկաւոր են մեզ այնպիսի այցելուներ, որոնք գալիս են ոչ թէ մեզ համար, այլ միայն որ ցոյց տան իւրեանց գեղեցիկ շորերը, կամ վայելեն մեր թանկագին խորտիկները։ Իւրաքանչիւրը այնպէս պէտք է ապրի, ինչպէս կարող է, այնպէս երևայ հասարակութեան մէջ, ինչպէս ներում են նորա միջոցները։ Այն ժամանակ ամօթով չենք մնալ նա և մեզանից առաւել հարուստների ու երևելիների հետ վարուելիս։

Վայելուչ, գեղեցիկ պարզութիւնը ոչնչով ստոր չէ հարստութիւնից. իսկ անմիտ սնապանծութիւնը և շռայլու-

թեան մէջ միմեանց գերազանցելու ձգտումը միշտ սնանկութեանն է հասցնում։

Մենք համոզուած ենք, որ կրթուած կինը կարող կը լինի խոհեմութեամբ և աչալրջութեամբ գործելով աշխարհային կեանքին առաւել վսեմ բարոյական ընաւորութիւն տալ։ Այն ժամանակ նա իւր համեստ տանը կը տեսնի և այն խելօք և ուսումնական անձանց, որոնք այժմս խուսափում են ժամանակակից հասարակութիւնից, իսկ այս համեստ ընտանեկան յարկի տակ մեծ բաւականութեամբ մըտքերի փոխանակութիւն կանեն և հասարակաց բարօրութեամբ ոգևորուելով, առաւել մեծ ոյժ կը ստանան արդիւնաւոր հանրօգուտ գործունէութեան համար։

Այդպիսի գոյներով է երևում մեզ ճշմարիտ ինքնուրոյն կինը՝ Նա՝ Պիգմալիոնի գեղարուեստի նման, ոգևորվում է իւր ներքին գեղեցկութեան գիտակցութեամբ և ձգտում է առաջուան անգործութեան փոխանակ, դէպ արդիւնաւէտ գործունէութիւն, մտաւոր կրթութիւն և բարոյական կատարելութիւն։

Թարգ. Գ. ՇԱՀԲՈՒԴԱՂԵԱՆ։

ՈՍԿԻ ՁԿՆԻԿ

(Պ՝—ՀԷՆԻ)

Բարեկամական նուէր պ. Սեդրակ Մանդինեանցին.

1.

Կապուտակ ծովի ափին շատ մօտիկ
Երեսուն տարի ծեր մարդ ու կնիկ
Մէկ հին կիսաւեր գետնափոր խրճում
Հանգարտ ու լռիկ սոսկ էին ապրում։
Ծերուկը ծովից միշտ ձուկ էր բռնում,
Պառաւն էլ տանը նստած՝ թել մանում։
Մէկ օր ցանց ձգեց ծովը ծերունին,
Ու ջրից հանեց տիղմ բաւականին.
Նա երկրորդ անգամ ցանցը ձգեց ծով,
Ցանցը լցուեցաւ ջրաբոյս խոտով.
Նա երրորդ անգամ ցանցը ծով ձգեց—
Ու յանկարծ ոսկի մէկ ձկնիկ բռնեց։
Ոսկեայ ոսկի ձկնիկը կանչել
Մարդկային լեզուով այսպէս աղաչել՝
«Ծերուկ՝ թո՛ղ ինձի որ ծովը երթամ,
Ի՞նչ ուզէ սիրտդ՝ բոլորը կուտամ,»
Զարմացաւ ծերը ու սարսափեցաւ,
Երբ որ այս խօսքը ականջին հասաւ
Ուղիղ երեսուն տարի ձկնորս էր,
Դեռ նա չէր լսած, որ ձուկը խօսէր.

Յանցիցը հանեց, նորից ձգեց ծով,
Նա ոսկի ձրկին այսպէս ասելով.
«Տէ՛ր ընդ քեզ, անմեղ իմ ոսկի ձրկնիկ,
«Դընա ծովի խորք, լողա հանդարտիկ,
«Ընտեղ մինչ վերջը դու ապրէ՛ անդորը
«Քու պարգևները ինձ չեն հարկաւոր»։

2.

Ասաց ու դարձաւ իր պառաւ կընկան
Ու պատմեց նորան հրաշքըն այն օրուան.
«Այսօր ես ցանցըս ծովը ձգեցի,
«Ծովեցը ոսկի ձրկնիկ հանեցի,
«Ոսկի եմ ասում, հասկացի՛ր, պառաւ,
«Մեզ պէտ ձրկնիկը խոսիլ ըսկըսաւ,
«Խոստացաւ նա ինձ շատ գանձ, շատ բաներ,
»Խոստացաւ ինձ տալ ի՛նչ սիրտըս ուզէր.
«Բայց ես նորանից բան չի պահանջեցի,
«Ուանց փրկանքի ծովն արձակեցի»։
Պառաւը ծերի վըրայ բարկացաւ,
Ու յիշոցք տալով, այսպէս խօսեցաւ.
«Ծերո՛ւկ դու անմիտ, ծերո՛ւկ դու յիմար,
«Ինչո՞ւ վարձ չառիր փրկանքի համար,
«Գոնէ լըւացքի մէկ տաշտ խընդրէիր,
«Մերը կոտրած է,—այդ խօ գիտէիր»։
Կապուտ ծովի ափ ծերուկը գընաց,
Ծովի երեսը կամացուկ ծրփաց,
Ըսկըսաւ կանչել նա ոսկի ձրկին.
Եկաւ ձրկնիկը, ասաց ծերուկին.
«Ի՞նչ ես ուզում դու, ծերուկ պատուական»։
Ծերունին այսպէս տրուեց պատասխան,

«Պառաւիս սիրտը շատ բորբոքած է,
«Իբր թէ լուացքի տաշտը կոտրած է,
«Նորը, ասում է, բեր ինձի համար,
«Ու խեղճ ծերուկիս չի տալիս դադար»։
»Մի՛ տրտմիր, ասաց Նորան ձրկնիկը,
«Նոր տաշտ կ՚ունենայ այսօր քու կնիկը»։

3.

Ծերուկը ուրախ դէպի տուն դարձաւ,
Պառաւի առջև մէկ նոր տաշտ տեսաւ,
Պառաւը ուրախ լինելու փոխան,
Նոր նոր անէծքներ թափում էր վրան.
«Ծերո՛ւկ դու անմիտ, ծերո՛ւկ խելագար,
«Մեծ բաղդ ես կարծում որ տաշտ ըստացար։
«Տաշտը շատ հնչին վարձ է, ո՞վ անմիտ,
«Շո՛ւտ գընա ձրկին ու խնդրէ՛ խրճիթ»։
Դէպի կապուտ ծով ծերունին դարձաւ,
Ծովի կապուտակ գոյնը մթացաւ,
Ըսկըսաւ կանչել նա ոսկի ձրկին,
Եկաւ ձրկնիկը, ասաց ծերուկին.
«Ի՞նչ ես ուզում դու, ծերո՛ւկ պատուական,
Ծերունին այսպէս տրուեց պատասխան.
«Իմ պառաւ կինը սաստիկ է կատղել,
«Էլ նա հիւղի մէջ չէ՛ ուզում ապրել
«Ասում է՝ խրճիթ պէտք է ինձ համար,
«Ու խեղճ ծերուկիս չի տալիս դադար»։
Ձրկնիկը ծերին տրուեց պատասխան,
«Մի՛ հոգալ—տրտմիր, ծերուկ պատուական։
»Մի՛ամիտ սրտով դէպի տուն գընա,
«Քու պառաւ կինը խրճիթ կ՚ունենայ»։

Ծերուկը դէպի իւր հիւղը դարձաւ,
Ռաջուայ հիւղի հետքն էլ չի գըտաւ,
Իրա աչքերին նա չէր հաւատում—
Ռաջևը կեցած էր խըրճիթ սիրուն,
Կըտուրի վըրայ կար սպիտակ ծըխան.
Ամաքուր սենեակի մէջ տեսաւ կնկան,
Որն որ փոխանակ Տիրոջ փառք տալու.
Ըսկըսաւ մարդուն յիշոցներ տալու,
«Ծերո՛ւկ դու անխելք, ծերո՛ւկ դու անմիտ,
«Ամէն բաղդ է, որ մենք ունեցանք խըրճիթ.
«Դնա դէպի ծով ու ասա՛ ձըկան,
«Այս է հրամանը իմ. խաղաղուն կընկան,
«Էլ գեղջուկ մընալ չուզեմ մէկ վայրկեան,
«Կուզեմ որ լինիմ ես ազնուական»։

4.

Ծերը դէպի ծով գընաց գըլխակոր,
Տեսաւ որ ծովը սաստիկ էր պըղտոր.
Ըսկըսաւ կանչել նա ոսկի ձըկին։
Եկաւ ձըկնիկը, ասաց ծերուկին.
«Ի՞նչ ես ուզում դու, ծերուկ պատուական»։
Ծերունին տըւեց նորան պատասխան,
«Պառաւ—քաւլիարըս խիստ է բարկացած
«Որ մինչև օրըս գեղջուկ է մնացած,
«Բայց այդպէս մընալ չուզէ մէկ վայրկեան,
«Եւ կ'ուզէ լինել կին ազնըւական»։
Ձըկնիկը ծերին տըւեց պատասխան,
«Ա՛յ տխրիլ—տրտմիլ, ծերուկ պատուական։
«Ամիսիտ սըրտով դէպի տուն գնա,
«Կինըդ այդ բաղդին էլ կարժանանայ»։

Ծերուկը իսկոյն դէպի տուն դընաց
Ու իր աչքերին նա չի հաւատաց.
Առջևը տեսաւ փառահեղ տունը,
Պատշգամբի վրայ կանգնած խաթունը՝
Սամուրէ բաճկոն ունէր նա հագին,
Գլխուն դիպակէ գըդակ թանգագին,
Վըզին մարգարտեայ մանեակ էր կախած,
Ոսկի մատանիք մատերին հագած,
Ոտերին կարմիր թանգ ոտնամաններ,
Առջևը շարած հըլու ծառաներ,
Պառաւը նոցա մէջ մանն էր գալիս,
Սաստով ու ծեծով հրաման էր տալիս։
Ծերուկը դող-դող ասաց իր կընկան.
«Խարէ՛ քեզ, խաթուն իմ ազնըւական,
«Կարծեմ որ այժըմ երջանիկ ես դու»։
Կինն չուզաց անգամ վըրան նայելու։
Նորա ծառաներն շտապով վազեցին,
Աղբիւս մաքրելու ախոռ քըշեցին։

5.

Կէս ամըսուայ չափ հազիւ թէ անցաւ,
Մ՚եր պառաւ կինը նորից կատղեցաւ,
Նորից ծերուկին առջևը կանչեց
Ու ձրկնիկի մօտ երթալ հրամայեց.
«Շո՛ւտ գընա, ասա՛ դու ոսկի ձրկան,
«Որ չուզեմ մընալ սոսկ ազնըւական,
«Կամ սովորական մէկ իշխանուհի,
«Այլ կ՚ուզեմ լինել ազատ թագուհի»։
Այս խօսքերը որ լըսեց ծերունին,
Ասաց վախեցած ու կողկողագին.

«Թ՝ըռցրել ես խելքըդ, անըզգամ քաւթար
«Թ՝է՞ ծիծաղեցնել ուզում ես աշխարհ,
«Հէնքըդ—շնորհքըդ մի՞թէ չես տեսնում»:
«Որ թագաւորել էլ ես դու ուզում:»
Կատղեցաւ պառաւն, գոչեց սատկապին
Ու ամուր ապտակ ծեփեց ծերուկին,
«Ի՞նչպէս ես կարող տալ լիրբ պատասխան,
«Պեղջո՛ւկ դու, իմ պէս մէկ ազնիւ կընկան,
«Պէ՞հ, շո՛ւտ արա, շուտ, գնա դէպի ծով,
«Թ՝է կամաւ չերթաս՝ կը տանեն ծեծով»:
Տըխուր դէպի ծով ծերուկը գընաց,
Կապուտակ ծովի ջուրն էր սևացած.
Ըսկըսաւ կանչել նա ոսկի ձըկին.
Եկաւ ձըկնիկը ասաց ծերուկին.
«Ի՞նչ ես ուզում դու, ծերո՛ւկ պատուական»:
Ծերուկը տըւեց նորան պատասխան.
«Խելքը թռել է իսպառ իմ կընկան,
«Էլ չուզում մընալ նա ազնըւական,
«Խորհուրդ ու խըրատ էլ նա չի լսում,
«Ընդառ թագուհի լինել է ուզում»:
Ձըկնիկը ծերին տըւեց պատասխան.
«Մի՛ տխրիլ—տրտմիլ, ծերո՛ւկ պատուական:
«Այս անգամ էլ դու հանդիսատ տուն գնա,
«Պառաւը թագ էլ գլխուն կ՝ունենայ»:

6.

Երբ որ ծերունին դէպի տուն դարձաւ,
Եռջևը հրաշք հիացք բացուեցաւ
Հըբեղ փրռուած էր ճոխ արքունիքը,—
Դահլիճի մէջ էր նորա կընիկը

Ճաշու սեղանի առջևը նըստած,
Սեղանի վըրայ խորտիկներ շարած.
Ձորա-կողմը դրանիկ ու աւագորեար
Ծառայում էին նորան անդադար.
Ուտում էր ճուտով փլաւ ախորժակով
Ու գինի խմում էր նա մեծ բաժակով.
Դըրան մօտ կանգնած էին զինուորներ
Ձեռքերին բըռնած սուր սուր կացիններ։
Ծերունին երբ որ պառաւին տեսաւ,
Իսկոյն վախիցը ոտերին ընկաւ»
«Խարեւ՝ քեզ, ասաց, դըշխոյ փառաւոր,
«Ահա քեզ տեսայ իսպառ բաղդաւոր....»
Պառաւը մարդու վըրան չի նայեց,
Մ'իայն դահլըճից քըշել հրամայեց։
Նախարարները վըրայ-վազեցին,
Ծերուկին ծեծով արտաքս հանեցին,
Դռնապաններն էլ՝ ձեռքերին կացին,
Մ'ազ-մընաց խեղճին որ չի մորթեցին.
Իսկ ժողովուրդը վերցուց աղաղակ,
Ծաղր ու ծանակով արաւ խայտառակ,
Օ՛խ, յիմա՞ր, ասաց, միշտ խելք սորվեցի՛ր։
Ու միւս անդամ պատիւըդ գիտցի՛ր։

7.

Էլի կէս ամիս որ նորից անցաւ,
Պառաւը արդէն իսպառ կատղեցաւ.
Նախարարներէն հրամայեց մէկին,
Որ երթայ, գըտնէ, բերէ ծերուկին։
Երբ եկաւ ծերը՝ կինն ասաց նորան.
«Ահա լսէ դու իմ խիստ հրաման—

«Դընա՛ ու գրտիր դու ոսկի ձրկան
«Էլ սիրտը չուզէ, ասա՛, իմ կընկան
«Երկրի վրայ լինել մէկ սոսկ թագուհի,
«Ամէն կ'ուզէ լինել ծովի տիրուհի,
«Ովկիանոս—ծովի մէջ կ'ուզէ կենալ,
«Ոսկի ձո՛ կին էլ ծառայ ունենալ»։
Համարձակեցաւ խեղճուկ ծերունին
Լակառակ մէկ խօսք ասել պառաւին,
Դըլուխը կախած գընաց դէպի ծով.
Տեսաւ որ ծովը սաստիկ էր խրռով.
Գոռում, գոչում էր ահեղ փոթորիկ,
Ցատանում էին փրփրրած ալիք.
Ընկրաւ կանչել նա ոսկի ձրկին.
Եկաւ ձրկնիկը, ասաց ծերուկին.
«Ի՞նչ ես ուզում դու, ծերո՛ւկ պատուական։
Ծերունին նորան տրուեց պատասխան,
«Ա՜խ, ե՞րբ պիտ լինի վերջը իմ ցաւին.
«Էլ սիրտը չուզէ յիմար պառաւին
«Երկրի վրայ լինիլ մէկ սոսկ թագուհի,
«Ամէն կուզէ լինիլ ծովի տիրուհի,
«Ովկիանոս—ծովի մէջ կուզէ կենալ,
«Դեզ էլ իւր ծառայ դեսպան ունենալ։»
Ձրկնիկը ոչինչ չը պատասխանեց,
Պոչը կամացուկ նա ջրին խրփեց,
Լուռ ու մունջ ջրի մէջը սուզեցաւ
Ու ծովի խորքը դընաց թաք կեցաւ։
Երկար ըսպասեց նորան ծերուկը.
Երևան չեկաւ էլ ոսկի ձուկը.
Իրիկնադէմին տուն վերադարձաւ
Ու առջևն այսպէս պատկեր բացուեցաւ.
Նորա պառաւը շէմքին էր նըստած
Ու կոտրած տաշտը կար նորա դիմաց։

ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ։

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Անհրաժեշտ է արդեօք դաստիարակներին և ուսուցիչներին հոգեբանութիւն ուսումնասիրելը թէ ոչ։ Կարո՞ղ են արդեօք նոքա այս գիտութիւնից այնպիսի տեսական օգտակար տեղեկութիւններ քաղել, որոնք կարողանային ղեկավարել նոցա գործնական կեանքի մէջ։ Ահա այն հարցերը, որոնք ամենահետաքրքիր վիճաբանութեանց առարկայ դարձան Լօնդօնի Մանկաւարժական ընկերութեան ժողովում։ Վիճաբանութեանց շարժառիթն էր պ. Սիւլլիի (M-r Sully M. A.) բէֆէրատը, որով ապացուցանվումէր հոգեբանութեան տեսական տեղեկութեանց գիտնալու անհրաժեշտութիւնը իւրաքանչիւր դաստիարակի համար և բացատրվումէր նորա մեծ նշանակութիւնը կրթութեան գործում։ Ընդդիմախօսները իրենց հերքումները այն բանի վրայ էին հիմնում, որ հոգեբանութիւնը անմշակ գիտութիւն է, ոչ բոլորովին ճիշտ, և չի տալիս այնպիսի տեսական սկզբունքներ, որոնք կարող լինէին ուսուցման և դաստիարակութեան ժամանակ անմիջապէս գործադրուիլ։ Նոցա կարծիքով, ուսուցիչների համար լիովին բաւական են աշակերտների մտաւոր ընդունակութեանց վրայ արած անձնական դիտողութիւնները, բայց կարիք չը կայ հիմնաւորապէս գիտենալ մտածողութեան օրէնքները և հոգեբանական բոլոր նրբութիւնները։ Հոգեբանութիւնը, իբրև գիտութիւն, գտնվում է խառնաշփոթ դրութեան մէջ և նորանում չի կարող ուսուցիչը գտնել այն անթիւ հարցերի և դժուարութեանց լուծումը, որ ամեն քայլափոխում պատահումէ նորան։ Ժողովականներից մի քանիսը համաձայն էին պ. Սիւլլիի կարծիքին,—որ հոգեբանութիւն գիտնալը մեծ օժանդակութիւն է ուսուցչի համար նորա մանկավարժական գործունէութեան ասպարիզում, բայց ցաւումէին, որ պարոնը իւր բէֆէրատում մատանանիշ չէ անում թէ ինչպէս պէտք է հոգեբանութիւնը գործադրել դաստիարակութեան ժամանակ և չի տալիս իրական գործնական օրինակներ իւր եզրակացութիւնները հաստատելու համար։ Ցոյս ունէին բէֆէրատից իմանալ, թէ ինչպէս է

տեսութիւնը յարմարվում գործնականութեան։ և ի՞նչ տեսակ մանկավարժական սխալներ են յառաջանում այն դիպուածում, երբ մանկավարժը հոգեբանութիւնից տեսական տեղեկութիւններ չունի։ Բոլոր հերքումները այն եզրակացութեանն էին գալիս, որ հոգեբանութիւն ուսումնասիրելը մանկավարժների համար թէ և աւելորդ չէ, իբրեւ ընդհանուր կրթողական առարկայ, բայց հոգեբանութիւնը ուղղակի յարաբերութիւն չունի դաստիարակութեան հետ և կարելի է առանց այդ գիտութիւնից տեսական տեղեկութիւններ ունենալու էլ գործը յառաջ տանել։ Նոցա ասելով՝ դաստիարակի համար առաւել անհրաժեշտ են անձնական փորձը և անձնական դիտողութիւնները։

Բէֆերատում՝ յիրաւի, հոգեբանութեան նշանակութիւնը ուսուցման և դաստիարակութեան գործում քննվում է տեսականապէս։

Պարոն Սիլլին մատնանիշ է անում այն հանգամանքի վրայ, թէ մենք միշտ լսում ենք ուսուցիչներից այսպիսի դարձուածքներ. «մտաւոր ընդունակութիւններ» «մտաւոր զարգացումն», և այլն. այս պատճառաւ էլ ցանկալի էր, որ նոքա պարզ գաղափար ունենային մտաւոր ընդունակութեանց ու մտաւոր զարգացման օրէնքների վրայ։ Պարոն Սիլլի ասելով, հոգեբանութիւնը պատկանում է տեսականութեան ճիւղին, դաստիարակութիւնը՝—գործնականութեան։ Ուսուցչին նոյն չափով հարկաւոր է հոգեբանութեան ուսումնասիրելը, որքան բժշկին անհրաժեշտ է ուսումնասիրել մարդակազմութիւնը։ Դաստիարակութեան վերջնական նպատակն է՝—մտաւոր ընդունակութեանց զարգացումը. ինչպէս օրինակ՝ դիտողականութեան, խոհուն յիշողութեան և այլն։ Սորա արդիւնքն այն է լինում, ինչ մենք սովորել ենք անուանել «զարգացած խելք»։ Ապա ուրեմն ինչո՞վ է պարապում հոգեբանութիւնը։ Նա ուսումնասիրում է, մեկնում է մեզ մտածողութեան օրէնքները։ Հոգեբանութեան մէջ մենք գտնում ենք մտաւոր ընդունակութեանց զարգացման հետաքրքրութիւնները իրենց ամենապարզ և ամենաբարդ երևոյթներով և մի փորձ այդ զարգացման գործողութիւնից օրէնքներ հանելու։ Այսպէս ուրեմն, դաստիարակութեան ժամանակ գիտակցաբար թէ անգիտակցաբար ստիպուած ենք յենուիլ հոգեբանական եզրակացութեանց վրայ։ Օրինակի համար, եթէ ուսուցիչը ցանկանում է վարժեցնել իւր աշակերտների յիշողութիւնը և այս պատճառաւ աշխատում է իւր դասերը որքան կարելի է աւելի կենդանի և հետաքրքիր անել, մի՞թէ այս դիպուածում նա չի հետևում այն հոգեբանական օրէնքին, որ ախորժելի տպաւորութիւնը, գրգռելով ուշադրութեան գործունէութիւնը, կօրացնում է մտաւոր ըմբռնողութիւնը։ Ֆիզիքական

զարգացման ազդեցութիւնը մտաւոր զարգացման վրայ միթէ չէ հանդէս գալիս իբրև խնդիր նորագոյն հոգեբանութեան մէջ։

Մանկավարժական եղանակները պէտք է համաձայն լինին նորագոյն հոգեբանութեան վերջին եզրակացութեանց հետ և յարմարուին մտաւոր ընդունակութեանց բնական զարգացմանը։ Արտաքին զգայարանների միջոցաւ մանուկների մէջ դիտողականութիւն զարգացնելու ընդհանրացած մեթոդը լեռվին համապատասխանում է հոգեբանական այն ճշմարտութեանը՝ որ արտաքին զգայարանների միջնորդութեամբ կազմվում է մեր մէջ մտապատկերը և գաղափարը։ Մտածողական օրէնքների հետ սերտ կցուած է ժառանգականութեան օրէնքը՝ որին պիտի յարմարուին մանկավարժները՝ գիտակցաբար թէ անգիտակցաբար՝—կրթութեան գործում։*)

Եթէ ուսուցիչը ցանկանում է գիտակցաբար գործել նա պէտք է ուսումնասիրի հոգեբանութեան հիմնական օրէնքները։ Նորանում նա կը գտնի գիտնական սկզբունքներ՝ որոց և գործ կածի իւրաքանչիւր մասնաւոր դիպուածում։ Նա այն ժամանակ պարզ կը հասկանայ՝ որ ընութիւնը վաղուց արդէն նախագծել է այն ծրագիրը՝ թէ ի՞նչպէս պէտք է զարգացնել խելքը՝ և որ ընութեան օրէնքները անփոփոխ են։

Հոգեբանութիւնը նա և մերձաւոր յարաբերութիւն ունի դաստիարակութեան հետ։ Մի կարծիք կար՝ որն արդէն հերքուած է նորագոյն մանկավարժութեամբ՝ թէ խելքը ունի յատկութիւն զարգանալու առանց որ և է արտաքին ազդեցութեան և սիստեմատիքական դաստիարակութիւնից անկախ։ Ներկայումս հոգեբանութիւնը այն եզրակացութեանց եկաւ՝ որ փոքր ի շատէ սիստեմատիքական դաստիարակութիւնը հանդէս է գալիս իբրև անհրաժեշտ փակտոր իւրաքանչիւր բնական շաւղով ընթացող մտաւոր զարգացման համար։ Մտաւոր զարգացման տեսականութիւնը՝—որ մշակել են նորագոյն հոգեբանները՝—ահագին նշանակութիւն է տալիս ընկերական կեցութեան անհատական զարգացման։ Այս պատճառաւ էլ այդ կեցութեան անհատական զարգացման ղեկավարելը հոգեկան զարգացման համար մեծ նշանակութիւն ունի։ Անհատական խելքը կախուում ունի ոչ միայն սոսկ արտաքին՝ ֆիզի-

*) Եթէ ընթերցողները յիշում են, այս կարեւոր հարցին պ. Սեդրակ Մանդինեանը մի ընդարձակ եւ բազմակողմանի մշակուած յօդուած նուիրեց, „Ժառանգականութիւն կրթութեան համեմատութեամբ“ վերնագրով, որ եւ տպագրուեցաւ “Վարժարան„-ի ներկայ 1884 ամի №№ 4, 5 եւ 6-ում։

Խմբ.

քական կեցութիւնից, այլ և հոգևոր և ընկերական շրջանից։ Ամենընտիր ֆիզիքական հարստութեամբ աճող, բայց մարդոց հաղորդակցութիւնից զուրկ մանուկը,—կը դառնայ ապուշ։ Մարդոց հետ ունեցած բազմազան ընդհարումները գրգռում և զարգացնում են բոլոր բնածին ընդունակութիւնները։ Ծնողները, դայեակները, խաղընկերները ուսուցչից պակաս չեն նպաստում մտաւոր ընդունակութեանց զարգացմանը։

Նոյն իսկ զարգացման առաջին աստիճանին մայրը ամենազօրեղ մտաւոր և բարոյական ազդեցութիւնն է գործում մանկան վրայ։ Այնուհետև հայրը իւր վրայ է առնում մանկան առաջնորդելը։ Թէ որքան անհրաժեշտ է ծնողների ազդեցութիւնը մանկան բնական զարգացման համար, մենք այդ տեսնում ենք այն բնազդման մէջ, որ ունենում են ծնողները և որն առաջնորդում է նոցա մանուկների կրթութեան գործում։ Ծնողները բաւականութիւն են գտնում իւրեանց մանուկներին դաստիարակելիս և նոցա մտաւոր ընդունակութիւնները զարգացնելիս։ Բնագէտները սոյն բնազդումը նկատել են նա և մինչև անգամ մի քանի թռչունների և կենդանիների մէջ։

Դաստիարակութիւնը պէտք է յարմարուի անհատի մտաւոր զարգացման մասին ունեցած հոգեբանական գաղափարին։ Դասաւանդութեան եղանակը պէտք է համապատասխան լինի մտաւոր ընդունակութեանց զարգացման բնական ընթացքին։ Մտաւոր զարգացման ընթացքը բացատրելով, հոգեբանը ակամայ կանգ է առնում հասարակական և ընկերական ազդեցութեան վրայ, թէ ի՞նչպէս է ցոլանում և ի՞նչի մէջն է երևում այդ ազդեցութիւնը. այսպիսով նա տալիս է ուսուցչին հիմնական սկզբունքներ, ցոյց տալով, թէ ի՞նչպէս այդ ազդեցութիւնը նպաստում է մտքի և և բնաւորութեան զարգացմանը և բացատրում է, թէ ինչպէս շրջապատող կեանքի բարդ երևոյթները կազմում և զարգացնում են անհատական խելքը։

Այնուհետև պ. Սիլլին անցնում է այս հարցին. թէ արդեօք հոգեբանութիւնն, իբրև գիտութիւն, բաւականաչափ մշակուած է, որպէս զի նորա դաստիարակութեան հետ ունեցած սերտ առընչութեամբ և նորա տեսական եզրակացութիւններով կարողանային առաջնորդուիլ մանկավարժները։ Հեղինակը համոզուած է նորանում, որ վերջին երեսուն տարում հոգեբանութիւնը հարստացաւ այնպիսի եզրակացութիւններով, որոնք շատ կը դիւրացնեն դաստիարակութեան գործը, եթէ ընդ նմին հոգեբանութիւնը հիմնաւորապէս ուսումնասիրուի։ Ուսուցիչը հոգեբանութիւնից կը քաղէ բոլոր անհրաժեշտ գիտնական և փորձառական տեղեկութիւնները. հոգեբանութեան ուսումնասիրելը կը սովորեցնի նորան գաղափար-

ներն ընդհանրացնելու, մանուկների մտաւոր և բարոյական յաջողակ զարգացման համար միջոցներ կը հայթհայթէ և այն եզրակացութեանը կը հասցնի, թէ անհրաժեշտ է մանկավարժական եղանակները յարմարեցնել սանիկների զանազան սեռերին, հասակին, խառնուածքին։

Դաստիարակութեան լիակատար տեսականութիւնը պէտք է հիմնուի նորա անձնական խիստ կարգաւորուած և ընդհանուր սկզբունքներով սահմանուած դիտողութեանց և վերջին գործնական եզրակացութեանց վրայ, որոնք խիստ ներդաշնակ պէտք է լինին հոգեբանութեան հիմնական սկզբունքների հետ։ Այդպիսի տեսականութիւնը մենք դեռ ևս պիտի մշակենք. այդ շատերը նկատել են, բայց դեռ ոչոք ճշտութեամբ չի մշակել և չի ձևակերպել։ Դաստիարակը և հոգեբանը ձեռք ձեռքի տուած պէտք է մշակեն այդ տեսականութիւնը։ Առաջինը ինդուկտիւ եղանակով,—դիտողութեանց միջնորդութեամբ,—երկրորդը դեդուկտիւ եղանակով,—հիմնական սկզբունքներից սկսելով։

Քանի որ դեռ չի մշակուած դաստիարակութեան մի այդպիսի տեսականութիւն, ուսուցիչը և դաստիարակը պէտք է ուսումնասիրեն հոգեբանութիւնը և հանեն նորանից տեսական եզրակացութիւններ և գիտնական սկզբունքներ։—

Սակայն պ. Սիլլին նախազգուշացնում է մանկավարժներին հոգեբանութեան ձևական ուսումնասիրութեամբ գրաւուելուց, սոսկ գրքերից տեղեկութիւններ քաղելուց։ «Ուսուցչի համար ամենակարեւոր նշանակութիւնն ունի իւրաքանչիւր անհատական մանկան մտաւոր ընդունակութեանց անմիջական դիտողութիւնը։ Թէ ինչպէս պէտք է վարուել և ազդել իւրաքանչիւր մանկան վրայ առանձնապէս,—այդ նա ոչ մի տեղ չի սովորիլ, այլ պէտք է ուշադրութեամբ ուսումնասիրի սանիկի անհատական յատկութիւնները. այս նոյնքան անհրաժեշտ է, որքան բժշկին անհրաժեշտ է հետազօտելու հիւանդի դրութիւնը։ Ուսուցիչը ամենայաջողակ պայմանների մէջ է դրուած ամեն տեսակ հոգեբանական դիտողութեանց նկատմամբ։ Նա միշտ սերտ յարաբերութիւն ունի մանուկների հետ, նորան լիակատար միջոց է տրվում դիտելու նոցա տպաւորութիւնները, գաղափարները, արարքները։ Նորա առաջն են գտնվում մատաղահաս խելք ունեցող մանուկները իւրեանց զարգացման ամենասկզբնական, հասարակ շրջանում։—Եթէ մի և նոյն ժամանակ ուսուցիչն ստացել է գիտնական նախապատրաստութիւն, նա կը գրաւուի այս դիտողութիւններով, մերձեցնելով տեսական տեղեկութիւնները գործնական փորձին և ստուգելով իւր եզրակացութիւնները հոգեբանութեան տեսական սկզբունքների հետ համեմատելով»։—

Մենք կը բաւականանանք ռէֆերատից վերոյիշեալ քա-

ղուածներն անելով։—Մեր նպատակն է միայն պարզել անգլիական մանկավարժների հայեացքը հոգեբանութեան ուսումնասիրութեան մասին։ Լոնդոնում կայացած վերջին մանկավարժական ժողովի այս հաշուից, որը հրատարակուած էր այս ընկերութեան օրգան «Educitonal Times» մէջ, մենք համոզվում ենք, որ անգլիական մանկավարժների մէջ այս հարցը սաստիկ վիճելի է։ Բայց եթէ անհրաժեշտ չի համարվում ուսուցչի համար հոգեբանութեան հիմնաւոր ուսումնասիրութիւնը, գոնէ առաջ է բերվում դիտողութեան անհրաժեշտութիւնը և դէպի մանկան անձնաւորութիւնը ուշադրութեամբ վերաբերուիլը։

Պ. Սիլլին այն վերջնական եզրակացութեանն է գալիս, թէ հոգեբանութիւնը պէտք է սովորեցնի ուսուցչին խորազնին կերպով դիտելու իւրաքանչիւր մանկան անհատականութիւնը և նորա զարգացման առանձնայատկութիւնները։ Ահա թէ ինչ է կարևոր։ Ահա թէ յաճախ ինչ են աչքից թողնում մինչև անգամ այն մանկավարժները, որոնք հոգեբանութիւն են ուսումնասիրել, բայց որոնց տեսականութիւնը հակիրճ կերպով տարբերվում է գործնականութիւնից։ Այսպիսով ուսուցիչն ընտելանում է վերաբերուիլ դասատանը իբրև մի ամբողջութեան, մոռանալով որ այդ դասատունը բաղկացած է ամենատարբեր անհատներից, որոնցից ամեն մէկը տարբերվում է ուրիշներից իւր առանձնայատկութեամբ։ Ուսուցիչը անպատճառ պէտք է նուրբ հոգեբան լինի։ Եթէ նա իրենէ չունի դիտողութեան շնորհք, նա պէտք է զարգացնէ իւր մէջ այդ ընդունակութիւնը։ Այդ ոչ միայն կը դիւրացնէ նորա աշխատութիւնը, այլ և խորհրդաւոր կը դարձնէ դորան։ Դորա աշխատութիւնը չի լինի այլ ևս վարժապետի արհեստ, որ մի անգամ ընդ միշտ իւրացրել է դասաւանդութեան յայտնի ձևեր և որը չի կարող մի քայլ անգամ հեռանալ նորանից, այլ կը դառնայ մի խորհող մարդու աշխատանք, որը լի է խորին խորհրդով և հետաքրքրութեամբ։

Թարգ. Գ. ՇԱՀԲՈՒԴԱԳԻՆ

ՏԷԼԼՈՒՐԻՈՒՄԻ ԳՈՐԾԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՄԱԹԷՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՏՈՒՐԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ *)

Տէլլուրիումի գործադրութիւնն մաթէմատիքական աշխարհագրութեան դասատուութեան ժամանակ իւրաքանչիւր ընթերցողին այնքան ծանօթ է, որ համարձակութիւն կը լինէր այդ բանի մասին երկար խօսել։ Կարծում եմ սակայն որ մի փոքրիկ գիւտ եմ արել, որն օգնում է երևոյթների ուղիղ հասկացողութեան իսկապէս հեշտանալուն, որոնց այս գերազանց—դիտելու օգնութեամբ պէտք է հասնել։

Կարող է պատահել, որ այս գիւտն արդէն ուրիշներն ինձանից առաջ արել են և գործ դրել իրենց դասատուութեան ժամանակ։ Մինչև ցայժմ ես այդ մասին ոչ մի տեղ ոչինչ չեմ կարդացել կամ լսել, այդ պատճառով իմ տուած տեղեկութիւններն ցանկալի կը լինէր հաղորդել իմ ընկերակիցներից շատերին։ Դիւրին գործ է տէլլուրիումի օգնութեամբ երկրի

*) Ի նկատի ունենալով որ մաթէմատիքական աշխարհագրութիւնը վաղուց արդէն մեր միջնակարգ դպրոցներում կանոնաւոր առանդուող առարկաների թւում իւր պատշաճ տեղն է բռնում բարւոք համարեցի այդ առարկայի դասատու ուսուցիչների ուշադրութիւնը գարձնել Տէլլուրիում (գործիք, որ պատկերացնում է երկրի շարժողութիւնը արևի շուրջը) կոչուած գործիքի վրայ՝ «Վարժարան» ի էջերին յանձնելով Ինշտէնբուրգի ուսումնարանի դիրեկտոր «Georth-ի յօդուածն այդ գործիքի մասին՝ որ լոյս տեսաւ յայտնի մանկավարժ Դիտէսի խմբագրութեամբ հրատարակուող «Paedagogium» ամսաթերթի 7-րդ համարում։

շարժողութիւնը անշարժ արևի շուրջն ցոյց տալ և երկրի առանցքի դիրքից յառաջացած երևոյթները բացատրել։ Սանիկները դիւրութեամբ հասկանում են, թէ ինչպէս կարելի է, որ Մարտի 21 (9-ին) և սեպտեմբերի 22-ին (10-ին) ամենուրեք ցերեկ և գիշեր հաւասարւում են, որ Հիւսիսի համար Յունիսի 21 (9) ամենաերկար ցերեկն և ամենակարճ գիշերն է և Դեկտեմբերի 2: (10) ընդհակառակն ամենակարճ ցերեկն և ամենաերկար գիշերն։ Նոքա նկատում են դարձեալ որ հիւսիսային և հարաւային բևեռներում մի ժամանակամիջոց արևը մայր չէ մտնում, և որ ընդհակառակն երկու բևեռների մօտ ևս մի ժամանակամիջոց անխզելի գիշեր պէտք է լինի։ Նոքա ըմբռնում են նոյնպէս, որ երկրի առանցքի դիրքի փոփոխութիւնն դէպի արևը տարուայ ժամանակների փոփոխումն կարող է յառաջացնել, որ մենք արևին մօտ եղած ժամանակ ձմեռ պէտք է ունենանք, որովհետև այդ ժամանակ ամենակարճ ցերեկներն են և արևի ճառագայթներն ընկնում են այնպէս թեք, որ բաւականին ջերմութիւն չեն կարողանում պատճառել, և ընհակառակն ամառ՝ երբ մենք արևից ամենահեռու տարածութեան վերայ ենք գտանւում։ Սակայն այս բոլորը հասկացւում է միայն այն ժամանակ, երբ ինչպէս ճշմարտութիւն ընդունվում է, որ արևն անշարժ է և երկիրն, տէլլուրիումի յայտնի կացուցած ուղիով, շարժւում է նրա շուրջն։ Այսօր ոչ մի մանուկ չի կասկածի այս ճշմարտութեան վերայ. սակայն նա պէտք է միայն հաւատալով ընդունէ վերոյիշեալ ճշմարտութիւնը, որովհետև ամենօրեայ դիտողութիւններն նորա հակառակն են ուսուցանում։ Այդ պատճառով ես երկար ժամանակ մըտածել եմ գտնել մի միջոց, որի օգնութեամբ ես տէլլուրիումի գործածութեան ժամանակ կարողանայի ցոյց տալ, թէ ինչպէս մեզ համար, մեր հայրենիքում, արևի ըստ երևութին շարժողութիւններն պէտք է կազմուին, որոց մենք հանապազօր ինքներս դիտել կարողանանք։ Մի այսպիսի միջոց պէտք է իսկապէս դիւրացնէ ուղիղ հասկացողութիւնն, այսինքն արևի ըստ երևութին շարժողութիւնը երկրի

իսկական շարժողութեան վերածել։ Այս միջոցը ես գտել եմ։ Իւրաքանչիւր ուսուցիչ, որ ծանօթ է Դիստերվեգի «Populäre Himmelskunde»-ի հետ կը սկսէ առաջ այն երևոյթներն յառաջ բերել, որոնց կարելի է դուրսը դիտել. ցոյց կը տայ, իբր շրջան երևացող, հորիզոնի վերայ արևելեան և արևմտեան, հիւսիսային և հարաւային կէտերն և կը բացատրէ, որ արևն արևելեան կէտից միայն երկու օր է ծագում. Մարտի 21 (9) և Սեպտեմբերի 23 (11-ին) և արևմտեան կէտում հորիզոնի տակ ընկղմւում։ Նա դարձեալ ցոյց կը տայ, որ արևն Դեկտեմբերի 22 (10) հարաւ-արևելեան կէտից է ծագում և հարաւ-արևմտեան կէտում մայր մտնում, որ միևնոյն երևոյթն կատարւում է Յունիսի 21 (9) հիւսիս-արևելեան և հիւսիս արևմտեան կէտերում։ Մեզ համար, այստեղ Ինշտերբուրգում այս բոլորն հեշտութեամբ աչքի է ընկնում, որովհետև քաղաքի միջով անցնող արևելեան երկաթուղու գիծն ուղիղ արևելքից արևմուտք է տարածւում։ Եւ որովհետև երկաթուղու կայարանից դէպ հարաւ դաշտային տարածութիւն է և հիւսիսից ևս հորիզոնը գոնէ մաս առ մաս երևում, ուստի և արևի ծագման և ընկղման կէտերն Յունիսի 21-ին, Մարտի 21-ին, Սեպտեմբերի 23-ին, և Դեկտեմբերի 22-ին շատ հեշտութեամբ որոշվում են և մանկանց յիշողութեան մէջ տպաւորւում, հորիզոնի վերայ անշարժ կեցած նշաններով. ինչպէս գեղեր, տներ, ծառեր և այլն...

Այժմ անցնենք Տէլլուրիումի գործադրութեան։ Երկրագնդի վերայ չկայ բնական հորիզոն, հետևապէս մենք չենք կարող այն երևոյթներն ցոյց տալ, որ սանիկներն ցայժմ բնական հորիզոնի վերայ դիտել են։ Իմ գիւտը կայանում է միայն նորանում, որ ես Տէլլուրիումի երկրագնդի վերայ մի այդպիսի բնական հորիզոն եմ ստեղծել։ Իմ ունեցած Տէլլուրիումի (որ արժէ 30 մարկ=15 մնթ.) երկրագունդն 7—8 ցէնտիմէտր տրամագիծ ունի *)։ Ես ցանկա-

*) Դորանից աւելի փոքր անգործադրելի է։ Որքան մեծ, այն քան լաւ։

նում էի աւելի մեծն ունենալ, սակայն սորանով ևս կարող եմ իմ նպատակիս որ և է կերպիւ հասնել։ Ես ամրացնում եմ Տէլլուրիումի վերայ մի փոքրիկ, 3 ցէնտիմէտր տրամագիծ ունեցող շրջան սպիտակ կարդոնից, ուղիղ այնտեղ, որտեղ Ինշտէրբուրգ քաղաքն է գտանւում։ Այս շրջանն ամրացնում եմ օգնութեամբ մի փոքրիկ, 1½ ցէնտիմէտր մեծութիւն ունեցող ձողի, որ փոքրիկ գլուխ ունի, այնպէս, որ ձողն երևայ իբր շարունակութիւն այն շառաւիղի, որ Ինշտէրբուրգի մօտերկրագնդի միջակէտից դուրս գալիս. ուրեմն իր ծայրով դէպի այդ միջակէտը։ Շրջանն երկրի այս շառաւիղին ուղղահայեաց է և պատկերացնում է այս կերպիւ Ինշտէրբուրգի բնակչաց հորիզոնը։ Այս հորիզոնաի շրջանի վերայ յերևան են գալիս բազմաթիւ երևոյթներ, որոնց սանիկներն իրականութեան մէջ քանիցս դիտել են։ Երկրագնդի Մարտի 21 (9)-ին ունեցած դիրքն տալուց և Տէլլուրիումի անիւի շարժողութեան դադարեցնելուց յետոյ, շրջանն պտտում է մթութեան մէջ. այդ ժամանակ երկրագունդն պէտք է ձեռքով, կամացուկ, պտտեցնել լուսոյ հակառակ. հէնց որ լուսոյ ճառագայթներն ընկնում են շրջանի վերայ, յերևան է գալիս փոքրիկ ձողի ստուերն նորա միջակէտում և ցոյց տալիս մի ուղիղ գիծ արևելքից դէպ արևմուտք։ Այս գիծն զուգահեռական է երկրի արևադարձի հետ, որ գնտակի վերայ պարզ նկարուած է։ Երբ սանիկներն արևմուտքից այնպէս են նայում գնտի վերայ, որ նոցա հայեացքներն ընկնում են միայն մակերևոյթի վերայ, այն ժամանակ նոքա նշմարում են արևելեան կէտում արևի ծագմանը երևոյթը Երկրի ծանր կերպիւ շարժողութիւնը շարունակելով, նոքա տեսնում են հանգիստ կեցած արևն ըստ երևութին անդադար բարձրացող։ Միևնոյն ժամանակ նոքա դիտում են, թէ ինչպէս ձողի ստուերն—Ինշտէրբուրգի բնակիչ—արևադարձին զուգահեռական գծով, արևմուտքից դէպ արևելք է ընկնում։ Արևն ծագում է արևելեան կէտում և մայր մտնում արևմտեան կէտում։ Այժմ շրջենք

երկրագունդն անիւի օգնութեամբ և տանք նորան Յունիս 21 (9)-ին ունեցած դիրքն. արևն արևելեան կէտի վերայով հեռանում է դէպի հիւսիս և մի պարզ սև կէտով նկարւում է շրջանի վերայ, ձողի ստուերն ընկնում է դէպ հարաւ-արևմուտք. ծանր շարժելու ժամանակ սանիկներն տեսնում են ինչպէս ստուերն աստիճանաբար դէպի հիւսիս է պտտում որ և ճաշի ժամանակ բոլորովին փոքրանում է։ Արևն մայր է մտնում բարձր արևմտեան կէտի վերայով դէպի հիւսիս, միևնոյն ժամանակ ձողի ստուերն ընկնում է դէպի հարաւ-արևելք *)։ Արևն կատարում է իր ամենամեծ օրապտոյտն, բայց կանգնած է մեր կողմի համար այնպէս, որ նա մեր միջօրէական Զենիդի հարաւից է անցնում։ Ապացոյց. ճաշի ժամանակ ստուէրն շատ փոքր էր, միայն դէպ հիսիս ընկաւ. ցերեկուայ երկարութիւնն և գիշերուայ կարճութիւնն պարզ յերևան եկաւ։ Միևնոյն կերպիւ կարելի է ցոյց տալ, սեպտեմբերի 22 (10)-ին երկրի բռնած դիրքը, որ արևն արևելեան կէտից հեռու հարաւից է ծագում և արևմտեան կէտից հեռու հարաւում մայր մտնում, որ ձողի ստուերն կէսօրին շատ երկար է. ուրեմն արևի ճառագայթներն շատ թեք կերպիւ են մակերևոյթի վերայ ընկնում, որ այս ժամանակ ցերեկները շատ կարճ և գիշերները շատ երկար պէտք է լինեն։

Որպէս զի այս բոլոր երևոյթներն աւելի պարզ երկրի զանազան կողմերի համար բացատրուին, պէտք է միևնոյն միջօրէականի վերայ 3 այսպիսի հորիզոններ տեղաւորել. մէկն հայրենեաց տեղն որոշող կէտի մօտ, միւսն արևադարձի վերայ և երրորդն առաջինին հաւասար հարաւային լայնութեան տակ։ Այդ ժամանակ յերևան են

*) Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այս փորձն կարելի է ցոյց տալ միայն մի բոլորովին մթնացրած սենեակում։

գալիս շատ հետաքրքիր և բացատրիչ երևոյթներ։ Մարտի 21 (9)-ին 3 շրջանների վերայ ևս արևն արևելեան կէտում ծագում և արևմտեան կէտում մայր է մտնում. ձողերի 3 ստուերագծերն ևս զուգահեռական են. միջինն ընկնում է արևադարձի վերայ։

Հիւսիսային լայնութեան վերայ ստուերն պտտում է դէպ հիւսիս, հարաւային լայնութեան վերայ դէպ հարաւ, արևադարձի վերայ եղած ստուերն ցերեկը մընում է այս միևնոյն գծի վերայ։ Նա արևի բարձրանալու հետ անդադար կարճանում է և կէսօրին բոլորովին անյայտանում։ Այդ օրն արևադարձի բնակչաց համար արևն կէսօրին կանգնած է Զենիթի վերայ—այսինքն նոցա գլխին ուղղահայեաց։ Ուղիղ միևնոյն երևոյթը նշմարւում է Սեպտեմբերի 23 (11)-ին երկրի բռնած դիրքի ժամանակ. միևնոյն ժամանակ մենք տեսնում ենք, որ արևն այս երեք կողմերի համար ևս միևնոյն ժամանակն է ծագում և մայր մտնում, և որ ցերեկներն—գիշերներն երեք կողմերի համար ևս հաւասար տևողութիւն պէտք է ունենան։ Մի աւելի մեծ երկրագնդի վերայ կարելի էր ցոյց տալ, որ հիւսիսային և հարաւային բարեխառն գոտու վերայ լուսանալը և մթնելն, մանաւանդ ամառ ժամանակ, շատ նշանաւոր է լինում. իսկ ընդհակառակն արևադարձի տակ, մանաւանդ գիշերահաւասարների ժամանակ, շատ աննշան։ Այդ ես ինքս կարող եմ, իմ չափաւոր մեծութիւն ունեցող Տելլուրիումի շնորհիւ շատ պարզ կերպիւ յերևան բերել։ Յունիսի 21 (9) և 22 (10)-ին երկրի բռնած դիրքերն դիւրութեամբ ցոյց են տալիս թէ ինչպէս հիւսիսային և հարաւային բարեխառն գոտուց հաւասար հեռաւորութիւն ունեցող կողմերն ուղիղ հակադիր տարեժամանակներ պէտք է ունենան։

Երբ մենք զուարճանում ենք ամառուայ քաղցր եղանակով, միւս կողմի բնակիչներն ունեն ամենակարճ օրեր այսինքն և ձմեռ. երբ մենք Դեկտեմբերին գանգատւում ենք կարճ օրերից, նոքա մոտենում են ամենաերկար օրին և վայելում ամառուայ զուարճութիւններն։ Միաժամանակ սանիկ-

ները դիտում են պարզ կերպիւ, որ ստուերն մեզ մօտ ամենաերկար օրում դէպ հիւսիս, իսկ հարաւային բարեխառն գօտու բնակչաց մօտ, միևնոյն օրն, դէպ հարաւ է շարժվում։

Այրեցեալի բնակչաց համար ստուերն շարժում է տարուայ մի կէսին դէպ հիւսիս, միւս կէսին դէպ հարաւ։

Այս կերպիւ կը պարզուի «շրջաստուեր մարդիկ» (umschatige Menschen) գաղափարն, որ առանց այս կերպ հասկացողութիւն տալու սանիկներից միայն շատ քչերն կըմբռնին։

Երբ որ այս բնական հորիզոններն աւելի մօտեցնենք հիւսիսային և հարաւային բևեռներին, շատ գեղեցիկ կերպիւ կերևայ, թէ ինչպէս է լինում, որ այնտեղի բնակիչներն տարին մէկ անգամ միամսեայ գիշեր և մի ամսեայ ցերեկ են ունենում։ Առանց այս օգնական միջոցի չի յաջողւում, մինչև անգամ ընդունակ աշակերտներին, կատարելապէս պարզ գաղափար տալ այդ մասին։

Թող ներուի ինձ մի փոքրիկ նկատողութիւն ևս անել։ Պէտք է ձողերի ծայրերն լաւ կերպիւ պնդացնել. երբ լաւ ամրացած չեն շատ հեշտութեամբ պատահում է, որ երկրագնդի շարժողութեան ժամանակ ձողը դուրս է ընկնում. այս բանը խանգարում է գործողութեանը և ի զուր ժամանակի կորուստ պատճառում։

Պէտք է աշխատել նոյնպէս, որ այդ ձողերն իսկապէս գնդի շառաւիղների շարունակութիւնն երևան և շրջանի վերայ ուղղահայեաց դիրք ունենան. դորանով բազմաթիւ երևոյթներ ճշտութեամբ յերևան կը դան։

Այս փոքրիկ գործիքի պակասութիւնն այն է միայն, որ երևոյթներն չի կարելի միանգամից բոլոր սանիկներին ցոյց տալ։ Նոքա պէտք է մաս առ մաս ներս դան. հակառակ դիպուածում չեն կարող ստուերագիծը պարզ տեսնել։

Սակայն այս պակասութիւնը չի կարող անյայտանալ և մի ամենամեծ Տէլլուրիումի վերայ փորձ անելիս։

ԼՕՐԴ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԿ

Ինչպէս ընթերցողները կը տեսնեն ներկայ № ի առաջնորդողից, Խմբագրութիւնս բաժանորդների սակաւութեան պատճառաւ ստիպուած է իսպառ դադարեցնել „Վարժարանի“ հրատարակութիւնը:

* *
*

Վերջին անգամ խնդրում ենք մեր բաժանորդներից որ բարեհաճին ապառիկ մնացած դրամները հասցնել Խմբագրութեանս: Կարծում ենք որ բաւական է առանց այդ էլ մեր երկու տարուայ ընթացքում կրած վնասները:

* *
*

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ հետեւեալ հայերէն գրքերը: 1, „Վայելչագրութեան դասաւանդութեան եղանակը“, առաջնորդ ձեռնարկ „Հայկական գեղագրութեան օրինակներ“ անունով դասատեսրը գործածող ուսուցչաց համար: Աշխատասիրեց Մ. Տեր-Սարգսեան: Գինն է 20 կոպէկ: 2) „Ողբերգութիւն Աբելի“ երեք գործողութեամբ, արտատպեալ „Արարատ“ ամսագրոյ: Աշխատասիրեց Սարգիս Բ. Գնունի Վանեցի:—Վաղարշապատ, ի տպարանի սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի. 1884—Ռ 8 Լ. Գ. Գինն է 20 կ.

* *
*

Ընթերցողներին արդեն յայտնի է այն ցաւալի լուրը, որ „Մշակի“ Խմբագիր մեծ. պ. Գր. Արծրունին անձնական հանգամանքների պատճառաւ դադարեցրեց „Մշակի“ հրատարակութիւնը: Այժմ ինչպէս լսում ենք, կազմուել է մի խումբ, որ մտադիր է շարունակել թերթի հրատարակութիւնը: Ցանկանում ենք կատարեալ յաջողութիւն եւ յաթատեւութիւն:

ԽՄԲԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿՈՒՀ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԽՈՍՐՈՎԵԱՆ:

Дозволено цензурою, Тифлисъ 25-го Сентября 1884-г.

Тип. М. Вартаняна. Тр. переул. д. № 11.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

ամսագիրը հրատարակվում է 1884 թ. յունվար ամսից, գլխաւորապէս մանկավարժական ուղղութեամբ։ Ամսական տետրն երկու թերթից է, տարին կլինի 10 տետր (յուլիս և օգոստոս ամիսներում չի հրատարակուի)։

"Մանկավարժանոցի" տարեկան գինն է 3 մանէթ։

Հրաւիրվում են մտածող, դպրոցանուէր հայազն ուսուցիչներն ջակցելու „Մանկավարժանոցին" իրանց բաժանորդագրութեամբ և աշխատակցութեամբ։ Ստորագրվողները յատկապէս պիտի դիմեն այս հասցէով. Св. Эчміадзинъ. Редакціи Манкаваржаноцъ.

Խմբագրող-հրատարակող ԽՈՐԷՆ Ծ. ՎԱՐԴ. ՍՏԵՓԱՆԷ։

ԹԻԿԱՐ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՅ

Կը հրատարակուի ամիսն մի անգամ։

Տարեկան բաժանորդագին է Կ. Պոլսոյ նաև գաւառաց համար, երկու արծաթ մէճիտ ԿԱՆԽԻԿ։

Բաժանորդագրութեան տեղն է „Բուրաստան Մանկանց" Խմբագրատունը, Կ. Պոլիս, Սուլթան—Համամ թիւ 14, ուր ուղղելի են Խմբագրութեանս վերաբերեալ գրութիւնք։

Իւրաքանչիւր թերթի գինն է չորս դահեկան արծաթ։

Կը վաճառուի Հայ գրվաճառաց և պահՀէ Քաբու ջրավաճառ Պողոս և Յակոբ աղաներուն քով։

Թիֆլիզում բաժանորդագրութիւնն ընդունվում է «Վարժարանի» Խմբագրատանը։

Խմբ. Տնօրէն Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակվում է շաբաթը երեք անգամ. տարեկան գինը 1 ր.։ Հասցէն Эривань, Тип. Теръ-Григорянцъ.

Խմբ.-Հր. Էմ. Տէր-Գրիգորեանց։

ՍԱՄՈՒԷԼԻ ՏԱԿԻՑ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

„ՎԱՐԺԱՐԱՆ“

մանկավարժական ամսագրի հրատարակութեամբ հետևեալ գրքոյկները.

1) «ԿՆՈՋ ԿՈՉՈՒՄԸ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ» հեղ. ԼՈՒԻԶԱ ԲԻԻԽՆԵՐԻ.—*թարգ.* Գ. ՇԱՀԲՈՒԴԱՂԵԱՆ.—

գինն է 40 *կ.*

2) «ՈՍԿԷ ԶԿՆԻԿ» *հեղ.* Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԻ, *թարգ.* ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ —

գինն է 10 *կ։*

Վաճառվում են «Կենդրոնական» *և* «Կովկասեան» *գրավաճառանոցներում և* «Վարժարանի» *Խմբագրատանը։*